Վ Ի Պ Ա Կ Ն Ե Ր

ՏԱԾՔԵՆԴ

Մի անպատմելի մեծ, մի համաշխարհային ձամփորդությունից Ջանդառ Թեվանը եկա՜վ: Եկավ ծիծաղեց-ծիծաղեց ու քաշեց ոտի տակ մի որձ մորթեց, ինքը կարծես և նշանավոր հյուր էր, և հյուրի առաջ որձ մորթող հին Թեվիկը: Կինը՝ Սոփին, Մյուս Թեվանը՝ Սիրունը, սրա նորահարսը կանգնել նայում էին թե ինչ է անում ու ինչ է ասում, կարծում էին լավ հարբած է, հիմա կընկնի մի օրուգիշեր կքնի, բայց քաշեց ոտի տակ որձ մորթեց շուրջերկրյա ձամփորդությունից հետո: Շուրջերկրյա՝ այսինքն որ երեք օր առաջ այստեղից կորչում ենք, չգիտենք երեք օր որտեղ ենք, ինչերեն ու ինչ ենք խոսում, ու անընդհատ բենզինի ու սերկևիլի հոտ է գալիս, ու երեք օր հետո մեկ էլ տեսնում ենք այստեղ ենք՝ Սոփնի, նորահարսի, Մյուս Թեվըկի ու նորամանուկի առաջ. գերանդին Քեղուտ խոտհարքում գցում, տաքությունը մեջքներիս տված մեզ խփում ենք Նավ-ուրթի ձիերին ու Կեչուտ ծմակով, Ջարխեչով, Ղազախով, Հայի-Թուրքի Ոսկեպարներով երեք օր ձիով, ոտով, Երևան-Թբիլիսի գունավոր ավտոբուսով մի լա՜վ պտտվում, հետո մեզ ավտո են տալիս՝ մեր պատվավոր բեռնատարով գալիս մեր դռանը կանգնում, մեր ձեռքին երեխայի մի ձիպոտ ենք տեսնում ու ասում «էս ի՞նչ ձիպոտ է, էս ո՞վ է մեզ տվել» և ծիծաղում ու հին երազի պես զոռով հիշում ենք, որ երեք օր առաջ գնդապետական գլխարկը մենք ետ ենք դրել ու Քեղուտ լանջերից նայել Արկանք լանջերին և մեր աչքից առաջ մեր սիրտն է վկայել՝ որ նորահարսի դեմից ոչխարը կտրել են, գերանդին այդպես էլ գցել ու Աձարկուտ

ծմակով խփվել ենք դեպի Նավ-ուրթի ձիերը՝ երեք ձին, մեր ձեռքն ուրեմն Քեղուտից գլորվելիս է ձիպոտը պոկել ու երեք օր այդպես բռնել - կարծես ուրիշի ձեռք լինի ու ձիպոտն ուրիշի ձեռքի լինի, և այդ ամբողջ ժամանակ կնոջ, սերկևիլի, զարզանդի ու փոշու հոտ է գալիս, ահա՛, մի հաղթական արշավանքից Ջանդառ Թեվանը եկավ. եկավ գլխարկը դրեց թարեքին ու ծիծաղեց.

- Պա-պա-պա-պա,- ասաց,- սա գլխարկ չի՝ սրբած թուր է, ժողովրդին ձղում, միջով գեներալի նման անցնում է: Հա՜ա,- ասաց,- Ջարխեչավանքից մինչև Ոսկեպար ու Կարմիր-կամուրջ ժողովուրդը ձղվում ու երկու կողմից պատվի է բռնում:

Գրպանում օղու մի կիսատ շիշ կար, նստել ծնկների վրա ֆսֆսում էր, ասացին հիմա մի լավ կքնի, ասացին պառկիր վրադ շոր գցենք, բայց չքնեց - քաշեց ոտի տակ մի որձ մորթեց: Կարծեցին պայմանավորված է, հյուր են ունենալու, բայց ոչ - զուտ իրենց չորսի համար քաշեց ու որձերից մեկը մորթեց:

Կատակ էր թե շիտակ, միլիցիայի գնդապետ Վլադիմիր Մելիքյանի գլխարկը դեր ունեցել էր թե չէր ունեցել՝ այդ էր. իրեն ողջ-առողջ ու դեպի խումհար մի բան էլ դենը և հաշված քսանհինգ որձից բացի Ջանդառս բերել էր՝

Սոփըկի ու նորահարսի համար ծաղկավոր երկու շալ. ուզում են գլխներին գցեն, ուզում են՝ ուսներին, երկու ձևով էլ շատ էր սազում, դառնում էին թուրքի խանում, բերել էր՝ Թեվանի երեխայի համար երկու կիլոյաչափ մի մեծ կտոր հալվա, ծալովի մի դանակ Թեվանի համար, 2 ռ. 75 կ. օղու կիսատած կանաչ շիշը (մեքենայի խցիկում կեսը բկից կում-կում խմել էր՝ որ գազի տաք հոտից չքնի), շալերն ուրեմն ասացինք, հարսների համար ծաղկավոր երկու շալ, գրպանի տակերում երեք հատիկ խակ

զկեռ՝ որ պոկել էր Ջարխեչավանքի զկռուտներից, բայց խակ էին եղել ու Սոփնի բկում մնացին, ինչպես որ Ջարխեչավանքի առաջ ուրիշ պատճառով Ջանդառի բկում էին մնացել, ուրեմն գրկած մի ձմերուկ ու ռադիոյի վեց հատ լիցք՝ պոլնի պարյադոկ, Դաղստանը կողոպտել բերել էր, ու գրպանում եղել էր երեք ռուբլի փող՝ մի հատիկ երեքնոց, ձեռքին՝ երեխայի մի ճիպոտ, գլխին՝ գնդապետական գլխարկը: Եկավ կանգնած տեղը ֆսֆսաց-ֆսֆսաց, ձեռքի ճիպոտը տեսավ, ասաց.

- Էս ի՞նչ ճիպոտ է, էս ի՞նչ երեխայի ձեռից եմ առել:

Այդ երեք ռուբլուց՝ մի հատ այդ երեքնոցից էլ ինքը լրիվ անտեղյակ էր եղել, այսինքն տեղյակ չէր եղել որ ունի, կարծել էր լրիվ էնպես է, Երևան-Թբիլիսի լուսավոր ավտոբուսի վարորդի ու էդ ամբողջ գունավոր ժողովրդի առաջ խայտառակ էր եղել. վարորդն ասել էր՝ «գյուղացի չե՞ս, շորիդ ամեն ծալում հազար ռուբլի փող կա», Ջանդառը՝ «չէ, այտա. չենք հրաժարվում՝ ունենք, բայց անպատրաստ ենք դուրս եկել, տեղից մեզ դեպքն է կտրել» և ձեռքը գրպանն էր տարել ու իրոք խայտառակություն՝ ծալած այդ երեքնոցը. հիմա լավ չենք հասկանում՝ ինքը վարո՞րդն էր իրենից թիֆլիսյան ֆոկուսով գցել, Ջանդառն ի՞նքն էր երբևէ խանութ գնացել ու առուտրից հետո մոռացել գրպանում, թե՞ Վլադիմիր Մելիքյանի բաձկոնի հետ Երևանից այդպես էլ եկել է, չնայած՝ ոչ, Համբոյի աղջիկը գրպանները շուռ է տալիս, լվանում, արդուկում և ուղարկում մաքուր արդուկած:

Առավոտվա դառը ժանգառքի հետ եկավ սուլեց, մոնղոլի նրա կարճաոտ-լայնաթիկունք կերպարանքը սայթաքեց, քրքջաց, ու հին գերեզմանների մոտից ձմերուկը գրկից գլորվեց: -Այտա, բռնի՛ր,- ծիծաղեց,- ջարխեչեցին փախավ, կալկոխ արա, բռնի՛ր:

Մյուս Թեվանը շապիկով-վարտիքով գոմի ետևն էր, չարքի խփածի պես սրսփաց ու մեզը կիսատ մնաց: Քնաթաթախ կռտած կարմիրը շեղակի ընդառաջ թռավ ձմերուկին, հպարտ գլուխը բարձր ու թաթն անընդհատ խփելու պատրաստ գնաց ձմերուկի հետ, բայց «ախպոր» հոտն առավ, կլանչեց ու ետ նետվեց: Էդ ի՞նչ լաց ու կարոտ էր, կարծես ոչ թե երեք օրվա՝ բանակային ծառայության երեք տարվա բացակայություն էր եղել, գետնին տափակվել, սողում ու ծմրում էր. չնայած կռտած է, բայց դե էլի որձ է - լակոտ շան նման, քածի նման ծմրում ու նվում էր, ասում էիր կարոտից հիմա կհանգչի. իրար երեսի թռան, թավալվեցին ու իրար մի լավ լիզեցին՝ որ նոր հանգստացան: Մյուս շները՝ ոչինչ, կանգնել նայում էին:

- Դե լավ, դե լավ, - կանգնեց ասաց,- շան տղա. որ կարոտից էդպես սատկում ես՝ քու պետական պարտավորությունը մյուս անգամ լավ կկատարես, թե չէ քու Ջանդառը կգնա ու էլ չի գա: - Բայց խեղճ շունը միաժամանակ ինչպե՞ս լիներ այստեղ և այնտեղ, չէ՞ որձերն իր հոտից չէին տարել:

Եղյամ էր դրել, այսինքն դեռ եղյամ չէր, բայց սառն էր: - Մյուս Թեվանը մի ոտի կոշիկը կորցրեց, բայց կարողացավ բռնել ղ ա զ ա խ ի հաստակեղև, մուգ կանաչ՝ համարյա թե սև ձմերուկը, Ջանդառի մի պարապ արտահայտությունից արդեն որոշեց՝ որ Ղազախի ու մեր արանքում կայարան է եղել ջ ա ր խ ե չ ե ց ի անշնորհք հիմարի տունը, դագանակ քաշելու նման՝ մի րոպեում բերանը դառնությունով լցվեց և այդ պահին ճիշտ այն որոշեց՝ ինչի վրա Ջանդառը երեք օր ֆսֆսացել էր, այսինքն՝ որ եկող տարի այս օրը, երբ երեխաները դպրոցի համար սարերից իջած կլինեն, ջարխեչեցի հիմարը հաշված ու ընտրված քսանհինգ որձ կկորցնի ու այդպես էլ կկորցնի, և ընկերոջն ընդառաջ գնաց

շապիկ-փոխանով ու բաճկոնն ուսերին, իրենց լեզվով իրար մի երկու բառ ասացին՝ և ջարխեչեցու մասին որոշումը հաստատվեց,- բայց ասում ենք, մեզն ինչպես որ կիսատ էր մնացել ու կեսը ետ ներս քաշվել, Սիրունն այդպես թթված էլ մնաց:

Չասենք թե դանակի նվերը հաշվի չառավ, ռադիոյի լիցքերը առավ. դանակը բացեց, զննեց, հավանեց, բայց ծալեց ու դրեց թարեքին՝ կարծես իրենը չէր, իրեն չէին նվիրել: Դաշույն չէր, բայց շեղբի վրա դաշույնի ակոս ուներ, լավ պոզուկճղակ էլ կտաշեր, լավ մորթ էլ կաներ ու թևի հաստության բոխի էլ կկտրեր, գոմեշի եղջյուրից սարքած պինդ կոթի ծայրին էլ երկաթե օղակ ուներ, այսինքն կաշվե գոտուց պիտի կախեր, բայց չկախեց, ծալեց դրեց թարեքին: Ռադիոյի վեց հատ լիցքը. դանակ-սրել է, գերանդի թե ռադիո՝ տեխնիկայի հարցերը նրա վրա են, - ռադիոյի ետևը բացեց, հանգած հները հանեց, նորերը կարգով-խնամքով տեղավորեց, և ճիշտ առավոտյան հատուկ համերգի ժամն էր, գյուղի աշխատավորների համար Լուսիկ Քոշյանը երգում էր, նոր կոշիկները ձեռքին՝ նրա երեխան անկողնում թաթիկները պար ածավ, երկու օր առաջ հերն էր կոշիկները գյուղի խանութից բերել ու երեխան կոշիկները ծոցում էր քնել,- բայց ջարխեչեցի հիմար աղքատին զրկելու որոշումից բերանն ինչպես որ դառնացել էր՝ ինքն էլ իր բերանի նման այդպես դառն էր ու դառն էլ մնաց, կարծես ոչ կորո՛ւստ էր գտնվել ու ոչ էլ ընկե՛ր վերադարձել, համերգից ու հարսների ուրախությունից մի կողմ կացավ ու այդպես էլ մնաց:

Հարսներն ասացին չգիտենք, գյուղից ինչ եկել տեսել է բացակա ես՝ էդ է: Ջանդառի Սոփի՛ն ասաց, թե չէ Մյուսի նորահարսը ի՞նչ կարողություն կամ ինչ իրավունք ունի՝ որ նայի ու ամուսնու տրամադրությունը հասկանա. դժվար է լսում,

ականջները երեխայի վրա ծանրացան կամ հենց դպրոցից է այդպես, թե չէ կնկամեռ, երկու կնիկ փոխած սարվորին էդ ո՜վ դպրոցական աղջիկ կտար, - կապույտ աչքերով ուշադիր նայում ու բան չի հասկանում, դեռ չէր հասկացել՝ որ քսանհինգ որձը իր առջևից է կորել: Ջանդառն ասաց. - Հա: - Հա ասաց, պատծառը դե եթե մեր բացակայությունն է եղել՝ հիմա ներկա ենք, իսկ եթե ուրիշ բացակայություն է՝ ոչ մի կորուստ էս աշխարհում ան-կորուստ չի գտնվում, այսինքն որ կորչի ու նույնությամբ գտնես: Ասաց. «Թե նկատել եք՝ ձին եկե՞լ է»: Ասացին՝ ի՞նչ ձի: Ծի-ծաղեց ասաց՝ ես էլ եմ ասում, ի՞նչ ձի:

Կարծում էին կքնի, ասում էին հիմա հացուպանրով թեյ կխմեմ, օրն իր կարգով կգնա, բայց բռնեց իր վերադարձը տոն սարքեց: Բայց ուրախությունը դեռ մի կարգին չէր տաքացել, Մյուսը վեր կացավ՝ թե ես գնացի. ո՞ւր. Տաշքենդ. ի՞նչ Տաշքենդ. ես Տաշքենդ ախպեր ունեմ, գնում եմ բերեմ. ա-է՜էէ:

Սոփին որձի արյունը շների համար բռնում էր, շռայլ թագավորի նման Ջանդառս ամանին քացի տվեց, այսինքն թե էդ ինչ խնայողություն է, հաղթած իշխան ենք եկել՝ իրավո՞ւնք չունենք հողին մի որձի արյուն տալ, - ամանը վզի տակից ոտ-քով ետ հրեց, մորթը կարծես բարձր հյուրերի ներկայությամբ էր լինում: Արյունը հյուրերի մոտ չեն բռնում, ծծվում կորչում է, չեն թողնում շները լիզեն, հյուրերի առաջ շների երեսից էլ են ամաչում, փորոտիքը դեն են ածում՝ որ քաղաքացիները չասեն գյուղացիք խնայող են, չէ՞ կողմնակի ձևով նրանք են հաս-կացրել, թե քաղաքում իբր մի առակ կա՝ որ ասում է. «գյուղացին եթե հավ է մորթում՝ ուրեմն կամ հավն է հիվանդ, կամ ինքը»: Բայց թույլ տվեց, ամանը վզի տակ քաշեցին, արյունը մինչև վերջին պուտը բռնեցին, փորոտիքը կտրտեց՝ որ

դեսուդեն քարշ չտան, արյան հետ խառնեց, դրեց շների առաջ: Երբ թուրքը մորթ է անում՝ կողքին պիտի լուռ երեխայի նման կանգնես, նայես ու սովորես: Մեր բարեկամ թուրքերը մեզ սովորեցրել են, որ ոչխարը մի թիզ կարմիր աղիքից բացի դեն-գցելու բան չունի, բայց շների համար պիտի հնարես: Նույնիսկ լեղին. եթե լնդերից խախուտ ես՝ տաք լեղիով պիտի ողողես ու թքես, ժանգն սպանում ու ատամներդ պնդացնում է, իսկ եթե ատամներդ առողջ են՝ ավելի է առողջացնում: Էրաթաթերի կրծիկները կտրեց գցեց շներին, լյարդի զուտ կեսը կտրեց տվեց կարմիր գելխեղդին: Ասաց.

- Հրեն-հա՜ա, վեց հատ ձմերուկ էլ հրեն Ցիցքարա սեղաններում ունեք, ոչխարն ով դենը քշեց՝ մի հատը շալակելու է:

Սոփին կտրել էր, Թեվանի՝ Մյուսի նորամանուկը ձմերուկի միջուկին վրա էր ընկել, կարմիր քաղցրի մեջ լող էր տալիս:

Շներին կշտացրեց ասաց.

- Դե ձեզ տեսնեմ, էսօրվա չոբանը զուտ դուք եք, մենք էսօր մեծ հարսանքի ենք:

Հարսանքատեղից բոլորս էլ դժվար ենք հեռանում. կարմիր գելխեղդն ու մյուսը՝ որ իրենց համարում էին Ջանդառի շունը, դժվար գնացին, բայց գնացին. բերանները լիզելով պպզած մի քիչ մնացին այդտեղ ու իրենց ոչխարի ետևից գնացին. մյուս երկուսը՝ որ իրենց համարում էին Մյուս Թեվանինը, գնացին իրենց տիրոջ մոտ պպզեցին ու դեսը նայեցին: Նրանց տերը գյուղից երկու օր առաջ ինչպես հագած-կապած եկել էր՝ ձեռքերը գրպաններում այդպես էլ կանգնած էր, նույնիսկ չասաց ոտս մեկնեմ որձի ոտին դնեմ, հոգեվարքի մեջ եղբորս սրունքը ծեծում է: Նորամանուկը, ուշադիր նայող ու ծանր լսող նորա-

հարսը, Ջանդառի Սոփին ու ինքը Ջանդառը ինչքան էլ ասացին՝ Մյուսի կողքերից շները չհեռացան, Մյուսը մինչև չբարկացավ ու չկռացավ իբր քար վերցնելու՝ այդտեղ պպզած նայում էին: Գիշերը ավտոյով ծամփա էին եկել, ավարված ու ետ-խլված քսանհինգ որձը գոմերի արանքում թափված էին ու այդպես մնալու էին թերևս մինչև իրիկուն ու մյուս առավոտ, - ասացին շները այդ կտրկանը ամբողջ ոչխարի տեղ են ընդունում ու դրանց պատճառով չեն հեռանում, բայց մյուս երկուսն ինչու հասկացան ու գնացին. Թեվանի ոտից սրանք ուղղակի չէին կտրվում: Եթե ճիշտ խոսենք, շներին հետը եթե գյուղ տարած չէր եղել՝ որձերը չէին կորչի. երեխայի հետ ղունղունացող երեկվա դպրոցականի առջևից մեկ-մեկ ընտրել ու քշել էին: Բայց մենք մեզ ձախորդ ու անտղամարդ կհամարենք, եթե եկող աշնան մեր նշանավոր գիշերը փարախում ջարխեչեցու կինը լինի: Ասացինք լավ է, որ գոնե տիրոջ խոսքը բանի տեղ են դնում, բայց այդ րոպեին նորամանուկը թաթիկը մեկնեց - հիմա էլ հին գերեզմանոցի գլխից էին պպզած նայում: Ջանդառն ասաց.

- Վատ ես սովորեցրել, վատ. թուրքի շուն լիներ ու ասեր գնա ու նստեր նայե՞ր:

Ձեռքերը գրպաններում՝ Մյուսը սիրուն երեսը բարձրացրեց ու աչքերն իր նման ճպճպացրեց.

- Բա ես ի՞նչ անեմ՝ որ երեխայի պես փեշիցս պոկ չեն գալիս:

- Չգիտեմ,- ասաց,- էն արա՝ որ շներիդ վրա ռեխս ավելպակաս չբացեմ:

Ջանդառն այդ մասին միայն այդքանն ասաց, բայց այդքանն էլ չէր կարելի. խեղճ նորահարսը վերջապես կսկսեր հասկանալ, որ որձերն իր առջևից էին կորել. Սոփին՝ նորահարսի դասատուն և առհասարակ երկուսի ամբողջ տնտեսության

տիրուհին, օղու կիսատ շիշն առած եկավ, խցկեց Ջանդառի բերանը, և նորահարսը նայեց ու սովորեց, որ ամուսնուն երբեմն այդպես, երբ նա դանակը ձեռքին գործի է ու նրա սպիտակ, շեկ մազոտ ձեռքերն արյունոտ են, քո ձեռքով պիտի խմեցնես... բայց Սիրուն Թեվիկը խեղճ նորահարսին երբ էր իր վրա այդքան իրավունք տալու: Մի կում թե մի երկու՝ Ջանդառը խմեց ու տեղնուտեղը լրիվ ծիծաղ դառավ մոնղոլի կանաչ աչքերը կուլ գնացին:

- Այ տնաքանդ,- ասաց,- վառեց. բերել դատարկ փորս ես ածում, չես ասում էս տղեն երեք օրուգիշեր ոչ հացի երես է տեսել, ոչ տեղաշորի: Կերածս եղել է՞,- ասաց,- տերտերի մի խակ զկեռ:

Մեր բարեկամ թուրքերը մեզ սովորեցրել են, որ ոչխարի մսի վրա կացին բանեցնելը հանցանք է - ոսկրախաղերով-խաղերով, դանակը ձեռքիդ մեջ խաղացնելով պիտի մանրես, կացինը ոսկորը փշրում է: Ջանդառը թուրքի նման մի երկու կտոր խաղերով-ոսկրախաղերով կտրեց ու,- Դալո՜ոոյ,- ասաց,- աստանավիս, Մելիքյան, գլուխդ վրայիցդ ընկնում է: - Բայց Մյուս Թեվանը՝ Սիրունը, գործին տեր չէր կանգնում. իր նշանավոր կապույտ կոստյումը հագին, ձեռքերը գրպաններում՝ ետխլված որձերի կողքին պտտվում ու մի տեսակ օտարի նման զննում էր, կարծես կամ որձերն էին ուրիշի, կամ ինքն էր ուրիշ: Ջանդառն ու Սոփին մարդուկնիկ իրար նայեցին ու առանց բառերի իրար ասացին. դրա պարոնությունը բռնել է: Սոփիկը տնավարի բարկացավ, թե գնա շորերդ փոխիր ու էս մսին արի տիրություն արա, բայց սիրուն երեսը նա դարձրեց ու թարս նայեց, այսինքն թե էս կաստյումը որ քո ամուսնու հագին լինի՝ քո կարգադրությունները նրան կանես: Ու դեռ ավելին. խեղճ

նորահարսի վրա, ձմերուկը չնայած Սոփին էր կտրել, բարկացավ՝ թե ուրեմն չի կարելի երեխային այդպես ձմերուկի մեջ կորցնել: Դրա քաղաքավարությունն իսկապես բռնել էր:

- Բեր,- ասաց Ջանդառը,- բեր. շիշդ դեմ արա՝ էս անտերը թող մի քիչ լուսավորվի:

Կնոջ ձեռքից մի երկու կում էլ խմեց, ծիծաղեց ու թավալվեց: - Էս անտերի դմակը տեսա՝ հիշեցի,- ասաց,- դմա՜կ, դմա՜կ, դմա՜կ, տղերք, փափո՜ւկ, ուսդ տակն ես տալիս թե չէ՝ գլուխդ մեջը թաղվում է:

Բայց Մյուսն ըստ երևույթին մտադիր էր կոտրել նաև Ջանդառի տրամադրությունը: Այնտեղից այստեղ թե՝

- Իբր որ բերել ես՝ ի՞նչ,- ասաց,- էս ո՞ւմն են:

Ասացին կամ ական չեն, կամ մերը չեն, բայց նրա խոսքն այդ մասին չէր. ասաց.

- Ումը որ են՝ թող գան իրենք ճանաչեն, թե չէ՝ ես ինչ գիտենամ ումն են,- և սիրուն երեսը բարձրացրեց ու աչքերը իր նման ճպճպացրեց:

Ջանդառիս հոգսը չէր, խմել ու քունը գլխին ծիծաղում էր: - Արի,- ասաց,- եկեք,- ասաց,- այ նորահարս, մոտ կանգնիր՝ որ դու էլ լսես. Ջանդառը կինո է տեսել, ձեզ պատմում է: Թեվա՜ն,- կանչեց,- Ջարխեչավանքը գիտե՞ս՝ էն որ իրենք ասում են Հաղարծին: Տղերք, կնի՜կ, կնի՜կ, կնի՜կ, բոլորն էլ ռսի ու բոլորն էլ ինժեների: Աստանավիս, Մելիքյան: Ներողություն, բանակում էինք Մելիքյան - դերժի, դարմայեդ: Օդային գնացք են կապել, օդով գալիս երկնքից իջնում, Ջանդառիս ուսերին նստում են: Կնի՜կ, կնի՜կ, կնի՜կ, ծանը՜ր. Ջանդառս գլուխը տակն է տալիս թռցնում ձիուն՝ նկարիչը նկարում է: Ջանդառս ձեռները մեկնում, խտտում պտտում նկարվածին վեր է բերում ուղիղ գետնին - էդ

Լուսյան մի՞ն: Ջանդառս ուսը դմակի տակն է տալիս ու թռցնում ձիուն՝ նկարիչը նկարում է - էդ Դուսյան երկո՞ւ: Ջանդառս գլխարկը գլխին ուղղում ու պատրաստ կանգնում է - էս Նադյան էլ երե՞ք: Ջանդառս քրտնե՞լ ջուր է կտրել, բայց օտար ժողովրդի առաջ ամաչում ու քրտինքը ետ է քաշում, ազնիվ խոսք, խակ զկեռն էլ բկումն է մնացել, այ դրա տերն էլ էդտեղ մեռնի: Ջանդառիս գլխարկը մի աղջկա գլխի նկարվեց. աղջի՞կ էր, տիկի՞ն էր՝ էդ էլ ինքը կգիտենար. բայց որ ձին երեսուն կնկա տակ նկարվել է՝ էդ երդվելու բան չի:

Սոփիկը դե կին է, դեռ Ջարխեչավանք էլ հայտնի էր, որ այդ պատմության առաջ Սոփիկն իրեն կին է պահելու, այսինքն պռոշները սեղմելու ու չի լսելու, բայց Թեվիկը. ինքը չուրախացավ, մի բացատրություն էլ իրենից չհանեց, մի քիչ էլ ինքը չբազմացրեց՝ բավական չի, եկավ կանգնեց թե՝

- Էդ ի՞նչ ես պատմում, արա:

Այդ թատրոնը երևի իրոք պատահել էր, Ջանդառս նորից սկսեց.

- Ես երեսուն եմ ասում՝ դու քառասուն ու հիսուն իմացիր. - Ջանդառդ էդքան մեկ-մեկ խտտել դրել է ձիուն, նկարիչը նկարել է:

Աչքերը փակեց ասաց.

- Ի՞նչ ձի:

Ջանդառը խեղճացավ ու վիզը ծռեց: - Սիմոնի խեղճ յաբուն,- ասաց:

- Բա հիմա ո՞ւր է,- ասաց:

- Չի եկե՞լ,- խեղճացավ: - Գոտիկս գլխից հանեցի, ասացի դու գնա, պիտի որ եկած լինի:

Խեղդում էր, ուղղակի խեղդում էր, չէր ասում էսքան տարվա

ախպերս ու ընկերս է: - Տերը որ հարցնի՝ էդպես էլ կպատմես,- ասաց,- կասես Ջարխեչաձորում կապը գլխից հանեցի, ասացի էս գելուգողի միջից դու առանց ինձ դուրս արի, ես գունավոր ավտոբուս եմ նստում ու չգիտեմ ինչի ետևից ուր գնում: - Ու բերանն սպիտակել էր, աչքերը ճպճպում էին: Ու սովորություն ունի՝ աչքերը փակում ու երեսը բարձրացնում է, փակ աչքերի վրա բարակ կոպերը թրթռում են, բարակ, սպիտակ շրթունքների կոշտությունը դե սարի կոշտ եղանակից է:

- Ներողություն,- ասաց (Ջանդառը).- հարցը մեր կողմից լավ չէր մտածվել, ներողություն: Այսինքն դեռ ժամանակ չէինք ունեցել՝ որ քննենք ու հասկանանք, շնորհակալություն:

- Դե ուրեմն ձենդ կտրիր,- ասաց:

Բայց Ջանդառը պայմանը տեղնուտեղը մոռացավ: - Այտա՜,- ծիծաղեց,- բա որ ասեմ խտտեցի՝ ասեմ խտտեցի ի՞նչ արի:

Այդ հիմար բերանբացության վրա Թեվիկը մատը տնկեց, բայց թե՛ մատը տնկված մնաց ու թե՛ Ջանդառի բերանը՝ հիացմունքից բաց. Աճարկուտ մեծ ծմակի գլխով՝ Նավ հին ուրթի ուղիղ մեջտեղը, ուղիղ Նավի կենտրոնում, իրարից այնքան հեռու՝ որ տեսնողն ասի երեքն են ու երկուսը չեն և իրար այնքան մոտիկ՝ որ նայողը տեսնի ու ասի նրանց երեքի հին միությունն է, գլուխները բարձր կանգնել էին Ռոստոմի շիկաբաշ հովատակը, Ավագի պառավ մադյանը, Սիմոնի կարմիր յաբուն՝ Ծմակուտի վերջին ձիերը, - Նավի մյուս երեսի ձորից արածելով-արածելով դուրս էին եկել ու այս երեսի լանջերն իջեցնելուց առաջ մի րոպե կանգնել մեր ծանոթ, մեր հայրենի, մեր արդեն պառավ աշխարհի դեմ՝ որ հնձած արտերով, ցելերով, անտառներով, բացատներով ու կենտ ծառերով գնում է մինչև՜ Քռի տաք մշուշները:

Ուրեմն ուրցով, աղով, Սոփիկը պահած սոխ ուներ՝ սոխով ու պատկերացրեք համարյա թե զուտ իրենով, այսինքն համարյա թե առանց ջրի, ինչպես որ քաղաքացի հյուրերն են մեր պղնձի վրայից մեզ դենն անում ու պատրաստի մսից իրենց խաշլաման իրենք դնում, խաշլամա էին դրել, մսի քաղցր հոտն արդեն ելնում էր, իրար կողքի նստել ու սպասում էին գոնե մի քիչ եփի, ու Ջանդառ Թեվանը հանցանքը վրան առավ, գնդապետական գլխարկի հովանոցը ետ հրեց ու Աճարկուտ մեծ ծմակի գլխով նայեց Նավ հին ուրթին, որտեղից տարել փաստորեն ձին կորցրել էր, - գլխարկը ետ դրեց ու հիացմունքից սառավ:

- Գյոզընղադընեմ է՛,- թուրքերեն ասաց,- բախտ է, բախտ:

Դեպքը պատահելու հետ, հենց նույն րոպեին, երկինքը մթնել ու Ջանդառիս աստղը դուրս էր եկել. դուրս եկել Ջանդառիս առաջն էր ընկել ասել՝ գլխարկն աչքերիցդ բարձրացրու ու ետևիցս արի, քո կորստի տեղը ես գիտեմ: Եղել էր, որ Ջանդառս սխալվել, զուր տեղը ճանապարհ ու ժամանակ էր կորցրել, Ջարխեչավանքի կինոն դե մեր պատճառով չեղավ, էդ չհաշվենք, մի ամբողջ գիշեր քարացել, Կեչուտի թփուտներում անտեղի սպասել էր՝ թե խեղճ գողը հիմա գալու իրենով է ընկնելու, իզուր, բայց աստղը հետո ասել էր. սխալվեցիր, տղա, հիմա էլ էսպես գնանք:

Ջանդառի աչքերը լցվեցին, Ջանդառս օրիորդի պես լաց եղավ: - Այտա,- ասաց,- այտա՛... եկել է, էն թշնամի ձորից ուրեմն դուրս է եկել, եկել հայրենիք:

Ձին, հասկանում ենք, ամեն տեղ ձի է (Ղազախի ու Կենտրոնի մորթարանները մոռանանք), բայց մեր սիրտը մի քիչ թուլանում է՝ երբ մեր Ծմակուտի ձիերին, տղերքին, գնացած աղջիկներին, վաճառված կովերին, աստծու գառներին պատկերացնում ենք

օտարության մեջ, կարծում ենք նրանք բոլորն էլ մեզ նման կարոտ ու տխրություն ունեն, օտար իրիկվա մեջ կանգնում են ու լացները գալիս է:

- Այտա,- ասաց,- այտա... որ ավտոբուսի խնդիր առաջացավ՝ գոտիկս վզից հանեցի, ասացի հիմա դու ու քու խելքը, ճանապարհը մենակ ես գտնելու, թե գտար՝ ասացի, աստծու չափ շնորհակալ կլինեմ, թե չգտար՝ ուրեմն իմացիր, որ Ջանդառը քու տիրոջը մի մեծ վատություն արեց: Հայրենիքն ուրեմն քաշե՞լ,- ասաց,- էն ձորից հանել է:

Մյուսը գործկոմի նման կաստումավորված, դժգոհ, այսինքն որ ինչ էլ անես՝ անգոհ է, կանգնած էր, - Ջանդառը որբևայրի կնկա նման այնքան ուրախացավ ու տխրեց, քիթը վեր-խմելով այնքան լաց եղավ ու ծիծաղեց, որ Սոփիկը վրան բարկացավ.

- Իրենց գլուխն էլ հողեմ, իրենց ձիու գլուխն էլ. պետքները լիներ՝ իրենց դռներին կպահեին, հրեն փողը մուծել ավտո են առնում, հերիք է,- ասաց:

- Չէ, Սոփո, չէ,- ասաց,- դու կնիկ ես, չես հասկանա. ավտոյի դեմ խոսելը մեր բերանի բանը չի... է՜, ջահել ժողովրդի գունավոր ավտոբուս... ավտոն լավ է, բայց մեր ձին: - Եվ իր արդարությունը նրանից խնդրելով վիզն այնպես խնդրողական ծռեց՝ որ Սոփին կարմրեց ու երեսը շուռ տվեց: Էդ էլ ուրեմն ծիծաղի առանձին նյութ էր, երեք օրում կարգին ուրեմն կարոտելս էր: Էսքան տարվա մարդուկնիկ ենք՝ երեսին մի անգամ կարգին չենք նայել տեսնենք ինչ տեսքի է և ետևից մի անգամ չենք նայել տեսնենք ինչ ձևի է, Դսեղա մեր քեռոնք ինչպես որ ասացին քեզ համար աղջիկ ենք հավանել ու որ անունն էլ իմացանք Օհանի Սոփնի նման Սոփի է, ասացինք ուրեմն էդ է, Թեվիկ-Սոփիկ: Ասաց՝ «հողեմ ջարխեչա լրբերիդ

գլուխը», այսինքն թե հավատում է՝ որ ամուսինն այնտեղ ուրախության է եղել, բայց սրտի խորքում իսկական եղելությունը գիտեր - որ խեղճ տղան նրանց տակ տանջահար է եղել և, ձիու վերադարձի համար եթե այդքան ուրախանում է, ինքն է ուրեմն սարսափի առաջ կանգնած եղել:

Ինչպես որ դեպքն էր հանկարծահաս, Քեղուտի լանջերից ձորի ու ձմեռանոցների գլխով Նավ-ուրթ՝ նա նշան էր դրել Ռոստոմ Մելիքյանի հպարտ շիկաբաշին, որ ձի չէ՝ ձիու հին ժամանակների կայծակ է, բայց տիրոջ պես հպարտ ու իրասածի՝ Ջանդառին մոտ չէր թողել, ասել էր դու իմ Ռոստոմը չես: Ավագի պառավ զամբիկը հանգիստ բռնվել էր, բայց այդ դեպքում շիկաբաշն ու յաբուն նրա ետևից կգնային - թաքուն հետախուզության փոխարեն Չինգիզխանի բացաշկարա օրդու: Կանգնել վիզը ծռել, Սիմոն քեռու յաբուին խնդրել էր. ախպեր ջան, խնդրվում եմ, մոնղոլիս կարճ ոտներով հասնելու եմ է՞ Պողոսքիլիսա ու Ջարխեչ, ախպեր ջան, էս է ձմեռ է գալու՝ սարում մնալու ենք Ջանդառս ու դու, կթողնեմ դեզիցս խոտ կուտես: Յաբուն կանգնել, թառանչել ու իրեն բռնել էր տվել, համարեք թե ասել էր. որ Ջանդառն ես՝ գնանք: Ջուտ մի գիշեր Կեչուտ անտառում Ջանդառի տակ քարացել էր, մի երկու տղամարդը չհաշված՝ զուտ քառասուն կնոջ տակ Ջարխեչավանքում նկարվել էր...

Բայց մեր խոսքը ձիերի մասին չէ. ձիերը Նավ-ուրթից այս կողմի վրա իջան, բաց լանջի խանձլկուտներում էին. Ջանդառ Թեվանի մասին էլ չէ - Մյուսի՝ Սիրուն Թեվըկի մասին է:

Լոբու չոր սարին քեզ օրինակ, անծիծ-անքամակ մի սև ղարաչին երեխայի նրա արբունքն ինչպես որ խլեց ու նրան նվազ թողեց, կին արարածը ինչքան որ քաղցր կլինի և ինչքան

որ լեղի՝ զոհված եղբոր, համարիր հոր անթույլատրելի կինը, Թեվանի կյանքն այդպես գլխին խփածի նման էլ գալիս է, ասում ես ակունքը ի՞նչ հիմնավոր են պղտորել: Սխալ կապած բեռան պես՝ ասում ես հիմա շուռ կգա, հիմա ձորը կընկնի թարսված, շփոթված գալիս է: Որ, օրինակ, օրինակի համար ենք ասում, երեխան խեղդվելով տուն ընկնի՝ թե միլիցավորված բժիշկները գերեզմանից մամային հանում են և անծիծ-անքամակ ձոթռաբերան սև ռադիոյի մոգոնանքն իսկույն տարածվի ժողովրդի մեջ՝ թե առձեռն թույնի կարծիք կա, Թեվանը Վարդոյին թույնով սպանել է, ուրեմն պատկերացրեք: Ու քեզ գերեզմանին մոտիկ չթողնեն, ու ժողովուրդը քեզանից ետ քաշվի և նույնիսկ Ջանդառը քո ձանապարհից մի կողմ կենա ու հավատա՝ թե հնարավոր է, որ դու հացի հետ թույն տված լինես քո երեխաների մորը՝ քո ախպորը, քո հնձվորին, քո տան մշակին: Ու հետո մի անմեղության թուղթ, մի բացսիրտ հայտարարություն, դժբախտ հղիության մասին մի տեղեկանք չտան՝ այսինքն որ Հովտի բժիշկը արնով է գցել - լուռ քաշվեն տեղի կիսաջոջերի հետ լակելու-լափելու ու քեզ թողնեն թշնամի իրիկվա մեջ այնպես մոլորված, որ նույն անծիծ-անքամակի՝ ծմակուտյան մեր սև ռադիոյի բաց ծաղրը թշնամական երեկոյի մեջ բարեկամի կանչ թվա՝ «տեգրս անպարտ դուրս եկավ, ախչի՜, սպիտակ ուլս ո՞ւր է՝ տեգորս սուրբ ոտի տակ մորթում եմ. եսի՜մ, ասում եք թույնն ինքը չի տվել»: Որ, օրինակ, օրինակի համար ենք ասում, իր եղբոր զավակը՝ իր արյունը, փաստորեն եղբայրը, մեծը՝ պեպենոտը, գրասենյակի դռանը ժողովրդի առաջ խփի փռի ու բանակային ոտները շեք-տված գլխին կանգնի, ուրեմն պատկերացրեք: Իբր թե ինքը միշտ այդպես կուսակցական-բանակայնորեն մաքուր է մնալու,

Ծմակուտ անկարգ գյուղում իր ապագան մաքուր է պահելու - մաքրում է նաև մոր հին պատիվը: Իբր՝ հազար ներողությունը բերվելու է ոչ թե անգիտակից արբունքը պղտորված, փաստորեն աղջիկ-երեխայի պես լլկված Թեվկին, այլ տա-քացած լաչառին: Այսինքն մենք իրավունք չունենք առանց մեր եղբոր ընտանիքի հետ խորհրդի նստելու մեզ համար նոր կին բերել, նրա խնդրանքով կոստյում հագնել ու գյուղամեջ ելնել - մենք գյուղամիջի տղա չենք. չէ՞ մի մատ երեխան էլ ոչխարաշանը գյուղում ասում է կորիր, ոչխարդ ո՞ւր է, գնա ոչխարիդ մոտ... այսինքն թե ոչխարաշան տեղը գյուղն ու գյուղամեջը չի, և շունը մի մատ երեխայի առաջ էլ պոչն իրեն է քաշում ու լուռ հեռանում իր սարերը, իսկ երեխայից նեղացել է թե չի նեղացել՝ անհայտ է -քաշվում է իր ոչխարի մոտ:

Բայց ինքն էլ իր մեղքն ունի, այսինքն չասենք թե ինքը լրիվ անմեղ անտեղյակ է. դե եթե գիտեիր՝ որ քո տեղը սարի ոչխարն է, էլ ինչո՞ւ էիր քեզ իզուր գյուղամեջ հանում, որ հին հանցանքդ իբր թե միտները բերեն ու խփեն փռեն. եթե հասկանում էիր, որ ում էլ ուզես՝ քո սրտի ուզածը նրանց սրտով չի լինելու, ինքդ էլ գոնե այնքան տղամարդկություն չունես, որ ամենօրյա ճնշման առաջ կույրուխուլ լինես, էլ ինչո՞ւ էիր խեղճ աղջկան բերում՝ որ հետո դուրս անես ու քոնոնց առաջ գնաս փորահաց մշակի նման հաշվետու լինես ասես. հա, ախպեր, ես ձայն չունեմ, չկամ, դուք եք ու ձեր խոսքն է, իմ երեխաների վրա դուք ում բերեք՝ նա է: Քո իրական առաջնորդը եթե քո եղբոր ընտանիքն ու գյուղի ձայնն է, էլ ինչո՞ւ էիր իբր թե առաջնորդ կարգում ինքդ քեզ:

Հիմա էլ վեր կացավ՝ թե ես գնացի Տաշքենդ, Տաշքենդ եմ գնում, այսինքն Միջին Ասիա: Ջանդառին ու Սոփնին տարավ կանգնեցրեց ետ-ավարված որձերի մոտ, ետևներից նորահարսն

ու նորամանուկն էլ գնացին, կանգնեցին ու նայեցին՝ թե ինչ է ասում ու ինչ է ցույց տալիս, հայրիկից իրենք ինչ են սովորում, տարավ որձերի մոտ կանգնեցրեց, ձեռքերը գրպաններում ինքը մտավ որձերի մեջ ու թե՝ էս ո՞ւմ ապրանքն են, անտեղի էս ի՞նչ ես ետ բերել, և աղջիկ-երեխայի իր սիրուն երեսը պարզեց ու սարի սիրուն արևի մեջ աչքերը ճպճպացրեց:

Ասավ (Ջանդառը).

-Էդ ի՞նչ ես ասում, արա, որ էս էլ մի ժամ է ասում ես՝ չեմ հասկանում:

Ասավ (Սիրունը).

-Էն է զահրումար եմ ասում:

Ասավ.

- Բա քու էդ հարցը իմ էս ուրախությա՞ն օրն էր բռնելու:

Ասավ.

- Իբր որ ուրախացել ես՝ էդ ինչի՞դ վրա ես ուրախացել:

- Ո՞նց թե,- ասավ: Ասավ.- Դիլիջանից ու Ղազախից հետ աշխարհը պտտել եմ, ուրիշ որ բան չլինի՝ զուտ երեսուն ռուս եմ խտտել: Ախչի,- ասավ,- մի էդ արաղը դրա բերանը տուր՝ տեսնենք ինքն ուրախանում է թե չէ:

Կիսատ շիշը թևի տակ ու ձեռքը բերանին՝ Սոփին ասավ (Մյուսին).

- Ախպերո, վայ թե մերը չեն՝ էս քնակոլոլ շաշը չի ջոկում:

Ասավ (Մյուսը).

- Ես չգիտեմ, թող ինքը խոսի:

Վերջը, ինքը ասավ՝ նրանք ասացին, ինքը ոտքով մեկ-մեկ խփեց ու հարցրեց՝ նրանք ճանաչեցին ու ասացին, և քսանհինգ որձից ոչ մեկը իրենցը՝ իրենն ու Ջանդառինը չէր: Ասաց.

- Թող գան իրենց անտերին տեր լինեն, ես իրենց մշակը չեմ:

- Եվ ձեռքերը կապույտ կոստյումի գրպանում՝ ավարի միջից դուրս եկավ:

Ջանդառն ասավ.

- Արդար ես: Բայց մենք ի՞նչ բանի կենանք:

Սիրուն երեսը բարձրացրեց, խուփ կոպերը թրթռացին, ասաց.

- Ես գնում եմ էնիքը՝ Տաշքենդ:

Որձերից երեքը Վլադիմիր Մելիքյանի անունով էին: Հազար ինը հարյուր ուրեմն քառասունվեց թվի ամռանը միլիցիայի լեյտենանտ Վլադիմիր Մելիքյանը տասը տարվա բացակայությունից եկել ասել էր քաղաքում մի մաքուր աղջիկ չկա, մեր Համբո հորեղբոր Աղավնու հետ նշանվել, կարմիր սիրուն շոր էր հագցրել ու նշանածի հետ ձիերով եկել էին սարը՝ որ սարերով գնան Դիլիջան, էնտեղից էլ Երևան: Կարմիր շորը հագին՝ Աճարկուտ մեծ ծմակից դուրս եկան, Նավ-ուրթի բաց լանջին լեյտենանտը ատրճանակը հանեց ու իրար վրա երեք անգամ կրակեց, և դեմ-դիմաց Արկանք խոտհարքում զենքի կարոտ ինչքան երեխա, նշանվելու պատրաստ աղջիկ ու զոհվածի ինչքան կին կար՝ կարոտից թուլացան, զոհվածների ցամաքած այրիներն ասացին. «երանի՜... Վլադիմիր Մելիքյանը եկել նշանածին սարերով-սարերով տանում է Երևան քաղաքը ցույց տա»: Մեր եղբայր Օհանը կոլխոզի ոչխարի մեջ մի անձնական որձ ուներ, քառասունմեկ թվի ամառվանից մի մեծ նպատակով պահում էր՝ որ մեր Ալեքսան եղբոր վերադարձի հետ նրա ոտի տակ մորթի, բայց որ սև թուղթը ականատես վկայով հաստատվեց՝ որձն արդեն հազար հոգսի առաջ էր, չխնայեց, քաշեց մորթեց Վլադիմիր Մելիքյանի ոտքի տակ, քանի որ պատերազմից շատ առաջ մինչև չորրորդ դասարանը մի նստարանի

էին նստել, չորրորդից Օհանը փախել էր սարերը գառնարած, իսկ Վլադիմիր Մելիքյանը, որպեսզի Հովտի դպրոցական ճանապարհին խուլիգանություն ու ծխել չսովորի, ուղարկվել էր միլիցիայի դպրոց ու Երևան քաղաքում հասել լեյտենանտի բարձր պաշտոնին: Լեյտենանտն ուզեց նագանը նվիրել Օհանին, բայց Օհանի մի աչքը խավար էր ու զենքից վախենում էր, երեսը շուռ տվեց: Խավար աչքը Օհանը կկոցեց, մահակը մեկնեց ու հոտի մեջ ցույց տվեց՝ թե էն ոչխարը քոնն է, քանի ծնեց ու ինչ որ բերեց՝ քոնն է: Հազար ինը հարյուր ու քառասունվեց թվի քաղցած ամառվանից համարվեց, որ մեր հորեղբորորդի Վլադիմիր Մելիքյանը այստեղ ոչխար ունի, և նրանց անգիր պայմանը մեր եղբոր կորստից հետո էլ կա, եթե աստված չանի միլիցիայի գնդապետ Մելիքյանը բացակայի՝ պայմանն աշխատելու է նրա որդիների ու Ջանդառ Թեվանի վրա:

Բնիկ հովտեցի անասնաբույժը (այլանդակ լակում է), երբ Օհանի ոչխարը հանձնաժողովը երկու Թեվանի վրա կիսում էր, ասաց. «Շան որդի, ձեր անասնաբույժը մի երևանցու պատիվ չունի՞. էդ ո՞նց է միլիցիան ձեր առաջ ոչխար կունենա, մենք չենք ունենա», ու բերեց մի երկու սատկածը պահ տվեց: Պահ տվեց ու տակն ամեն ավտո ընկնելով, կենտրոնից ամեն հյուր ունենալով՝ շշերն առած գալիս են, իրենք գալիս ջոկում մորթում, արաղը մինչև տակը խմում, Սոփնի պահուստն էլ գտնում ցամաքեցնում ու գնում են: Ու ամեն գնալով ասում է. «Վախեք ոչ, հաշիվս կորցրել չեմ, մնաց մինը»: Ինչ որ է, մեկն իսկապես դեռ նրանն էր:

Մինչև հիվանդությունն ու մահը և մահից հետո էլ պատկերացրեք դեռ մի երկար ժամանակ մեր մեծ եղբայր

Օհանը մեր երեք տնտեսության, ամբողջ ֆերմայի և Ծմակուտն ինչքան սար ունի՝ առհասարակ մեր սարերի տերն էր, նրա Սոփին էլ՝ տիրուհին: Ո՞ւմ է պետք անթագավոր թագուհին, Օհանի մահով նրա Սոփին բախտից խռովեց, մեր երեքի ընդհանուր եղած-չեղածից ինչը որ իրենցը համարեց՝ հավաքեց ու սարերից իջավ: Խոսքով խնդրելը դժվար էր, առավել դժվարը հասկանալի մի բացատրություն գտնելն էր, անխոս մոլորված նայեցինք, ասացինք ինքը կհասկանա ու չի անի, այսինքն մեզ վրա տիրուհի կմնա - չմնաց. ծանր էր լինել հարազատ այն վայրերում, ուր ամուսինը եղել էր երգուկատակով, եղել էր ու հիմա չկար, ամայի էին: Հատուկ՝ մարդ էր ղրկել ու Սիրունի վրայից պահանջել Օհանի դանակը ու ռադիոն՝ որ Մելիքյանի քսան տարվա նվերն էր. այսինքն թե դանակն ու ռադիոն պիտի լռեն ու մնան, չպիտի երգեն: Մեր բարևը չի առնում, և մենք էլ ամաչում ենք կանգնել բարևել, հարցնել, չգիտենք ինչից ենք ամաչում, թե՞ մենք էլ մեր հերթին ենք մահվան վրա նեղացած: Քաղաքներում տղա ու մարդի-գնացած աղջիկ ունի՝ այսինքն փեսա, նրանք էլ դե ընկերներ կունենան, ասում ենք իրենց ընկերներին երբ ուզում են թող հավաքեն, ուզում են խմբով գան, ուզում են մենակ - իրենց հին հայրենիքն ու հորենական տունը նրանց առաջ որբևայրի չի լինելու, այսինքն երբ դռանը մի երկու հավ է լինում ու մի քանի մարգ լոբի. զուտ մի չորս-հինգ լավ որձ Օհանի անունով ենք պահում: Երկու Թեվանս էլ պատերազմում զոհված եղբայր ունենք, Ջանդառս՝ մեկ, Մյուսս՝ երկու, ու երկուսիս ծնողն էլ տարիքով մեծ էին, համարիր որ մեզ պապ կգային, իսկ տղա-երեխան, ով ինչ ուզում է ասի, ջահել ծնող է սիրում, այսինքն որ և ընկե՛ր լիներ ու թուրքերեն ու վրացերեն ուշունց սովորեցներ, և հա՛յր ու նրանից դու քաշվեիր,

բայց մեր ծնողները պապեր էին եղել ու հին խավար ժամանակներում մեզ ունեցել էին. մեր երկուսի վրա հերահոտ ընկեր Օհանը եղավ, մեզ Ջանդառ նա կնքեց, այսինքն ժանդարմ, Մյուսի նման խեղճ գառանը անծիծ-անքամակ սև գիշանգղի ճանկերից Օհանն ազատեց, աչքն այսինքն կուչ-ածավ, գլուխն իր նման ետ քաշեց ու դագանակը երկուսի արանքով մեկնեց - էդ ի՞նչ բանի եք, էդ հայ-քրիստոնեություն չեղավ, չի կարելի. հետո՝ ոչխարի դժվար բնույթը մեր երկուսին էլ Օհանը սովորեցրեց, մենք նրանից սովորեցինք, մանավանդ՝ Մյուսը, քանի որ Ասորենց տղերքը մինչև այդ ոչխար ոչ ունեցել էին, ոչ էլ ոչխարած էին տվել, և մեր համարիր սոցիալիստական պարտավորությունն է Օհանի զավակների առաջ այն լինել, ինչ որ մեզ համար ինքը եղավ. չորս-հինգ որձը նրանցն է:

Մեր երկու ընտանիքի երեք զոհից նկար միայն Ակոփն է թողել, նրանց Մանվելն ու մեր Ալեքսանը զուտ էնպես՝ եղել են ու չկան: Մեր զոհի անմեռ պատկերը մեր նանի լուռ մրմունջն էր, մեր Սերգո հոր մոտ այսինքն իրավունք չէր ձենով գանգատվել ու լաց լինել, ու մեր հոր վայրիվերո, էստեղից, էնտեղից իրար գցած հայերեն-թուրքերեն զարզանդելի բայաթին՝ որ քսան-երեսուն տարի հանդերում մենակ դնդնաց-դնդնաց ու բերեց մեր ախպեր Օհանի վրա երգեց, էլ առիթ չէր լինելու, ու մեր զոհին քաջ ավազակ, Անդրանիկ փաշա զորավար, գյուղխորհուրդ, սուրբ Բարձրաքաշ վանքի դռան մատաղ ու կոմունար էր հռչակում. իր տարիքի մեծերը մեր նոր սերնդի առաջ ամաչեցին ասացին խելքդ որ ետ ես տվել՝ ձենդ ուրեմն կտրիր, նոր սերունդն էլ զարմացած՝ *Մելքքանց տունն ուրեմն զո՞հ է ունեցել, էս ի՞նչ Ալեքսան է երգվում, էդ ո՞ւմ հերն է եղել. ոչ մեկի հերը* - մեր անժառանգ, աննկար, անհետ ախպերը. յոթ-ութ տարեկան

հասած տղա էինք, պատկերը մենք էինք պահելու, բայց անտեր մնա ժամանակը - նրա անմեղ տեղը գալիս Օհանի շարժմունքն ու պատկերն է կանգնում: Էն ժամանակվա համալսարանն էլ ու միջնակարգն էլ յոթնամյակն էր, անմեռ ոսկի վկայականը շրջանակի մեջ ապակու տակ հրեն պատից կախած է, յոթի վկայականը եթե պատկեր է՝ մեր զոհի նկարն ուրեմն էդ է: Մեր Ալեքսան եղբայրը՝ Ծմակուտի ըռխավոր գյուղամիջի դեմ մեր անլեզու տան իրավաբանը, գնում է Դսեղա մեր քեռոնց Հովհաննես Թումանյանի անունով մեր անունը Հովհաննես գրի, բայց գնում տեսնում է Թեվան ենք. Ղեվանտ Վրացյանի օձիքը հավաքում է թե *մերոնք ինչո՞ւ պիտի Օհան ու Թեվան լինեն, ձերոնք՝ Մարսել ու Մարսելյոզ*: Ղեվանտի օձիքը, ոչ, քառասունմեկ թվի հունիսի քսաներեքին է հավաքել՝ *դե որ էդքան լավ խոսում ես, ինձ հետ ճակատ ես գալու*. գնացին ու էդպես էլ գնացին ու ասեկոսի սուտնուճիշտը իրենց հետ տարան: Ղեվանտ Վրացյանն ասում է՝ *նախ և առաջ ձեր տանը մի Հովհաննես արդեն կա, Օհանը Հովհաննեսն է, հետո՝ ձեր թաղում մի Թեվան էլ կա, կմեծանան իրար Թեվիկ կասեն ու կոլխոզի գառը միասին կպահեն*: Դժգոհ չենք, բայց գնացինք դպրոց տեսանք ոչ Թեվան ենք, ոչ էլ Հովան - Մոնղոլ ու Գելխեղդ ենք: Դասից ու դասատվից վախեցանք փախանք սարերը, եկանք տեսանք մի երկու անուն էլ էստեղ ունենք՝ Մոնթ ու Վարդապետ. սառն անձրևը խփել մեզ քարին ծեփել էր ու որ պարկը վեղար արած կանգնել մնացել էինք՝ էդ ուրեմն Մոնթ ու Վարդապետ էինք, իսկ որ Վլադիմիր Մելիքյանի պաշտոնական գլխարկը մեր գլխին լավ հարմար նստեց՝ էդ էլ արդեն Ջանդառ ու Ջանդառ էինք՝ ժանդարմ, մեր ախպեր Օհանը գլխարկը դրեց մեր գլխին ու Ջանդառ կնքեց: Մեր սարվորությանը Օհանը դեմ էր. ինչպես

որ նախկին հներում Ծմակուտի խեղճ տավարի առաջ սարերի ճամփան էր կտրված թուրքի չոբանի դագանակով, այդպես էլ մերը՝ Օհանի, և ինչպես որ մերոնց հին տավարի ձորի տապ շոգից ու ճանճից իրեն սարերի քամուն էր տալիս ու պոզն արնակոլոլ ետ ձորն ընկնում, այդպես էլ մենք էինք դպրոցից փախչում ու մեր դեմը Օհանի մահակն էր, չէր ուզում, Մելըքանց Սերգոյի տնից մի Հովհաննես Թումանյան հանելու մեր զոհի պատվիրանն ուզում էր մեզանով կատարի, բայց թե մեզ համար զոհից էլ թանկը ինքը Օհանն էր, չէինք կարողանում փեշից պոկվել: Փալինքը մեր քթից կախվել էր, տոպրակը վեղար արած սառել քարին կպել էինք, ծիծաղեց, մեր անունը Մոնթ ու Վարդապետ դրեց, ասաց *դե լավ*: Օրիորդ դասատու վարիչուհի Սիրանուշ Վրացյանը ձի նստեց մեր ետևից չորս անգամ եկավ սարը, չորեքթաթվում ու ոչխարի մեջ էինք մտնում, այսինքն թե փախստական Թեվանը չենք ու խոյ ենք - մի ծիծա՜ղ: Ասում էր *դատի կտամ*, այսինքն թե իրավունք չէր երեխայի ապագան ճնշել, բայց թե մեր բաժին պարոնը քաղաքում արդեն լեյտենանտ էր, իսկ աշխատավորն ուզում էր միշտ այստեղ, գառնարած, Թեվիկ, Թեվո և դեռ Վարդապետ ու Ջանդառ մնալ: Ֆերմայի ղեկավարը Մնացականյան Համիկ հորեղբայրն էր, օրիորդ Վրացյանի ամեն գալով գլուխը որևէ ձորում պահում էր, ուրախ էր՝ որ չոբանների ցեղը նոր չոբան է տալիս և ուրախ էր՝ որ աղջիկը քաղաք Երևան գնաց: Գյուղի գլխավոր հոգսատարը՝ գոդի Արտոն, Համիկ հորեղբորը համոզել, որբևայրի մեծ Սոփնին ֆերմա կթվոր էր ղրկել՝ որ Օհանի աչքի առաջ լինի, իրար տեսնեն ու հավանեն. նախատեսվածի պես՝ Սոփնին ուզելու հարցն առաջացել էր, մեր հալիվորը գյուղից ասել էր կարելի է, բայց Օհանը դեռ ազատ էր, Մյուս Թեվիկն էլ՝ մի խայտա-

ռակ կապից հանկարծ ու վերջնականապես շատ ուժեղ կտրված, - օրիորդ Վրացյանի ամեն գալով-գնալով, այսինքն որ մադյան ձիու լայն գավակն էր ու մադյանի վրա իր գավակը, խուլիգանությունը տղերքին կալնում էր, չէին ասում կողքներիս անհասկացող երեխա կա. մեր ախպեր Օհանը բռնեց մեզ ոչխարի միջից հանեց՝ թե դասատվի ձեռը չի տալիս, դասատուն գնացել է, ու էդ տժտժան շոգին Արկանք խոտհարքներից ղրկեց է՞ Նավ-ուրթի լանջերը՝ թե վրացու թիֆլիսա մուրթելը Թեվըկի մոտ է, գնա բեր. երբ դեմ-դիմաց Աձարկուտ լանջերին էինք՝ ձեն տվեց թե *վռազիլ մի, քեզ չարչարիլ մի, կամաց գնա. էն է խամուտի նման բան է, գլխովդ ձիտդ գցիր ու հանգիստ արի*: Մինչև հիմա չգիտենք մուրթելն ինչ է, մոտավորապես կռահում ենք, բայց առավել ևս հասկանում ենք նրա կատակի խոր մարդկային իմաստը - ժողովրդական զզվանքի ու արհամարհանքի անդունդ ձորից Սիրուն Թեվըկին հանում էր. այսինքն պատկերացնում ենք, որ ժողովուրդը նրան քշել է անելք ձորը ու քարը ձեռին կանգնած է, բայց մեր ախպեր Օհանը ձեռը մեկնել ասում է՝ վախիլ մի, դուրս արի:

Ժողովրդական սիրո արժեքը մենք գիտենք. ժողովուրդը ինքը հնարում, ուրախանում ասում է՝ «Ջանդառի խոսքն է, Ջանդառն ասել է». բերանդ առանց մի թուրքերեն բառի, այսինքն բերանդ դատարկ ու ձեռդ էլ դատարկ՝ գնում մեջները կանգնում, աջուձախ թուրքերեն ես խոսում իմաստը իրենք իրենցից հնարում, ծափ տալիս ծիծաղում ու ասում են *վար*, այսինքն թե ձիշտ հասցեով ենք գնացել. համարիր անծանոթ տղերքը Դսեղա հեռու երկրում նայում տեսնում են աղջիկը արդար կաթնակեր է, ասում են Ծմակուտ մի Թեվան կա, անունը Ջանդառ է, սիրտը միամիտ տղա է, արժե՝ որ էս աղջիկը նրան

հասնի: Եվ ուրեմն պատկերացնում ենք նաև ժողովրդական արհամարհանքը. ինչ լավ արարք էլ անում ես՝ նայում, տեսնում ու լռում են - չեն հավատում, արարքի տերը դու չես, դու արժանի չես նման արարքի: Չմեղադրենք. եթե տասներեք-տասնչորս տարեկանը մենք չենք եղել ու Սիրունն է եղել, եթե տաքացած լաչառից ինքն է նկատվել ու մենք չենք նկատվել, ուրեմն ասենք՝ որ մեր բախտն ուղղակի բերել է, չասենք՝ թե դա բախտը չի եղել ու մենք ենք եղել:

Դռնեդուռ էին, այստեղի մի քիչ բարձր խոսքը այնտեղ կլսվեր, տանն էլ երեք տղա-երեխա կար, ինքը Շուշանն էլ անվախ ավազակի աղջիկ էր, բայց տաքացել խելագարվել է, աչքին հրացանավոր փախստական է երևում, գնացել կեսարի տանը ձեռները ծոցում նստել էր՝ թե տեսնող է եղել, գյուղում փախստական կա, Թեվանին պիտի տաս՝ գիշերը տանս քնի: Աշխարհին ամեն մեկս մեր աչքով ենք նայում ու մեր ուզածն ենք տեսնում. լույս-դառած Նիկալ խեղճ պապը տվել է. ասել է՝ «էդ հարցնելու բան չի, աղջիկ ջան, իրա ախպոր երեխեքին պիտի փետով էլ ապահովի, նրանց մորն ուրախացնի էլ, ինքն էլ է երեխա, բայց վտանգի առաջ պիտի մեծանա՝ ախպոր տան վրա պաշտպան արծիվ դառնա»: Որբ գառան պես երևի գցած տարել է տուն անծիծ-անքամակ սև ջադուն, երեխայի մայան կտրել: Թեվիկը նվազ մնաց. Ասորենց տղերքը առանց էդ էլ մի հատուկ թափի չեն, բայց Թեվիկը նույնիսկ իրենց տղերքի մեջ է նվազ: Ամուսնու թիկունքին պաշտպան թագուհու նման կանգնած՝ լուսահոգի Վարդոն խոտհարքում նրա չարչարանքի վրա ծիծաղում էր, խորամանկ որևէ պատրվակով նրան խոտհարք չէր թողնում, ասում էր *չարչարված է, թող էլ չչարչարվի* ու ծիծաղում էր: Չգիտենք որևէ մեկի խոսքուխորհրդով թե իր նման արդար՝

Օհանը չգիտենք ինչ գործով մտնում է հանցանքի տուն ու չի հավատում, ասում է չի եղել ու բաժանում է, խավար աչքը այսինքն կկոցում, մահակը երկուսի արանքով մեկնում ու սխալ եմ տեսել: Անամոթ տաքացածն ասում է. «Քո՛ռ, դե որ էդպես է՝ ինձ ուզիր, ես չպիտի անմարդ մնամ»: Օհանն ասում է. «Կուզեմ, ձենդ կտրիր»: Ժամանակն ահա այդքան աղքատ էր, խակ երեխային մարդ էր համարել: Կյանքը գնում է, իսկ օրինավոր, բացձակատ ապահովությունը չկա ու չկա: Իրեն հազար ձևի պաշտպանեց. «Ես ուրիշի աղջիկ եմ, ինքն ուրիշի տղա - դրա ամոթը ո՞րն է». «Հենց իմանանք ինձ Ակոփի համար չէին ուզել՝ ախպոր համար էին ուզել». «Էսինչը, էսինչը, էսինչն ու էսինչը Համբոյի հետ են կապված, էսինչը՝ էսինչի - ձեր տան ամոթը ես ձեր տանն եմ պահել, եկեք շնորհակալ եղեք». «Էդ ոնց է մեծ տղամարդը ջահել աղջիկ կուզի, ջահել կնիկը իրենից մի երկու տարով փոքր տղա չի ուզի». «Էդ խի՞, էնպես ժողովուրդ չկա՞, որ ախպերը զոհված ախպոր կնկան ուզի - հենց իմանանք մի թուրք էլ մենք ենք». «Ինձ պիտի դուրս գցեի ու սրա, սրա, սրա նման գեշ վարա՞կ բերեի». «Բա էն լա՞վ կլիներ, որ երեք որբը բերաններով տայի ու ինձ համար երգելով գնայի նոր մարդ ուզեի»: Երևում էր, որ խեղճը գիշերները կրծել է ու դատարանի համար լավ պատասխաններ է պատրաստել՝ հասարակության բերանը ծեփելու է, բայց Ծմակուտ ի՜նչ դատ ու հրապարակ - լսողը թքում, տուն էր մտնում ու իր տղա-երե-խայից զզվում: Նրա ախպեր Ռոստոմը հպարտ երեսը շուռ տվեց ու մինչև գերեզման նրա հետ չի խոսելու, նրա Տիգրան միլիցիա հայրը կարմիր ձիու վրա գազազեց. «Ա՜ադ, ջինսը... նավթ լցնեմ վառեմ»:

Ինչպես եթե շունը հովվի ետևից գա սարը և հովիվը ձամփին

վրան բարկացած ու նույնիսկ մի հատ հասցրած լինի ու շունը մի քիչ հեռվից գա՝ իբր թե ինքը այդ հովվինը չի, բայց իրականում միայն նրանն է, Օհանի ետևից Թեվանն այդպես լուռ եկավ սարը: Ճամփին ինչ էր խրատել կամ ինչ էր ծաղրել,- չէ՞ ծիծաղած կլիներ, Թեվըկի արարքը վերջ ի վերջո չէ՞ անհասկացող մոզու արարք էր,- այդ մասին չխոսվեց, ինչպես նաև այն մասին, թե Ասորենց տղերքից հովիվ կլինի՞, Ասորենք սարվոր կդառնա՞ն, սարի ժողովրդի մեջ այդ դեպքը առհասարակ չքննվեց, բոլորը լուռ ուղղակի գիտեին, որ սարերի թագավոր մեր ախպերը հանդի վիրավոր կենդանի՞ ասենք, վիրավոր շո՞ւն ասենք, գլխին խփած երեխա՞, տրորված ծաղի՞կ, բերել բուժում է, հասակը կամաց շտկում է:

Բայց գյուղի ղեկավարությունը մեծ Սոփնին Օհանի համար նախատեսված ղրկելով ինչքան հեռատես, այդքան էլ անհեռատես էր եղել՝ որ վարչության նիստով Ծուշանին պահեստապետ էր դրել, ղրկել սարը: Նրանք էլ իրենց մարդասիրությունն ունեին - պահեստի եղած-չեղածից ձեռքի հետ երեք որբին կպահի: Մարդն էդ է՝ փոքրերին մեծացնի, մեծերին ձնշի: Օհանն ի՞նչ աներ, Թեվըկին ետևը գցած գնար թուրքերը չոբա՞ն, թուրքի քոռ Ահմադը էս երկրի ամբողջ չոբանությունից Օհանին գերադասում էր, կանգներ ասեր Ծուշանը եթե սարում՝ Թեվիկը գյուղո՞ւմ է լինելու, հանձնվեր ասեր ուլս ահա գցում եմ ռեխդ՝ կե՞ր: Օհանը, ամբողջ չոբանությունը կանգնեց՝ թե մեր մթերքի պահեստապետը դա չպիտի լինի, մենք դրան հանձնելու մթերք չունենք: Խեղճ սարվորի դեմ մնաց մենակ, և արդեն չգիտես ում խղճաս: Ասաց. «Բոլորդ իմ որբերի թշնամին եք»: Համիկ հորեղբայրը Տիգրանի հին ավազակության ընկերն էր և, բացի այդ, վարքից թույլ էր եղել ու դեռ շատ ուժեղ թույլ էր,

զսպությունը-անզսպությունը նրա համար հարց չէր եղել ու հարց չէր, ինչպես որ ավազակության տարիներին էր եղել՝ որ-ձաշան, որձաձիու, առհասարակ որձ անասունի իր հոգսից որ-տեղ կարողանում էնտեղ էլ ազատվում էր ու նրա կարծիքով էդ էր, այսինքն այդ մասին նա հոգս ու կարծիք չուներ,- ֆերմայի ղեկավարը դեռ ինքն էր, կանգնեց ասաց. «Ես իմ վարչության որոշմանը դեմ չեմ կենա, ղրկել են՝ թող աշխատի»: Այսինքն թե ինչ ուզում է լինի, բայց իր վարքը էդ ժողովրդի մեջ Ծուշանի բերանը չընկնի: Թևավորվե՞ց Ծուշանը, թև առավ. «Քաղաք Մոսկվա Ստալընին նամակ տեմ գրիլ՝ որ մեծ ախպորը Հիտլերն է սպանել, փոքրին էլ հրես Մելըքանց խավարն է սպանում»: Երեխայի նրա մատղաշ ծիլը ինքը չի փչացնում՝ Մելըքանց Օհանն է խեղդում: Սարվորը մի րոպե պապանձվեց: Սպան-վելիքն սպանելը տղամարդություն է, բայց ամենամեծ տղամար-դությունն այն է, որ ժամանակին զգաս՝ որ գլխիդ փորձանք է հավաքվում. այդքան համաձարակի, ոջլի, արյան, թուքումրի, ձերբակալությունների ու տեղնուտեղը գնդակահարությունների միջով Մնացականյան Համիկ հորեղբայրը իր գլուխը այդպես էր բերել,- վարչության որոշման տակ իր ենթակայությունը հայտ-նեց ու ուրթից գնաց՝ ժողովրդի միջից իրեն հանեց: Տեղյակ-անտեղյակ, մեծուփոքր, իրավասու-անիրավասու՝ ժողովուրդը նրա ետևից հու արեց, բայց իր խոսքը նա ասել ու հեռացել կամ մտել վրանը քնել էր՝ սուտքուն էր տվել: Չգիտենք մեկ էլ ինչ պատահեց, Թեվիկը որտեղ էր ընկած, ինչ էր մտածում, ինչ էր զգում - վնգստաց ու թռավ Օհանի երեսին, թե՞ թռավ ու վնգստաց՝ որովհետև Օհանը դագանակով կռաջլերին վրա բե-րեց. հետո ուզում էր կանգնել՝ չէր կարողանում, ոտքերը ծալ-վում էին. միայն մի անգամ վնգստաց, հետո լուռ սողում էր:

Այսինքն թե, ինչպես որ Հախպատա Տելեմաքի ու նրա օրինակով Հովընտա Դանելանց խեղճ ջաղացպանի երգն էր պատմում, կռաջլերդ կկտրեմ ու կթողնեմ ոտիս առաջ ընկած էդպես վնգստալով, դու մեզ խավար Օհան չկարծես - գլխիդ Սանդրո Վաթինյան ու Հախպատա եռյակ կլինեմ: Սառը, քամոտ անձրևի օրը չէր, համարենք որ մի տաք իրիկուն էր, բայց մենք մեզ ուրիշ կերպ չենք հիշում - տոպրակը գլխին վեղար արած՝ մեր արդար գոյությունը ժողովրդի մեջ այդտեղ կանգնած էր, նայում ու ասում էր՝ էս էլ ուրեմն էս է:

Նավ-ուրթի լանջերին գառան մոտ էր, մեր արդար գոյությունը գնաց առաջը կանգնեց, ինչ որ պատվիրված էր՝ ուզեց: Իրենց արանքում մեզ բանակային կապավոր էլ դարձրին՝ *սվյազնոյի*: Հասկացավ, կոտրած ժպտաց, ասաց. «Իմ էնիքը պահեստից վերցրել է, մինչև չտա՝ իր ապրանքը ետ չի ստանա. գնա բեր, արի տար»: Վարչությունը Ծուշանին ետ գյուղ էր վերցրել ու նրա փոխարեն սարը մթերքի՝ քառասունվեց-քառասունյոթ-քառասունութի էդ մեծ սովի մեջ կաթան, յուղուպանրի, աղի, վնասվելու պատճառով մորթված մսի պահեստապետ ղրկել Ծարմաղ մորքուրին, ապահով մարդատեր կնիկ էր, այսինքն տղերքի վրա իրենից վտանգ չկար, իր վրա էլ տղերքից վտանգ չկար, խառը երազում տղերքը ուղղակի մեկ-մեկ տեսնում էին, ինքն էլ թաքուն ժպտում ու քայլելիս շորորում էր, մի խոսքով՝ միսն էլ ու կնիկն էլ պահեստում էին, ու Սիրուն Թեվիկն էլ կոտրած ժպտաց, բարակ կոպերն իր նման թրթռացրեց ասաց «պահեստի էնիքը», բայց մենք երեխա էինք ու չէինք հասկանում՝ որ իրենց համար լեզու են հնարել ու իրենց ասածը ինչ ուզում էն են հասկանում, դրանից Վրացյանի մուրթելն ու պահեստի էնիքը ըռխած՝ յոթ անգամ գնացինք ու եկանք: Իրիկունն

էլ կանգնեցին ու էդ ժողովրդի գլխով փարախից փարախ իրար ձեն տվին. *այտա, որ երեխին ղրկում եմ՝ մուրթելս խի՞ չես տալիս*, նա էլ թե՝ *ես տվել եմ, երեխայի ախորժակը գուցե քաշել՝ ճամփին կերել է, դնչին լավ նայիր*:

Գնաց, անցավ. մահակը գցեց ասաց *արձակուրդ ենք ուզում*. ժողովրդի հետ ծիծաղեցինք, նայեցինք տեսանք ձեռը դրել է խավար աչքի վրա ճակատին, ասում է *ցավում է*. ծիծաղեցինք ասացինք *ցավն ի՞նչն է*, կարծում էինք չգիտի. գլուխը կապած՝ մեծ Սոփնի հետ գյուղ իջավ, ձի չնստեց, ասավ *ձիու ոտնափոխից գլուխս կցավի*. ինչպես որ մենք ենք հյուրանոցից ու քաղաքացիներից վախենում՝ գյուղի իր տնից վախենում էր, այսինքն իրար օտար էին, բայց տանը մի օր պառկել էր. մի կամ մի երկու ժամ էլ գրասենյակի դռանն էր սպասել՝ քանի որ ճանապարհը իր դուռը մեքենա չէր հանի. տարել էին Հովընտի հիվանդանոց, ջահել բժշկուհին սարսափել ու գլուխը գոգին բռնած տարել էր Կենտրոն, էնտեղից էլ՝ գլուխը գոգին էդպես բռնած՝ Երևան. քույրական այդ գիտակից արցունքին չհասկացանք ինչ պատասխան տանք, մեր փոքր Սոփնի խորհրդով մի որձ ղրկեցինք խնայդրամարկղի մեր հորաքրոջ աղջկան, ասացինք ինքը ինչպես հարմար է գտնում էնպես էլ թող պատասխանի: Գնա՜ց Օհանը ու ետ չնայեց, տնաքանդը չասաց էս երեխան ոչ էնքան հասկացո՛ղ է՝ որ դեմը եղած ու չեղած մեկ լինեն, ոչ էլ էնքան անհասկացո՛ղ՝ որ չհասկանա ու լավուվատի ջոկողություն չանի:

Մի քիչ խմած ենք եղել, մեր լեզվով ու սրտով՝ մեր բանաստեղծ Արմենակ Մնացականյանին ինքներս ենք որձ խոստացել. ասել ենք սարերի մեր ազատ թագավորության ու մանավանդ Օհանի մասին ռադիոն քո բերանով քանի գովեստի

խոսք ասավ՝ որձը ոտիդ տակ մեկնված է: Եթե հիշում է՝ պատրաստ ենք, մեր խոսքը եթե պարապ խոստում է համարել՝ ոչինչ, հոր դուռը լիքն ապրուստ է, թող էնտեղից վայելի, մանավանդ որ Սիմոն քեռին ուրիշի հոգսը քաշում է, բայց ուրիշին հոգսի տակ չի գցում, ուրիշին հոգսի տակ գցելը հենց քեզ համար է վատ:

Օհանի ու նրա մեծ Սոփնի ոչխարը արձանագրությունով ընդունելու ու պետական կարգով երկու Թեվըկիս վրա բաժանելու համար հանձնաժողով էր եկել. հաշվեցին, իրենց փաստաթղթերի հետ համեմատեցին՝ այսքան ու այսքան ավելացավ. մեծ Սոփին ասում էր Օհանինը կլինեն, բայց անասնակերի՝ գարու, թեփի, խառը կերերի սուսուփուս պահեստապետը հաց ուտելիս հենց էդպես գլուխը կախ, չասելու պես ասաց *վայ թե իմը լինեն*: Ուրեմն հաստատ իրենն էին: Սարերի մեր անտեղյակ հեռուներից չի երևում, բայց ուրեմն իրավունքատեր մարդ է՝ որ գոնե չպարտավորեցրեց, սուսուփուս թողեց գնաց, գարու, թեփի՝ անասնակերի վրա ուրեմն թաքուն իրավունք ունի: Մեր կիսաջոջերը գրասենյակի դռանը միշտ շարված են, պահեստապետը չի կանգնում նրանց կողքին, բայց թաքուն արժանի է, և դա հայտնի է գրասենյակի դռան ջոջերին էլ, ամբողջ ժողովրդին ու իրեն պահեստապետին էլ. տասներկու որձ ունի այստեղ ու մի անգամ չի հարցնում՝ կա՞ն, դո՞ւք ոնց եք: Գյուղի մեր տների մոտով անցնելիս կլինի՝ մեր մորը կտեսնի ու կհասկանա - հավերի համար գուցե մի քիչ թաքուն գարի տա:

Շիկաբաշի առաջն արած՝ Ռոստոմ Մելիքյանը յոթ հատ իրավարի ջոկած որձ, այսինքն իր նման անսխալ ջոկած ու հենց իր նման թափով, բերեց այստեղ՝ Աճարկուտ հանդի գոմերը, իր

նման լայն ու սիրելի ժպտաց ու նայեց իր նման մի տեսակ կախյալ սիրով, մենք այսինքն հարգենք-չհարգենք՝ ինքը մեզ հարգում է: Ասացինք՝ բա ամո՞թ չի, բա էլ ո՞ւմ պարտքն է: Ավտո էր առնելու, փողը եթե քիչություն աներ՝ որձերն ուրեմն գնալու էին, եթե բավարարեր՝ ուրեմն այստեղ էին: Յոթ որձն ուրեմն նետո-բրուտոյի համար: Շիկաբաշից իջավ, սանձը հանեց, մեզ համար մի երկու կիլո շաքար ու մի տուփ թեյ էր բերել, շաքարից իր բռնով մի լավ բուռ տվեց շիկաբաշին, ձին ղրկեց Նավ-ուրթ՝ Ավագի ու Սիմոնի ձիերի մոտ, յոթ որձը հանձնեց մեր տնօրինությանը: Մեզ համար մի շիշ օղի էր բերել:

Մեր սև ղարաչին այստեղ տասնհինգ-քսան գլուխ ապրանք ունի. այսինքն ոչ թե անձամբ ինքը, այլ իր երեք զավակը՝ մեծ պեպենը, միջնեկ թաթարը, փոքր պեպենը - տարիքով ու հին վարքով ինքը անձամբ վարկաբեկված է, Թեվանի վրա փաստորեն իրավունք չունի, մեծանալու պառավելու հետ մարդ իշխանությունն ու իրավունքը մարդու վրա կորցնում է, Թեվանի վրա իր իշխանությունն ու իրավունքը նա տվել է փաստորեն իր զավակներին: Նրա մեծ պեպենոտը գրասենյակի դռանը, այս նույն կաստումը հագին, այսինքն որ կաստումը Թեվանի հագին էր, խփեց փռեց ու ասավ *թի՛թ, մյուս անգամ քեզ գյուղամիջում չտեսնեմ*: Պատճառը՝ առանց եղբոր ընտանիքի, հատկապես մեծ պեպենոտի հետ խորհրդի նստելու Թեվանը իր համար երկրորդ ժամանակավոր կնոջը բերել էր, ճանապարհին սա Դսեղա գյուղկոոպից կարմիր կոշիկ ու կաստում էր առել, Թեվանին զուգել ու մեր ղարաչուն արհամարհել էր, դե մեր ղարաչին էլ հետաքրքրվել ու բացահայտել էր, որ նրա ծաթերյան վարքը մաքուր չի եղել, նրա հագի կանաչ փեշը էսինչ վարըչի առածն է, չգիտենք Ստավրապոլ թե որտեղ կթվորների խորհրդակցության

են եղել ու հյուրանոցում իրենց զուսպ չեն պահել:

Էս աշխարքում ոչ մեկը ոչ մեկիս լավ ապրելը չի ուզում - ուզում են կարիքի մեջ լինես և իրենց կարեկցանքի ենթակայության տակ: Ծաթերա իր կթվոր-ընկերուհիները հավաքվեցին ճամփու դրին, արտասվողներ էլ եղան՝ որ սիրած ընկերուհուց հավիտյան բաժանվում են, մեր հայոց հին սովորությամբ ջուր ու սանր էլ շպրտեցին նորապսակների ետևից՝ թե չարն ուրեմն յոթ վարար ջրով ու յոթ ծմակ անտառով ետ է մնալու սրանց բախտից, բայց իրենց սրտի ծմակն ու գետը վռազ մոռացել, իրական հեռավորությունը անտեսել ու ծմակուտյան մեր ռադիոյին այնտեղից այստեղ թղթակցել էին՝ թե ձեր այդ առաջավոր կթվորուհին իր շքանշանը կրծքին չի կպցնելու, այլ կպցնելու է ամոթ է ասել ինչին: Ինքը տնաշենի աղջիկն էլ էնքան խելք ու սատանություն չուներ՝ որ ենթարկվեր ու ենթարկեր, չսիրեր ու սիրվեր, թեկուզ սուտ վերաբերմունքով իրեն մի րոպե որբերի հոգսին տար, ոչ. միայն գալու օրը աղջնակի սիրուն շեկ գլուխը սանրեց ու կարմիր կակաչի նման մի մեծ ժապավեն կապեց, էդ էլ մեր եղբոր ղարաչին չէր հավանել - երեխայի գլխից պոկել, իր հարսնության կարմիր շորը կտրել կապել էր երեխայի մազին, այսինքն թե որբերի վրա մայրություն ինքն է անելու՝ փոխնակը չի անելու, և Թեվիկն ստիպված էր ներկայանալ, դուռը ներսից փակել ու աջութարս մի երկու հատ գալ:

Զարդաքարա գլուխներից է՞ մինչև Քռի տաք հովիտները Լոռու մեր լեռնաստան երկիրը փոխնակի նման աղջիկ չի աճեցրել, բայց տնաշենը քաղաքականություն չուներ. զուգված Թեվանին կողքին կանգնեցրել, ինքը կանգնել մեր կիսաջոջերի հետ խոսում ու ծիծաղում էր, չէր ասում՝ թե մի խղճավորի

սրտում եթե ուրախություն է, Վարդոյի ծանր դեպքից հետո Թեվըկի վերքն այսինքն փակվում է, մյուս բոլոր սրտերում ուրեմն շքանշանի ու կանաչ փեշի պատմությունն է: Կապվել, այստեղից Ծաթեր հեռախոսով պատմում ու ծիծաղում էր, չգիտեր՝ որ մեծ պեպենոտի բերանը սեղմվում ու պեպենները սևանում են և միջնեկը՝ թաթարը, գրասենյակի դուռը քաշել ու պինդ բռնել է: Խփեց գցեց ու սապոգավոր ոտքերը մաքրության արձանի նման չռած կանգնեց, իսկ թաթարը դուռը բռնել էր, Թեվանի ստորացումն օտար աղջկանից այսինքն թաքցնում էր, շնորհակալ ենք, մյուսներից թաքցնելու կարիք չկար:

Ծաղիկը որ ծաղիկ է, խոտը որ խոտ է՝ էլի պաշտպանություն ունի, էլի դառնություն ու փուշ է հանում. Թեվիկը աղջկան տարավ Դսեղն անցըրեց, Անուշի-Սարոյի մըտով իջան Ձորագէս, գետն ու երկաթուղին անցան, և Ծաթերի տակ կանգ առավ ու գլուխը կախեց: Փոխնակը հասկացավ, ծաղկի փշուրը Թեվիկի ուսի վրայից վերցրեց պտղունցով, մեղավոր ժպտաց, ասաց. «Ծա՛շ»: Հետո մի թույլ հպվեց Թեվըկի արմունկին, ականջը մի թույլ պաչեց, սխալմամբ դավաճանած ընկերոջ պես թեթևակի ժպտաց ու բարձրացավ այն կածանով, որ մինչև մեծ ճանապարհի բացելը նրա մոր ու տատերի արահետն էր եղել: Նա դուրս էր եկել արդեն մեծ քարի պռունկը, Թեվանը ձորում դեռ կանգնած էր:

Եկավ եղբոր երեք իրավասուին էլ՝ երկու պեպենոտին ու միջնեկ թաթարին բերեց բամբասանքի, խելագար խանդի ու հիմար խայտառակության իրենց մոր տուն, ռուս հարսին ասացին դու դուրս գնա, փոքր պեպենը թարգմանեց տի ույդի: Թեվանն ասաց. «Էս իմ ախպոր տունն է: Էս իմ ախպոր նկարն է: Մյուսից նկար էլ չի մնացել, երկուսից մնացել է էս մի նկարը,

էն էլ ոչ նրան է նման, ոչ էլ նրան: Ուզում եմ ասել մեր մեծ տնից ինչ որ մնացել ենք՝ էսքանս ենք»: Ահա թե ինչու ենք ասում նույնիսկ հանդի խոտը չի անպաշտպան: Թեվանն ասաց. «Իմ ախպերն ինձանից էնքան էր մեծ՝ որ ինձ հեր էր գալիս. ծնկանը միասին ենք նստել, Վերան տղա, խոսիր»: Փոքր պեպենոտն ասաց՝ «ես գործ չունեմ», կնկա ետևից դուրս գնաց: Թեվանն ասաց. «Ճիշտ արավ՝ որ դուրս գնաց. էնքան ժողովրդի առաջ դու ու դու էիք ինձ տվողծալողը, ինքը չէր»: Մեծ պեպենն ասաց. «Դու ինձանից չորս տարով մեծ ես, ես քեզանից չորս տարով փոքր եմ, Ակոփի ծնկանը մենք դժվար թե միասին նստած լինենք»: Թեվանն ասաց. «Օրինակի համար, խոսքի օրինակ եմ ասում»: Մեծ պեպենն ու միջնեկ թաթարը իրար հետ լավ չէին, բայց Թեվըկին միասին էին ատում, միջնեկ թաթարն ասաց. «Մտքինդ ի՞նչ է, մտքինդ ասա»: Թեվիկն ասաց. «Գրասենյակի դռանը տվեցիք անտեր շան նման փռեցիք - մի ձեն, մի տնքոց հանեցի՞, մի ծպտացի՞»: Մեծ պեպենոտը իր նպատակին հասել էր՝ խփել փռել ու գրասենյակի դռան կիսաջոջերի մեջ իր համար տեղ էր արել, հիմա երեսը շուռ տվեց ու իբր թե շվշվացրեց: Միջնեկ թաթարը ինքը չէր խփել, բայց խփելուց էլ պինդ եղբոր թիկունքին կանգնած էր, հիմա ասաց. «Ծպտայիր»: Թեվիկն ասաց. «Եթե տեղ ունենայի՝ կծպտայի»: Միջնեկ թաթարն ասաց. «Հիմա էս խոսակցությունով էլ վատ բան ես անում»,- ասաց,- «ինձ դուր չես գալիս»: Թեվանը թուքը կուլ տվեց ասաց. «Դե ես ի՞նչ անեմ, որ մի արյուն ենք, բայց դուք ձեր քեռիներին եք քաշել, ես էլ իմ ախպոր նման թի-կունքս էսպես բարակ եմ»: Թաթարն ասաց. «Դու շան արյուն ես»:

Թաթարն ասաց. «Թիկունքդ չի բարակ, ձենդ է բարակ»:

Թեվիկը բկի գունդը կուլ տվեց, աչքերը փակեց ասաց. «Քու ձենը միշտ էդպես պինդ լինի»: Պատճառը՝ սև ռադիոն, սիրելին, անտանելին, աղջիկ երեխայի պես անկյունում չորացել էր, իրեն ոչ ոք չէր նայում, ինքը նայում էր մեկ որդիներին, մեկ Թեվանին, որդիների պինդ կազմվածքի ու պինդ խոսքի վրա ուրախանալուց վախենալով նայում էր մեկ բարակ Թեվըկին, մեկ որդիներին,- մրմնջաց. «Երեք. Վերանս Թեվըկից երեք տարով է փոքր. ես որ եկա՝ Թեվանը մի տարեկան էր»: Թաթարը բռունցքը դրեց սեղանին, ասաց. «Ձե՛նդ»:

Խեղճը չգիտենք ինչ մտածեց, սեղանի վրա բերեց խանութի մի հատ կնքած արաղ դրեց ու ետ քաշվեց, և նրա այդ բերելու, դնելու, լուռ անկյուն քաշվելու մեջ չգիտենք հանուն իր որ արդարության բողոք էլ կար ու ցեղական հիմար հպարտություն էլ՝ որդու ձայնի ու սև բռունցքի ներկայության համար, կամ ով գիտի, երևի մտածեց, որ որդիներն ու տեգրը հազարից մի անգամ իր տանը միասին նստած են:

Թեվանի ու իր արանքից Թաթարը արաղը մի կողմ քշեց, ասաց. «Բա՛յըդ ասա»: Թեվանն ասաց. «Բայըս. ձեր թույնի կարծիքը սուտ դուրս եկավ. շքանշանն էլ սուտ էր, բայց թող ձեր խոսքը լինի. առանց ձեր համաձայնության էի բերել, ուրեմն արժանի չէր՝ որ նա էս գյուղում մնա»:

Միջնեկը՝ սև թաթարը, սովորություն ունի, աչքը գցում է մարդու երեսի, կպչում ու լռում. կպավ, լռեց, հարցրեց. «Հասկացա՞ր»: Մանկությունից կանանց մասին վերջնական ծանր կարծիքի էր, բայց գիտեր՝ որ առանց կնոջ չի լինի, այսինքն չի լինի՝ որ կինը չլինի ու տունը լինի, վեցերորդում Հայկուշ Մելիքյանին կողքին նստեցրեց, ասաց. «Կողքիս նստիր, քեզ բան եմ ասելու»: Հովըտի դպրոցական ճանապարհին

ձեռքը բռնած երեք տարի տանում բերում էր: Տասներորդում, երբ իրենք ամուսնական զույգի վերջնական լուսանկարի պես միասին նստած էին, նայեցին ու ութերորդում մի համեստ, միջակ սովորող, սիրուն աղջիկ տեսան, ցեղն ուսումնասիրեցին ու որոշեցին՝ որ ուրեմն Վերանի համար է: Թաթարը ներկայացավ, հորը ջոկ ու եղբորը ջոկ պատվիրեց աչքը երեխայի վրա պահել մինչև Վերանը բանակից գա, մեծ պեպենոտին նամակով հայտնեց՝ որ վիճակն էս է: Փոքր պեպենոտի հարցը աչքաթող արվեց. կարծում էին բանակից գա՝ կնստեն կխորհրդակցեն, կքննեն ու կջոկեն, բայց փոքրը Մաշային ետևը-գցած եկավ:

Իր վիճակի մասին մի որևիցե կարգադրություն, այսինքն որ ընտանիքը փաստորեն քայքայվում է, Թեվիկը միջնեկ թաթարից էր սպասում, բայց մեծ պեպենը խոսեց. երեսը շուռ-տված շվշվացնում էր, կտրուկ նայեց ասաց. «Մեր կնիկը ո՞նց է, արա, ի՞նչ կարծիքի ես»: Միջնեկը՝ Թաթարը, շատ գեշ նայեց եղբորը, Թեվիկն ասաց՝ «էնիքը, դուք ինձ ինչի՞ տեղ եք դրել», բայց Թաթարը հիմա էլ Թեվըկին էր գեշ նայում: Խոսքը սակայն մեծ պեպենոտի կնոջ մասին չէր, խոսքը սրա փոքր քրոջ մասին էր, մեծ պեպենոտն ուրեմն փոքր քենի ուներ. ասաց. «Դռանս մի երկու ապրանք կա, հետդ տար սարը»:

Որձերը բերեց, եկավ սարը, չգիտեր էլ իր գործի մասին ինչ է կարգադրվել, եղբոր զավակներն ինչ են որոշել, միայն գիտեր՝ որ փոխնակն այլևս գյուղում չի, տունը դատարկ է: Հիմար ու հպարտ՝ որ որդիները աշխարհը կառավարում են, սև ղարաչին ձեռքով ասել էր գնա, թաքուն հասկացրել էր՝ որ գործը վճռված է: Մի օր էլ Ջանդառը լուր բերեց թե *դռանդ մի սիրուն աղջիկ էր կանգնած, չհասկացանք պատահակա՞ն էր թե քաղաքի ձեր*

բարեկամներից, մոլորված կանգնած էր: Նորահարսն էր եղել: Տասը որձն ուրեմն մեծինը՝ Վերանինն էր, հինգը միջնեկինը՝ Սեվանինը, մեջների խեղճը փոքր պեպենոտն է՝ մի երկուսն էր նրանը: Խախլուշկա հարսն ու ղարաչին իրար լեզու չեն հասկանում, փոքր պեպենոտը արանքում ճնշվում է, հին տրակտորն ու դպրոցական հավաքարարի կնոջ ռոճիկը նրան ճնշված են պահում, փոքր պեպենն այստեղ ընդամենը երեք որձ ուներ, ուրեմն Թեվանների մասին չէր կարող ասել, թե սրանք իր չոբանն են, թե սարում ինքը չոբան ունի:

Բայց առհասարակ ամբողջը՝ Ռոստոմների որձերն էլ, Թեվըկի եղբոր զավակներինն էլ, պահեստապետներինը, գնդապետ Մելիքյանինն ու մեր բարի կամքով ընկեր բանաստեղծին խոստացվածն էլ, և՛ ավարից ետ-բերվածը, և՛ պետական-սովխոզայինը՝ բոլորը կենտրոնների ղեկավարություններինն էին, քանի որ եթե, ասենք, միջնեկ թաթարը ավտոն քշած հիմա երկտող բերեր՝ թե գյուղում հյուր կա, մենք մերժելու կամք ու պատկանելությունը որոշելու ժամանա՞կ էինք ունենալու. չէինք ունենալու, ավարող գայլի պես կույր՝ ոչխարի միջից մեկը հանելու ասելու էինք տար:

Գյուղում հանդիպեց, մեծ պեպենը Ջանդառին ասաց. «Ընկերոջդ դնչին մի հատ էլ եմ գալու»: Դառնությունից ու անհարմարությունից ծիծաղեց, այսինքն որ նրանք հորեղբայր ու եղբոր զավակ էին և ինքը նրանց արանքում փաստորեն ոչ ոք էր, ասաց. «Ինչի՞ համար»: Ատամը քչփորեց ասաց. «Ինքը գիտի»: Ջանդառը ոտքից ոտք փոխվեց, աչքն Օհանի նման կկոցեց ասաց. «Դե որ ձեր տան գործն է, խոսքդ զուր ես Ջանդառի հետ ղրկում. արի խփի չորացրու, թե խառնվեմ՝ Ջան-

դառը չլինեմ»: Շեկ ունքը կեռեց, նայեց ասաց. «Ճամփան չգիտե՞ր՝ որ տանում Ծաթեր էր հասցնում ու տան չորս-կողմն էլ մի օր պտտվում»: Նա գիտեր՝ որ Ջանդառը լուրը տեղ չի հասցնելու, գիտեր՝ որ ինքն այլևս չի խփելու, բայց սպառնանքը թող լիներ՝ որպեսզի իրենց նրա իշխանությանը ենթակա զգային:

Բայց կանգնեց թե՝ իրենք թող գան պահեն էլ, կորցնեն տխրեն ու գտնեն ուրախանան էլ, ես գնացի Տաշքենդ, ախպերս Տաշքենդ է, գնում եմ բերեմ: «Արա, իրենք ո՞վ, մեր գործը գա ո՞վ անի»: Աչքերը ճպճպացրեց թե՝ իրենք: Ռոստոմ Մելիքյա՞նը: Թե՝ ոչ: Կենտրոնի ղեկավարությո՞ւնը: Թե՝ ես ղեկավարության անուն չեմ տվել: Քո հարազատ ախպոր տղե՞րքը՝ մեծ պեպենը, միջնեկ թաթարը, փոքր շեկը՝ խեղճը: Թե՝ ոչ: Դե որ ոչ՝ բա էլ ո՞վ: Թե՝ բոլորը, իրենք: Ծիծաղեց, ասավ.

- Ա՛յտա... այտա,- ասավ,- դե մնացինք էլի ես ու դու, մին էլ նորահարսն ու Սոփին. նորամանուկին դե չենք հաշվում՝ երեխա է, ուրիշ ո՞վ մնաց, որ ասում ես իրենք:

Կատաղեց, չոր բերանը ավելի չորացավ, ասաց.

- Տո, հենց դու, ես քեզ նկատի ունեի, հենց դու:

Ծի՛ծաղեց, ծիծաղեց կուլ գնաց, ասաց.

- Արա, ես մեր Մելքքանց Տիգրանի Դժգոհն ե՞մ՝ որ Ղալաչու խոտհարքների հսկիչը լինեմ, Ծմակուտի չեղած կալերի պահակը, Հովքտի պահեստների հրշեջը ու կենտրոնի դռանը բողոքը ձեռիս նստած լինեմ՝ թե Հայրենական պատերազմի հաշմանդամիս լավ չեք նայում. ես էդ ո՞նց քո ոչխարի կողքին լինեմ ու իմ ոչխարի ու հետն էլ խոտ հնձեմ:

Խլացել էր, չէր լսում, մենախոսում էր.

- Գնացել իր համար պտտվել, ռսի կնանոնց կողքին եսիմ ինչ

բանի է եղել - մենք մեր ախպորը Տաշքենդ անտեր ենք թողնելու:

Կաղնի կաթոցքն արդեն-արդեն սկսում էր: Աճարկուտը. գետակն ի վար մինչև Լոռի ու Գործարան աճարկուտ ամբողջ անտառն ու Մեծ աճարկուտը. պատիճը բացում ու աճարն արդեն գցում էր: Մեծ բերք էր լինելու, մեծ, համարիր քառասունվեց թվի կարմիր աշնան բերքից. խաշամը ետ էիր տալիս՝ կարմիր աղունի պես փռած աճար էր, ձեթը կարտոլի հետ մինչև մյուս հուլիս՝ մինչև Ղազախի հացի հասնելը ժողովրդին պահեց: Երանի էր նրան՝ ով խոզ ուներ, ոչ էր երանի նրան՝ ով գյուղացի էր, բայց մեզ նման անհեռատես էր եղել ու խոզ չուներ. ոչ երանին մեկ էլ այն ոչխարածին՝ որ ոչխարը աճարկուտ կթողներ. խաշխշուկ փառը երկու օրում աղիքը սարդոստայնի նման բռնում ու ոչխարին խեղդում էր: Օհանը մեզ նստեցրեց սովորեցրեց, Օհանի հարյուր պատվիրանից մեկը այդ է - որ աճարը ոչխարին լավ չի:

Մեծ հովըտեցին՝ Սանդրո Վաթինյանը, պետական ծառայությունից հոգնել էր, ասել էր հոգնեցի, մի քիչ էլ իմ ժառանգներին ծառայեմ: Մինչև այդ՝ համարիր ուրեմն հիսուն տարի, զուտ հանրային անշահ ծառայության էր եղել: Զուտ օրինական՝ զուտ իրենց մորից հինգ տղա ունի՝ Սանդրո՛ևիչ, անօրենները դե ուրիշ հայրանուն կունենան, հինգն էլ գործկոմ ու շրջկոմ են, սարի նման կանգնած՝ մեր Լոռվա երկինքը պահում են, որ հանկարծ չփլվի, - եկել Հովըտից հալիվորին առել, իրենց խոզի հետ բերել էին Մեծ աճարկուտ, մինչև ձմեռ տղերքին հարևանություն էր անելու, բայց հարսների վրա վտանգ չկար, նրա այդ վարքը մնացել էր խոր հնում, զուտ հին պատմություններ էին զրուցելու: Հետն ավտոյով շաքար, հաց ու չայ էին դրել,

ասել էին արդար չայիդ պառավական կրակը խոզի կողքին կամաց մլիր, էս է խոզի աշուն է սկսում: Հողը կտրել, մինչև ձմեռ երկու ամսվա կացարան էին բացել, չէ՞ աշնան հետ օդը սառչում, գետինը հակառակը՝ տաքանում է, աղբյուրի ջուրը գոլանում է: Թեվիկը գյուղում էր եղել: Ջանդառը՝ Ղազախ, - տղերքը մեր հարսներին խնդրել էին մեկ-մեկ հալիվորին նայել: Կանչեց ասավ.

- Արի հե-եյ,- կանչեց.- էս ոչխարն անտեր էս ուր է գնում, էս ոչխարի տերն ո՞վ է, էս ինչի է էս ոչխարն անտե՛ր:

Ջանդառն ականջ դրեց, ձայնը ճանաչեց, բայց չհավատաց՝ որ դա կարող է Սանդրոն լինել, ասաց.

- Այտա, ուրեմն հարևան ունենք: Բա ես էլ ասում եմ մենակ ես ու դու ենք, մին էլ, ներողություն, հարսները:

Էդ էր, Քոշաքարա մինչև Ջարդաքար ու Կապուտլեռ ու մինչև Ոսկեպարա սարերը անտեր ամայություն էր, միայն Թեվիկներն ու Սանդրոն էին, մեկ էլ հախպատա մոզարածի հին դափեն, սարի լանջին իր համար անտեր կքած էր, այսինքն տասը տարի մարդու երես չէր տեսել:

Ջանդառը ծիծաղեց, խռպաց ու չկարողացավ մի կարգին պատասխան ղրկել տարիքով, տարած պաշտոններով, զավակների դիրքով ու ամեն ինչով հարգված Մեծ հովըտեցին: Տարած ղեկավար պաշտոններն ու ժառանգների բարձրությունը եթե չհաշվենք էլ, այսինքն ասենք էդ հաշիվը չի, զուտ նրա պարը՝ ծանր ուսերի խաղը, փափուկ սապոգները, արծաթ գոտին ու փորի թափը մի անգամ տեսնողը հավիտյան սիրում ու իրեն պարտական էր զգում, բայց Ջանդառը կանչեց՝ իբր պատասխանեց.

- Տերը Տաշքենդ է գնացել, անտեր ոչխար է, վրայից կամաց

կե՛ր, Տաշքենդ է, Տաշքե՛նդ: - Եվ Մյուսը՝ Սիրունը, լավ կարմրեց ու մատը տնկեց: Մինչև Ջանդառի այդ հիմար խոսքը եթե ասում էինք կատակ կամ ժամանակավոր բողոք է, հիմա մինչև անգամ հացի դժվար պահեցին, ձղած գնում էր: Դե պատրաստի միս ունեին՝ խաշլաման արդեն լինում էր, էն ահագին կիսանն էլ էնտեղ էր կախ-տված - ճամփի պաշար էլ չէր առնում, բացակայելիք օրերի մասին մի կարգադրություն էլ չէր թողնում, գնում էր: Ջանդառը ստիպված ճամփան կտրեց, գրկեց ու ներողություն խնդրեց, ներողություն ասաց, հաց ուտենք՝ նոր, բայց ծիծաղը գալիս էր:

Հազա՛ր ութը հարիր ու քառասունո՛ւինը... ներողություն, 1949 թվին, քառասունինը թվի ձմեռը, Մեծ հովը տեցին կնկա մեծ շառի եկավ: Կնկա եղածն այսինքն ինչ է՝ որ Սանդրո Վաթինյանի ղեկավար ընթացքը մոլորեցներ - հպարտ հովատակի, բուլդոզեր տրակտորի պես առաջը բացելով գնում էր, շրջկոմն ու գործկոմը պաշտոնով նրանից վեր էին, բայց նրա ճանապարհին խնդրողական էին կանգնած, քանի որ էդ կանաչ սովի մեջ կոլխոզը՝ այսինքն միսն ու հացը նրա ձեռքին էին, յուղուպանիրը, իսկ կենտրոնի ձեռքին մի դատարկ կնիք էր: Որբևայրի կանայք նրա գնացքի կողքին վիզները ծուռ կանգնած էին, նրա պարը տեսնում ու թաքուն նրան ուզում էին, բայց դա անհնար երազ էր, քանի որ Վաթինյանն այն Վաթինյանը չէր՝ որ առաջնորդ մարդու իր հայացքը կնկա փեշ իջեցներ... այնքան որ՝ նրանց խղճալի վիճակը հասկացել, խղճացել ու ղեկավար մարդի առաջ գյուղի տիրուհու իր ապահով ապարանքում բարեխոսել էր - Վաթինյանի տիկին նախագահուհին՝ մեր գոդի Արտաշի քույրը. չգիտենք բարեխոսե՞լ էր թե սատանի նման ուզել էր մի տեղեկություն հանի. ասել էր, ուրեմն, *համարիր թե*

չեմ տեսնում ու ինձանից թաքուն երբեմն նկատիր, տնաշեն, բա չե՞ս տեսնում որ մեղք են, բա քու գյուղի ժողովուրդն են, չէ: Պատասխան է ստացել՝ *չա՜ռք, ձյե՛նդ. ձյենդ կտրյե՛*: Մարդկային նախանձն ուրեմն ուր է հասել, որ Սանդրոյի պես մարդը գյուղում կամ կենտրոնում թաքուն թշնամի էր ունեցել, նրան կնկա փորձանքի բերեց: Մինչև արդարությունն ու դատուդատաստանը կհասնեին՝ կոլխոզը տակից գնաց, Սանդրոն հալվեց կես դառավ, արծաթը վրայից ընկնում էր: Գյուղից արտաքսեցին, գնաց Ղազախ, քոռ Ահմադին հյուր ընկավ, թուրքի հացը հաց ու թշնամանքն էլ թշնամանք է, բայց դե չի կարելի տարով հյուր ընկնել: Հովիտը կանգնեց ասաց *մենք կամ կոլխոզ չենք ուզում, կամ Վաթինյանի նախագահությամբ ենք ուզում*, բայց Սանդրոն ձեռքը Ղազախ մեր նախանձ հայերի վրա թափ էր տվել, ասել *դեռ հարյուր տարի էլ պիտի ապրեք՝ որ իրար պահել սովորեք*:

Գիշերը նրա չոբանը ձմեռանոց գոմերից, ինչ է մտածում, հանկարծ վեր է կենում գնում գյուղ: Այսինքն՝ ինչպես որ մենք էս ձմեռ էստեղ լինենք, ժողովուրդը գիտենա՝ որ էստեղ ենք, ու գիշերը ճամփա ընկնենք, գնանք տեսնենք Ռոստոմներից մեկը՝ մեր ֆերմայի Ռոստոմը կամ անտառի Ռոստոմը մեր Սոփնի ծոցում է, չնայած Սոփին ինչ է՝ որ օտար տղամարդ քաշի, բայց դե էլի՛, - խառը երա՞զ ենք տեսել, մահու պատկերը հեռվից մեզ հմայե՞լ է: Գնում տեսնում է երեխեքը քնած, Մեծ հովըտեցին կնկա ծոցում, սեղանին էլ՝ արաղ ու մի երկու կտոր միս, ուրեմն հարսանքի է եղել, ձեռին հարսանքատեղից է բերել, գիշերը գյուղում ուրեմն հարսանքի ուրախություն է եղել: Հեռավոր ուրախության, հեռավոր զուռնադհոլի ձենը դե որ գիշերով լսել ու ճամփա ես ընկել, չոբանին ենք ասում, էդ էլ քու բաժինը սե-

ղանին, կեր, խմիր ու սուսուփուս ետ դարձիր, էլ ի՞նչ ես անտեղի քեզ իմացնել տալիս: Վաթինյա՞նն է նախագահի իր ծանր խոսքը ասում՝ «ոչխարդ ուր է, կորիր ոչխարիդ մոտ», չի՞ ուզում քնած երեխաների վրա անտեղի բողոք գցել, կնկան սրտով սիրելիս է լինում ու Մեծ հովընտեցին ու կնկա պատկե՞րն է ճնշում - ձյունը ճղած սարից ինչպես եկել՝ ճտքերն էդպես կոնգոռակալած էլ կանգնում-կանգնում ու, սիրտը չի տանում, գոմում գնում իրեն կախում է: Հարևանի կովը՝ որ երկու կով լինեն ու գոմը տաքացնեն՝ դրանց կովի հետ կապած է լինում, հարևանը գնում է կովերին նայելու՝ տեսնում է գոմի դուռը բաց, օճորքից ինքը հորթաթոկով կախված, ոտքերը՝ սարից ինչպես եկել է, էդպես առանց մաքրելու կոնգոռակալած:

Թուղթը սպիտակ է լինում, հետո ինչ գրում էնպես հնազանդ էլ սևանում է. ձևակերպեցին, թե քավոր Վաթինյանը հարսանքից հետո հարբած ձյուների մեջ քնած է եղել՝ քաշել է տուն, էն վառեկի չափ կնիկը յոթփթանոց էդ թուջը տուն է քարշ-տվել, սապոգները քաշել հանել, գալիֆեն վրայից քաշել ու վերմակով ծածկել, ինքն էլ շորերը հագին թախտի մի անկյունում ծվարել է: Սանդրոյի պարը ով չէր տեսել, այսինքն ուսերի խաղն ու սապոգավոր քայլի թեթևությունը, կամ արդեն շախը կոտրած Սանդրոյին էր տեսել, ասում էին էն բարակ կնիկը քանի տեղից ծալվելով է քարշ-տվել, բայց դե էդ էր:

Իշի գլուխը: Ետևից երեք որբ թողեց, լրիվ որբ՝ քանի որ մեղքն ընկավ կնկա վրա ու տարան, բայց նրա որբերն ի՞նչ - Վաթինյանի ետևից ամբողջ Հովիտը որբ մնաց ու որբ մնաց մեր Ծմակուտի ժողովուրդը, քանի որ մեր գյուղի մտածող գլուխը՝ այսինքն որ իրավունք ուներ ու ամբիոնից մտածում էր՝ օրիորդ Սիրանուշ Վրացյանը, ամուսնացել գյուղից գնացել էր, մեր գյու-

ղի իրական խելքուխորամանկությունը՝ գոդի Արտաշը, մեր ժողովրդի նվնվոցից զզվել ու մեր նիհար տնտեսության թամբից իջել քաղաք էր քոչել, տարուց ավելի խոսք էր պտտվում՝ թե գյուղի տեղը Գործարանի պիոներ երեխեքի համար լիճ են կապելու, մեր ժողովրդին իջեցնելու են Գործարան, ու Ծմակուտ մի ծանր հեղինակություն չկար՝ որ շրջկոմ Գրիգարյանի եկած ժամանակ հետը քայլեր ու մի հարմար րոպեի ականջի տակ ասեր՝ էս ժողովուրդն ափսոս է, մի՛ իջեցրու քաղաք: Վաթինյանը խոսք տված ասած էր եղել՝ էսինչ ու էսինչ տները, աշխատավոր էսինչ ու էսինչ տղերքին, եթե լճի գործը չխափանեմ էլ, վերցնում եմ իմ տնտեսություն,- աշխատավոր՝ այսինքն որ տարին տասներկու ամիս հանդում են, տեղաշոր ասած բանը չգիտեն ինչն է,- ու մեր Օհանի ու Սիրուն Թեվըկի անունն էր տվել, Սանդրոն այսինքն մեզ փրկում էր ու մենք չէինք քոչում, դառնում էինք հովտեցի... բայց հիմա վարկաբեկված էր, չոբանի ծանր դեպքը Գրիգարյանի հետ քայլելու շնորհից նրան զրկել էր ու մեր խեղճ Ծմակուտը նույնիսկ նրա կողմնակի պաշտպանությունից էր զրկված, ահա թե ինչու ենք ասում՝ չոբանի ետևից միայն երեք որբ մնաց, Սանդրոյի ետևից՝ երկու գյուղ ժողովուրդ:

Վրացոնց Ասատուրը մի լավ որձ ուներ՝ մի լավ որձով, Օսեփանց Աբել պապի մի լիքը մեղրահացով ու Ծուլավերից չգիտենք ում բերած մի շիշ արաղով Վաթինյանի ոտը մի պատվիրակ էր գնացել - ասել էր՝ վիճակիս մասին դե լսած կլինեք, ես անձամբ անկարող եմ օգնել, բայց էսինչ մարդը կարող է: Ու Ղազախի ճամփան էր ցույց տվել: Ղազախը՝ Ադրբեջան, մենք՝ իբր թե Հայաստան - Ղազախա Սալահլվի ֆերմայի վարիչ քոռ Ահմադը մեր շրջկոմ Գրիգարյանին ո՞րտե-

ղից է ճանաչելու, մեր ասենք, Համբո հորեղբայրը ի՞նչ իրավունք ունի շրջկոմի քարտուղար ճանաչի: Ասել էր *քու գործը չյէ, քեզ ինչ որ ասում յեն՝ էն լայե*: Ներողություն: Մեր պատվիրակն էլ եղել էր Օսեփանց Համբո հորեղբայրը. պատերազմի դժվար ժամանակներից հետո արդեն ֆերմայի վարիչ չէր, բայց կարծում էր իր մեծ կարիքը նորից են զգալու, հետո՝ սարերից Գործարանի ծխերը տեսել ու շատ ուժեղ ատել էր, ասում էր՝ էն էլ է հանրային, բայց մի տրաքացնող լիներ. հետո, իրենց մեջ՝ Համբոյի ու Սանդրոյի, հին թշնամություն կար, Չեզոք Լոռու ժամանակներում, այսինքն երբ ոչ Հայաստանին ու ոչ էլ Վրաստանին ու Ադրբեջանին էինք ենթարկվելիս եղել, Մամռուտ խոտհարքների կռվի վրա դագանակը Վաթընանց Ավետրքի գլխին տրաքացրել, բայց ինքը ողջ էր մնացել, Վաթընանք այսինքն չէին սպանել, հիմա ամեն առիթով գնում Վաթընանց գլխավորի հետ հաշտվում էր: Ասել էր *բարով ես եկյել, բայց զորու չյեմ, թշնամիս ինձ վարկաբեկյել է, վարկաբեկված յեմ*, ու քոռ Ահմադին էր ցույց տվել: Որձը, մեղրահացն ու արաղը Համբո հորեղբայրը չգիտենք ում հետ կերավ, բայց մեր քոչի, այսինքն որ պիտի պոկվեինք ու տանուտեղով, մեծով-փոքրով, շունուոչխարով, կաղով-առողջով, լացուկոծով թափվեինք Գործարան, քոչի ճանապարհն ուրիշ եղանակով ու հանկարծ փակվեց. Գրիգարյանի աղջիկը մեռավ. չէ՞ նա էր ուզել՝ որ մի լիճ լինի, մեջը ձկներ լինեն ու ափին ծաղիկներ: Խեղճ երեխան մեռավ ու հայրը նրա երազը չկատարեց, ո՞ւմ համար կատարեր:

Հետո չգիտենք Գրիգարյանին գցեցին ու Վաթինյանը մեղադրե՞ց, թե՞ մեղադրեց ու ինքը գցեց, բայց աղջկա կորստից հետո Գրիգարյանն ասում են շատ ուժեղ խախտվել էր ու Ծմակուտի մեր վիճակն էլ շատ ուժեղ հոլովվել էր. Սանդրոն ասել էր՝

Ծմակուտի դրոշակիր տնտեսությունը վերջնականապես թուլացել է, քանի որ տեղը լիծ կապելու ու ժողովրդին մեջը խեղդելու հանցավոր միտքը Ծմակուտի ձեռքերը թուլացրել է. պատահական մի դեպքի համար, ասել էր, մի կնկա շառով ժողովրդից սիրված բարեխիղճ առաջնորդներ են տեղահանվում, իսկ որ Ծմակուտի նման տնտեսությունը կաթվածահար էնտեղ ընկած է՝ պատասխանատու չկա,- ու ամբողջ կենտրոնը օտար Գրիգարյանին հու էր արել ու հարազատ Վաթինյանին ծափահարել: Օտար՝ այսինքն որ Գրիգարյանն այս երկրի մարդ չէր ու եկվոր էր, հարազատ՝ այսինքն որ Վաթընանց ցեղը արմատ-տված էս երկրով մեկ կա: Վաթինյանի խոսքի վրա Գրիգարյանը տնքացել, սիպտակել ու սիրտը բռնել էր, այսինքն հիշել էին՝ որ աղջիկն էլ է սրտի պատճառով գնացել ու թաքուն խղճահարվել էին: Նրան գցելու օգուտն էն եղավ, որ մեր Ծմակուտը Գրիգարյանի անունով պահվող մի լավ մտրուկ ուներ՝ մնաց էստեղ ու Ռոստոմին մնաց, այդ փոփոխությունից Ծմակուտն ուրիշ օգուտ չունեցավ:

Ինքը Սանդրո Վաթինյանն ունեցավ. կազմակերպեց, Հովընտի հասարակության բերանով ասավ *մենք կամ կոլխոզ չենք ուզում, կամ ընկեր Վաթինյանի նախագահությամբ ենք ուզում, Երևան ու Մոսկվա*, եկավ նստեց իր հին գահին, ու ինչպես որ մեռելը վրա նստի՝ սարսափը մեզ կալավ. ասացինք Ծմակուտի գլխին կայծակ է տրաքելու, ասացինք իրավունք չունի: Տղամարդն էլի Համիկ հորեղբայրը եղավ - որձով, մեղրով ու կնկա թևի ժամացույցով դարձյալ նրա ոտը գնաց՝ տղամարդ հարևանի պաշտոնական խոստում առնելու, որ Ծմակուտի ինքնուրույնության վրա ձեռք չի բարձրացնելու: Անտեղի: Դագանակի հին արդար տրաքոցը հիշել, ասել էր Մամռուտ խոտհարքները

վերցնում եմ, «կենտրոնին էսքան միս ու կաթ եմ խոստացել, բայց խոտհարքս նեղ է»: Խոտհարք չունի ու խոստացել է, այլապես գահին նորից չէր նստի: Նվերներն արհամարհել էր, ասել էր՝ էս ի՞նչ են: Քեղուտով, Զարդաքարով, Նավ-ուրթով, Ցիցքարա սեղաններով ու Արկանք խոտհարքներով, ասել էր, Ծմակուտիդ սարը կտրում տալիս ենք քոռ Ահմադին, ինչպես որ թուրքի հին ժամանակ է եղել: Նրա բարձր պատշգամբներից նայել տեսել էր Համբո հորեղբայրը, որ մեր Ծմակուտի սարերը Հովըտից ավելի լավ են երևում՝ ինչպես որ սեղանի վրա առաջդ փռած: Համ էլ, ասել էր, իմ նեղ օրին ինձ Ահմադը պահեց, դուք նախանձ հայեր եք, մտքներիդ մեջ բոլորդ էլ ուրախ էիք, որ մեր ոտը կնկա է առել՝ ընկել ենք: Ու կարծես ծաղր անի՝ Համբո հորեղբորը ֆերմա է խոստանում, «քեզ էլ, ասում է, նշանակում ենք ֆերմայի վարիչ, դառնում ես իմ ֆերմայի վարիչը: Ծմակուտը դառնում է իմ տնտեսության մի մասը»:

Սա եկավ, խոստումի դիմաց ուզում էր թաքուն պահի, բայց ծմակուտյան հայրենասիրությունը վերջը հաղթեց: Տղերքին հավաքեց ասավ. իմն էս է անց-կացավ, ես ձեր ապագայի մասին եմ մտածում. ով խելք ու խորամանկություն ունի՝ խելքով ու խորամանկությունով, կենտրոններում ով ուժեղ ընկերբարեկամ ունի՝ հավատարիմ ծանոթներով, ով ճարտար լեզու ունի՝ պարապ լեզվակռվով, ով էլ գլուխ ու լեզու չունի, բայց կուռը փետ է բռնում՝ դագանակով, տո՛ հենց թրով ու թվանքով - պատրաստ եղեք, մեծ տրաքոց է լինելու, Ծմակուտը տալիս են Հովըտին: Այսինքն՝ որ չորս կողմի վրա կռվելով մերոնք ռսի անտառապահի, թուրք բեգերի ու Հովըտի արանքում տեղ են բացել՝ կենտրոնի մի պարապ թղթով Սանդրոն մեր բացատը հանգիստ փակում է: Ոչ ինքը Հովիտն է մի ...ք ու ոչ էլ մեր

Ծմակուտը, բայց դե էլի՛. եթե Հովիտը Ղալաչուց ու Ղալաչին էլ Ղարաբաղից է եկել, նրանք այսինքն եթե կռվարար ղարաբաղցի - մերոնք էլ ապստամբ հախպատեցի են: Խառնակությունն ու ապստամբությունը, ճիշտ է, մեր խեղճերի փախուստից հետո է եղել, բայց դե էլի բան է - ապստամբեցի՞նք. կենտրոնից Ալբերտ Դեվոյան անունով մի թազի էր եկել, ասավ *բո՞ւնտ եք անում, շան որդի*, հպարտացանք *ասացինք բա ի՞նչ էիր կարծում*: Բայց աստված որ ուզում է վերացնի՝ նախ մարդուս խելքն է առնում, հետո արդեն գլուխը. ծմակուտյան մեր հեղինակավոր խելքերը դարձել էին մեկը անհայտ բանակներում գնդապետի հնազանդ կնիկ (օրիորդ Ուցյունը՝ Սիրանուշ Վրացյանը), մյուսն էլ Կիրովական քաղաքից նայում ու մեր զուր չարչարանքի վրա ծիծաղում էր (գոդի Արտաշը): Մեր բանաստեղծը դեռ չէր թևակալել, դավաճան Բերիայից հետո միլիցիայի խեղճացած ժամանակն էր՝ Վլադիմիր Մելիքյանը լսեց ու լռեց, դպրոցի վարիչ Ռուբեն Գրիգորյանին էլ կենտրոնի ներկայացուցիչը ժողովում սաստեց. ասաց՝ ինչքան քո դպրոցն ավարտած ու Հովիտ շարունակող աշակերտ կա, բոլորի մակարդակը ցածր է, դու քո դպրոցական գործերին կաց:

Մենք ներկա չենք եղել, մեզ պատմել են: Հազա՜ր ինը հարյուր ու քառասունութ թվին մի քոռ աշուղ էր եկել, Շահիսմեիլի պատմությունը պատմեց, ու մինչև հիմա որ ասում են ժողով՝ կարծում ենք աշուղի համերգ է: Կենտրոնի ներկայացուցիչն ասում է՝ ձեր տնտեսությունը միացնում ենք Հովըտի տնտեսությանը, մի տնտեսություն ու գլխին մի մեծ ղեկավար է լինում: Ժողովուրդը պատրաստ է, ասում է՝ էդ դու չես խոսում, Սանդրո Վաթինյանն է խոսում: Ներկայացուցիչն ասում է՝ չեք կարող սոցիալիստական մեծ գործեր անեք, շատ եք փոքր,

համարյա թե չկաք: Ժողովուրդն ասում է՝ Հովիտն էդ ինչու սոցիալիստական կլինի, մենք՝ ոչ: Ասում է՝ Հովիտը համեմատաբար մեծ է: Ժողովուրդը ծեփում է՝ *մեծը գոմշի թրիքն է*, մի ծիծաղ: Ներկայացուցիչը պատասխան չի գտնում, ժողովուրդն ասում է՝ մեծ ենք թե փոքր, կանք թե չկանք՝ ուզում ենք մեր գլուխը մեր վրա լինի: Ներկայացուցիչը՝ Ռուսաստանը չեք տեսել, մի նախագահը յոթ գյուղ է կառավարում: Ժողովուրդը շփոթվում ու մի պատասխան չի գտնում: Ռուբեն Գրիգորյանը հուշում է, թե ասեք՝ Ռուսաստանն Ռուսաստան, մենք էլ մենք ենք, Հովըտին չենք ենթարկվում... բայց դա ի՞նչ պատասխան է, ներկայացուցիչը Ռուբենին տեղնուտեղը լռեցնում է. խելոք կաց, ասում է, թե չէ քո էդ խոսքերի իմաստը քննել կտամ: Վերջը, մի ծանր թատրոն: Տղերքը որոշում են, որ էդ մարդը պիտի խմեցվի, ձեռը պիտի մի բան դրվի, պիտի ձոխ հաց տրվի՝ որ կարողանա Ծմակուտի կողմից ինքը մի բան մտածի ու կենտրոնի սեղանին դնի, թե էսպես ու էսպես, չի կարելի... բայց Վաթինյանը բեմում ներկա է, տղերքը չեն համարձակվում - ո՛չ Ռոստոմն ու ֆերմայի Ռոստոմը, ոչ էլ շատից-քչից հայտնի մյուս նշանավորները,- ասում են Վաթինյանը բացակայի՝ հետո: Սանդրո Վաթինյանը քամակին աչքեր ունի, նա բացակա տեղն է ներկա - իր ներկա տեղից ինչու պիտի բացակայի. կանգնում ներկայացուցչի թևն է մտնում, ասում ժողովրդին մի գրգռեք, ընկեր ներկայացուցիչ, թուրքից էս երկիրը սրանք արյուն տալով են խլել, գնանք մենք հանգստանանք, իրենց էլ թողնենք էսօր ու վաղը հանգիստ կշռադատեն:

Հավատացող կար՝ թե Սանդրոյի խոսքը Ծմակուտի մեր կողմից էր, չէ՞ մեր գյուղի փեսա է, շատերն էլ թե՝ ներկայացուցչին տարել հաց էր տվել իր տանը քնեցրել ու առել, չէ՞

Վաթընանց խոսքն է՝ հաց տուր կուրացրու ու ինչ ուզում ես արա, ձեն չի հանի... բայց ժողովն այդպես էլ չէր շարունակվել, համարվել էր՝ որ մեր ժողովրդի համաձայնությամբ Ծմակուտը պիտի Հովըտից կառավարվի: Կնկա ծանր դեպքի պատճառով իր բացակայած տարիներին փոխարինողը չէր կարողացել բռում պահել՝ տնտեսությունը շաղվել էր, Հովիտը ծանր հիվանդ էր, հեքիաթի պատմածի պես՝ մեր խեղճ Ծմակուտի միսը պիտի ուտեր, որ լավանար:

Մեկ էլ տեսանք կտրկան կեղտոտ, գանգուր, ձենը այլանդակ, քարադոդոշի պես պոչավոր, տափաստան երկրի անճոռնի ոչխար առաջներն արած բերեցին՝ թե Է՛ս պիտի պահեք, ձեր պահելիքն էս է, ու ձրագի նման շարմաղ մեր ոչխարը կտրեցին տարան՝ թե անօգուտ է, սա գնում է մորթվելու: Գյուղ իջնենք տեսնենք Չինգիզխանի արշավանքն անցել է՝ ամայի. մեղվանոցը տարել են Հովիտ, դարբնոցը քանդել տարել են, երիտասարդությունը փախել է որը Կիրովական, որը Գործարան, որն էլ մոլորված կանգնած է: Ուրեմն եթե ձի ունենայինք ու պայտելու լինեինք՝ պիտի տանեինք Հովիտ, ղեկավարության առաջ եթե մի տնական խնդրանք ունենայինք՝ օտար հովտեցու մեջ գնալու ամաչելով կանգնելու էինք: Սարվորի մեր խոսքն ու իրավունքը ձեռքներին՝ գյուղամիջում կանգնած ուրեմն իզուր էին էդքան քաղաքականություն ու լեզու մշակում,- մեր կիսաջոջերի վրա սրտնեղեցինք, համարիր թքեցինք, եկանք սարը, տեսանք կացնավոր ու քլունգավոր ջոկատ է կանգնել՝ թե էս գոմերը պիտի քանդենք, շինափայտը տանենք Հովըտի ձմեռանոց գոմերը մեծացնենք. մեր հայրերի ու հորեղբայրների կապած գոմերը՝ որ նույնությամբ անցել էին Ծմակուտի մեր կոլխոզին: Մեր ախպեր Օհանի շները, մեր ու Թեվըկի, Ասատու-

րի, Սաքոյի, Արտեմ քեռու, մեր հարայը լսող ինչքան շուն կար. արյունը գլխներիս տվեց, էլ չասացինք ջոկատը ծանոթ ու բարեկամ աշխատավոր տղերք են, շվթացրինք ու հարայ տվինք - Արկանք խոտհարքներից, Նավ-ուրթից, Ցիցքարա սեղաններից, Քեղուտ ծմակից, Մեծ աձարկուտից թափվեցին, ջոկատը կալմեջ արին. մենք ինքներս էլ չգիտեինք, որ էդքան պաշտպան ունենք. մինչև անգամ հախպատա խեղճ մոզարածի մի կենտ քնձռոտն էլ Կապուտլեռան լանջից էր իրեն օգնության տվել, ազնիվ խոսք: Հախպատն էն ժամանակ դեռ մի երկու անասուն ուներ, Գործարանի թույներից ջարդվում էր, բայց որը մեր սարն էին հանում՝ ապրում էր. պահողի հետ մոզին ավտոյով բերում խնդրում, մեզանից մի քիչ տեղ էին ուզում, Ջարդաքարա անհարմար լանջին թափում, գնում ու մոռանում էին, մեր հարս-ները եթե հիշեին ու տաք ձաշի կանչեին՝ ամբողջ ամառն էդ էր, թե չէ Հախպատն ինքը զզվել ու ձեռ էր քաշել մոզուց էլ ու մոզարածից էլ: Հիմա մեր հերթն էր եկել: Թուղթը ձեռին Խոսրով անասնաբույժը տնկվեց թե՝ ձեր էսքան ու էսքան ոչխարին էսքան շուն չի հասնում, ջոկատի վրա էդ քանի՞ շնով եք հարձակվել՝ որ կանցերտը հասել է կենտրոն: Այսինքն թե Վաթինյանը չի ու ինքը անասնաբույժը չի - վերին կենտրոնն է: Ասացինք՝ չգիտենք քանիսն են ու մեր հարային քանիսն են հասել, կանչենք հաշվիր: Մտավ գոմն ու դուռը փակեց: Մեզ էլ քեռու տղա էր գալիս, այսինքն ամոթ էր, բայց ասացինք՝ գնա քու դռանը հաչիր... այսինքն դսեղցի ես՝ գնա քու Դսեղը պաշտպանիր,- բայց Դսեղը ոչխա՞ր ունի՝ որ անասնաբույժի պաշտոն ունենա, չունի, նստած գարեջուր է խմում ու բիլիարդ է խաղում: Վերջը, շուն-պահելն էլ պիտի իրավունքով լիներ: Ասացինք՝ դե գոմից դուրս չգաս: Ասավ՝ ձեզ էդքան շնալիր չի

հասնում, ձեր չորս կտրկան ոչխարին հասնում է ութ բաժին շնալիր: Սանդրո Վաթինյանի գրասենյակը հաշվել էր:

Թաքուն խոտեր ունեինք, հավաքելու տեղից իրիկունը եկանք տեսանք ամայություն. խաբել գոմն են արել ու հրացանով կոտորել. չեն էլ ասել ջոկենք, որը հավատացել գոմն է մտել՝ գնդակահարել են, որը դավն զգացել՝ սարսափը հոգին-կալած կորած է, մոտ չի գալիս: Մահակն էդպես էլ գցեցինք ու՝ մնաս բարով, մեր սրտի սիրած գործ, քեզանում էլ սեր չմնաց: Գյուղում յոթ օր պարապ էինք, քնում, ելնում, արաղ էինք խմում դառնանում ու չգիտեինք ինչ ենք անելու, ասում էինք անցնենք Ջարխեչ, չոբանի հարգն էնտեղ եթե չիմանան էլ՝ մեզ համար հատուկ պայման կստեղծեն: Սանդրոն վերջը մեզ կանչեց հեռախոսի մոտ, ասել էր Թեվաններին կանչեցեք հեռախոսի մոտ, ասացեք *Վաթինյանը խնդրում է*: Թշնամու սպիտակ դրոշի պես շապիկ-փոխանը բարձրացրեց, ասաց՝ հիվանդ եմ, թե չէ անձամբ էի ձեր ոտը գալու. ասաց՝ ..ք են կերել, որ ձեր սրտերին դիպել են, առանց իմ գիտությենի է եղել: Իրար երեսի նայեցինք ու չհավատացինք, բայց դե ոչխարի մոտ էլի մեր Սոփին ու Վարդոն ու մեր հնազանդ եղբայր Օհանն էին չարչարվում - չհասկացանք էլ ինչպես հաշտվեցինք: Մեր Արմենակ Մնացականյանը թերթում գրեց, թաքուն ուրախացանք՝ թե Երևանի բարձր ձեռքով Վաթինյանի քիթը շատ ուժեղ բռնել ենք, շունչն ահա կտրում ենք, ու թաքուն էլ վախեցանք՝ թե հանձնաժողովը կգա մանրամասն կքննի ու չգրանցված մի երկու ոչխար, Աճարկուտ ծմակում թաքուն ծնած մի մերուն, մի երկու սայլ թաքուն խոտ ունեինք, կգա կքրքրի կհանի, բայց Սանդրոն էն Վաթինյանը չէր՝ որ իր սանձը Երևանի ձեռքը տար կամ իր անասնապահին էնպես նեղեր՝ որ թողնեինք անցնեինք Ջար-

խեչ, թերթի տպածին պատասխան էր տվել, թե անասնաբույժը սխալ է վարվել ու գործից հեռացված է: Վնասն էլի մեր վրա եկավ՝ գործից մեր քեռոնց Խոսրովը զրկվեց, գնաց կենտրոնների ջրմուղներում կորավ:

Քաղաքավարի նստել, բաժակները լցրել, աստծուն փառք տալով երկնքին էին նայում՝ որ էն է պիտի խմեն... ո՛չ. առաջին բաժակով հարգել էին մեր զոհերի անթառամ հիշատակը՝ Ալեքսանի, Ակոփի, Մանվելի ու, Օհանը չնայած զոհ չէր՝ բայց դե ինչու չէր զոհ, Օհանի և առհասարակ մեր անցածների, օղորմի իրենց ու երանի մեզ՝ եթե կարողանանք պատմելի մի բան ու բարի մի անուն էլ մենք թողնենք. երկրորդ բաժակը լցրել ու շատ քաղաքավարի խմել էին մարշալ Բաղրամյանի, Տիգրան Պետրոսյանի, մեր հայ ժողովրդի ու նրա անխախտ կառավարության և մեր բանաստեղծ Արմենակ Մնացականյանի կենացը. Սիմոնի մեր Արմոն, ճիշտ է, մարշալ ու կառավարություն չի, բայց դե կուզենար՝ որ մենք այստեղ հիշեինք ու իրենից խոսեինք. երկրորդ բաժակից հետո էր, այսինքն երբ մեր բարձր նշանավորներից խոսել էին, որ Քեղուտ ծմակից Վաթինյանը կանչեց.

- Արա էս ում ոչխարն է, էս ոչխարի տերն ով է, ցրվում կորչում է, ա հիմար շան տղա, հե՜յ:

Ձենը պառավել, մաշվել էր, թոքերը չզորեցին, սկսեց շատ ուժեղ հազալ, ու եթե լավ ականջ դնեինք՝ խզխզոցն էլ կլսվեր: Ջանդառը զարմացավ.

- Ը՜ը՜, կյանքիդ տերը մեռնի,- ասաց.- գործկոմի նման մարդուն փաթաթել կոխել է խոզանոցները:

Կյանքը բոլորիս է դառնահամում, մեկս շատ մյուսս քիչ՝ բոլորս ենք կծվում, բայց Սիրուն Թեվըկինը չափազանց էր. վեր-

ջիվերջո հաղթված, վերջացած մարդու վիճակի մեջ չմտավ, ասաց.

- Բանիդ կաց, մինչև նրա վերջնական էնիքը՝ սրբվելը, էս ձորը մեզ նման տասը Թեվան է փոխելու,- ու սիրուն դունչը տնկեց ու աչքերը ճպճպացրեց:

Ասավ՝ Ջանդառը.

- Էդ մասին չի, այտա. Տաշքենդ լինենք, Ղազախ ճամփորդության թե գործկոմի թևը-մտած մանգալիս՝ բոլորիս վերջը էս ձորն է:

Լսեց, ասավ.

- Ճիշտ չես խոսում,- ասաց,- շատերն էլ կան՝ որ իրենց փոխարեն իրենց հին շորի վերջն է էս ձորը, բայց թող քո խոսքը լինի, կենացդ,- ասաց,- քո կենացը:

- Կենացը՝ կենաց,- ասավ,- թող քո կենացը լինի, բայց շորի մասին որ խոսում ենք՝ էդ արդեն մեր երկուսի ախպեր Օհանի հիշատակն ենք կասկածում. մեզ վրա ինչ որ անցածներից է մնացել՝ մենք իրավունք չունենք տակից փախչենք. ուզո՞ւմ ես,- ասաց,- չնայած մեծ ծառայություն է արել, էս գլխարկը գլխիցս գցեմ: Չի՛ կարելի: Քու ախպոր երեխեքն են,- ասաց:

Բաժակը բերեց, ասավ կենացդ:

Ինչպես որ հյուրերն էին նրանց կենացը վերջում մի բաժակով հիշում ու ամբողջ գյուղն էր առանց տարբերելու Թեվաններ ասում, իրենք այդպես էլ սովոր էին, այսինքն որ չպիտի իրար կենաց խմեն. այս ձորի, մեր աշխատանքի, կորուստների, ընտանիքների կենացը միասին պիտի խառը խմեին, այլ ոչ թե դու իմ կենացը, ես քո: Ինչքան հիշում ենք, միայն մի անգամ է եղել, որ մեզ իրարից ջոկենք, ասենք էդ դու ես, էս՝ ես, ես քու կենացը խմում եմ - թույնի կարծիքը վերանալուց հետո.

շիշը մինչև տակը Ջանդառը Մյուսի կենացի վրա մենակ դատարկեց. լցնում, ասում էր կենացդ ու խմում էր, ուրեմն թույնի կարծիքին լավ հավատալիս էր եղել, իսկ Մյուսը առաջին բաժակը ձեռքին ինչպես բռնել էր՝ մինչև վերջը էդպես էլ կար: Հիմա էլ որ ասավ կենացդ՝ Ջանդառը տխրեց ու դառնացավ, սիրտը կոտրած՝ բաժակը մեկնեց ասաց.

- Ես էլ քո կենացն եմ խմում, երեսուն տարվա մեր ընկերության:

Սիրուն երեսը բարձրացրեց, աչքերը փակեց, ասաց.

- Չէ,- ասաց,- ես ճամփորդ եմ, քու կենացը, ինձ էլ բարի ճամփա:

- Դե լավ,- ասաց,- որ որոշել ես՝ ուրեմն ճամփորդ ես:

Իրենց համար պահած գինի ուներ, Սոփիկը բերեց երկու բաժակ գինի լցրեց, խցանը ետ-խցկեց, տարավ կիսատ շիշը պահեց ու եկավ: Եկավ սա էլ ջոկողություն դրեց - կռացավ ու հացի վրայով բաժակը իր Ջանդառին մեկնեց, «ապերո, կենացդ, ասավ, ողջ-առողջ եկել ես, ուր էլ գնաս՝ գալուդ ճամփան ծաղիկ լինի», ու կարծում ենք դա ոչ միայն ընկերություն էր, այլ նաև ուսուցչություն, նորահարսին այսինքն սովորեցնում էր ամուսնու կենացը խմել, ամուսնու սիրտը տաքացնել: Նորահարսը երեսը հացից շուռ տվեց ու խմեց, հետո կապույտ աչքերը լցվել էին, հազում էր, Սիրուն Թեվըկին դուր չեկավ, այսօր ոչինչ Սիրունի սրտով չէր:

Սոփին խմելը Վարդոյից սովորեց, Վարդոն էլ քրոջից՝ Օհանը մեծ Սոփնից էր սովորել, օր էր լինում՝ որ գալիս տեսնում էինք մեր հոգեպահուստը երեքով սրբել են, այսինքն թե՝ շան տղերք, էդ ո՞նց եք մեզ խմիչքից զրկում, բայց հնձից ու ծանր գործերից չեք ազատում: Մեծ Սոփին ասաց. «Ծխել էլ պտենք սովորիլ»:

Բայց մեջների թափովը Վարդոն էր. համարիր որ Թեվըկին չէր թողնում հարբի, կենացի խոսքը թողնում էր ասի վերջացնի ու բաժակը ձեռքից առնում էր. խմում, բերանը ձեռքով սրբում ու, ոչ հազալ ոչ բան, թշերը կարմրում էին, երևում էր, որ եթե դեպք պատահի՝ շատ ուժեղ արյուն կկորցնի: Ամուսնու ձեռքից բաժակն առնելու այդ արարքը օտար աչքի ներկայությամբ Վարդոն իրեն թույլ չէր տալիս, միայն՝ երբ այսպես մենք ու մենք էինք լինում: Թեկուզ գյուղացի ու թեկուզ ազգական՝ ուրիշը երբեք չպիտի տեսներ, որ Վարդոն Թեվըկի վրա համարիր մայր է - մարդ ու կին, տան գլուխ մարդ, ու տան հնազանդ ծառա կին: Ոչ մի օտար աչք երբեք չտեսավ, որ Սիրուն Թեվըկի հունձը Վարդոն է անում, բայց նույնիսկ զուտ մերոնց ներկայությամբ, այսինքն երբ զուտ Օհանն ու նրա մեծ Սոփին, ինքը Սիրունն ու Վարդոն, Ջանդառն ու փոքր Սոփին էինք լինում, Սիրունը Վարդոյի հնձի վրա չարանում էր՝ թե կնիկը մի քիչ կնկա շնորհքի կլինի... այսինքն հնձի տակ նազելի ու օրիորդ... բայց այդ ինչպես թիկունքիդ կանգնած ախպեր լինեն ու միաժամանակ նազելի: Ծմակուտի ինքնուրույնության ժամանակ էլ ու Հովըտի իշխանության ներքո էլ՝ միշտ էլ որոշված կարգ է եղել, որ ամառվա փափուկ խոտհարքները պետությանն են, աշնան՝ համարիր ձմռան լավ պինդ կոշտացածը՝ մեր մանր-մունր կարիքներինը, - հոկտեմբերի դժվար գերանդվի տակ ամուսնու չարչարանքի վրա Վարդոն ծիծաղում էր, ինչպես որ մայրը իր երեխայի վրա սիրելով ծիծաղի, ու Թեվըկի չարանալն էլ՝ ինչպես որ երեխան ետ դառնա ու մոր առաջ լեզու պտըտի: Ամուսնու անգիտակից արարքը գիտեր. պատկերացնենք՝ որ ութերորդ դասարանի աղջիկ էր եղել, եկել էր սարը մեծ Սոփնի մոտ ու երբ մեր լաչառը ամբողջ ուրթի վրա կռվի եկավ՝

նշանավոր այդ իրիկվա մեջ նստած նայելիս ու հասկանալիս էր եղել, կամ հետո մեծ Սոփին էր սովորեցրել՝ թե այսպես ու այսպես, երեխա է եղել՝ գլխին խփել են, անցյալը թաղում ու վրան քար ես գցում, այսուհետև քո մշակն է, ինչ բանեցնես՝ էն է բանելու, ինչ ուղղություն տաս՝ քո ուղղությամբ է գնալու: Խմում ու ծիծաղում էր ամուսնու կարծում ենք ոչ միայն հնձի վրա, խեղճը կարծում էր ամուսինը խոտից միշտ էդպես ապահով ու լաչառ ղարաչուց իր գոյությամբ պաշտպանված է մնալու:

- Կներես,- ասաց (Ջանդառը. գլուխը վրայից ընկնում էր),- ներողություն ենք խնդրում. բանակում երկուսով երեք ախպեր ենք կորցրել, այսինքն երեխա ենք եղել՝ իրենց Կերչ ու Սևաստոպոլի տեղը գտնելու խելքումիջոց չենք ունեցել: Օհանի կորուստը չենք հաշվում, չնայած ցավալին Օհանի բացակայությունն է. նրա հարգանքի առաջ մեզանից ոչխա՞ր տանեին, իրենց օտար դռներին մեզ երեք օրվա գերի՞ պահեին... ու չգիտես գլխիդ դագանակ կգա ու երեսիդ հայի լեզու չհասկացող կարմիր շնե՞ր կթռչեն թե առաջդ փափուկ հյուրասենյակ կփռեն. չէ՞ գնդակը Բաղոյի ոտն է կոտրած եղել կամ ասենք թե կողքը ծակած. կապրեր, բայց շները գտել, կրծել ու խեղդել են: - Ծիծաղեց ասաց.- Կեցցե սովետական լուսավոր կյանքը,- այսինքն թե ղաչաղների ու վայրենության ժամանակները խոր հնում են մնացել, բայց թե հիմնական խոսքը ինչի մասին էր՝ չհասկացան, ինքը ժպտաց ու իր կրծքի վրա քնեց, ու Սոփին ատեց Մյուսի կոստյումավոր ներկայությունը, այսինքն Սիրունի՝ որ շատ էլ լավ հասկանում էր ընկերոջ խնդրանքը, բայց սառած էնիք էր դառել, գլուխը չէր բարձրացնում՝ որ ընկերոջ վիճակը չտեսնի, Օհանն ասես մահակը հենց նոր էր մեկնել նրա ու տաքացած ղարաչու արանքով, ասել՝ էս ի՞նչ բանի եք, էս սխալ բանի եք:

Զարթնեց, ասավ.

- Կերչ ու Սևաստոպոլ: Հիմա էլ,- ասավ,- միջոց էլ ունենք, հասկացողություն էլ, ու մեր կորածի տեղն էլ հայտնի է, այսինքն պիտի գնանք գտնենք, պիտի բերվի: Բայց կներես,- ասաց,- չի՞ կարելի մի երկու շաբաթ, մի ամիս, շատ-շատ՝ ասենք թե մինչև ձմեռ հետաձգենք: Եթե մեկին մի ավտո խոտի լավություն անեինք՝ կհասկանար ու մեր ծնողին մի քիչ գարի կտար: Կներես,- բացատրվեց,- գերանդին Քեղուտ գցած է, էդ իմաստով ենք ասում հետաձգենք, այսինքն բերենք տեսնի, որ խոտ էլ ունենք, անասուն էլ ու ապահով ձմեռ ենք ապրում, մենակ իր կարոտն ենք քաշել:

Երեսը պարզեց, նայեց, բերանը շարժեց, ասացինք խոսում է, բայց բերանը շարժեց ու մնաց:

- Դե լավ, ասաց (Ջանդառը, խեղճ Ջանդառը. երեք օրուգիշեր չէր քնել, բաժակը ձեռքից ընկնում էր),- որ մտադիր ես՝ գնա, ես էստեղ եմ, թուրքն ասում է ճամփորդը պիտի ճամփին լինի:

Սոփին. մեծ Սոփու ու Վարդոյի ամբողջ վարքը մեջը պահել էր, վեր կացավ փեշերը շարժելով գնաց, պռոշները սեղմած բերեց մի շիշ էլ դրեց՝ թե երկուսիդ մեջտեղը բիիրը էսպես կխփեմ ու երկու իշիդ էլ մի բիրրից կկապեմ, տեսնեմ որդ եք Տաշքենդ գնում: Պետական կնքած կանաչ շիշ էր, տղերքից թաքուն ուրեմն ունեցել էր: Մյուսը սիրուն երեսը բարձրացրեց ու աչքերը ճպճպացրեց՝ իբր թե աչքով արավ, այսինքն թե իրոք Տաշքենդի միտք չէր ունեցել, արաղի պակասից էր թթված: Բայց՝ ոչ. որ բաժակները վերցրել պիտի խմեին ու Ջանդառը հարցրեց *Էդ՝ տեղը գիտեի՞ր, թե՞ Ջանդառիս պես անհասցե էիր գնում*, բաժակը ետ դրեց, ասաց մտածված է. «մտածված է», այսինքն գնում եմ որ գնում եմ:

- Էնիքը՝ մտածված է,- ասաց,- առձեռն հասցե չկա, բայց անհույս չի. էն տարվա հեռագիրը, բացի էդ էլ՝ Գործարան երեխեքի ու կնկա անունով ալիմենտի փող կլինի գալիս, քաղաքը, փողոցը, պաշտոնը, Միջին Ասիան ալիմենտի թղթին մանրամասն նկարագրած կլինի: Ուրիշ հասցե էլ կա,- ասաց,- մենք Սամըրղանդ քույր ունենք, մեր քույրը Երևանի Արտաշատից քոչել է Միջին Ասիա. ինչքան չլինի կին է, այսինքն մայր, մեր քույրը մի տեղեկություն կունենա - նեղ օրին եկած կլինի իր քրոջ տանը հաց ուտելու կամ լեն օրին շոկոլադի կանփետով կլինի եկած, մի խոսքով իրար հետ պարտքուպահանջի մեջ կլինեն:

Մոնղոլի աչքերը կպչում էին, օտար մեքենայի խցում մի րոպե շշմելը եթե քուն է՝ ուրեմն քնել էր, ասաց.

- Կներես, լավ չհասկացա, էս անտեր գլուխը չի պարզում:

- Դե էդ է, ասաց (Մյուսը՝ Սիրունը. բայց մեջը սիրունություն չէր մնացել, հանցավոր մտքից սևացել, դառել էր Օսեփանց Ռուբիկը, այսինքն Օսեփանց Ռուբիկն էր քոչելու մտքի հետ այդպես սևացել, մի քիչ էլ արգելեին կտրաքեր):

- Պարտքուպահանջի մեջ կլինեն,- ասաց (Ջանդառը), հետո գլուխը թափ տվեց ու շատ պարզ պատկերացրեց էլ ու ասաց էլ.- Այտա, ես Սամոն եմ ու ձեր պարտքուպահանջից ինձ կորցրել եմ, գլուխս ազատել կորել եմ, դուք էդ ինչի՞ եք գալիս զոռով ինձ գտնում:

Քեղուտ ծմակի իր խոզանոցից Սանդրո Վաթինյանը ձղձղաց, ու լավ պինդ չարացած էր, տնտեսությունը կարծես դեռ իրենն էր, ինքը կարծես դեռ նախագահ էր.

- Այ աղքատ շան որդի, հե՜-եյ, մյեռա՞ծ ես թե կաս, էս ոչխարը կորչելու՝ տունդ վերգիր են անելու, ի՜-ինչ ես լակյել վեր ընկյել, ա զրկված շան որդի:

Սիրունի շունը մի բերան հաչեց: Գլուխը կախ՝ Ջանդառը ժպտում ու իրեն տեսնում էր մի ռեստորանի անկյունում նստած, հայ, վրացի, թուրք ժողովուրդ է փոխվում, իսկ ինքը նստած է ու ոչ հայ է, ոչ վրացի, ոչ էլ թուրք, այլ էն է՝ ինչ որ ռեստորանի տերը կարծի, բայց նաև գիտեր՝ որ այստեղ է, արդեն այստեղ է, ու ժպտում էր, այսինքն իր հաղթանակից գոհ էր, կարծում էր ոչխարը ոնց էլ կորչի՝ ինքը կգտնի:

Մյուսը. չասաց թե լավ, գնում՝ գնում եմ, բայց քանի դեռ էստեղ եմ՝ էն օտար մարդուն մի պատասխան տամ կամ թեկուզ գնամ էն ոչխարը վերջին անգամ հավաքեմ,- վեր կացավ, շալվարի ետևը թափ-տվեց՝ թե գնացի:

Գնացիր՝ գնացիր, բարի ճամփա: Սոփին դրա համար Ջանդառին տեղից վեր չկացրեց, Վարդոյից ու մեծ Սոփուց սովորել էր՝ որձի անդամը գնաց դմակախառը ինքը կտրեց, հյուրերից մի ցելոֆանի տոպրակ էր մնացել՝ դրեց տոպրակի մեջ, է՞լ ինչ ունեին՝ մի լավ գլուխ պանիր, կռատուկի թերով փաթաթեց, բայց վախեցավ այդպես անքաղաքավար լինի ու թերթի թղթով էլ առանձին փաթաթեց, անդամի հետ դրեց տոպրակում, բերանը կապեց տվեց ձեռը, որ եթե մի տեղ հյուր ընկնի՝ հյուրատանն ասի էս էլ մեր կողմից, կնկա նորահարսության պատճառով մենք դատարկաձեռն չենք: Խեղճ նորահարսը կանգնել, կապույտ աչքերով ուշադիր նայում ու սովորում էր:

Երկրորդ ժամանակավոր կինը Դսեղա գյուղկոոպում ինչպես կանգնեցրել զուգել ու թևը-մտած բերել էր՝ կարմիր շապիկով, կապույտ բաճկոն-շալվարով ու կարմիր կոշիկներով այդպես զուգված պատրաստ էր - տոպրակը տվեց ձեռը, կերպարանքից խեղճին գցեց ու դեռ հասկացավ ու պատվիրեց էլ.

- Ճանկարծ ծակ կունենա ու պանրաջուր կտա, տոպրակը քե-

զանից հեռու բռնիր՝ որ շորդ աղաջրոտ չանի,- ասաց:

Վիզը խեղճ-խեղճ ծռած՝ տոպրակն իրենից հեռացրեց, բայց հո չէր կարող մինչև Տաշքենդ ու Սամըրղանդ ձեռքն այդպես հեռու պահել, ու խեղճ նորահարսին տոպրակի պատճառով էլ առանձին ատեց, քանի որ միս ու պանիր դնելը, ճիշտ է, Սոփին ինքն էր արել, բայց տոպրակը Թեվըկին էր հանձնել նորահարսի ձեռքով, որպեսզի նրանց մեջ ընտանեկան սեր առաջանա:

Չգիտենք աղջկերանց թաքուն սովորեցնելով թե երեխայի մաքուր սիրտը վատ բան զգաց՝ նորամանուկը հոր ետևից լաց եղավ, ուզում էր հոր հետ ինքն էլ գնա Տաշքենդ, երեխան Տաշքենդից ի՞նչ է հասկանում, էս գոմերն ու ոչխարը նրա համար Տաշքենդ էլ են, զուգված օտար ժողովուրդ էլ, ուզում էր հայրը չգնա, հոր ետևից կածանն-ընկած տոտիկ-տոտիկ վազում էր: Կատու էլ ունեին, այտա, կատվի ձագ, ո՞ր քոչից էր ընկել, եկել մոլորված սրանց գտել՝ թե ձեր կատուն եմ, երեխայի ետևից ինքն էլ էր գնում: Կոշիկները չէ՞ նոր էին, մեկը ոտքին էր, մյուսը ձեռին բռնած վազում ասում էր «հես էլ եմ գալիս». ընկավ ու կածանից գլորվեց, գրեմաստու թուփը չէր եղել՝ ձորն էր ընկնելու, հետո Սոփին գրկած ետ էր բերում ու ասում փո՛ւ Տաշքենդ, փո՛ւ հալիկ, այսինքն Տաշքենդը լավը չի, հայրիկը վատ է: Ցավալի պատկեր էր, ազնիվ խոսք, բայց դե երեխան եթե թանկ է՝ ախպերն էլ է թանկ, իսկ Տաշքենդն ու ախպերն էլ չլինեին՝ ութ-իններորդ դասարանցի մի տղա գյուղում ուներ, անտեր անխնամ գցած էր, վայ թե թաքուն ծխել էր սովորել, հյուսը շեկ ու հոր նման սիրուն մի աղջիկ՝ Գործարանի գիշերօթիկ դպրոցում. եթե սա անհասկացող երեխա էր, նրանք էլ էին երեխա, ի՞նչ էին ուտում, ի՞նչ էին հագնում, դպրոցական աշուն էր՝ գիրքուտետրակի ի՞նչ պահանջ ունեին: Նորամանկան

գլխին ինչքան չլինի էլի մայր կար ու դեռ Սոփնի նման երկրորդ համարյա թե մայր - որբ ու վիզները ծուռ՝ նրանք լրիվ անտեր էին, պարտադիր պիտի գնացվեր, տեսնվեր, ձեռքները մի երկու մանեթ դրվեր, կողքները մի քիչ նստվեր, չէ՞ մտքների մեջ իրենց մորը կհիշեին ու հորից կգանգատվեին:

Երեխայի անհասկացող պահանջը քիչ էր... այսինքն որ հերը քանի աչքի առաջ սարալանջին է՝ թուշն ինչքան էլ պաչես ու ինչ խոստումով էլ մխիթարես՝ միևնույն է, թաթիկները մեկնած լաց է լինելու՝ թե ինձ էլ տար, ես էլ եմ գալիս... երեխան քիչ էր՝ հիմա էլ շները. ուրեմն վեր-ընկած թաքուն նայելիս էին եղել - մեկը հին գերեզմանոցից, մյուսը երկու գոմի արանքից դուրս եկան ու ետևից սուսուփուս ճամփա ընկան՝ թե մենք էլ ենք գալիս, մեզ էստեղ թողած էդ ուր ես գնում: Նեղությունն էնպես եկավ, սիրտն էնպես նեղվեց, ազնիվ խոսք: Կռացավ քար վերցնելու արեց, ձեռքերը թափ տվեց, հետո էլ քարով իսկապես խփեց, բայց մեկ էր՝ ոչ քարին հավատացին, ոչ էլ Սոփնի կանչելուն,- կանչում էր՝ խաբի կապի,- երկու կողքին կանգ-նեցին՝ թե մենք պարտադիր քո ճամփի ընկերն ենք. ինքը սրտնեղված կանգնեց՝ նրանք էլ կանգնեցին, իր բախտի վրա ինքը շատ խիստ նեղացավ ու գնաց՝ շներն էլ ետևից - հետը մտան Մեծ աճարկուտ:

Ջանդառը ծնկների վրա ննջում էր.- Այտա՛,- կանչեց,- թող գան, մինչև ավտոբուս հետդ թող գա՞ն, ավտոբուսից իրենք ետ կդառնան, թող գան:- Հետո մի քիչ էլ ննջեց ու կարծեց ինքն ալարել ու չի խոսել, աղջկերքին ասաց.- Ասեք թող չխանգարվի, մինչև ուր գնում են՝ թող գնան, իրենք էլի ետ կգան, իրենց տեղն էս է:- Ապա ծնկների վրա դարձյալ ննջում ու, նույն գրեմաստի ճիպոտը Սիրունի ձեռքին թեկուզ նկատել էր, ալարում էր

ծիծաղի. ձիպոտը Տաշքենդ նրա ինչի՞ն էր պետք, Սամոյին ծեծելո՞ւ էր:

Բայց ձիպոտը նա ուրիշ հատուկ նպատակով էր վերցրել. շները ետևը-գցած որ դուրս եկավ Մեծ աճարկուտի գլուխը, հոր՝ Նիկալ խեղճ պապի ու իր կոլխոզային հազար ինը հարյուր ու քառասունմեկ թվի խոզանոցների տեղից խոտորվեց ու խոտորու դեպի ձիերը գնաց ու որ ձիերը գլուխները գետնից կտրեցին ու նայեցին, Ջանդառը հասկացավ, որ նա բարձր նպատակի է - ուզում է Ծմակուտ ձիավորված ազդեցիկ մտնի, այսինքն որպես Ռոստոմ Մելիքյան: Թող թռչի՜, ասաց Ջանդառը, թող թռչի. տասը տարեկան երեխա է եղել՝ ղրկել են հոր հետ խոզ պահի ու մտքներից գցել են, թող ձիավորված թռչի դուրս գա:

Աղջկերքին Ջանդառն ասել էր. «Ջանդառը որ հանկարծ քնի՝ չթողնեք մրսի, վրան շոր կգցեք, էս գողուգիլի առաջ ձեր Ջանդառը մնաց մենակ անընկեր»: Սոփին ու նորամանուկը շալը բերել իրոք գցել էին ուսերին, գնդապետական գլխարկը գետնից վերցրել գլխին էին դրել, շալի փեշերով ծնկները ծածկել էին, բայց Ջանդառը այդպես չէր մնացել. որպեսզի հանկարծ չքնի ու երկու կտրկան ոչխարը թողնի զուտ աղջկերանց հույսին, գնացել նստել էր գերեզմանոցի քարերին՝ որ տակը չոր քար լինի ու մինչև խմիչքի անցնելը չթողնի քնել: Սոփին ու նորամանուկը շալը հիմա էլ բերում էին գերեզմանոցում ուսերին գցեն, կարմրել շողում էին: Ջանդառն ուզում էր երգի՝ մրսում ու քունը տանում էր - ոչ թուրքի գանգատն ու եղանակն էր հիշում, ոչ էլ Դանելանց ջաղացպանի երգը՝ որը կարծում ենք պիտի հնարված լինի այս նույն գերեզմանոցում, քանի որ դեպի Երևան իր փախուստի ճանապարհին վիրավոր ջաղացպանն արնաքամ է եղել այս գոմերում. երգը հորինվել է Հախպատա Տելեմաքի

երգի օրինակով, բայց ջաղացպանն ինքն էլ նույն Տելեմաքի օրինակով է սպանվել, իր հին հայրենիքի ժողովրդին մեր այստեղի նոր ժողովուրդն ուղղակի ասել է՝ քո ոչ ճնշումներից ու դավերից և ոչ էլ երգերից՝ ոչնչով քեզանից ետ չեմ մնա. այդ երգի ու սպանության մեջ Սանդրո Վաթինյանը պիտի որ մի էական դեր ունենա,- բայց դա վաղո՜ւց-վաղուց է եղել, մեր հիշողությունից առաջ ու Օհանի մանկությունից էլ առաջ... արնաքամ Տելեմաքը փափուկ ժպտալով իրեն տվել է իր սպանիչների ձեռքը, մահվան թմբիրի մեջ կարծել է ծաղիկներից ու տերևներից իր համար պատգարակ են կապել, ձորից հանելու ու սարերո՜վ-սարերով տանելու են բժշկի դուռը քաղաք Դիլիջան:

Ջանդառը ժպտալով նորից զարթնեց՝ տեսավ շալն ուսերին է, նորամանուկն ու Սոփին կանգնած նայում են Աճարկուտ մեծ անտառի գլխով Նավ-ուրթի բաց լանջերին, Սոփին նորամանկանն ասում է՝ հայրիկդ հիմա արծիվ է դառնալու թռչի: Ասաց. «Էդ ի՞նչ եք տեսել», հետո Թեվըկին հիշեց ու ասաց. «Խոզերը չե՞ն երևացել», քանի որ հիշեց նաև, որ դեռ ամառվանից կորած խոզ ունեն, կամ արջերոց են եղել, կամ թաքուն ծնել շատացել են, հիմա միլիոնատեր ենք: Նայեց տեսավ, խեղճ յաբուն ու ծանր մադյանը թողած, շների հետ կալմեջ է արել հատկապես շիկաբաշին. քարին դեմ է արել ու ձեռը մեկնած մոտենում է. ասաց. «Էդ՝ Տաշքենդից եկա՞վ», ու երեսը քնից սրբեց, թառանչելով ելավ ու երկու մատով սուր ու երկար շվվացրեց՝ այնպես, որ Սոփին աղջկա նման ժպտաց ու ականջները փակեց: Շվվացրեց, այսինքն թե ձորերում ո՞վ կա, ո՞վ է մեր հարևանը, մեր ցրված հազար հոգսից հիմա ո՞րն է մեր անելիքը: Հետո երեսը սրբեց ասաց՝ քնեցինք պրծանք:

Քեղուտ խոտհարքի տակից՝ ծմակում կանգ առավ ու պատահաբար նայեց - արևոտ բաց լանջերով շիկաբաշը թռչում էր, ետևից ձգված՝ շները հազիվ չէին կտրվում, Նավ-ուրթի մեծ ձանապարհին խփվեց բլուրի ետևը ու կայծակի պես շողաց արդեն Ուխտատեղերի լանջին: Ջանդառը զարմացավ, զարմանքից բերանը բաց մնաց. այտա, բռնեց այ,- ասաց,- գրպաններում դա կաշառք շաքար ու սանձ է պահում: Ջանդառը սուլեց ու կանչեց:

- Ասա քու քաշն էդ ո՞ր քաշն է՝ որ էդ արծիվը քու տակին պահի. երկինքն է հանելու գետնով տա:

Գրպանում նա, ոչ, սանձուշաքար չուներ. ժամանակավոր երկրորդ կինը բերելու ձանապարհին Դսեղի գյուղկոոպում հարյուրույոթանասուներեք ռուբլին ինչպես որ տվեց կոստյում հագցրեց, նա այդպես էր - շալվարի գրպանում մի ծալած թաշկինակ ու ծոցագրպանում մի գրիչ. ժամանակավոր երկրորդ կինը իր ձեռքով գրիչը դրել էր բաձկոնի դրսի գրպանում՝ որ երևա, բայց նա տարել էր ծոցագրպանը և այդպես էր:

Գրեմաստի ձիպոտը ձեռքերի մեջ ոլորելով անտառից դուրս եկավ ձիերի մոտ - կոդակ յաբուն բարեկամաբար խռխռաց. տիրոջ նման հպարտ, այսինքն ինչպես որ տերն է մի հատուկ արհամարհանքով նայում բոլորին ու մանավանդ Ասորենց մեր ցեղի բոլոր արարքներին, Ռոստոմի շիկաբաշը գլուխը բարձրացրեց ու հպարտ արհամարհանքով խեթեց, այսինքն թե մտքովդ ինձ չանցընես: Աչքերը փակեց պատասխանեց.

- Էնիքը, էդ ո՞նց է ձիու ժամանակ ձեր տակին ձի ու ավտոյի ժամանակ ավտո է լինելու, մեր տակին միշտ էնիքը՝ մեր չոր ծնկները: Շների առաջը կանեմ, քարից կթռցնեմ, դե գնա վկա գտիր:

Երեք օրում ձիպոտը Ջանդառի ձեռքերում լավ փափկել էր, ինքն էլ ծայրը ափերի մեջ ոլորեց, ձեղքեց, ձիպոտից քթկալ սարքեց, ասաց.

- Թեկուզ դու էլ ու տերդ էլ՝ երկուսդ էլ տրաքեք, իմ տակին մտնելու ես գյուղամեջ: Աշխարքում էլ մաքուր աղջիկ չթողիք, բոլորին էնիք-արած ձամփու դրիք, հիմա որ հոգին եկել բկներիդ է հասել՝ սրբացել եք:

Ծիկաբաշին ձիերից ջոկեց, շների հետ տարավ քարին դեմ արավ: Կոդակ յաբուն նայում ու տնավարի խռխռում էր, այսինքն թե դրա հետ գործ չունես, մենք էս է պատրաստ կանգնած ենք:

- Էդ խի՞,- պատասխանեց,- իրա տերը հաստ է ու մենք բարա՞կ, թե՞ թագավորի արտոնագրով հատուկ նրա համար է ստեղծված:

Ուշքն ու քամակը շներին էր, քացին չհասցրեց նպատակով գցել, բաշը հանձնեց Թեվըկին, բայց դեռ չէր ենթարկվել. անհավատալիորեն դանդաղ ու միաժամանակ չար օձի պես միանգամից՝ Թեվըկի երեսին նշան բռնեց, վրիպեց ու ականջը տաշելով ուսը կծեց, այսինքն թե դու ո՜վ ես, Մուրու մոզի, որ շներով խաբես ու իմ ոսկի բաշը բռնես: Երեք կնիկ էր փոխել, բանակի հասած տղա ուներ՝ մտքից թռան ու գրասենյակի դռանը երեկվա երեխայի նման ինչպես որ խփած գցած էր, դարձյալ այդ էր: Պինդ, փոքր բռունցք ուներ, աչքերը մթնած ու բաշից մի կերպ դեռ կախված՝ կծկվեց ու դնչին բռնցքեց: Հպարտություն չմնաց, հպարտ գլուխը գցեց Թեվըկի գոգը:

- Բա՛,- ասաց,- էդ էլ կա. որ չենք խոսում՝ կարծում եք մենակ դուք եք:

Գայլին լավ հայտնի է, ձին դնչից է խեղճանում, պոչից բռնեց, ձիպոտը բերանին լկամ արավ, պնչից բռնած քաշեց կածանի

տակ, տոպրակը վերցրեց, խեղճ նորահարսի վրա սրտնեղեց ու, քանի դեռ խեղճացած էր, թռավ վրան. ողորկ, ասես ռանդած, լիքն ու պինդ մեջքը տեղը-տեղին հագավ հեծյալի ոտքերը, ինչպես որ դուրս-ընկած թևը տեղն ընկնի: Ամբողջ ամառը չէր բանեցվել, մի որևիցե անգամ հազիվ թե բանեցվել էր և ընդհակառակը՝ խանում կնկա նման միշտ սիրվել ու թիմարվել էր:

- Կխեղդե՛մ,- ասաց,- անունս Մուրու մոզի եք դրել ու կարծում եք էնիք է:

Գյուղացի տղերք ենք, բոլորս ենք ձիով տեղ գնացել, երբեմն մենք ազատ ու ձին բարձված ենք քաշել, երբեմն էլ մեր ուժերի համեմատ հավասար բարձված ենք եղել ձին էլ ու ինքներս էլ, բայց ասում ենք. ով Ռոստոմ Մելիքյանի նժույգ-ձիու գնացքը չի տեսել՝ նա առհասարակ ձի չի տեսել: Հազար հինգ հարյուր, էնիքը՝ տասնհինգ հազար մանեթը բռան մեջ՝ ղազախեցի թուրքը Ռոստոմ Մելիքյանի դռանը վիզը ծռած երեք անգամ կանգնել է - դուռը դեմը փակելու պես ծանր կոպերը Ռոստոմը իջեցրել ասել է՝ «էդ մասին չլսեմ». թուրքը մերժված դուրս էր եկել սարերը, Արկանք խոտհարքների գլխին նստած երգ էր կապում, թե՞ ձիու հին ժամանակներից կար՝ հիշում ու երգում էր, դեմ-դիմաց Նավ-ուրթի մայրամուտի մեջ խեղճ յաբուն, պառավ մադյանն ու այս հրեղենը կանգնած էին:

Որ ասեր թշնամի հեծվոր է, խաբեց շներով բռնեց ու տվեց դունչս ջարդեց, ձեռքին սանձ ու տակին թամբ չունի ու խմած է, ոտս արի ծուռ գցեմ՝ ընկնի շանսատակ լինի - ո՛չ. հանդարտ, տափաստան երկրի ջրի նման լողալով-լողալով բերեց գյուղի գլխին կանգնեցրեց, այսինքն որտեղից զառիթափն սկսվում ու գյուղը երևում էր: Տղա կլինի թե աղջիկ՝ Ասորենց տան

երեխային ի՞նչ լավ օր, բայց դե էլի կյանք է - ինչքան լավ օր ունեցել էր՝ այդ թռչուն գնացքի հետ հիշեց. և՛ որ մեր խոզերը գողացված ենք համարել ու չարացած ինքներս էլ ուրիշի ունեցվածք ենք զարկել, բայց մեզ տնավարի մի կողմ են տարել ու մեր գրպանը խնայդրամարկղի գրքույկ դրել (Ռոստոմ Մելիքյանը), ուրեմն իր խոզը մթերելիս մեզ խիստ զբաղված է համարել ու ղեկավար ընկերոջ պես մեր գործը հոգացել. և՛ որ հնձից ու հավաքից անտեղյակ ենք եղել, բայց ձմեռը հայտնի է դարձել՝ որ մի երկու տեղ խոտ ունենք (լույս-դառած Վարդոն). և՛ որ գյուղկոոպի աղջկա հետ երկրորդ ժամանակավորը կոստյումը հագցրեց, մեզ կոստյումավորեց ու հների փաթեթը, ինչքան էլ ստիպեցինք, չտվեց մեր թևատակն առնենք, ասաց դու ո՞ր ղեկավարից ես պակաս. և՛ որ մեր եղբոր ղարաչին՝ սիրելին, անտանելին, անբախտը, հավ էր մորթել, հավ էր տապակել, թերթի թղթով հատուկ փաթաթել, սխալմամբ կարծել էր նանը սարում ու Վարդոն հորանց է, տնական մի շիշ արաղ էր խցանել ու եկել. եկավ դրեց սեղանին ու սառավ. պատառաքաղի ծայրով ափսեն ամբողջ ժամանակ քչփորում, ուռչում ու կարմրում էր. ոչ գալու նպատակի հարցմո՛ւնք, ոչ էլ անցյալի տեղեկության որևէ նշա՛ն, չնայած մեր կենսագրությունը, ինչպես որ մայրը երեխային լողացնելիս նայի, Վարդոն գիտեր - ուղղակի՝ մեծ տեգրակինս ես, եկել ես քո փոքր տեգոր տուն. հետը դուրս եկավ, մինչև չափարի ծայրը ճամփու դրեց, ձեռները ծոցում կանգնեց ու լաց եղավ խեղճ ղարաչու ճախորդ նպատակի, ամուսինները զոհված բոլոր որբևայրիների և իր ու մեր ապագայի վրա, իր ու մեր անձնական ապագայի:

Ձիավորված դուրս եկավ սարը (Վարդոն), մենք ու Ջանդառը նայեցինք ասացինք էն ով կլինի. նստած՝ ցամաք հացուպանրի

էինք, ձեռի հացը Ջանդառը ետ դրեց, ասաց հացդ ետ դիր, մեծ ճաշկերույթ է լինելու. ձին, որ քուռակը ետևից դուրս եկավ, ճանաչեցինք՝ Ավագի ծանրաոտ մադյանն էր, բայց Ջանդառն ասաց՝ ձիու վրա Օսեփանք չեն, մերոնք են. եկավ ասավ՝ «էն-քան ոտնահարեցի՝ կրունկներս ջարդվեցին, խի՞ չես ինձ համար Ռոստոմի ձիուց մի ձի առնում, ախպերիկ». աշնան երկնքով օդանավ էր գնում ու բացի այդ էլ Ջանդառի ներկայությունը ծիծաղի է քաշում, ասացինք՝ «էս տեխնիկայի դարում ի՞նչ ձի». մեր Լոռվա ամբողջ պարզ աշխարքն առաջներս՝ Կապույտ աղ-բյուրի գլխին սեղան գցեց, խանութի պահածո միս ու յուղով տա-պակած մակարոն էր բերել՝ հաց դրեց, պետական մի շիշ արաղ դրեց, կերանք-խմեցինք ու որ արաղը հատավ՝ պահած տեղից մի հատ էլ հանեց, Ջանդառի Սոփու հոգեպահուստի սովորու-թյունը ահա թե ումից է գալիս, հանեց, լաց լինելով բերեց դրեց առաջներս. կարծիք տարանք՝ թե գյուղում քեփին դիպչող է եղել, ղարաչու հարևանությունն, այնուամենայնիվ, առանց հետևանքի չի անցնում, կամ խանութը լավ ապրանք է ստացել ու իրենց մեջ առանց մեզ բաժանել են, ասացինք՝ «ինչի՞ ես լաց լինում», աչքերը սրբեց ասաց՝ «լաց չեմ լինում, էս սիրուն աշխարքը պիտի թողնենք մեռնենք». ծիծաղեցինք ասացինք՝ «ե՞րբ». հետո, որ Ջանդառը մի կողմի վրա երգելով գնացել էր ու զուտ մենք էինք, ձիու սանձը բռնած ճանապարհ էինք դնում, լաց եղավ ասաց՝ «սիրտս վատ բան է վկայում, ապերիկ, որ պատահի նոր աղջիկ ուզես ու ինքը դեմ չլինի՝ Վարդ կասես. մինչև քո բերելը ինչ անուն որ ունենա՝ կողմնակի ուրիշները թող իրա անունը տան, բայց դու Վարդ կասես, քեզանից մենակ էդ մի խնդրանքն ունեմ»: Չարացանք, մի երկու կծու խոսք ասացինք, հետո որ թույնի կարծիքը տարածվեց՝ մեր մտքում

անընդհատ մեր ծանր խոսքերն էին: Մեր լեզուն չորանա՛ր, ինչպես որ գրասենյակի դռանն է ամեն անգամ չորանում ու մեր իրավունքը պաշտպանելուց հրաժարվում, լալկվե՛ր մեր լեզուն, չասեր, - ասացինք. «Քու արժեքն ի՞նչ է, որ քեզ վրա դու լաց ես լինում»: Խոտի ապահովությունը ապահովություն, բայց նրա հունձը մեզ դուր չէր գալիս, կինը պիտի կին լինի, նրա արաղ-խմելը... իսկ որ ձեռը բերում քսում էր մեր գլխին՝ կարծում էինք սովորեցնովի է, Օհանի մեր Սոփին սովորեցնում է թե էսպես՝ որպեսզի տանը կապված մնա, ձեռդ պիտի քսես մազերին: Լաց լինելով գնաց մեռնելու, ասաց. «Է՜ ախպերիկ, չգիտեմ ինչ ես անելու՝ որ տունը ցրիվ չգա»:

Չորս օր հետո՝ վրա չորրորդ օրը, լուր եկավ՝ թե արնաքամ է լինում, հասիր: Չհասանք, հիվանդանոցից արդեն բերել էին, տանը դրած էր: Լուրը գյուղին շուտ էին տվել, բայց սարը-հանող չէր եղել, ասել էին դրա համար հատուկ մարդ չղրկենք, վատ լուրը ինքնիրեն էլ կհասնի, ասել էին Թեվիկը հո բժիշկ չի, լուր տանք որ ի՞նչ, ոչխարը սարում անտեր մնալուց բացի ի՞նչ է լինելու մեր լուր-տալով: Օհանի քարի գործով Ջանդառը Դսեղ գարեջուր էր ծծում, մեծ Սոփին քրոջ մոտ հիվանդանոցում էր եղել - սարում զուտ մենք ու Ջանդառի Սոփին էինք: Դպրոցական մեր երեխային դասից հանել, ինչպես որ ժամանակին դպրոցը մեզ էր ղրկել մեր հորը խոզապահի օգնական, ասել էին մերդ մեռնում է, ոչխարին դու գնա նայիր, հորդ ղրկիր հիվանդանոց, - բայց երեխան ուսը ծուլ էր արել՝ ի՞նչ անեմ մեռնում է, և շատ տեղին էր արել, քանի որ պետական տնտեսության հոգսը ղեկավարությանն է այլ ոչ թե դպրոցական երեխայինը, իսկ դրանք սովոր են համոզել երկու օրով ղրկել ու էդպես հա-վիտյան էլ վրադ հաստատել:

Մեր խեղճ նանը, արդեն գնալու վրա էր, տեղաշորից դուրս էր եկել, փետը վերցրել ճամփա ընկել՝ թե գալիս է մեր տեղը չոբան, որ մենք կարենանք Հովիտ հիվանդանոց գնանք. եկել Սիմոնի տան վերևը Մեղրատանձու վերելքին դեմ էր առել ու մնացել, էնիքը՝ չէր զորել. ոչ ծունկն է բռնում, ոչ ձենն է ելնում, ոչ արտասուք ունի, ոչ էլ հիշում է թե տեղաշորից ինչու է դուրս եկել - լանջի վերելքում ընկել նվում է: Էլի՛ հարևանությունը - իրենց տնից Սիմոնենք նկատել, եկել տարել էին, Աղուն քույրիկի կամ հին մարդկային խղճի ստիպմամբ Սիմոնը սարվորի շոր էր հագել, մի երկու օրվա հաշվով եկել: Եկավ ասավ գյուղում գործ կա, գնա տուն: Կարծեցինք նանի վերաբերյալ է, տխրեցինք ասացինք. «Բա որ դու սարում լինես՝ էնիքը, տախտակի գործը ո՞վ է անելու»: Ասաց. «Չէ, այտա, չէ, ուրիշ հաշիվ է, գնա. բանը միգուցե տախտակի չհասնի»: Էնպե՛ս նեղացանք, սիրտներս էնպե՛ս նեղվեց՝ որ էլ չասելու... էլ իմուքո, էգուորձ, պետական-սեփական ու ժամանակ չհարցրինք, թող խառնվեին անժամանակ բեղմնավորվեին, թող պետականի անունով պահվող սեփականը մատնվեր, թող ջարդվեր ու մե՛զ էլ ազատեր, ի՛նքն էլ ազատվեր - չո՛ւ արինք լանջերից թափեցինք ձորը, ջարդելով քշեցինք գյուղամեջ: Նույնիսկ նա ու նույնիսկ մեր անհարմար դժբախտության ժամին՝ Սիմոն քեռին մեզ ծաղրեց. ասաց. «Ասորենց խրտնածին ոտն-անել չկա»: Ուրեմն բոլորի առաջ թե մենք թե մժեղը - բոլորի, անխտիր բոլորի: Ինչո՞ւ, ի՞նչ պատճառով - մեր ոչ մի արարքով ժողովրդի աչքը չե՞նք վախեցրել, երեխա-տղայի մեր վարքը մեզ վատահամբավ է խարանել ու այդպես էլ կնքա՞ծ է, ուսումը շարունակելու հակում ու ստիպո՞ղ չենք ունեցել, չզինակոչվելու պատճառով չե՞նք դարձել կուսակցական՝ որ կուսակցական լինեինք ու գրասեն-

յակի դռանը մեզ հարգելով կանգնեինք մինչև մի հարմար պաշտոն գտնեին, մեր աշխատա՞նքն է ստորացված, թե՞ մարդկային արհամարհանքն առհասարակ չի չքանում - հոր խեղճ ուսերից առնում դնում են զավակի մեր ուսերին ու մեր վրայից էլ պիտի դնեն մեր խեղճ որբի վրա:

Ասաց. «Այտա, դե եկել էի, մի երկու օր յոլա կտանեի, մինչև ազատվեիր գայիր, ո՞ւր ես անտեղի դիվոտում»: «Դու գո՛րծ չունես, ասացինք, քու գործը չի»: «Պահո՜,- ասաց,- Ասորենց խրտնածին ոտն-անել չկա»:

«Յոլա կտաներ», «մի երկու օր». տասն օր չէր կարող ու յոլա տանելուց լավ չէր կարող, թե չէ անունը կփոխեին Ջանդառ ու Մուրու մոզի կասեին:

Թշնամի հանդապահի պես ջարդելով, այսինքն ինչպես որ իրենց հանդից թուրքի հանդապահը մեր ոչխարը քշի, դուման-կապած քշեցինք գյուղ, գյուղամեջ: Երեխաները մեր ճանա-պարհից փախչում, դույլերը կռներին կանայք վիզները ծռած խեղճ-խեղճ նայում էին, ովքեր կարող էին նաև շատ լավ չոբան լինել ու չոբանություն անել, բայց գյուղի իրենց մաքուր այգի-ներից դուրս չէին գալիս՝ տղամարդիկ մեր խեղճ զայրույթի առաջ գլուխները թաքցնում էին: Մի սիրուն որձ ունեինք, տվել պոզը թռցրել էինք, արյունը չռռալով գնում էր, ոչխարի կեսը ճամփաներին էինք թողել, հետո, երբ մեր ասելիքն ասած տուն էինք բարձրանում, աչքի պոչով տեսանք՝ անտեր, խրտնած, շշկլված դեռ գալիս էին:

Հովհաննես Թումանյանի հին թավադների նման գրասեն-յակի պատշգամբում իրար կողքի շարված էին, այսինքն թե մենք էլ այստեղի գործկոմն ենք. իրենց մեջ տեղաշարժ երբեմն լինում է՝ անտառապահն անցնում է գործակատարության,

գործակատարը բրիգադավարության, բրիգադավարը հաշվետարության, բայց միշտ իրենք են - Ռոստոմ Մելիքյանը, սրա ախպեր Ռոստոմը, մեր եղբոր Վերանը՝ մեծ պեպենոտը, Մելքքանց թազին, անասնակերի ու բենզինի առանձին պահեստապետները: Պատերազմից հետո Մելքքանց թազին Գործարանում բանվորություն անելուց ինչպես որ վախեցել, փախել ետ էր եկել ու մեր ակումբի բեմից քաղաքներում չգիտենք որ աշուղի բերանից սովորած երգը հարմարեցրել, մերոնց կառավարումը քննադատելով իր համար մի անգործ պաշտոն էր խնդրում, այսինքն թե մենք ձեզանից ինչ պակասն ենք, այդպես էլ նպատակին հասել էր, հիմա չէր երգում, ղեկավար շարքում լուռ կանգնած էր. նրա երգն ուրեմն երգ չէր՝ պաշտոնահաչ էր: Մեր եղբոր զավակը՝ մեծը՝ պեպենոտը, բաձկոնն ուսերին ետուառաջ էր անում կաղնե հին պատշգամբում ու լավ չարացած էր, քանի որ տեղամասային բուժքրոջ վաթսուն ռուբլիական պաշտոն էր եղել՝ իր Ռոստոմ քեռին կնոջ համար զավթել էր, չէր թողել պեպենոտի կինն զբաղեցնի, կենտրոնի բերանով ասել էր համապատասխան կրթություն ու վկայական չունի, պեպենին ուրեմն դեռ մարդատեղ չէին դնում, մեզ դեռ չէր ծեծել, հետո երեսով մեկ ամբողջ պեպենը կարմրեցսևացավ, խփեց հանգցրեց ու իր տեղը նրանց մեջ հաստատեց:

Քշեցինք գրասենյակի դուռը՝ իրենց առաջը: Էլ տեղ չկար, քաշող էծը՝ քոշը, բարձրացել պատշգամբում էր կանգնել, ուլերից մի երկուսը թռել էին պահեստի պատուհանները: Իրար երեսի նայեցին, միասին էին՝ ավելի միացան, իրար խոսք տվին ասացին. «Ո՞ւմ չի պատահում, այ որդի, դեպք է՝ պատահել է». բա թե՝ «քու կռիվը գնա քու երեխայի ու քու ընկերի հետ արա. ղրկել ենք՝ ուսն է ծուլ-արել, զանգել ենք Դսեղ՝ ասում են

«նստած խմում է»: Փետը գցեցինք պատշգամբ, ասացինք. «Էդ ձեր ոչխարը, էդ էլ դուք»: Կարմրեցին, ուռան, ասացին. «Անվանապես ո՞ւմ նկատի ունես»: Չնայեցինք ով է մեր առաջ, ասացինք. «Մեկառմեկ բոլորիդ. բոլորի՛դ», ասացինք: Մեր եղբոր զավակը գեշ նայեց, պեպենները կարմրեցին, բան չասաց ու մտապահեց:

Գո՜րծ էին արել. ինչպես որ պատերազմի առաջին աշնանը հորը, երեխային դասից հանել էին՝ թե անմարդկային չարչարանքի, մոռացության, կորուստների ու ծաղրի հոգսը պապից թոռ Ասորենց ձեր ցեղինը, մերն էլ առաջնորդի նման այստեղ կանգնելն է, գնա՛, երեխա: Ծները ոչխարի մոտ օտար գյուղամիջում չմնացին, եկան մեր դուռն ու երկու օր իրենց հիմնական տիրուհու վրա օռնացին: Արնաքամվե՜լ, կարիճ էր դարձել, իսկ թունավորվածները, ասում է, շատ ուժեղ սևանում են: Աչքների առաջ ոչխարն այդպես անտեր թափված էլ մնացել էր, տիրություն չէին արել - մեր սև լաչառի պահեստապետ ժամանակներից շեմքատակերին ու դռներին մնացած դետեի փոշի էր եղել, կերել ջարդվել ու հաստատել էին՝ թե Սիրուն Թեվիկը Վարդոյին մկնդեղ ու պետական ոչխարին էլ դետեի թույն է տվել: Չէ՞ մարդկանց մի տեսակ կա՝ որ վշտի մեջ գազազում մարդասպան է դառնում. օտարներից օտարի վերաբերմունք, հարազատից էլ՝ հարազատի, բայց մեծ Սոփին այդ հարազատը չեղավ, չհասկացավ՝ որ Վարդոյից ինքն է մնացել, նայեց՝ և մեզ քրոջ կողքին էր դրել թաղել: Գութը դարձյալ մեր սև լաչառի մեջ էր՝ անվերջ-անսպառի, հիմարի, սիրելիի, մարդորդու. թևերը կրծքին խաչած՝ իրիկվա մեջ իր դռանը կանգնած էր, մրմնջաց ասաց. «Արի, այ ողորմելի խեղճ, արի, այ անբախտ, արի»:

Եկավ թաղի գլխին կանգնեց, նայեց ու սիրտը սևացավ ոչ թե այն իմաստով, թե դուք ինչու եք ապրում, այլ՝ թե ինչու տարին տասներկու ամիս ու օրը քսանչորս ժամ աշխատողը մենակ ես եմ, էնիքը՝ ապրողը մենակ դուք: Տակից էլ մի քիչ նախանձ էր, բայց իր տեղն ով լիներ՝ որ չնախանձավորվեր: Բոլորի դռներին, նույնիսկ նրանց՝ ովքեր քոչել ու քաղաքում էին, յոթտոննանոց դեզերը սոթլիկ-կոկլիկ նստած պատրաստ տնքում էին: Կարտոլները հանված տեղավորված էին, լոբիները՝ քաղված, սարին՝ այգու մի անկյունում դարսված ու դեռ ցելոֆանով ծածկված, որ ձյան տակ չմնա, չնայած ձյունը դեռ ո՜ւր էր, Ջանդառն ու մենք խոտի հարցը դեռ պիտի մտահոգվեինք՝ որ նոր ձյուն գար. բոլոր չափարների մեջ միայն կաղամբը չէր քաղված, թողնում էին եղյամ ուտի՝ որ արաղից ու էնիքը՝ խոզի տապակածից հետո թթուն քաղցր լինի: Կարտոլի ու լոբու չոր ցողունը փոցխով քաշել, այգիները մաքրել էին: Բազկի թերն ինչ կարմրություն ունի, չունի, բայց այգիներն այնքան էին մաքուր, որ բազկի թերը կարմրին էր տալիս: Բազուկն էլ պահում էին՝ որ թթուն գունավոր ու համով լինի, ջուրն էլ վրայից խմեն: Ասաց.

- Շիտակ եմ խոսում, էնիքը՝ կրակ կտամ գիշերը կվառեմ... թե քաղաքում եք՝ էդ ո՞նց եք գյուղն էլ զավթած պահում, թե գյուղում եք՝ էդ ո՞նց եք մենակ բերքին մասնակից:

Ադամի, Սիմոնի, թաթարի՝ Սեվանի, Մելքանց Սեդրակի, մանավանդ Սեդրակի՝ գործակատարի չափարները եկել իրար կցվել, տան ճանապարհը կտրել, ասում էին դու էս կողմից իրավունք չունես քո տուն գնաս - պիտի օտար մուրացկանի նման վերևի լանջերով հեռվից պտտվես ու Սեդրակի տան մյուս կողմով անցնես կամ թե չէ՝ Ադամի տան ներքևի ձորը մտնես ու թաքուն գողի նման դուրս գաս հորենական ավերակ - ինչի՞.

տասն անգամ խնդրողական նայեցինք՝ թե որտեղից են ձարվում կապույտ չափարների մետաղե ցանցերը, մի առձեռն պատասխան չեղավ, այսինքն թե մեր տները երկաթե բերդերի նման միշտ այսպես փակ, քոնը անցնող-դարձող մարդուգազանին ոտնատակ ու քո տան վարքն էլ ժողովրդի բերանում քննվող առարկա պիտի լինեն:

Չափարի վրա բարձր դարպաս ու դարպասի վրա մի սիրուն դռնակ էր բացված,- Սիմոնի գամփռը դռնակից դուրս պրծավ դեմները կտրեց՝ թե դուք իրավունք չունեք մեր տան վերևով անցնեք: Իրենք երկուսով էին, նա մենակ, բայց օտարություն էին քաշում, կպան Թեվըկի ոտքերին, փշաքաղվեցին ու իրենց ներսում ղռմռացին, իսկ գամփռն ահա, ինքը մենակ, երեքի առաջը կտրել ու քիչ էր մնում շներին ձեռքից խլի: Տերերը դուրս չէին գալիս, վստահ էին՝ որ իրավունքն ու զորությունը իրենց գամփռինն է, դեմ-դիմաց սև ղարաչու դռանը նրա խախլուշկա հարսը՝ փոքր պեպենոտի կինը, երեխան գրկին դուրս եկավ անցորդ ու մանավանդ տղամարդ տեսնելու, նրա սիրտը միշտ իրենց Ռուսաստանների հեռուներին է, սև ղարաչին որևէ տեղից թերևս թաքուն նայում էր, պեպենոտ փոքրը իր տրակտորի մոտերքից սուլեց ու դարձյալ իր գործին կացավ - շունը շների առաջը կտրել է, շունը շան ոտը չի կծի,- ուրիշ ոչ մի վերաբերմունք: Իր ու առհասարակ իր տղամարդկության վրա մեծ կարծիքի է, ձեռքերը գրպաններում ու իր քեռի Ռոստոմի պես բաճկոնն ուսերին՝ մեծ պեպենոտը խախլուշկա հարսի կողքին կանգնած դեսը նայում էր, և գամփռը Թեվըկի դեմը կտրել փաստորեն ասում էր՝ քո թշնամին ահա պիտի նայի տեսնի, որ քո ճանապարհը փակ է:

Ղարաչի մոր դռնից մեծ պեպենոտը Սիմոնի տանը իշ-

խանավարի կարգադրեց՝ թե նրանց շունը և այլն... այսինքն Թեվըկին թույլատրեց գյուղ մտնել, բայց Թեվանի համբերությունը հատել էր, ձիպոտը բարձրացրեց ու շներին թաքուն քսի տվեց, «քըս,- ասաց,- խեղդիր, խեղդեցեք». երկուսով կալկոխ արին ու գզելով-գզելով տարան տուն պրծացրին, և նոր միայն Աղուն քույրիկի սիրուն դեմքը դռնակից դուրս եկավ:

- Էդ է,- ասաց (Թեվանը),- ձեզ մինչև մի թշնամություն չանեն, մինչև մի վտանգ չլինի՝ մարդու դուք բանի տեղ չեք դնի:- Հացի, տաք փռան և առհասարակ շեն, մաքուր, խաղաղ օջախի բույր էր գալիս: Երկու ժամ է,- ասաց,- շունդ առաջս կտրել է, թող չի անում գնամ իմ դուռը:

- Անոշ,- խնդրեց,- շների վրա է հաչել, մեր շունը մարդի վրա չի հաչում:

Բայց սրտնեղած էր, ասաց.

- Չափարդ է՞լ է շների առաջը կտրել, թե՞ իմ առաջն է կտրել՝ թող չի անում գնամ իմ դուռը:

- Անոշ,- ասաց,- մեր դուռը քեզ ճամփա, մեր դռնով գնա-արի: Համ էլ,- ասաց,- դու պիտի սարում լինեիր, էդ ինչի՞ ես գյուղում:

Միամիտ մաքուր սրտով ասված խոսքեր էին, բայց նեղությունն էնպես բերեցին՝ որ դռնակի մեջ կանգ առավ ու չուզեց մտնել:

- Պիտի սարում լինեի, բայց գյուղում եմ,- ասաց,- էստեղ եմ, գործով Տաշքենդ եմ գնում:

Շները բակ չմտան, Սիմոնի շան առաջ առանց տիրոջ՝ պոչները շեքը քաշեցին ու փախուստի տրվեցին, գամփռը մերթ մեկին էր խեղդում հալածում, մերթ՝ ետ-ընկած մյուսին, իսկ նրանք երկուսով էին ու իրարից չէին ամաչում՝ փախած գնում էին, գամփռի հաչոցը հիմա Սեդրակի տան ներքևի ձորից էր

գալիս, հետո գամփռը հաղթական վերադարձավ, իսկ շները դեմ-դիմաց հորենական ավերակի դռանը պպզել, Թեվանի գնալուն էին սպասում:

Դա տուն չէր՝ դրախտ էր: Սյուներն ու բազրիքը լավ ներկված էին, շուշաբանդը մի կոտրած ապակի չուներ ու դեռ ներսից վարագույրներ էին կախված: Փայտը. ձմեռվա պաշար փայտը հավասար սղոցված դարսված էր, ամբողջ բակը մաքուր ավլած, փեթակները ծածկի տակ, հիսուն ու դեռ հարյուր հավը այգու մեջ մետաղյա կապույտ ցանցով առանձնացված, բակում մի ծրտած տեղ չկար, մարմարյա նախշուն ցայտաղբյուրն էլ դռանը սիրուն ջուր էր ցայտում, եթե սիրտդ նեղվում է՝ խմիր թող լենանա: Խախլուշկայի երեխան՝ Դաշան թե Պաշան, երեխայի իր անգիտակից խելքով եկել ապավինել էր այս առատ ապահովությանը, ուր տատի հետ պապ էլ կար ու իրար անխոս էին հասկանում: Աղուն քույրիկը փուռը վառել, հաց էր թխում, հալիվորը մառանի դռանը հատուկ այդ նպատակի կեռից կախ-տված թոխլի էր մաշկում, ակնոցի վրայից նայեց ասաց.

- Էդ ի՞նչ Տաշքենդ է:

Աղուն քույրիկը փռնից հաց էր հանում, հանեց ասաց.

- Քեզավարի էդ ինչի՞ չես դանակը ձեռից առնում, չես տես-նո՞ւմ որ մեծացել է, աչքը չի զորում:

Ասաց.

- Էնքան առանք, որ վերջը հասկացանք՝ ամեն մարդ պիտի իր մասին մտածի:- Օհո՛. ինքը իր ձայնին ականջ դրեց ու չհա-վատաց, դա Ասորենց տան ձայնը չէր, ասաց.- Էնիքը, հագուստս համապատասխան չի:

Նայեցին տեսան իսկապես կոստյումավորված կանգնած է, Աղուն քույրիկն ասաց.

- Էդ ո՞րտեղից ես գալիս:

Ձեռքի տոպրակը շարժեց ասաց.

- Սարից:

Մարդուկնիկ երկուսով նայեցին, Աղուն քույրիկն ասաց.

- Բա էդպես սարի՞ց են գալիս թե Դիլիջաններից ու Ղազախներից:

Ուսը բարձրացրեց ասաց.

- Դե էդ է:

Աղուն քույրիկն ասաց.

- Բերեմ գոգնոց կապեմ:

Ասաց.

- Կանեի, բայց ճամփի վրա եմ, Տաշքենդ եմ գնում:

Չգիտեին Տաշքենդն ինչ է կամ գիտեին ու արհամարհեցին, հալիվորն ասաց.

- Ձին կորած էր, դեռ կորա՞ծ է թե երևաց:

Կարծես հատուկ ծաղր անեին. մտքով նա Տաշքենդ էր՝ նրանք յաբուից էին հարցնում: Ասաց.

- Չեմ նկատել, բայց կարծեմ կորած չի եղել:

Ստի վրա հալիվորը բարկացավ ասաց.

- Էդ ոնց չեք նկատել՝ որ հասցրել եք Ջարխեչ ու Կիրանց:

Լավ չհասկացավ էդ փորձո՞ւմ են թե ամեն տեղ իրենց լրտեսն ու լրտեսությունն ունեն, ասաց.

- Էդ փորձո՞ւմ ես թե շիտակ ես ասում:

Ուշքն իր գործին՝ ասաց.

- Էդ ի՞նչ ճիպոտ է ձեռիդ:

Չլսելու դրեց, իր խոսքն ասաց.

- Սովոր եք՝ տեղյակ չլինեք ու մեղադրեք, Սիրուն Թեվիկը մի հանցանք անպայման կունենա, էնիքը՝ կմեղադրվի: Տնաշե՞ն,-

բացատրեց,- երեկ էլ ու մյուս օրն էլ՝ երկու օր գյուղում էստեղ եմ եղել:

Բայց չազդվեցին, հալիվորն ասաց.

- Սիրունը կլինի թե Փսլնքոտը՝ երկուսդ էլ նույն քուչին չե՞ք:

Նեղվեց, ժպտաց ու նեղվելու պատճառով իրոք կռվեց. ասաց.

- Բա էդ ո՞նց է, որ ամեն ինչ տեղը-տեղին դուք էդպես պիտի գիտենաք - մենք մեր կորածին էլ ման-գալու իրավունք չունենանք:

Աղուն քույրիկը փռան շեմքից ետ նայեց, նրա փոքրիկ բարկությունը ծաղրեց ասաց.

- Էդ ո՞ւմ վրա ես չարացած, ա՛խպերացու, քեզ ո՞վ է չարացրել:

Այսինքն թե դու ինչ ես՝ որ քո բարկությունն ինչ լինի: Ձեռքի ճիպոտը դրանց տան, այգու, դեզի, փայտի ու մեղվանոցի վրա պտտեց, ասաց.

- Էնիքը. օրինակ, էդ ինչի՞ պիտի ուրախ լինեի. մի օգնական չունեմ. քեզ նման էդպես խոզ էի մորթում, կողքիս կանգնած մի ոտը-բռնող չկար, դանակը փորում խոզը ձեռիցս փախավ:

Նա իր մսաբանին էր, նա իր հացին, իրենց գործն ու ապագան դասավորել, այգին ու դռները մաքուր մաքրել ու խաղաղ կրակի նման ապրում էին: Ստույգ չգիտենք, ասում են, բայց ստույգ կլինի - այդ կինը գնացել քաղաք Ստեփանավանը թե Կիրովականը միլիցիայով ու իր Արմենակ որդու անունով խառնել, հին ժամանակներում իբր թե իր մոր արծաթե գոտին չգիտենք ում մեջքից պոկել բերել է՝ թե իմ մոր գոտին է, իմն է, ձեր մեջքին չպիտի գնա Ամերիկա... հիմա մեջքին չէր, բայց արած կլինի: Հալիվորը դանակը սրեց ասաց.

- Էդ է:

Այսինքն էդ է, մեր դժվարն էլ ինքնիրեն է լինելու ու քու հեշտն էլ մի պատճառ է հնարելու՝ որ չլինի: Ամոթ է, չասենք թշնամի - այդ օտար ապահովության մեջ անցորդ մուրացկանի նման կանգնած էր. հալիվորն իր գործին էր, պառավը՝ իր փոքր պեպենոտի Պաշան թե Դաշան ու ինքն էլ՝ որ երեխային փաստորեն պապ էր գալիս՝ կանգնած նայում էին. հեռու ձորերից աղբյուրը բերել էին իրենց դուռը, մարմարե մաքուր սկիհի մեջ միամիտ քչփչում էր ու չէին ասում ակունքը մեզանից անտես է, մեկը թշնամություն կանի՝ օձի պես կնայի ու մեջը կթքի. սամիթը քաղել, կապուկը սյունից կախել էին, շարուկ-ներով կարմիր տաքդեղ էին չորացնում, կաղամբի հետ թթու էին դնելու... ասաց.

- Ճաց եք թխում, միս եք անում - հյուրասիրություն ունեք:

Էնիքը, անկասկած ունեին, բայց թաքցրին, հալիվորն ասաց.

- Տեսնենք, հացն ու միսը լինեն՝ հյուրը կլինի ու կլինի:

Մտքում դառը ծիծաղեց, ասաց.

- Մեր կողմից՝ մենք շնորհակալ ենք. մսի վրայից նոր ենք վեր-կացել ու ճամփի վրա ենք՝ Տաշքենդ ենք գնում:

Հալիվորը մի րոպե կտրուկ նայեց ու բան չասաց, այսինքն թե դու ով ես՝ որ քեզ հյուրերի շարքն ես դասում: Կապույտ բարակ կոպերը վրա բերեց, աչքերը փակեց, ասաց.

- Եթե հաշվենք, որ վեցից դուրս եմ եկել աշխատում եմ՝ իմ աշխատանքով ումի՞ց եմ պակաս, ոչ մեկից էլ պակաս չեմ, բայց բոլորից էլ պակաս եմ, ինչի՞:

Աղուն քույրիկը փռան շեմքից ասաց.

- Ոնց հիմնադրվում էնպես էլ գնում է, դու Ասորենց տեսակն ես, քեզանից ուղղվող չի լինի: Թոռներիդ թոռները թե հանկարծ

ուղղվեցին՝ ուղղվեցին: Էստեղի ձեր պապը Վանքերա ձեր ժողովրդին ոնց թողել է՝ էդպես հարյուր տարի առաջվա պես էլ մնացել են. կաստումդ քանի հագիդ է՝ գնա ներկայացիր ու նայիր. մի՛ ասա ով ես, ասա Ծմակուտա Մելըքանցից եմ ու մեջները կանգնիր նայիր. ու որ էստեղի Ասորենցից հարցնեն՝ հիշիր ու պատմիր: Ձերոնք որ փախչում են՝ իրենցից են փախչում - կարծում են գյուղից ու տեղից են փախչում, մատաղ:

Մարդուկնիկ զուգերգ էին անում, հալիվորն ասաց.

- Էդ է:

Աղունն ասաց.

- Հիմա էլ հույսդ դրել ես էն լաճիրակի վրա, բայց նա տունքանդիչ է, անոշ, նա քեզ օգնական չի, մատաղ, անունը դրել ես ախպեր՝ քու խեղճ գլխին ջոկ հոգս ես բերում:

Հալիվորն էնտեղից՝

- Էդ է: Նորահա՞րսդ ինչ գոյություն, ինչ օգնություն, ինչ արարած է, հարմարվո՞ւմ է, թե՞ մյուսի նման ուշքը ետ հորանց է:

Սիրտը փորում տկտկում էր, աչքերը փակեց, ասաց.

- Ձերոնք էդ ո՞նց է քաղաքում բանաստեղծ ու էնիքը՝ գնդապետ են լինելու, իմը լաճիրակ է: Էդ ոնց է էնտեղ գնահատել ու դպրոցի շինարարություն են վստահել, էստեղ գնահատվողը մենակ դուք ու ձերոնք են:

Համեմատության վրա շատ ուժեղ վիրավորվեցին, ասես կողքները սխալվել նստել էինք ու վրաները մեզանից ոջիլ էր քաշվում, հալիվորը խիստ նեղացավ, ասաց.

- Բերում ում կողքին ում ես դնում, տնաշեն:

Աղուն քույրիկը փռան բերանը փակեց, ասաց.

- Հավատում եմ, անոշ. դպրոց պատած կլինի, բայց պատած էլ կլինի, փողը վաղուց ջնջած էլ, քու տուժած կյանքի վրա նոր

քայքայիչ մի բեր:

Իսկապես, գրպանում փողի մասին հեռագիր կար, բայց չուզեց անպատասխան մնալ, քանի որ ձիշտն ինքն էր. ասաց.

- Բա էդ ո՞նց է, որ դու գնացել քաղաքն իրար ես խառնել, քու կորած էնիքը չգիտենք ում մեջքից պոկել բերել:

Դարավոր կռիվներից հետո հիմա համերաշխ սիրո զուգերգ էին անում. հալիվորը մառանի առջևից, Աղունը՝ փռան, մարդուկնիկ իրար նայեցին, հալիվորը բան չասաց, բայց փաստորեն կնոջը խոսք տվեց, կինը, այսինքն թե ձաքիր, ասաց.

- Մենակ արծաթը չի, անոշ. պատերազմի առաջին ամսին իմ ախպեր Սամվելը անհայտ Ռուսաստան խփվեց՝ իմ միթևանի Ոսկան ախպերը իմ հեր Իշխանի փողերն առավ, քառասունո՜ւյոթ թվի սովի ամառը գնաց գերեզմանը գտավ, մարմար քար քաշեց, ուռի ու բարդի տնկեց ու բանակային նվագախումբը տարավ նվագել տվեց. հիմա անհայտ չի, դպրոցական երեխեքը գնում ծաղիկ են դնում ու կողքին պատվի են կանգնում: Ետգալիս էլ, մատաղ, ոսկին Վրաստան տվել, հինգ փութ սիմինդ էր բերել, դրա ձադուց, թե միտդ է, դու պիտի կերած լինես - քաղցր, կոշտ, բկում-կանգնող հաց է:

Ասելիք այսինքն չուներ էլ, բայց դե էլի՛ - ասելիքը կուլ տվեց, ասաց.

- Կերած կլինենք, շնորհակալ ենք:

Էդ էր. առաջը ղարաչու տունն ու մեծ պեպենոտն էին կտրել, ետևը՝ սրանք ու արանքում խեղդում էին, չէին խղճում: Նայեց խախլուշկայի երեխային, ուզեց ասել արի գնանք, բայց երեխան անխոս կենդանու նման սեղմվեց հալիվորի ոտքին, հարազատն ուրեմն սրանք էին, ինքը չէր: Այդ լի, ամեն ինչ տեղը-տեղին դասավորված մառանի դռնով՝ հալիվորի մոտով անցավ, այգու

արահետով սուսուփուս գնաց ու, որ այգու մյուս դռնակին էր հասել, ձորի պռնկից շուռ եկավ ասելու «մեր հին ճամփան կտրել, մեզ ձեր դռնովն եք անցընում՝ որ ամեն անցնելիս դառնացնեք», բայց չասաց, կոկորդի գունդը կուլ տվեց, մտավ ձորը:

Էն ժամանակ էլ մի բան չէր, բայց հորենական տունը քանի կար՝ աղբյուրն էլ կար, իրար կողքի ապրում էին, էն ժամանակ քիչ եկամուտով, փոքր ակունքներով յոլա էինք գնում: Սեդրակի այգու հողը փախել, մոծիր դառած՝ ակունքը բռնել էր, թե՞ ջրերն են առհասարակ նվազում: Ինչ որ է, մեզ յոլա էր տանում, Օսեփանց ընդհանուր հասարակության աղբյուրում հերթավեճերի մեջ չէինք: Կաղնի տախտակը, որ էն ժամանակ դույլերի տակ էր լինում, դեռ թաց էր, ջուրն ուրեմն դեռ կար, մոծրի տակ խեղդվում էր: Համարյա թե լաց եղավ ասաց. «Էնիքը, հիմա լա՞վ չէր լինի՝ որ ջրի տակ մի կանաչ մաքուր ման լիներ, ասեի ախպորս կնիկը երեխային ծիծ է տալիս՝ մինչև ամանը լցվի»:

Տան էս կողմի պատը մի տարվա փլված էր, հիմա էլ ետևի պատն էր ուռել, տանիքի տակից փախչում էր: Դուռն ու լուսամուտները փակ էին, փլված տեղով մտել լույս էին կախել, սարդոստայնի նման պսպղում էր, թե՞ մոռացել վառված այդպես թողել ենք - վառվում է: Փոքր պեպենոտի ռուս երեխաները արևկող պատի տակն ավլել ու ջարդված կերամիտներով տունտուն էին խաղացել, երեխայական սուփրա-սեղանը երեխայական տնակի դռանը փռած էր: Նեղությունն էնպես եկավ, բերանն էնպես դառնացավ... «Էնիքը, շիտակ եմ խոսում, այեե»: Հարևան են, փոխանակ մի կանգնեն մոլորվեն, փոխանակ մի հարցնեն էս տունն էս ի՞նչ ցեց է ուտում, էս աշխարքն էս ի՞նչ է լինում - տան քարը տարել իրենց չափարի ծակերը կալնել էին՝ որ իրենց խոզը իրենց կաղամբուտ ու կարմիր բազուկի մեջ

չընկնի, այլ մեր դռները քանդի, մեկ է որ քանդված ու անտեր են: Ծղրտաց ասաց.

- Բա դուք մարդ չե՞ք իսկի, մարդկային ցավակցությունը ձեզանում իսկի չկա՞: Թե՞ էնիքը,- ասաց,- առակի ասածի պես սպասում եք մարդու տունը կրակվի՝ որ ձեռքներդ տաքացնեք:

Չափարի գլխով երկար նայեց, բայց Սեդրակենց բարձր պատշգամբում մարդ չերևաց. չափարները պինդ կապել ու հանգիստ էին՝ որ իրենց տան ու այգու վրա վտանգ չի լինի: Սև ղարաչու դռանը մեծ պեպենոտը փորը տնկած կանգնած էր, հին բեկի նման ձեռքով ասաց արի էստեղ, բայց սիրտն էնպես էր ելած... հաշվի չառավ, որ ինքը նրա առաջ մեղավոր ու նրա հրահանգին հավիտյան ենթակա է, անտեսեց ասաց՝ դե դու էլ:

Մենք շիտակ ու կռվարար պատանություն չունեցանք - համատարած մեղք, գողություն ու վախ. մեր պատանությունը սայթաքեց ցեխն ընկավ ու էս երկրի ամենամաքուրն էլ իրավունք ուներ մեզ ասելու՝ ամաչիր գետինը մտիր, ու մեր երեխայությունը բոլորի առաջ կանգնած էր գլուխը կախ... բայց դե էլի՛ - Բարդուտ լանջերից շարմաղ, շիտակ, մատղաշ մի ծառ ենք հանել, մեղավոր իրիկվա միջով ուսած բերել տնկել հորենական այգում: Ի՞նչ ենք մտածել. երևի մտածել ենք մեզ այնպես տեսնել, ինչպիսին պիտի լինեինք - եթե պատերազմ չլիներ, մեր եղբայրը չզոհվեր, սև ղարաչին մեր հոր խեղճ միամտությունը չքնեցներ ու չզավթեր մեր խակ արբունքը: Շիտակ ու շարմաղ բարձրացե՛լ, պառավ խնձորենիներին ու մյուս ծառերին խեղճացրել էր, նրանք անտեր մեռնում էին, նա բարձրացե՛լ, աշնան մաքուր երկնքում լողում էր: «Շիտակ եմ խոսում,- ասաց,- էնիքը՝ կացինը կհանեմ, տակից կկտրեմ... քեզ համար էստեղ բարդուտ ծմակ ես շինել»:

Ո՛չ միասին, մեր եղբոր մեծից այսինքն մենք մի քիչ մեծ էինք, բայց երկուսս էլ նրա ծնկներին խաղացել ենք, ծնկների վրա իր զավակին նա խաղացնում էր, բայց մենք էլ էինք խցկվում ծնկների արանքը, քանի որ, ով ինչ ուզում է ասի, երեխային երիտասարդ հայրն է դուր գալիս, մեր հայրն այնինչ արհամարհված ծեր ու ոջլոտ խոզարած էր, նրա նվագելուց հետո թիզուկեսի մեր խելքով մենք նրա բերանից զզվում էինք, դուդուկի պիպիչը սրբում ու սրբում ու այդպես էլ մեր բերանը չէինք տանում, քաշվում էինք մեր եղբոր ծնկների արանքը: Նա մեզ հայր կգար, բայց եղբայր էր: Սև ղարաչին ամեն ինչ այնպես խառնեց ու տրորեց, որ արդեն ոչ հայր էր, ոչ եղբայր - սառած լուսանկար՝ որ մենք ուզում էինք չլինի: Մեր քույրերը մեծացրել, շրջանակի մեջ կարպետի վրա կախել էին: Ղազախ ձմեռելուց եկանք տեսանք հարկերի դիմաց Եգորն ու Ուցյունը կարպետը տարել են - մնացել է մրոտ պատին: Մյուս զոհից՝ Մանվելից անձնական լուսանկար էլ չէր մնացել՝ որ մեծացնեինք կողքին կախեինք, երկուսինը էդ մի լուսանկարն էր: Մեր ու Վարդոյի անձնական տունուտեղը դնելուց, այսինքն երբ հորենական տնից ջոկվեցինք, ու մանավանդ նանին մեր տուն տանելուց հետո նկարը օրենքով մեզ էր հասնում, բայց պատից ի՞նչ երեսով իջեցնեինք, մանավանդ կողմնակի տեղյակն ի՞նչ կասեր: Ղարաչին ափեղ-ցփեղ խոսեց, իր նման հանկարծ ծիծաղեց ասաց. «Ծիծաղում եմ, անոշ. իրա նման երեք դեմուդրոշ տղեն տանս՝ ձեր պարապ նկարն ինչիս է պետք», մի խոսքով տեր չկանգնեց, նկարը մնաց հին տանը, ղարաչին ծիծաղեց ասաց. «Անտեղի մի կոլորվիր, էդ տան տերը ոչ քեզ կտա, ոչ էլ ինձ», այսինքն թե տանտերը մեր փոքր եղբայրն է: Այդպես էլ կախված էր, ասելն անհարմար է՝ ապակին սարդոստայնի նման

պսպղում էր: Քարուկրի կույտին կանգնած ներս նայեց, զարհուրեց, ճչաց.

- Էս լույսն ինչի՞ եք գցել, պտտվողը ձեր հաշվիչը չի՞:

Փոքր պեպենոտն իրենց դռնից, Աղուն քույրիկն իրենց՝ իրենց շեն դռներից գոռգոռացին, թե ավերակ է, մարդու սիրտ ահ է գցում, իրիկունները մոտով անցնել չի լինում, երեխեքը նույնիսկ ցերեկն են վախենում և այլ ուրիշ անվայելուչ խոսքեր: Լսեց-լսեց, ասաց.

- Ձեզ համար ուրիշ ճամփա չկա՞, ուրիշի դռներին ինչ եք անում՝ որ հետո էլ ավել-պակաս խոսեք:

Ասացին... հարազատը հարազատին այդքան ծանր խոսք չի ասի, ասողը փոքր պեպենոտը չէր. իր ապահով տունուդռնից Աղունն ասաց.

- Ինչ անենք թե ձերն է եղել, հիմա քոնը չի. քոնը՝ հրեն, ճամփադ բաց է, գնա: - Էնպես բան ասացին, որ չիմացանք ինչ պատասխանենք, ավերակի խոռոչում մնացինք պապանձված: Ասացին.- Հիմա էլ ի՞նչ ենք արել, կրակ չենք տվել, անցնել-դառնալիս զարհուրում ենք, խնդրել ենք՝ լույս են դրել:

Քեռիների նման բաճկոնն ուսերին՝ մոր դռանը մեծ պեպենոտը թևերը խաչած կանգնած էր, ձեռքով ասաց արի էստեղ: Ինքը դեռ ոտը չփոխած՝ շներն առաջ ընկան ու չասացին թե ծեծից հետո սառն ենք և առհասարակ պարզ չի՝ մանավանդ ղարաչի մոր դռանը մենք կգնա՞նք նրա դաժան ոտը. բայց ինչքան չլինի արյունով հարազատ ենք, հարազատի արյունը քաշեց, գնացին պոչները շարժելով ոտքերին փաթաթվեցին: Հորենական պառավ խնձորենիների տակով կուզեկուզ, ինչպես որ միշտ էր կուզեկուզ թաքնվելով ու սիրտը դողալով անցել, ձյուղերի տակով կռացած ինքն էլ գնաց: Գնաց չափարի տակով

անցավ, առաջը կանգնեց: Չափարը բարձր չէր, շատ լավ էլ կարող էր ձեռք խփել ու ցատկել, բայց չհասկացավ ինչպես եղավ՝ որ մեկ էլ տեսավ չափարի մեջ է, տրակտորի տակից փոքր պեպենոտը մեծ պեպենոտի ոտքերի արանքով նայում ասում է «կաստումդ փչացնում ես»... բայց արդեն չափարի մեջ էր, սրտնեղելով, կարմրելով ու ժպտալով իրեն լատանի տակից հանում էր: Գլուխը բարձրացրեց տեսավ, որ գյուղ մտնելուց հետո իր ամբողջ վարքը՝ Սիմոնի դռանը անցորդ մուրացկանի նման կանգնելը, ավերակի մոտ խեղճանալը, խոզի պես չափարի բացվածք խցկվելը և առհասարակ ամբողջ վարքը դեմ-դիմաց սև ղարաչու առաջ է եղել - սև ղարաչին պատշգամբում նստած ժպտում ու գուլպա էր գործում, պռոշներին հուպ տվեց ու գլուխը թոռների գուլպայի վրա կախեց:

Երեսը ձիու գլխի նման երկար, քեռու հովատակի պես կուրծքը լայն ու պինդ, թևերը քեռիների նման խաչած՝ մեծ պեպենոտը գլխով արեց ու ձիու նման խռխռաց.

- Էդ ի՞նչ է:

Տոպրակը մեկնեց, ձեռքն այդպես մեկնված էր, բայց նա չվերցրեց, ձեռքերը կրծքից չիջեցրեց էլ, առանց նայելու և առանց շուռ գալու կարգադրեց.

- Ախչի, խռխռաց, թե՞ լրիվ ներել-ներվել ու հաշտվել էին, «աձի»՝ մամա, նանի էր ասում, աձի՞-ախչի՞,- ասաց,- էս ի՞նչ է բերել, ձեռիցն առեք:

Սև ղարաչին գոգի գուլպան դրեց թախտին ու, փռան սև խառնիչի պես ուղիղ, որդու հրահանգի առաջ օրիորդի պես հլու, բայց նաև ժպտալով-ժպտալով, եկավ վերցրեց: Մենք այսինքն չէինք էլ նայում՝ որ հաստատ ասեինք մեր խեղճության վրա ծիծաղում են, ցելոֆանե տոպրակը մեկնած մենք սպասում

էինք՝ թե պեպենոտը, հատկապես երբ ղարաչին ձեռքը տոպ-ռակին էր մեկնել, մեր գլխին բռնցքելու է, մեր ականջը տաքացել տժժում էր, բայց չխփեց, հովատակի նման խռխռաց: Ի՞նչ խռխռաց՝ չհասկացանք, ասացինք.

- Տաշքենդ էի գնում, ուզում էի Տաշքենդ գնամ:

Չլսե՞ց, չլսելո՞ւ տվեց - ասաց.

- Պիտի լիցենզիա առնվի:

Ի՞նչ էր ասում. մեզ հետ չէր խոսում, բայց ի՞նչ էր ասում. հետո հասկացնող եղավ, հասկացանք, որ անտառապետության վրա վաղուց է պտտվում, շեք-տված կանգնել նայում է՝ և ճրագթաթով ու Կռվի գագաթով մինչև Կապուտլեռ ու Մեծ աձարկուտ ամբողջ անտառն իրենն է, իրենն են բոլոր չա-փարները՝ ուր մի ձող փայտ կա, սարերի մեր տաք կրակը, Սիմոնի դռանը դարսված ձմեռվա փայտը... բոլորը իրավունք, եկամուտ ու իրենն են: Ասաց.

- Լիցենզիա է առնվելու:

Ուզեցանք իրեն դուր գալ, իր պես մի բարձր բան էլ մենք ասել, ասացինք.

- Որ ուրիշ բան չլինի, տնտեսական շահի տեսակետից զուտ էնիքը՝ կերամիտը. երևի պատը փախչելու է՝ ծածկի հետ էդքան կերամիտը ջարդի:

Մեր գլխի վրայով Սիմոնի տանն ու առհասարակ ամբողջ անտառին էր նայում, տավարի ֆերման մի անտեր կթվորուհու նամակով ու առերես բողոքով գործկոմը ձեռքից առել էր, ուրիշ պաշտոնի էր սպասում:

Խոսեցինք ասացինք.

- Թող գա ասի էստեղ չեմ ապրելու, բայց արժեք է ասի, հատ-հատ իջեցնի կերամիտը, մի կողմի վրա դարսի: Ժամանակին

մեր հերը հատին տասը կոպեկ, էնիքը՝ մի մանեթ է տվել, հատուկ՝ կով է տարել Թիֆլիս,- և մեր երեսը պարզեցինք, աչքերը ճպճպացրինք ու ձեռքերը տարածեցինք:- Թող դարսի ու գիտենա՝ որ էստեղ շնորհքով դարսած էնիքը՝ կերամիտ ունի, թե չէ էս ի՞նչ է մեր վիճակը,- ասացինք,- մեր օգնական, մի ոտը-բռնող չունենք, խոզը դանակը փորում փախավ:

Գրեմաստի ճիպոտը ձեռից առավ, գրպանում դանակ ուներ՝ հանեց, սկսեց տաշել, չնայած Ջանդառի ձեռքերում տաշածից էլ լավ հղկվել էր, ու Թեվանի վիճակն ու խոսքն էլ նրա վրա՝ ոնց որ քարին գանգատ անես, ոնց որ Մուրադենց Բանաստեղծը Մելքքանց Իշուկի վրա Հովհաննես Թումանյանից սրտառուչ բա-նաստեղծություն ասի: Դպրոցում ոչ մի ոտանավոր չի սովորել, ասում են օրիորդ ուսուցչուհիներին ճաքեցնելով ոտանավորը կարճ պատմում էր: Չխղճաց, որ մեր հերն ու իր պապը այս առատ ու ազատ օրերին չհասավ, սովի բերանն ընկավ ու ծնկները ծալվեցին, չասաց ժողովրդից ծաղրված է եղել, բայց իմ պապն է - ինչպես որ մորն էր ախչի ասել՝ պապին էլ ժո-ղովրդի դրած արհամարհական Մուրի անունով հիշեց, ասաց.

- Խոզարած Մուրին ասում ես Աճարկուտից Թիֆլիս է հասել, հա՞:

Նրա առաջ ուսերը ծուլ արավ, ասաց.

- Դե էդ է, կերամտի փողը բա ո՞րտեղից է ունենալու, էն ժա-մանակ փողը չէ՞ մենակ Թիֆլիս էր:

Ձիու կրծքով մեկ խռխռաց ասաց.

- Շատ ուժեղ կածկածում եմ:

Ինքը եթե շատ ուժեղ կասկածում էր, մենք ինչ իրավունք ունեինք մեր հիշողությունների միջից դեպքեր գտնել... բայց ահա սև ղարաչին, թախտի վրա գուլպան գոգին շիփ-շիտակ

նստած, մի որպե երանության տրվեց.

- Անոշ,- ասաց,- քու հեր Ակոփը պատերազմով որ Թիփլիս բանակային հիվանդանոցում էր՝ ես ու պապը գնացինք. տղամարդ չէր, բայց անունով՝ էլի երեքիդ էլ ունեի, բայց աղջիկ էի, պապին հետս տարա. ռուսերեն էլ գիտեր, քիչումիչ վրացերեն էլ գիտեր ու հայերեն էլ գիտեր - հարցնելով-հարցնելով հիվանդանոցը գտավ: Էն էլ բուժել ու էյլետ քշել էին: Խոսքս էն է, որ պապին Թիփլիս չէին ճանաչում ու հարգում էին:

Կարմիր, ուժեղ պարանոցը ոլորեց, աչքերը մոր վրա խոլորեց, ասաց.

- Դու Ակոփի ետևից Թիփլիս չես գնացել:

Դեռ հին երանության մեջ ժպտալով ասաց.

- Դու կայիր, անոշ, քեզ ունեի, բայց երեխա էիր, դու լավ չես հիշի, էդ կողքինդ կհիշի:

Չպատասխանեց, բայց մայրը, չնայած զուտ աշխատավարձով հաշված՝ երեք զավակի ու դեռ գումարած խախլուշկա հարսի հավաքարարական ռոճիկը, կթվորությունից այդքան եկամուտ էր հանում, ձեռքը բերանին դրեց ու հնազանդ օրիորդի պես լռեց:

Ճիպոտը խփեց սապոգի ճտքին, ասաց.

- Տաշքենդ ես գնում:

Մեր խոսքն ուրեմն լսել ու մեզ հաշվի էր առել:

Իրենց Ռուսաստանների անունը լսեց թե չէ, դրանց խախլուշկա հարսը՝ փոքր պեպենոտի կինը, դուրս թռավ՝ թե ես ձեզ թարգմանիչ, տարգմանիչ գնում եմ,- լսելը, երեխային ձեռից գցելն ու ծաղկավոր շալն ուսերին դուրս-թռչելը մեկ եղան: Մերժվելու վախից՝ այսինքն որ կկանգնեն կմերժեն, երեսը ծռում

ու լաց էր լինում, գնալու ցանկությունից՝ այսինքն որ միգուցե հանկարծ թողնեն, աչքերը շողում էին, շալն ուսերին խաղացնելով քիչ էր մնում ռըսի պար պարի: Գոմերի ու հանդերի ազատության մեջ ինչ ասես կարող էր պատահել, հետո ժողովուրդը ոչ թե փոքր ժանգոտին, այլ որպես մեծ եղբոր՝ մեծ ժանգոտին էր նայելու,- մի ռեալ վտանգի պատճառով մեծ պեպենը կթվորությունից նրան հանեց, իր ծանր տեղով թեթևացած՝ մի շիշ արաղը գրպանում գնաց դպրոցի վարըչի տուն, Գրիգորյանը պեպենոտին դեռ դպրոցից արհամարհում էր՝ քանի որ նրա մեջ հնազանդ աշխատավոր չէր տեսնում, այլ ապագա մրցակից, բայց մեծ պեպենոտն ստիպեց՝ հարցը քննեցին, էսինչենց ասենք թե սադա հընդլո՝ այսինքն որ լաց լինելու փոխարեն ծիծաղում է, բայց հետո էլ գնում է գործկոմ բողոքում, մի խոսքով մեր տնից հեռու սադա հընդլո մեկին տարան կթվորուհի, Մաշային բերեցին աշակերտության մեջ հավաքարար: Մեծ պեպենը փոքր ժանգոտին ասաց. «Հիմար ես», «ասա հիմար եմ,- ասաց,- ու ձենդ փորդ գցիր»: Հիմա տրակտորի մոտ փոքրը նստել ու նայում էր:

Ղարաչին իր նման մի տեսակ սիրելով անիծեց ասաց.

- Ի՜հի, վայ տամ ինձ նման որբուանտեր գլխիդ, Ռուսաստան դու ո՞վ ունես, որ ճամփա ես ընկնում. քու մերն էլ, հարազատն էլ, տերն էլ՝ ես եմ, Ռուսաստան քեզ ո՞վ է սպասում:

Իրենց նման հասարակ՝ չազդվեց, ուսերը խաղացնելով ասաց.

- Տարկմանիչ գնում եմ: Տարկմանիչ էն է, որ ես խոսեմ՝ դու չխասկանաս, դու խոսես՝ Տեվան չխասկանա - տարկմանիչ ասկանա: Սիմոնի-Ագունի Սերոն ռուսաց բառերը թակուն ինձանից խարցնում՝ ռոչիկ ինք ստանում է:

Ղարաչին մտածեց-մտածեց, երևի թե դուրը եկավ, բերանը փակելով ժպտաց, ասաց.

- Եսի՞մ:

Անպիտանը. ոսկեփայլ ծանր մազ ուներ, հավաքարարության, այսինքն որ կռանում դպրոցն ավլում էր, ու երեք երեխայի մեջ ոնց էլ չէին թաղկում,- ծիրանի մետաքսն էլ անպետքը մազին խառը կապել, ուսի վրայով կրծքին էր գցել ու թարգմանիչ գնում էր:

Մեծ ժանգոտը.- Տուր, արա,- ասաց,- հասցրու մի սրա բերնին:

Հյուսի ծայրի հետ խաղաց, ասաց.

- Մեր ախպեր Վերան կովերից ինձ խանել ավակարար դասավորել է:

Ասաց.

- Համապատասխան կրթություն չունես:

Ասաց.

- Դուն էլ չունես, բայց ապրում ես:

Կարմիր ունքը ձգեց, ասաց.

- Մաշա՞, ըշտո՞ ստաբոյ:

Ասաց.

- Ինչ որ կու աչկով տեսնում ես:

Ասաց՝ փոքր պեպենոտին.

- Տուր, արա, հասցրու մի սրա ատամներին:

Մաշայի վաթսուն ռուբլին ու «Բելոռուս» տրակտորը նրան նեղ էին պահում, ինչքան էլ ուզում էր ընտանիքը պոկել մոր եկամուտից՝ չէր լինում, երեխա ժամանակ լավ շվշվացնում ու երգում էր, շվշվոցը հիմա փորն էր գցել, տրակտորը Հովիտ նորոգման էր տանելու՝ չէր գործարկվում, ծանր դարձիչը ձեռ-

քին նստել ու նայում էր, մտքում գուցե շվշվացնում, գուցե քոչում էր քաղաք, փոքր ժանգոտը իր որբին՝ որ զինծառայությունը վերջացրած գալիս չգիտենք որ կայարանում ծանոթվել, սիրել ու հետը բերել էր, չխփեց, ասաց.

- Քեզ մոտիկ է, ձեռդ էլ երկար է, դու խփիր:

Ասաց.

- Բա էս ի՞նչ է ուզում: Ուզածդ ի՞նչ է, ախչի:

Մեր Ծմակուտի հայերեն արդեն ազատ խոսում էր, կողքի գյուղերում չգիտենք կհասկանային թե չէին հասկանա, բայց տնեցիները լավ հասկանում էին, ասաց.

- Ինչ որ քու կնիկ ուզում է:

Ասաց.

- Գուլյա՞տ խոչեշ:

Ասաց.

- Բոլոր կնիկներանց խետ դու գուլյատ արիր, քեզ ինչի՞ կարելի է, Մաշային չի կարելի է:- Լավ լսել ու կեսուրի լեզվից օրինակ էր առել, ասաց.- Դու վերին արտի ցորե՞ն ես, կոլխոզի ցեղական բուգա՞յ ես:

Դուրը եկավ, ժպտաց, զսպվեց ասաց.

- Էս երկրում մինը մընի ապրելն ուզում չի, թշնամու սարքած ասեկոս է:

Ասաց.

- Կենտրոնի գործկոմ քու ասեկոս խաստատեց, քու պոչ ֆեր-մայից խուզեց:

Ձեռը թարս բարձրացրեց, ասաց.

- Ըռխիդ ծեփիլ տեմ հա՜:

Ասաց.

- Գնա քու կնիկի բերան ցեպի:

Ասաց.

- Իմ կնիկը քու թայը չի:

Ասաց.

- Իմ տայն է, կեռանա ինձանից էլ լավ տպրոց ավելի - զուկել-զարտարել քու տան միջին տիկին խանում պախում ես:

Վերջը, կանգնեց հավասար ու մի բան էլ ավելի կոծ-կոծի տվեց: Միջնեկ թաթարը նրա մասին բառացի որևէ առարկություն չէր արել, բայց շատ ուժեղ դեմ էր եղել «Բելոռուս» այդ տրակտորն ստանալուն. թաթարի այդ կողմնակի ու կեսուրի բաց հակառակության առաջ նա այս օտար, հիմա արդեն ընտանի գյուղում մի րոպե չէր ճնշվել, մի րոպե չէր ասել իմ մասին տեսնես ինչ են խոսում այդ թշնամի, հիմա արդեն ընտանի լեզվով, քանի որ փոքր պեպենոտը բանակային երդման պես չգիտենք որ կայարանում ինչպես խոստացել,- գյուղացի բանակայինների ռուսերենը չէ՞ քիչ բառեր ունի ու հաստատ է,- այդպես էլ վերջնական նրա թիկունքին կանգնած էր, նույնիսկ կիթը նրան ինքը սովորեցրեց, այսինքն ամանը ծնկների մեջ առավ ու մտավ կովերի տակ, կեպին թարսում ու գլուխը կովերի փորին դեմ էր անում, մտքում գուցե շվշվացնում էր, բայց արտաքուստ ոչ մի ձայն, ոչ մի արտահայտություն, իր ասելիքը չգիտենք որ կայարանում նա ասել պրծել էր, ու հնազանդ գերու նրա լուռ դեմքը կնոջ թիկունքում այդպես հավիտյան կար: Խափան տրակտորի մոտ դարձիչը ձեռին նստած էր, ասաց.

- Մարիա, պայդի դամոյ:

Մեծ ժանգոտը զարմացավ, խռխռաց.

- Ազդվեցինք,- ասաց,- ձենդ լսեցինք, Փառռ:

Դեռ երեխա էին՝ մեծ ժանգոտը չգիտեր ինչ ղեկավար, բայց գիտեր՝ որ ինքը ղեկավար է լինելու: Միջնեկ թաթարը մանրա-

հատիկ, խնամքոտ ձեռագիր ու Տիգրան պապոնց կողմից լայն թիկունք ուներ, լեզուն դուրս էր գցում ու գրում էր, նրա էջին թանաք չէր կաթում, ասում էինք գրասենյակում սեղան կխլի, արմունկները կդնի ու կմնա, բայց ասաց՝ «դուք ինձ հետ գործ չունեք, ես ձեր տան հետ գործ չունեմ», ու գնաց լավ ավտո-քշել սովորեց՝ քշել, սարքել, խնամել,- Մաշայի վերաբերյալ տրակտորի առիթով իր ծանր բայն ասաց, որպեսզի այս տան հետ այլևս գործ չունենա ու չունի, մտքում իհարկե ուրախանալիս ու տխրելիս կլինի, բայց արտաքուստ նշան չի տալիս. եթե ղեկին չի լինում ու ժողովրդի մեջ մեզ տեսնում է՝ անձայն մի ընդհանուր բարև է տալիս, էդ է: Փոքր պեպենոտը տան աղջիկն էր՝ քանի որ Ակոփն ուզել էր նա աղջիկ լինի ու Ակոփին ձակատ նամակ էին գրել՝ թե նրա ուզածի պես աղջիկ եղավ, սպասում են նրա դրած անունին, անունն ի՞նչ է դնում,- տունն ավլելը, իր Փառո տատի նման էծը կթելը, հավերի ձուն գտնելն ու թեյամանը կրակին պատրաստ մորն սպասելը նրա վրա էին. չոր խոտ-հավաքի կլիներ թե կոլխոզային աղի ու պանրի պահեստում՝ մայրը ցամաքած գալիս մի թեյաման սադա չայ էր խմում - խմում ու ասում էր չեմ հովանում, խմում ու ասում էր մեջս վառվում է:

- Փառո,- ասաց,- ուրեմն դու կաս. մենք էլ կարծում էինք Մաշադ մարդ չունի ու զուտ ինքնագլուխ լեզու է. ճամփա ընկած Տաշքենդ է գնում, ղրկում ե՞ս:

Չպատասխանեց: Մոր ստացածի վրա իրավունք ու մանավանդ աչք չուներ, Մարիայի հավաքարարական աշխատավարձը հենց դպրոցից էլ խանութ՝ զուտ շաքարի ու օճառի էր գնում, օգոստոս-սեպտեմբեր-հոկտեմբեր՝ այս էլ երրորդ ամիսն էր ստացած փողը եղել էր օգոստոսի տասնյոթ ռուբլին, մի հատուկ

ծխող չէր՝ օրը կամ երկու օրը տասնհինգ կոպեկի, բայց հնազանդվեց ու թողեց, ինչպես որ թաթարի գոռոզ անտարբերության ու մեծի ինքնիշխանության, այսինքն որ Մաշային ֆերմայից հանեցին, նրանց որոշման առաջ անբառ էր եղել ու ոչ բողոքավոր՝ այդպես լուռ նայելով էլ թուքը կուլ տվեց ու չպատասխանեց:

Ետ դարձան տեսան կռիվը Թեվանի բերած հարցի վրա է: Ավտոն տակն էր, դրանից բացի՝ թաքուն ազգասիրություն ուներ - միջնեկ թաթարը մի որոշակի տեղեկություն կունենար, իրենք չունեին, լսածով գիտեին՝ որ կնկանն ու երեխեքին Գործարանում թողել, ասել է փող կղրկեմ ու մի երկու ամսից կգամ - իրենց տեղեկությունն այդքան էր,- Թեվըկին քննեցին ու պապանձված, չոր, անլեզու բերանից գտնելու ծրագիր հանեցին ու ծրագիրն էլ այս էր. կնկա տունը Գործարանում պիտի գտնվեր, ստացած փողերի թղթերից հասցեն հանվեր ու հասցեով գնացվեր էնիքը, եթե Տաշքենդ է՝ Տաշքենդ, եթե Սամըրղանդ ու Բաքու էր՝ Սամըրղանդ ու Բաքու: Մեծ պեպենոտը կուրծքը փքեց խռխռաց.

- Խնդրենք: Պաժալուստա,- ասաց,- ճամփի ծախսը տուր՝ գնամ Ռուսաստանը խառնեմ, գտնեմ, առաջս-արած բերեմ: Սովետի մերը չմեռնի,- ասաց,- Սովետը սալդատ կորցնի՞. մոբիլիզացիա հայտարարեմ՝ զինկոմիսարիատի գծով կոնվոյների առաջն-արած բերեմ: Բերեմ,- ասաց,- նստենք կոպեկը-կոպեկին հաշիվ կազմենք՝ թե որ ռուբլիդ ինչի վրա է ծախսվել - գնացքի տոմսի, հյուրասենյակների, լիմոնադի, շատ ժամանակ էլ տեղեկություն են ունենում ու մինչև մի լավություն չես անում չեն տալիս՝ տեղեկության, խնդրենք, ասաց:

Նրա առաջ պուճուր, սիրուն ու անլեզու՝ ճաքած պռոշները

անձայն շարժեց՝ թե համաձայն է, բայց երևում էր՝ որ սրտով չի համաձայն: Այսպես թե այնպես, գնալը հաստատվում էր, Ասորենք տեղից շարժվում էին: Ծուշանի սերն ու կռիվը ով կհասկանա - ծնկները ծեծեց թե՝

- Վույ, Մաշային թողած իրենք գնում են, այ. էս փակ բերդի մեջ խեղճ երեխան քանի տարի է մարդի երես չի տեսել: Իմ հարսի ճանապարհածախսը ես տալիս եմ,- ասաց,- հետներդ տանում, հետներդ էլի ետ եք բերում:

Մոր երեսին շատ խորը նայեց, ասաց.

- Մեծը որ դու լինես՝ փոքրն էլ ինքը կլինի:

Բողոքեց ասաց.

- Քսան տարեկան անհասկացող աղջիկ էի՝ հերդ գնաց խփվեց:

Խնդրին շատ խորն ու ըստ էության էր նայում ու խոսքն էլ գրասենյակի դռան վեճերի մեջ կռել-կոփել էր, ասաց.

- Քեզ ինչ որ ասում են՝ յուրացրու. կեսուրը որ դու լինես՝ հարսն էլ ինքը կլինի:

Ամուսնուն լսել տուն էր մտել, բայց միջից եփվում էր, Մաշան կարմրած դուրս թռավ, ասաց.

- Դու ռուսերեն չգիտես, ո՞նց խարցնելու ես:

- Բանը պարապ լեզուն չի,- ասաց,- մի մանեթ ես տալիս՝ բացատրում են, երեք մանեթով տեղաշորը տակիդ փափուկ փռում են:

Ասաց.

- Քու ախպեր օգոստոսին տաս մանետ ստացել է, դու էդ ո՞ւմ պող աղայի պես ցախսում ես:

Ասաց.

- Թող խելք ունենար՝ հազար ստանար, ձեռը մենք չենք բռնել:

Ասաց.

- Հելոկ է՝ դրա ամար էլ... Այստեղի լեզվով չկարողացավ բողոքը ձևակերպի, ռուսերենի կապեց ու այստեղի կարգերը ջնջեց, իրենց երկրի կարգերն էլ մեծարե՛ց, բարձրացրեց, էլ անհասկանալի էր՝ թե ինչու է փոքր պեպենոտի ետևն ընկել եկել. իրենց արևածաղիկները, մեծ գետում լողանալը, ծիծաղը, գետափի յառին նստած աղջիկների երգը տաք գիշերը լցնում էր՝ *նապալնյալաս*, ու տատիկը մի անգամ չէր ասում ուր էիր կամ ժամանակին տեղդ մտիր: Լաց եղավ.- Խաց ընտանուր սովետական էր՝ ուրախություն կար,- ասաց,- դուք ուրախությունին թշնամի եք:

Մեծ պեպենոտը նահանջեց:- Խնդրենք,- ասաց,- ճամփադ բաց է, դպրոցիդ ու երեխեքիդ ետևող գտիր ու գնա, խնդրենք, մենք էս րոպեիս ազատ քաղաքացի էինք, փառք սադա-հընդլոներին:

Կարծես լաց չէր եղել՝ երեսը լվացել էր, աչքերը սրբեց, ժպտաց, ասաց.

- Տրակտոր խապան է, Տիգրան մամայի կովեր կթի, մաման տպրոց ավլի, իմ Պաշեն ու Դաշեն էլ Ակոփին պախեն մինչև տատ տպրոցից գա:

Տատն ու մաման լաց եղավ ասաց.

- Ակոփիս էլ կպահեմ, Դաշիս ու Պաշիս էլ կզուգեմ, դասարաններն էլ կավլեմ ու իմ կիթն էլ ես կանեմ: Մեջքիս կկապեմ ու կտանե՛մ դպրոց, մեջքիս կապած կտանե՛մ ֆերմա, մազները կհյուսեմ ու գույն-գույն բանդ կկապեմ, քանի առիթ է դու գնա:

Մի խոսքով բոլորն էլ այստեղ էին, բայց ոչ ոք սրտով չէր այստեղ, բոլորի սիրտն էլ այստեղից թռել ուրիշ տեղ էր: Հարսի առաջ արդարացավ,- խնդրեց,- ասավ.

- Մենակ թե էդ մի բանն ասիլ մի, աղջիկ ջան, ասիլ մի՝ թե մենք քո ուրախությունին թշնամի ենք. սև Ծուշանը, խի՞, իրա երեք դեմու-դրոշին երգելո՞վ է տղա դարձրել լացելով - երգելո՛վ, երգելո՛վ: Զոհն իմ տանը՝ սուգն ուրիշի տանն է եղել: Հասկանում ե՞ս, անոշ, գիտե՞ս զոհն ինչն է - քու հերնումերն են զոհը, զոհը Ակոփն ու Մանվելն են, մենք բոլորս էլ զոհ ենք, անոշ: Ցոբանը հրեդ վկա է կանգնած. ոչխարի անարատ պանիր մեկ գոդի Արտաշն ու շրջկոմի հյուրն է կերել, մեկ էլ իմ որբերը: Ուզում ե՞ք,- ասաց,- առաջվա պես շվշվացնեմ՝ հին թատրոնը դեմներդ բացվի:

Թախտից իջավ, ձեռները դրեց չեղած կոնքերին ու «ախչի Աղո՜ւուն» զնգաց, «Աղո՛ուուն» կանչեց, «ի՜նչ ես մարդիդ ըռխած տուն մտել, լսում չե՞ս»,- ղարաչի երեսը կարմրեց, սիրունացավ, աչքերը լցվեցին հին սիրով ու կռվով, և մեծ պեպենոտը, չէ՞ հայտնի որձ է, նրա կանչի մեջ անմարդ հարսի սուտ կռիվ ու թաքուն հրավեր լսեց, այսինքն որ իր տեղը հայտնում է, ժպտաց ու ժպտալով մտքում ասաց՝ «բերնին ծեփիլ տեմ հա», և գերեզմանոցում որոշ տղամարդ մեռելներ և իրենց դռանը մինչև անգամ Սիմոն ծերունին լսեց նրա կանչի այդ խնդրողականությունը, այսինքն որ ողջ-առողջ եկած մի չորս-հինգ տղա էր ու մի կոլխոզ որբևայրի, լսեց ու գործի վրա չարչարվելով քրթմնջաց՝ «սատկես դու, սատկես, որ քեզ պառավել չկա»:

- Էդ ապահով տանդ վրա վաստակ ունեմ, է, վաստա՜կ,- կանչեց.- Արմենակիդ ծիծ եմ տվել, է, ծիծ եմ տվե՜լ:

Աղունը չէր պատասխանում, Սիմոնի պառավ ձայնը պատասխանեց.

- Էդ ի՞նչ եղավ, ախչի, հարցրեց:

- Հողե՜մ ձեր սուտ քրիստոս գլուխը,- ասաց,- որ ուտում ու ուրանում եք. կասե՞ս Արմոյիդ ծիծ չեմ տվել:

- Խի, իրա մորն ի՞նչ էր եղել,- ասաց:

- Էն էր եղել, որ սուրբ մորդ ահից կաթը կտրել էր,- կանչեց, և բոլորի համար մի րոպե, ռուս հարսից բացի, այնպես էր, ինչպես էր կարծես հավիտյան, բայց ժամանակի մեջ խամրել, պառավել ու մարել էր:

Մոզուն ու կովին խոտ տալիս դեզի արևոտ կողմը Մուրի խոզարած բիձեն վրա էր ընկել փախստական տաշքենդցու տղայական հանցավոր-անմեղ արարքին, «այ գետինը մտնես դու, գետինը», գուցե ամաչելուց, գուցե անհասկացողաբար չամաչելուց ծիծաղելով փախչում էր եղանի առաջ, թելիկ մազերը ճակատը ծեծում էին:

Թաթարը կացնի չափ էր, կացինն առած վրա էր ընկել տանձի ծաղկած ծառը կտրում էր. ծառը դեմ-դիմաց իրենց հողում էր, թաթարի ապագա հողում էր լինելու, բայց Սիմոնի տան ետևն էր, տասնչորս տարեկան աղջկա նման ծաղկե՜լ, դեմ-դիմաց զարդարում էր Սիմոնի տունը - չպիտի՛ զարդարեր: Այդ գիտակից չարության, թաթարի ազատ որբության ու իրենց խեղճ տիրավորության առաջ Սիմոնի երեխեքը չափարի մեջ կուչ էին եկել ու զգում էին, որ կացինը իրենց հոր կենդանի սրունքներն է կրծում: Չէր կարողացել երկու անգամ նույն տեղը խփել, հազիվ կացնի չափ էր, այդ օրը չպրծավ, թողեց ու նրանց չափարը կացնահարելով իջավ, կացինը ձեռին՝ ձորից դուրս եկավ կովի ետևն ընկած, պառավ մեծափոր կովը չէր կարողանում փախչի ազատվի: Մոր փեշը բռնած՝ գյուղխորհրդում ասավ՝ «նրանց չափարն իրավունք չունի իմ հողով անցնի»:

Հենց այդպես՝ իրավունք չունի իմ հողով անցնի: Մյուս օրն էլ էր ծառի տակ, էն մյուս օրն էլ, ու ինչքան հիշում ենք՝ կամ ծաղկած ծառն է կտրում (կանաչ ու մեջը մի երկու փունջ սպիտակ), կամ Սեդրակի կովի ետևից է ընկել: Գյուղխորհրդի նախագահին լացել տվեց. պատերազմում թևը խափանված մարդ էր, ինքը վիրավոր գալիս՝ ծափուծիծաղը բաց երեսին ու շվին գոտու տակ Ակոփին Սևաստապոլ տեսել էր, ասում էր կանգնեց ծափ տվեց ու եկավ գրկեց: Սիրտը բարակ մարդ էր, աչքերը շուտ-շուտ լցվում էին, ասաց՝ «քեզ ինչ ասեմ, տղա, քու հորը կորցնողի կռները չորանան»: Բայց նրա Հիտլերը Սիմոնն էր, թևը չորացած այդ մարդն էր, ողջ-առողջ վերադարձած բոլոր տղամարդիկ: Կովի կռաջլին կացնով խփել էր, կովի քացին էլ երեխայի ծնկանն էր առել - երեխայի թևը Ծուշանը բռնեց, քանի դեռ հարևաններն իրենք չէին գանգատվել, գնաց գյուղխորհուրդ գանգատի. մոր փեշի մոտից ասաց՝ «դու գյուղխորհուրդն ես, բայց իրավունք չունես. իմ հերը բանակից թող գա իմ վրա խոսի»: Իրավունք խոսքը Ծուշանը կենտրոնից՝ միլիցիա Տիգրան հորից, երեխան Ծուշանից էր սովորել: Անտառապետությունը Տիգրանի ձեռքից առել տվել էին մի թոքախտ վաստակավորի, այսինքն որ պետության առաջ վաստակ ուներ, պետությունը չէր ուզում շուտ մեռնի, մեր մաքուր օդում որսի թաքուն մսով պիտի ձգձգվեր, իրեն Տիգրանին տարել էին կենտրոն միլիցիա, տնից-տեղից կտրված՝ պահածո ձուկ էր ուտում ու քնում էր փաթաթանները տարիներով փաթաթած, ոտքերը փաթաթանի մեջ հոտել էին, մեծ էր ու արդեն ոտը լվացող սիրուհի չուներ, ձին պատրաստ կապած՝ գազազած սպասում էր թոքախտավորի հատնելուն, բայց սա խռկում ու ձգձգում էր:

Պեպենոտ մեծը. ժողկոմների ժամանակ, մի տարվա նշանած

էինք, Տիգրանը Ակոփին քրոմ-սապոգ նվիրեց. ամաչում էր հագնի, ասում էր «քույրերիս հարսանիքով կհագնեմ՝ էնիքը, կնվագեմ», ու որ գյուղխորհուրդն ասում էր «տանկ էր քշում, կանգնեցրեց, դուրս եկավ ու ծափուծիծաղը երեսին եկավ գրկեց»՝ մենք չէինք հավատում, երեսուներկու-երեք-չորս... մինչև քառասունմեկ թիվը էդքան ժամանակ սապոգը մի անգամ չէր հագել, նվիրելու օրից էդպես կային, մինչև նվիրելը եթե ոտքին փոքր չէին եղել ու Տիգրանը մի երկու անգամ հագել էր՝ էդ էր, մեծ պեպենոտը պահատեղից հանել, յուղ չէր գտել, ոչ-խարի պանրով փայլեցրել, հագել դռանը կանգնել էր, դռնից դեմ-դիմաց հսկում էր թաթարի կացնավոր իշխանությունը Սիմոնի ընտանիքի վրա. ոտքին մեծ էին, մեջները կանգնել սպասում էր մեծանա սապոգները լցնի, Ակոփի մասին ասում էր գալու է սապոգներս խլի՝ «գալ տի սապոգնիս խլիլ»:

Փոքրը. «տան աղջիկն» էր ու աղջկա պես ծառայում էր, Ակոփին խաբել էինք՝ թե աղջիկ ու Արմենուհի է, բայց պապի անունն էինք դրել ու սպասում էինք Տիգրան դառնա, տիգրանացուն այնինչ միջնեկ թաթարն էր. սա երեխային օգնական էր տարել, չափարն անցել մտել էին Աբել պապի մեղվանոց, նավթ չկար, նավթի սղությունը գիտեին, զուտ լուցկով չէին կարողացել փեթակները կրակել, ասել էին շուռ տանք՝ մեղուն փախչի. միջնեկ թաթարը փրկվել, կարտոլի մար-գերում գլուխը հողի մեջ թաղել էր, բայց երեխան փեթակի տակից դուրս չէր եկել, մնացել էր փեթակի տակ, բղավոցի վրա հալիվորը եկել տակից հանել, ականջը քաշելով տարել էր տուն: Պահեստի տականքին կապված մի հավատարիմը կար, այ-սինքն որ ժողովրդի եկամուտները բաշխելուց հետո ավազանի տակը պիտի ավլեր, մաքրեր, լվանար՝ ու աղաջրի տականքն

իրենն էր, Աձուխշինողանց դռներից բառաչելով իրեն խփեց գյուղամեջ ու պահեստի շեմքին նվաղեց՝ «երեխադ մեռնում է, Ծուշան քիքիր, Օսեփանք երեխայիդ խեղդեցին». ով վաստակել էր ու արժանի ստանալիք ուներ՝ ստանալիքի համար այդտեղ էր, ով չէր վաստակել ու պահեստում բան չուներ՝ ուրիշի ստանալիքի հոտի վրա էր այդտեղ, հաշվապահությունը հաշվում՝ մենք բաց էինք թողնում, բոլորն այդտեղ էին, է՛, կերի հոտի վրա գազազած ժողովուրդ էր, հաշվապահին էն է պատռտում էին, լափից առաջ ֆերմայի երեսուն շունը սարում ոնց էր գազազում, խռնվում, անցորդ ձիավորին ձիուց վար բերում ու նույնիսկ իր լափ-տվողի երեսին թռչում... աշխատել էր ու իր աշխատանքի վարձն էր ուզում՝ կոլխոզը չուներ, կոլխոզը պարտքերի մեջ կորել էր, ստացածը գտած ու չստացածը կորած էր,- ժողովրդին այդպես խառնված թողեց ու պահեստից բարձրացավ գրասենյակ, հորը հեռախոսով ասաց՝ «Ծուշանն եմ, թոռներիդ գցել են փեթակների մեջ, խեղդում են, հասիր». գլուխը տաքացել տժժում էր, բայց խելքը չէր կորցրել, ո՛չ, իրեն տիրապետեց ու, Տիգրանը միջնեկին շատ էր սիրում, ասաց՝ «հատկապես քու նմանակ միջնեկին Օսեփանք խեղդել են, ձիդ քշած գործուղվիր, էս հանցավոր Ծմակուտը տակից վառիր, վառիր», գիտակցաբար միջնեկի անունը խաղացրեց, որպեսզի դևը կենտրոնում ձիավորվի. կենտրոնում դևը «հա՜տ, նանը, կվառեմ» մռնչաց, աչքերն ու գլուխը մթնեցին, բայց Ծուշանից հետո զանգող հանգստացնող էր եղել՝ թե դա Ծուշանի հերթական թատրոնն է, միլիցիայի միջամտությունը պիտի գյուղխորհրդով խնդրվի՝ Ծմակուտի գյուղխորհուրդը Տիգրանից դ ե ռ միջամտություն չի խնդրում: Քեռու խելքը՝ Ռոստոմի, միջնեկի համար գնում էր ու գնում է - տասը կողմից չնայած բացատրող եղավ՝ թե միջնեկին

բան չի պատահել, փոքր պեպենոտն է, միջնեկ թաթարը փախել վտանգից ազատվել է, և Շուշան քույրը նույնպես բացատրեց՝ թե միջնեկի անունը հոլովել է Տիգրանի կրակը հատուկ տա-քացնելու համար, բայց չեղավ, օրիորդ Վրացյանի հրահանգով տասը մարդ մինչև չթափվեցին ձեռները ոլորեցին՝ չհանգստա-ցավ: Է՜, սովից գազազած ժողովուրդ էր, պահեստի դռներին պտտվում էր, պտտվում էր:

Ինչո՞ւ, ինչի՞ համար, Օսեփանց խեղճերը մեզ վնաս ի՞նչ էին արել. հարևան էին, կային, նայում էին ու գ ի տ ե ի ն. չէին նայում, քրիստոսի իրենց երեսը զզվանքով մեզանից շուռ-տված կ ա յ ի ն. մեր նույն պատճառներով բռնավոր մի աղջիկ էլ իրենք ունեին ու չէին ասում հանցանքը եթե բոլորի տակ է՝ ուրեմն էդ է: Գելը դռնից շուն էր տանում ու գյուղում փախստա-կան տղա կար, ասում էինք Ակոփը կլինի, ասում էինք՝ Սիմոնը, ասում էինք փախստական դարպասեցու ուրուն կլինի, այսինքն որ գնդակահարվելիս ուրու դարձած վերացել եկել, պապոնց մեր գյուղում պտտվում, կանգնում հանդիպողին նախատինքով նայում է, չէ՞ այստեղից էր մատնվել ու տարվել,- սարսափի ձմռան մի գիշեր լ ա կ ո տ ի ն բերել մեր տանը քնեցրել էինք, վառարանն ուժեղ վառվում էր, կարմրել, ղռռում էր, երեխեքը շուռումուռ էին գալիս ու վերմակը ոտքով դեն գցում, երեխեքին ծածկեցինք ասացինք մեզանից եթե թաքուն ե ղ ա վ՝ երե-խեքից ուրեմն թաքուն ու թաքուն էր ու լակոտն ինքն էլ գուցե չհիշի, գուցե կարծի երազ է եղել ու իրենից ամաչի. լակոտին խակ կորիզի պես, ինչպես որ կորիզը քաղցր լինի, հետո դառը լինի և ուշքի գաս ու թքես, մենք դուրս էինք գցել ու հավատում էինք՝ որ դա չի եղել ու մանավանդ՝ որ էլ չի լինելու, չգիտեինք՝ որ մեծանալու հետ երեխեքը այդ պապանձյալ լռությունը, միա-

միտ-ազատ հոգոցի տեղ այդ ծանր, հատուկ լռությունը հասկանալու, դարձնելու են հասկանալի պատկեր ու խփեն գրասենյակի դռանը ժողովրդի առաջ փռեն, և չգիտեինք՝ որ օտար աչքը, ցեղը, գյուղը, ամոթն ու պատասխանատվությունը լակոտը թողնելու է մեծի մեզ վրա ու ինքը կատվի ձագի նման շուլալվի. ու թեպետ ոչ խամուտի նեղվածք ու ձնշում կար՝ որ ասեինք լծկանի մեր բաժինը մենք առանք ու հիմա խաղաղ ենք, ու ոչ էլ քանդարար զորություն, այսինքն որ նայեր ու քանդվեինք, որ խփեր ու այս բեռը՝ որ մեր մարմինն ու կամքն է՝ կապակտուր փլվեր, այլ միայն Ակոփի հուշն էր, ինչպես որ Ակոփի շունչը մեր ներսում բոցի պես մի րոպե խփվեր ու մարեր, բայց նույնիսկ այդքանը չէինք զորում մեզանից վանել, իսկ հետո չէինք էլ ուզում, քանի որ գյուղը գեշ հիվանդություն ընկավ, ասում էին միլիցիայից ու Տիգրանից է եկել, դժբախտ խեղճերը մեզ չար նայում, լռում ու լուռ ուզում էին հոր հիվանդությունը պտտվի գա աղջկանով ընկնի, և ահը մեզ կալավ, խակ լակոտի մաքուր գոյությունը փրկիչ բախտ համարեցինք, ասացինք էս է, փրկվել ենք, ու եթե այդպես էր՝ Տիգրանի մեղավոր լեզուն մեզ վրա կարձանում էր ու մեր բախտն իսկապես բերել էր. ու մեր զավթած որսը կամ լուռ լափելո՛ւ էինք, ասելու էինք էստեղ էդպես բան չկա, կամ թե չէ՝ թատրոնթամաշայով ավարը թաքցնելո՛ւ, այսինքն որ ամբողջ գյուղը Շուշանի թշնամին ու բանսարկուն է. չհասկացանք ինչ եղավ, մեկ էլ տեսանք երեխեքը չորս կողմի վրա պատերազմ են հայտարարել կռվում են, իրական պատճառը մոռացվել է, Շուշանը կենտրոնի զինկոմիսարիատից, միլիցիայից ու գյուղի հարազատությունից պաշտպանություն է ուզում, այսինքն թե հարձակվողը մենք չենք - մենք որբևայրի տուժողն ենք:

Պահեստն այդպես առանց կողպեքի ու կնքած զմուռսի թողեցինք եկանք, Շուշանն ինչպես կգա՝ գնացքը սահուն, հասակն ուղիղ, բերանը սեղմած, վշտացյալ աչքերը չոր, նագանը փեշի տակ. նագանը, ոչ, կենտրոնում հոր քամակին էր - փեշի տակ Օսեփանց տներն ու փեթակները կրակելու կրակն էր, նույնիսկ ինքն էր վախենում, որ իսկապես մարդասպանություն է լինելու, այսինքն մենք էս ենք, աստված մեզ էս է ստեղծել՝ էս ենք, մեր հորեղբայր Մեսրոպին մեր Տիգրան հերը մատնել աքսոր է ղրկել ու էդ է: Գյուղխորհրդի ու Վրացյանի խորհրդային-կուսակցական հանձնաժողովը կռահել, կազմվել ու ետևից եկել էր - եկել Օսեփանց դռանը պահակազորի պես կանգնել էր:

Սև թաթարը կարտոլի մարգերում գլուխը հողի մեջ թաղել ու շատ ուժեղ վախեցած էր, ասաց՝ «ջադուն ու Աբելը դուռը փակել, երեխային տարել տանջում են», հենց այդպես՝ «ջադուն ու հալիվորը երեխային տանջում են», յուրաքանչյուր բառը Շուշանի կռածն էր. հողից հանեց, կանգնեցրեց ասաց՝ «վա՛խիլ մի, կարմիր ձիավոր միլիցիայի զորքով Տիգրան պապդ գործուղվել գալիս է», բայց կողքին կանգնած իրական պաշտպան էր ուզում երեխան, ատամները քնի մեջ կրճտացնում ու ոլորվում էր, ոլորվում էր. պաշտպան հոր փոխարեն գիշերները պիտի Ռոստոմը կողքին լիներ, բայց Ռոստոմը ցեղից դանդաղ ու հաստատ ետ էր քաշվում:

Արև, լույս պատշգամբում նախշուն գորգի վրա երեխան ուռուցորվել մեռնում էր, մորը չճանաչեց, սուտ քրիստոս հալիվորը երեխայի գլխին մոլորվել կանգնել էր, ջադուն երեխայի ձեռներին-ոտներին-գլխին մածուն էր վրա տվել, երեխայի վրա դանակը ձեռին չոքած աղոթում ու թու-թու էր անում՝ թո՛ւ, թո՛ւ, և

գյուղխորհրդի հետ կանգնած օրիորդ Վրացյանը, չնայած ուժեղ հակատերտերական էր, ջադըվի ձեռից դանակը չէր առնում ու թիկունքը խրում:

Վախեցած, վախից չորացած թաթար միջնեկի ասածն էլ ու իրականությունն էլ՝ երկուսն էլ առջևն էին, երեխային չէին տանջում, բայց Ծուշանն ուզեց ու չկարողացավ իրողությունը տեսնել, թաթարի նման տեսավ, այսինքն որ իրենց տանջում են: Աչքերը չոր վառվելով, շիփշիտակ ու բերանը փակ կանգնեց, զսպվեց-զսպվեց ու շշնջաց. «Էդ ո՞նց եք անում, որ քաղցրը ձեզ է լինում, թույնը իմ անտեր որբերին. էդ ի՞նչ եք կախարդում, որ ձեր երեք գնացածը երեք էլ գալիս է, Նիկալի երկուսն էլ անդընդվում կորչում է. թե՞, շշնջաց, ձերոնք իսկի չեն էլ գնում - թփերի ետևն սպասում են կռիվը վերջանա՝ որ դուրս գան անտեր որբևայրուս կալկոխ անեն»: Պառավը թու-թու արեց՝ թու, թու, բայց հենց այդպես էլ կար, ամբողջ պատերազմը նրանց Սիմոնը անտառտնտեսության իբր թե զինկոմիսարիատի սղոցարանում անցըրեց ու դեռ այնտեղ էր, շաբաթ գիշերները փախստականի պես երբեմն գալիս էր, գերության պատճառով՝ Ադամը կենտրոնի *կապեզեում* մի տարի է քննվում ու ծեծվում էր, մի խոսքով անհայտ կորած կամ զոհված չէր, մյուս փոքրը բանակում էր, բայց սովորական ծառայություն էր, պատերազմը վերջացել էր,- գյուղխորհրդին ու մանավանդ օրիորդ Վրացյանին Ծուշանը նյութ էր հուշում, բայց միթևանին ու օրիորդ զավակը մեկընդմիշտ տիրավորների կողմն էին բռնել ու այդպես հաստատ կանգնած էին, որովհետև հալիվորի մեղվանոցում մի երկու փեթակ էլ օրիորդն ուներ, իսկ գյուղխորհուրդն էլ՝ մեղվի լեզուն հալիվորից գալիս սովորում էր, ուզում էր ինքնուրույն մեղվատեր դառնա, քանի որ պաշտոնը ոչ մեկիս

տակ հավերժական չի:

Պառավն ասաց. «Ակոփը գլուխը քեզանից կորցրեց, թո՛ւ, թո՛ւ». պատասխանեցինք ասացինք. «էդ սուրբ դանակդ ձեռիցդ կառնենք, թիկունքդ կկոխենք, քե՛զ նայիր ու իմ ջահել երեսիս քու խոսքերի՛ն նայիր». սուտ քրիստոս հալիվորը պառավի վրա իբր թե բարկացավ ասավ. «չի՞ լինի՝ որ քու անտեր աղոթքին կենաս». պառավը լեզվից հայտնի անսուրբ էր, այդ պատճառով էլ աղոթքի ու աստծու հավատի մեջ իրեն զսպած էր պահում, նաև՝ իր Ադամ խեղճ զավակին կենտրոնի միլիցիան ու իրենց կարծիքով հատկապես մեր Տիգրան հայրն էր տանջում,- ձեռքի դանակը՝ հոգեառի առաջ իբր թե սուրբ Գևորգի պաշտպան սուրը շպրտեց Ծուշանի ոտքերի տակ, ասաց. «արնախում հորդ նագանը փորդ կոխիր, անամոթ, կոլխոզի էդ ո՞ւմ ապրուստով է փորդ կրակ ընկել». հպարտ ժպտացինք ասացինք. «աստված ենք կանչում էդ որբին մի բան լինի՝ որ նավթ ածենք, մեզ ատելի էս տունը վառենք, վառենք»:

Հալիվորը կոլխոզի մեղվապահն էր, մեղվանոցում նստում կալի թեթև եղան էր տաշում-խանձում, հարմար ու թեթև էին, կալվոր կանայք շինողի ձեռն օրհնում էին, պառավն ու հալիվորը կոլխոզի համար հորթաթոկ էին հյուսում,- աշխօրի մի երկու կիլո մթերք էին ստանալու, «զգուշացնում եմ, ասացինք, զգույշ եղեք, մեջը մկնդեղ եմ դնելու, ձեր ոտը պահեստիս շեմքին չտեսնեմ»:

Խեղճերից ի՞նչ էինք ուզում: Բայց մեզանից ի՞նչ էր ուզում մեր բախտի վերին տնօրենը, որ մեզ խփել խելագարել ու վերևից հսկում էր՝ որ ձիթհանքի գոմեշի պես անընդհատ նույն պտույտին լինենք:

Գյուղխորհրդի բերանով, ինքն այսինքն այդ խոսքի իրա-

վունքը չուներ, Վրացյանն ասաց. «Կ'արտաքսենք, Ծուշան, խորհրդի որոշումով Ծմակուտից կհանեմ», ու աչքերը լցվեցին, այսինքն Ակոփին Սևաստապոլ տեսել էր, բայց կ'արտաքսեր: Երեխայի երեսն ուռել, աչքերը փակվել էին, ներսից երևի ականջներն էլ էին փակվել, բայց պաշտպան մոր ներկայությունը զգաց, ասաց «մամա». Ծուշանի բուկը լցվեց, ասաց՝ «ջա՜նա. մամայիդ քեզանից կտրում, էս թշնամի գյուղից որոշումով հանում են. քու մաման քեզ տալ չի,- ասաց,- կշալակի, ոտները կհանի ու բոբիկ ձամփա կընկնի. քու մամայի ցեղը սովոր է, կգնա արդար աշխարհ կգտնի»: Ժողովուրդը ետևներից եկել, Մելքանց տների մոտ դեմ-դիմաց ծեփվել էր, կարծես բեմ ու դահլիճ լինեին, Ծուշանն ասաց. «ե՛ս եմ բաշխում, ե՜ս, էսքան ժողովուրդն, է՜, Ծուշանի հացի ապրածն է». ասաց Ծուշանը, միայն Ծուշանը. «էդ խի՞ չեք վախենում՝ որ կպահանջեմ, որբևայրի կանանց պաշտպանության հանձնաժողովը կենտրոնից կբերեմ գլխներիդ կկանգնեցնեմ». այդպիսի հանձնաժողով չկա, դա Ծուշանի րոպեական գյուտն էր՝ որ հետո ամիսներ ու ամիսներ կենտրոնից մինչև Ծմակուտ ու բոլոր գյուղերը բորբոքվում էր անխտիր բոլոր մտքերի ու լեզուների վրա, օրիորդ Վրացյանն ուրեմն գաղափարը տեղնուտեղը զավթել ու կենտրոն էր գցել, որպեսզի Ուցյունի իր անունը կենտրոնում կրկին բարձրացնի, ասեն «կատաղած ծմակուտցին դեռ միայն ուսուցիչ է», բայց այնքան վեհանձնություն չէր ունեցել՝ որ փոխարենը չլսելու տա բաշխման ու հացի մասին լեզվից պատահաբար թռածը. գնացել խորհրդակցել որոշել էին պահեստը Ծուշանի ձեռքից առնել, հանձնել մի անձայն համեստի, այսինքն որ հացից չի կատաղի. չէին քաշվել, իրենց կուսակցական որոշումը եզրափակել էին մեծերի հին խոսքով՝

«հացն ամեն մարդու բան չի, անարժանը հացից կատաղում է»: Տիգրանը կենտրոնից զանգեց, Գոդուն ասավ. «Էդ որբերի հացին ձեռ չտաք, թե չէ, հա՜տ, գիտեք՝ որ առանց էդ էլ կատաղած եմ»: Ու միշտ տաք էր, մշտական գարուն էր, անընդհատ ամառ էր, լվի ձեռից տանը քնել չէր լինում, տեղաշորում համարիր խրձերով լվածաղիկ էինք դնում՝ մանր երիցուկ՝ ապրեմ-չապրեմ, վերմակը շպրտում ու վառվելով նստում էինք, անասունը քիչ էր, անասուն չկար, ծաղիկը ծաղկում շեմքից ու լուսամուտներից տուն էր մտնում, ով մեղու ուներ՝ մեղուն գիշերցերեկ զնգալով բանում էր, օրը մի ձագ էր շպրտում, օրը մի ձագ էր շպրտում:

Նրա ճանապարհին հարսներն իբր լռում ու գլուխները կախում էին, օտար ձին իբր քացի չէր տալիս, մեղուն նրան իբր չէր կծում... սուտ քրիստոս հալիվորը փեթակը չէր կարողացել հավաքի, սպասում էր իրիկվա խաղաղության, մեղվանոցը գազազած վնգում ու տրաքտրաքում էր: Մայրն ինչպես հողից հանել ու կարտոլի մարգերում թողել էր, միջնեկ թաթարի թիզուկես հասակը այդպես էլ կանգնած եռում էր՝ թե այդ մեղվանոցը միևնույն է կվառի, «մին է, ասում էր, վառիլ տեմ», մայրը ծիծաղում, ձեռքերը կոնքերին հպարտ քռքռում, թաղի ամբողջ թատրոնի առաջ ասում էր՝ «ոչ Ռոստոմը, ոչ էլ մյուս Ռոստոմը - Տիգրանի ժառանգը միջնեկ թաթարն է, հա՜տ, կվառի», բայց երեխայի աչքը վախեցել էր. հեռվից քար ու մանավանդ թշնամու հպարտ հայացք, այսինքն որ դու միևնույն է իմ զոհն ես, թերևս նետում էր, բայց վախեցավ նավթը ձեռքին մտնել մեղվանոց: Ծուշանը գրկել, կողքերն ու ձեռքերը մրմռացնելով պահեստից մի լավ կտոր քարաղ էր բերել, թախտի տակ էր, միջնեկ թաթարը հանել, գլորելով-գլորելով փոքր

պեպենոտի հետ տարել գցել էին նրանց աղբյուրի գուռը, որ-պեսզի նրանց անասունը, մանավանդ գոմեշը՝ որից երեխեքը հատուկ վախ ունեին՝ թունավորվի. Շուշանը տեսավ քարաղը նրանց որձաձիու առաջն է, կրծելով ուտում է, տուն նետվեց՝ քարաղը չկար, դուրս ընկավ, քարաղը թևատակն առավ ու ձիու սանձը քաշելով գնաց գյուղամեջ. ճանապարհին հասկացավ՝ որ ինքը սխալ է, բայց արդեն ձին քաշելով գնում էր, պառավ որձաձին անթշնամանք խռխռում ու քարաղը նրա թևատակին կրծում էր. ու թեպետ իրողությունից ծիծաղ սարքեցին ու փառ-փառ ծիծաղեցին՝ թե Շուշանի տիգրանանմանակ խևերը պա-ռավ որձաձիուն մաքուր սպիտակ քարաղը որպես թույն են հյուրասիրել, բայց թաթարի ծրագիրը նպատակից այդքան հեռու չէր խփվել. նրանց գոմեշը պիտի գոմշավարի ուտեր-ծարավեր-խմեր, չկշտանար ու տրաքեր, բայց հալիվորը վրա էր հասել աղն առաջից խլել. տրաքելուց փրկել էր, մյուս օրհասից՝ ոչ. գյուղում գոմշացուլ չկար, իրենց գոմեշը դրանք անալի էին պահել՝ որ մոտիկ գյուղերից մինչև մի հաստատ տեղեկություն չունենան՝ ցուլ չուզի, բայց Շուշանի աղը նպատակի վրա պինդ նստեց. խեղճ անասունը մղկտում ու քամակը սյուներին էր քսում, կանգնում երեսը երեսիդ նայում ու մռլնգում էր, գոմը մռլնգոցից դողում էր. նրանց խնձորենիները, մեղվանոցը, մար-գերը, համեմունք խոտերի ածուները կարծես նկար լինեին, հա-լիվորն ամբողջ օրը սանրում ու թափ էր տալիս, նրանց սպիտակ երինջը աչքը սուրմայած աղջիկ-հարսի նման մաքուր ու սան-րած էր լինելու, արևն աստծու օրը նրանց դռներին էր, հայտնի անասնասեր ու համարյա քրիստոս հալիվորը վիզը ծռել գոմեշի կողքին խեղճացած կանգնել էր: Շուշանը ծիծաղեց ասաց. «Ողջ-առողջ երեք տղեդ ու դու էլ նրանց վրա՝ չորսով մի

գոմշաբուղա չեք»: Հալիվորը դնչկալի թոկը բռնած, պառավը չստերը թևատակին ու բոբիկ՝ անհասցե ճամփա էին ընկել մեր խեղճ մատուռի գլխով պտտվելու, սրբի խեղճ դռնից էլ՝ Հովիտ, Դարպաս, գետափի հին գոմշուտներով դեպի հորենական Հախ-պատ: Պառավը լաց եղավ ասաց. «Նազլու գոմեշի նման մղկտաս, մղկտաս, սուրբ Հակոբի ճիպոտ»: Նրանց գոմեշը Նազլու, երինջը Խաթուն էր, արևն աստծու օրը նրանց դռներին էր, նրանց մինչև անգամ ծառերն անուն ու իմաստ ունեին, Խաթուն երնջի իմաստն այն էր, որ կապեզեից նրանց կալանավորին պիտի բերեր ու նրա անմեղ ձեռքով մեր սրբի դռանը մատաղ լիներ. չոր խոտհարքներում ու կալերում կանայք պիտի ցամաքեին ու սիրտները հալիվորի ծարավախնձորից ուզեր, հիվանդ երեխաների վրա պառավը պիտի աղոթքով կռանար ու ծոցներում մի ձմռախնձոր թողներ - ամեն ինչը՝ մա-քուր, քիչ, տեղին, հասկանալի... Ծուշանը կանգնեց, ասաց բան չի ասելու, բերանը սեղմած նայեց, բայց մեկ էլ տեսավ ասել է. «Ձեր չափած-հաշված եդեմից ով ձեզ հանել է՝ նրա էն-էն-էն...»: Հալիվորը գոմեշի դնչակալը ձեռին, պառավը չստերը թևա-տակին ու բոբիկ՝ նրանք Վրացոնց տանձենու մոտ էին - Օսե-փանց Համբոյի տան մոտից Ծուշանը ցավով ու ծիծաղով կանչեց. «Էդ է, մինչև ձեզ չպատահի՝ դուք մարդու վիճակ չեք մտնի»:

Արդեն հատնող ժողովուրդ էին, մոմի նման՝ որ արդեն հատնելու վրա է, դողալով դեռ կային, թիզուկես միջնեկն ով էր՝ նրա ահն էլ էր հալիվորի մեջ բուն դրել, ուզում էր երեխային փեթակների հետ մեղրով հաշտեցնի՝ չէր հաշտվում, չէր կաշառվում: Ամայի հին ժամանակներում, երբ մարդու երեսի մարդ պիտի կարոտելիս լիներ, հալիվորի հայր հալիվորին,

գիշերը հանդից որ դարձել է, ասել են Հախպատից նոր ընտանիք է եկել, ու լուրը Տիգրանի պապ Տիգրանի մասին է եղել. մեծ հալիվորը թևաթափվել, զզվել ասել է՝ «վա-յե, ես դրանցից էի փախել, քոչը կապեք, էս ձորից դուրս ենք գալիս». դեռ անանուն այդ Ծմակուտ թուրութվանք, ձեռը խանչալի կոթին վեճի լեզու, դեմը հայ կլինի թե թուրք՝ կռվի պատճառ ու առիթ միայն պապ Տիգրանն է ունեցել. որ խուխ էր անում ու թքում, ասում է, տավարը խրտնում էր, կամավոր, իր կամքով, ասում է, իրեն անվարձ անտառապահ էր կարգել, անտառի առիթով որ պտույտի էր ելնում՝ Ծմակուտի սահմանքը ամեն պտույտով մի քիչ լայնանում էր, Ղազախի թուրք կլիներ թե մեր Հովըտի հայ՝ իրենց սահմանը նրա առաջ ետ էին քաշում, մեր անասունի առաջ այսինքն նոր հանդ էր բացվում, ոտն ու պոզն արնակոլոլ ջարդվելուց առանց վախենալու կարող էր ազատ արածել, մինչև նրա գալն, ասում է, մեր տավարի կաթը դուշման հանդապահի սարսափից կտրվում էր,-փախստական ու ամեն փախստականի պես անլեզու այս Ծմակուտի համար նա ուրեմն օգուտ է եղել, այսինքն վնաս չի եղել, բայց Օսեփանց հալիվորն ասել է՝ «բեռները կապեցեք, էստեղ էլ չեղավ»: Աշխարքն այդքան ազատ չի, մանավանդ՝ անլեզու-անթուրութվանք, ծանր գլուխները գութանի եզան պես իրենց ակոսի վրա կախած Օսեփանց մշակների առաջ, Տիգրանի պապ Տիգրանի կողքին թևաթափվել ու զզվել, բայց չեն հեռացել, նրա ձիավոր հպարտ գնացքի, նրա զարզանդ խուխի կողքին խուլուլուռ ապրել են, ինչպես որ հիմա թիզուկեսի առաջ հալիվորն ու թոռներն էին:

Մեծ պեպենոտը նրանց պատերազմին անմասնակից էր, հոր չհագած սապոգները հագին կանգնած սպասում էր մեծանա ղեկավար դառնա, ասի «հա՜տ, *մալչատ*», ու լավ գիտակցում էր՝

որ պատերազմն իր աշխատավորների միջև է, այսինքն որ իր ենթակա աշխատավորն են հալիվորն ու նրա թոռներն էլ, Թեվիկն ու թաթարն էլ. ասաց՝ «Օսեփանց Աբելին կանչեցեք գա ծնեցնի», չասաց «Աբել պապին», չասաց «հալիվորին», չասաց այս տան անդամն եմ, կովը տրաքում է, գնամ ինքս լաց լինելով խնդրեմ կանչեմ - սապոգների մեջ ձեռները քամակին կանգնած էր, ասաց՝ «Աբելին ձեն տվեք գա». Նիկալ պապը վիզը ծուռ խնդրողական պատվիրակ գնաց հալիվորի ոտը, իր պապին փաստորեն բանի դրեց:

Պահեստի դռանը Շուշանի ձեռին նայող ինչքան խեղճուկրակ կար՝ կովի ցավերի վրա օգնական էր եկել, բայց ոչ մեկն էլ օգնական չէր՝ դժբախտության առաջ հլու պառավներ, հին այսպիսի դեպքերից զրուցող ծերեր, ուսումը կիսատ տասնհինգ-տասնվեց տարեկան անասնաբույժ. կովը երկու օր էր ոլորվում ու կտրտվում էր, սատկելու վրա էր, գոդի նախագահը կարգադրեց մորթել, միսը ժողովրդի վրա բաժանել - վարչությունը որոշում կհանի՝ փոխարենը որոշումով նոր կովացու կտա, և արդեն դանակ-սրող կար, հորթի միսն ուզող-չզզվող ծերունի էլ կար. ոչ այնքան իսկապես տագնապած, որքան որպեսզի իր ձայն ու ձակատայինի կնոջ իր հատուկ դեպքը զնգալով կենտրոն ընկնի, Շուշանը Հովըտի ու Դարպասի ամբողջ հասարակության միջով զանգեց կենտրոն ու պատասխանը մի շրխկան ուշունց ստացավ՝ «հա՜ատ, ալաշա մորդ ջորու ձռները, ես անասունի բժիշկ չեմ». հոր հայհոյանքից Շուշանի ներսը հատկապես լուսավորվում ու խաղում էր, հորից վախ նա երբեք չէր ունեցել և ընդհակառակը՝ Տիգրանն էր նրա առաջ միշտ ենթակա ու պարտական եղել - ծիծաղելով եկավ թաղի առաջ ասավ՝ «զինկոմիսարիատը նոր կով է տալիս, Տիգ-

րանը կարգադրեց մորթել ու միսը ժողովրդին ձրի բաժանել, բայց Օսեփանց հալիվորին արդեն բերել էին, նրա պառավն արդեն ծննդկանի աչքերը տրորում, դանակը ձեռին աղոթում, հորանջում ու թու-թու էր անում՝ թու, թու, այսինքն թե Շուշանը չարք է, գոմից պիտի չքվի. Թեվիկը տասնհինգ-տասնվեց տարեկան էր ու կ ա ր, այդտեղ էր, կարծում էր ժողովրդից թաքուն է, բայց երեխայի նրա մաքուր երեսը ժողովրդից ոչինչ չէր թաքցնում, Մուրի հոր կողքին բարակ սիրուն վիզը ծուռ կանգնած էր. Մուրի պապը հետո իհարկե - հ ա ս կ ա- ց ա վ - ու դարձյալ լռեց, բայց հիմա կամ լրիվ էր անտեղյակ, կամ քաշվում էր՝ թե կհասկանան որ տեղյակ է ու իր խեղճ ներսում այդպես կուչ-եկած կար, Օսեփանց հալիվորին ուզում էր մի բանով օգնական լինել, բայց նրա արհամարհանքից էլ ջոկ էր քաշվում. չնայած համարյա մի տարիքի մեծեր էին, բայց իրենց հին ժամանակներում հալիվորի մի երկու տարվա ավագությունն ու մի քիչ էլ ավելի իմացությունը Նիկալին ինչպես որ ձնշված հարցնողի վիճակում էին դրել, հալիվորի առաջ երեխայի այդ վիճակով էլ կար - ուզում էր օգնի ու ամաչում էր:

Բոլորն անցա՞ն, բոլորը գերեզմանոցում են, մնացել է Բերբերանց ծվոցը-կտրած Գիքորը՝ որ փորի հորթն ուզում էր ուտի, թե՞ նա էլ է արդեն բացակա, տարել լուռ թաղել ու մոռացել ենք. քաշվող ժողովուրդ էին, ղեկավարությունից էլ էին երեխայի պես ամաչում, անմարդ հարսների մեր առաջ էլ ու դպրոցի տասնութ տարեկան դասատուի առաջ էլ էին կարմրում, մեկը մի նշանավոր արարք ու հետք չթողեց, Հախպատից ինչ եկել ու Ծմակուտն աստծուց ինչպես ստացել՝ այդպես էլ տվեցին մեզ, մի անամոթաբար ուղիղ ճանապարհ՝ որ երկիրը պատռելով գար ու գնար, մի պայթյուն՝ որ սարը ձորը գցեր ու տեղը

կալ աներ, մի վայրենի կրակ՝ որ անտառը լափեր ու խոտհարք բացեր, ժանտախտի մի կատաղություն՝ որ թուրք բեգերին սարերից քշեր, ո՛չ, չէին ունեցել. նրանց արահետը ձորի հետ իջնում, քարից ու թփից մի կողմ էր կենում, քարկապներում մոլորվում էր՝ թե ոնց անցնի, ու ամբողջը խոտուծաղիկ էր, կատաղած խոտուծաղիկ էր, շաղը ծնկներդ ուտում էր. ու խայտառակություն էր անցած-դարձած այդքանից հետո հալի-վորին ոչ թե փրկիչ բերելը - անամոթ անբարոյականություն էր մաքուր չոր գոմերի, սանրած սիրուն երինջների, զնգուն արևոտ մեղվանոցների այդ քրիստոս ձերմակ աստծու ներկայությունը Ծուշանի ցեխ ու մութ գոմում. ճրագի լույսը չէր զորում, նավթի մուրը խեղդում էր, նախշուն հորթ էր ծնվել՝ չէր երևում որ նախշուն է:

Ծուշանը մի րոպե որոշեց Թեվըկի պատմությունը այդպես անհայտ էլ թողնել, ասաց. «Դու որ էս գյուղի ու հարևանության պապն ես՝ իմ անհեր երեխեքիս ինչո՞ւ չես մի անգամ քու գոմը տանում, որ տեսնեն, նախանձվեն ու սովորեն. երեխան բա իրավունք ունի՞ գոմեշից վախենա»: Չպատասխանեց, հաշվի չառավ, չուզեցավ հասկանալ՝ որ Ծուշանը իր տան վրա նրա հովանին է խնդրում, ձեռքերը Ծուշանի բռնած ջրով չլվաց, ամանը ձեռքին այդպես շփոթված թողեց ու գնաց իր դռանը լվացվելու: Ծուշանն ասաց. «Էս հալիվորները ոչ մի կարգին ճամփա են ցույց տալիս՝ որ իրենց ճամփով անշեղ գնանք, ոչ էլ մեռնում են՝ որ առանց խղճի մեր սրտով կառավարվենք»: Որ-բևայրիները թաքուն ժպտացին՝ որ իրենց խոսքն ահա Ծուշանի բերանով ասվում է, ու երեսանց ամեն մեկը երդում կալավ՝ թե իր պատրոնից ու կեսուրից գոհ է... բայց Ծուշանի խոսքում հիմա չարություն չկար, Ծուշանը հիմա խաղաղ էր:

Հալիվորն ու պառավն էլ իրենց կողմից էին խաղաղ. երևի թե նայել ու հասկացել էին, որ թաղը թաղ, գյուղն էլ գյուղ, բայց ով ում ինչն ուզում է լինի՝ աշխարքում ամեն մեկն իր ցավն է ապրում, որ իրենց նույնանման բռնավորի ու *կապեզեի* Ադամի ցավն իրենցն է ու նույնիսկ իրենցը չի, այլ միայն Արփի երգեցիկ աղջկանն ու մարդկանց առաջ հավիտյան փակ Ադամինը, ու Շուշանի ցավն էլ միայն Շուշանինն է ու նույնիսկ Շուշանինը չի, այլ ոսկորի ու ոգու այն կապուկինը, որի վրա դեռ դաշն Տիգրանն ու Մարոն Շուշան են գրել ու տարբեր կողմերի վրա գնացել մեկը Երևաններ ու Սիբիրներ, մյուսը քոչի միլիցիա ու կենտրոն: Հալիվորը դանակի ծայրին, տեսել էր կանգնած նայում է, միջնեկ թաթարին մեղրահացի ողկույզ էր մեկնել՝ որ զուտ ոսկի մեղր է ու հալիվորները տալիս են իրենց թոռների մեջ ամենալավին կամ, մարդու բերանն իրեն մոտիկ է, իրենք են ուտում, բայց թաթարը բերանը սեղմել ու նրա մեղրը մերժում էր, Շուշանն ասաց վերցրու, բայց երեխան դանակը տեսնում էր, ոսկի մեղրը՝ ոչ:

Որբևայրիներիս պաշտպանության օրիորդ Ուցյունի հանձնաժողովը զինկոմիսարիատից եկավ. գոհացնող համեստ կապեր կային, խաղաղ ճնշման դեպքեր՝ այսինքն հազար նախագահ էլ կարգադրի, որբևայրուդ դուռը գերան չեմ քաշի ու տունդ ձվածեղի չեմ մտնի, կմնաս ձեռդ ծոցդ էդպես մոլորված,- սպանության՝ այսինքն թաքուն փչացնելու ու ամոթից ձենը-կտրած արնաքամվելու դեպք էլ կար ու առավել՝ ծանր ծաղրի դեպք էլ, այսինքն «դու շորդ հանիր, էստեղ եմ», բայց որպես անշահ որձ ու խղճահարվող տղամարդ չի այդտեղ, այլ գրազով ու վկայով է ներկայացել... հազար լացուգանգատ, հազար ծաղրուգոհացում՝ կյանք էր, հին կոմիսար Գերասիմ Արզուման-

յանի ձիավոր հանձնաժողովը եկավ այդ ամբողջի դեմ նստեց, ասում էինք չլինի-չլինի Համիկ հորեղբորը կռտելու որոշում կլինի, բայց սպասված թատրոն-տրաքոցը չկայացավ, հանձնաժողովը ինքը խոսեց՝ ինքն էլ լսեց, շփոթված լռեց ու կարծեց իր նպատակի գյուղը չի եկել,- որովհետև Շուշանը խաղաղ էր և կանանց բանակը առաջնորդ չուներ:

Հետո Մելքանց խավարաչք դռանը կանգնեց ու բկահազ տվեց՝ «էստեղ մինը մեզ շատ ուժեղ հարկավոր է, եկել ենք տանենք». ձողի պես ուղիղ՝ Շուշանը նրա առջևով անցավ ու այգուց պատասխանեց՝ «քեզ սխալ հասցե են տվել, քու ուզած մինը էս տանը գործ չունի». բայց հիմար ուրախությունը երեսին նա կանգնել ու չէր հեռանում. Շուշանն ասաց՝ «մտիր տուն, ժողովրդի գառը ֆինբաժինը ոնց է գրանցում, մտիր տուն խուզարկիր». ասաց՝ «ես էլ եմ էդ մտքին», բայց տուն չմտավ, թուքը կուլ տվեց ու հիմար դառնությունը երեսին սպասեց. Շուշանը՝ «երեք տղես կուշտ ու հագնված, վառելիքս ուրիշի շալակով բերած դռանս դարսած, կովիս խոտը խորոմած դիզած, կարտոլս հանած հորած ու ես էլ Տիգրանի աղջիկ Շուշանն եմ - իմ կյանքի ուղղությունը ուրիշի քոռերը չեն որոշելու». հիմար ու խեղճ ժպտաց ասաց՝ «դու մենակ քու մասին ես մտածում». ասաց՝ «ուրիշի մասին մտածող ես՝ էսքան անտեր կնկանից մեկին ուզիր, ասեմ մարդ էր, մեկին բախտավորեց»: Մոզին պիտի որ արդեն կորած լիներ, բայց Ասորենց ո՞րտեղից այդքան արագ չքացում՝ որ տեսիլքի նման մի րոպե լինեն ու չլինեն. այնքան հանցանքը չի՝ ինչքան հանցանքի մեջ իրենց սառչել մնալը. մի գոճու վրա Ուցյունի բոլուկում կրակել էր, սպանել էր կամ չէր սպանել, բայց ձիավոր Ուցյունի առաջ մարդասպան հանցագործի պես սևացած եկավ ամբողջ ժողովրդի միջով

մտավ գյուղխորհուրդ. հիմա էլ՝ լուսամուտից ընկավ ու Օհանի մահակի մեջ ընկավ, գառան պես բռնվեց, և Շուշանը չգիտեր ծիծաղի թե անիծի. մեծ ներողությունը երեսին, Թեվըկի փեշը բռնած՝ Օհանը խոստացավ թե դեպքը իրենց երկուսի մեջ կմնա՝ իր ու Շուշանի, Թեվիկն ասես մարդ չէր ու հաշվի մեջ չէր՝ անհասկացող լուռ կենդանի, իրենք բերանները կփակեն ու կմոռանան, բայց դա սեր էր. բախտավորների սերը տեղը-տեղին իրենց ամուսնու վրա է լինում, անբախտներինը՝ արգելված գոծու:

Այդ ամառ Շուշանի անբախտ մայրը աքսորներից ու Երևանից եկավ. կարմիր ձիավոր քոչի միլիցիա Տիգրան դևը Շուշանին ու Ռոստոմին նրա գրկից խլել, նրան այս երկրից քշել էր, բայց բոլոր ճանապարհներին էլ կանգնած բախտ կա - Երևանի նրա ամուսինը Տիգրանից պաշտոնով տասն անգամ բարձր ու սրտով հարյուր անգամ ներող էր եղել, հասկացել, սիրել, ներել ու հավանել էր. հետո որ պետությունը նրան աքսորել էր՝ առանց որպեսական կասկածի նա շորերը կապել ու նրա ետևից ճամփա էր ընկել Սիբիր, իրար այդպես ջերմացնելով պահել էին, հետո ամուսինն ասել էր Ծմակուտ դու հարազատություն ունես, կարծել էր այդքան աքսորից, պատերազմից ու տառապանքից հետո համընդհանուր ներումը ցողված կլինի նաև Ծմակուտի վրա ու Տիգրանի սրտին. հինգ կապոց հագուստ էին կապել - թևի ժամացույցով ու կարմիր կոշիկներով մի նշանվող տղայի լրիվ կապոց Ռոստոմի համար, հարսի շորեր Ռոստոմի սիրած աղջկա, մի առանձին կապոց Շուշանի երեխաների, աղջկա մի կանաչ-կարմիր կապոց Շուշանի համար ու մի հատուկ կապոց էլ՝ Տիգրանի. եկել մեր կայարանում իջել, Հովըտի սայլը գյուղկոոպի համար այնտեղ էր եղել, սայլի հետ եկել էր Ջաղացներ՝

որտեղ հիմա Վաթընանց Կարմիր ծառն ու Կարմիր աղբյուրն են. Հովընտից զանգեցին՝ թե Ծուշանը, Ռոստոմը կամ Տիգրանի տնից մեկնումեկը ձի կամ սայլ է տանելու Ջաղացներ, ճանապարհին բեռների մեջ նստած մի կին է սպասում. բախտը բերեց՝ Տիգրանը կենտրոնում միլիցիա էր, այստեղ չէր, թե չէ հենց Ջաղացներից էլ Մարոն ետ կտար. Տիգրանն այստեղ չէր, բայց նրա ծանր ներկայացուցիչը այստեղ էր՝ Ռոստոմը՝ որ Տիգրանից արյուն չուներ, բայց նայել ու դաժանությունը սովորել, անունը դրել էր *պրինցիպ*՝ սկզբունք, կանգնեց ու մորը չճանաչեց՝ թե մենք Ջաղացներում մարդ և ուրիշ տղամարդու ծոցում մայր չունենք. է՜, այստեղից Երևան ու Երևանից Սիբիր ծանր սիրո ճանապարհ էր անցել, եկավ ոտքերը տրորելով լաց եղավ, Ռոստոմի կարոտը միջնեկ թաթարից առավ (գրկում ու չոր կրծքին սեղմում էր - խեղդում էր, երեխային ուղղակի խեղդում էր), իր հին պատմությունը տեսավ Ծուշանի պատմության մեջ ու պաշտպանեց. ինքը Տիգրանից դեռ վախենում էր, այսինքն չկանգնեց ու պաշտպանեց՝ թե էսպես ու էսպես, այլ հիշեց ու հավատաց՝ որ Ծուշանը Տիգրանից ու ոչ մի բանից չպիտի վախենա, նրանը Տիգրանի անվախ արյունն է. մերուաղջիկ մեկ էլ տեսան որոշել են, որ մերն այդ ամառ գյուղում երեխաների վրա պահապան է մնում, իր բախտի ետևից Ծուշանը պահեստի առիթով գնում է սարը, այսինքն թե մթերքը տավարի ու ոչխարի ֆերմաներից պահեստ է ընդունում սարում. բայց ձյուղային առանձին պահեստապետները, մեծից փոքր ամբողջ ոչխարածն ու տավարածը կանգնեցին՝ թե քու ոտը սար չի տեսնելու, Ուխտատեղի տակից մորդ ճամփով էդպես էլ ե՜տ-դա՛ռձ, և մեր Մելրքանց խավարաչքի դագանակն ինչպես որ մեկնված էր, համարիր որ սարի ամբողջ ժողովուրդը մահակի նման այդպես

մեկնված էր Շուշանի ու Թեվըկի արանքում և եթե մոր հին ժամանակները լինեին՝ քարուփետ կանեին ու ֆերմայի երեսուն շունը քսի կտային, որպես թե Տիգրանի աղջիկ Շուշանը չենք, այլ կրծքին զանգ կախած բորոտ մուրացկան. և Շուշանը, որ չէր վախեցել և մոր սերն ու Ռոստոմի ծնունդը պաշտպանելիս ձիավոր-հրացանավոր Տիգրանի առաջ քած շան նման ծառս էր եղել, կյանքում առաջին ու վերջին անգամ վախեցավ. սարսափելին գերեզմանոցն ու խավար մութը չեն, կծան օձը չի - քո դեմ միաբանված ժողովուրդն է սարսափելի. ժողովրդի ատելության առաջ քեզ ատելի են դառնում քո երեխաներն էլ ու գյուղի վրա քո ձայնն էլ. ո՛չ լաց, ո՛չ բողոք - լուռ ետ եկավ տեսավ մոր հետ անամոթ ծրագրի են եղել, մորը հատկապես ատեց, ասաց ուրեմն մի ճիշտ բան եղել է՝ որ մորը քշել են Երևան ու այնտեղից էլ Սիբիր, մորն ասաց՝ «որ էսպես վառելիք էի լինելու ու ժողովուրդը որոշելու էր տունս վառի, ինձ ինչո՞ւ էիր աշխարհ բերում». ասում են սերն անմահ է ու սխալ են ասում - ժողովրդի լուռ ատելության առաջ, այսինքն երբ ժողովուրդը նայում ու քեզանից զզվում է, վախից սերն էլ է չորանում, մարդու իրավունքն ու լեզուն էլ. հոգնած ոտները տրորելով մայրը ճանապարհ ընկավ ու աստված չաներ Տիգրանը ճանապարհներին հանդիպեր, կենտրոնից գալիս լիներ ու հանկարծ դեմը ելներ - մռնչոցով խուխ կաներ ու գլխի վերևով կթքեր, չնայած նրա վրա քսան տարի էր իրավունք չուներ, նա ուրիշի կին էր, նրա վրա Տիգրանի իրավունքն այն էր, որ նա Տիգրանին ու այստեղի հին դաժան օրերը դեռ սիրում էր:

«Վե՛րջ,- ասաց,- *վայո՛*. մրոտ Նիկալը ձեր պապը չի, Փառոն ձեր տատը չի, նրանց տանը դուք ոչ մարդ, ոչ էլ ապրանք ունեք, *վայո*». Մանվելն իրենից նկար չէր թողել, քույրերն Ակոփի

նկարից Գործարանում երկու հատ մեծացրել, մեկը որպես Մանվելի նկար էին իրենց տան համար շրջանակի ու ապակու մեջ առել, մյուսը՝ Շուշանի տան. հին ժամանակներում Նիկալն Ակոփի անունով մի ծառ էր պատվաստել ու դրա խնձորը հիմա Ակոփի երեխաներինն էր, հետո՝ աշնան մատաղի համար այծը Մանվելի ու Ակոփի անունով մի սիրուն սպիտակ ուլ էր բերել, դրանք սպիտակ ուլ, նկար ու ծառ էին, դրանք Ակոփն ու մանավանդ անհիշատակ Մանվելը չէին, դրանց կողքին պիտի խեղճ-խեղճ հավաքվեին ու անօգնական կարոտը մոմի պես մլեին մինչև որ աստված մի դուռ բացեր, բայց «վե՛րջ,- ասաց,- *վայ*. դուք Ակոփից չեք, ես ձեր երեքին էլ զուտ ինձանից եմ բերել, ձեր հերը Տիգրանն է, դուք Մելիքյան եք». ինքը հատկապես նրանց տանը կախված նկարի մասին էր ասել, բայց երեխայի ատելություն է, չէ՞, այլանդակվել, ուլը ջրում խեղդել էին, նկարը պատից պոկել տարել հողել էին, խնձորի ծառը կացնով խազել ու արմատին լվացքաջուր էին տվել, ծառը հուլիսին հանկարծ դեղնեց ու խակ պտուղը թափեց. «վե՛րջ,- ասաց,- Թեվիկ տղա, ազատ ես, վե՛րջ, բայց որ ամբողջ ֆերման իմ առաջ բերդ կանգնեցրիր՝ էնպես աղջիկ ուզիր, որ իմ ձնշումին դիմանա». մորթելու պատրաստ մատաղի գառան պես կանգնած էր, այսինքն ինչպես որ մատաղի անհասկացող գառը աստվածածնի առաջ կանգնած է լինում՝ այդպես, Շուշանը ծիծաղեց ասաց՝ «այսինքն փրկություն ունես - էս երկրից քոչիր»:

Իր մեջ ինչ էր մտածել ինչ չէր մտածել՝ Մեծ աձարկուտում մի խոզի վրա կրակել էր, լուռ ենթադրություն կար՝ թե կրակել է, որպեսզի Շուշանի ու երեխաների համար սարից գիշերով բերի գա, խոզը շալակը տված ու ինքը ետևից ձիավոր՝ Ուցյունը

բերեց գցեց գյուղխորհուրդ, Ուցյունն ու գյուղխորհուրդն սկսեցին ամեն մեկը մի կողմից ականջները քաշել, ու գյուղխորհուրդն սկսեց չորացած ձեռով ճակատը ծեծել՝ իբր թե տնավարի խրատում ու կենտրոնի ու Տիգրանի ձեռը չի տալիս: Էս աստծու տակին, ինչի, կա՞ մի բան՝ որ մի անգամ արդեն եղած չլինի կամ մի անգամ լինի ու էլ չլինի, ասի չեմ լինում ու չլինի: Պահեստում նրանց տակ Ծուշանն աչքը պաղած կանգնել մնացել էր ու աչքի առաջ մի լուռ, պայծառ ու զարմանալի պատկեր էր՝ Սիմոնի մերկ թիկունքն ու բարձր ուսերը, ուսերից գոլորշի էր բարձրանում. Ղազախի թուրքերից որ զզված ու ոջլոտած եկել էր, Աղունն ու երեխեքը դռանը տաշտակ դրին, ջուր կրեցին ու լողացրին, ու արե՜վ-արև էր. ձորն անցավ Ծուշանը, մի աման ջուր էլ ինքը տարավ ու աչքի պոչով նայեց-չնայեց, ասաց հողեմ ձեր բախտավոր գլուխը, ամանն այգում թողեց ու ետ եկավ: Նրանց տակ պահեստում Ծուշանը մնաց-մնաց, ասաց՝ «ես էդ երեխին լողացնիլ տեմ, էդ երեխեն ուզում է Ծուշանն իրեն լողացնի», ու չկարողացավ՝ չհամբերեց, տաքացավ սևացավ ու իրեն վերև խփեց, «բա՛ց արեք,- ասաց,- էդ ի՞նչ կտտանքի եք, էդ ո՜ւմ երեխային եք տանջում. եթե խորհրդային հիմնարկ եք՝ իրավունք չունեք էս ժողովրդի առաջ փակ լինեք, բա՜ց արեք», ասաց. «կգնամ մի կացին կբերեմ կջարդեմ,- ասաց,- բա՛ց արեք». դեմուդրոշ Ռոստոմն այդտեղ կանգնած էր, արդեն հասած տղա էր, դարբնոցում դարբնի կռանահարն էր ու աստված նրա բռնցքի տակ մարդ չգցեր, բայց քանի որ խելքով դեռ երեխա էր ու կարծում էր ինքն ինչպես հասկանում կյանքն այդպես պիտի լինի՝ եղբորից ավելի կարմրած թշնամի էր, և Ծուշանն ասաց՝ «նախ մի դու էստեղից գնա». կարմրե՜ց, կանգնած տեղը ծանրացավ, Մուրադենց հին պատշգամբը կասեիր

հիմա տակին կպոկվի ու ներքև կընկնի. ասաց՝ «դե որ էդպես ծանրանում ու չես գնում, արի ոտով խփիր՝ էս դուռը տրաքի». և նրան «Վրացյանի ետնամոզի» ասող էլ կար՝ այսինքն Ուցյունի ծանր կոնքերի ետևից անշահ պտտվող, «Ուցյունի կռան» ու «Ուցյունի կատարածու» էլ, բայց նաև թաքուն հուսացող կար՝ թե անշահ չի, նրա կարծ մազը բռնում ու կռացնում է, և հիմա դա հավատալի էր. անխոս կասկածվում էր՝ թե Ուցյունն ու կռնատը հիմա իրենք դուրս կգան, նրան ներս կգցեն՝ թե գողին ու քվերդ անպատվողին քու ձեռքով ծեծիր. Շուշանը՝ «դու քու գլխին մեր չես ունեցել,- ասաց,- բայց քույր ես ունեցել, քույրդ ասում է էստեղից գնա՛»:

Կռնատը դուռը բացեց, կանգնեց ասաց՝ «մարդ ամոթ կունենա, Շուշան, քո տեղը՝ ես պահեստիս դուռը ներսից կփակեի ու դուրս չէի գա. բայց որ դուրս ես եկել՝ զանգիր կենտրոն, հորդ, թող գա էս անպետք փչացածին տանի», այսինքն թե Տիգրանի կրակը մեզ վրա թափել կտան:

Տնտեսությունը պատերազմից առաջ խոզի մեծ ֆերմա էր ունեցել, մեր խեղճ Նիկալ պապը Աճարկուտում խոզապահ էր եղել, ու ֆերման հիմա չկար, պահեստն այսինքն խոզի անասնապահական ֆերմայից՝ այդպիսի տեղից մուտք չուներ. խոզի ֆերմայի մեծուփոքրը որն է - խոզ է, տարվա հետ մեկ էլ տեսար հինգը հիսուն եղավ, մեկ էլ տեսար ժանտախտը խփեց հիսունը զրո արեց. պատերազմից առաջ օրիորդ Ուցյունը ծանր մահուդե ուսաբարձիկավոր բաճկոնի ու փեշի մեջ զուտ ինքն էր ու թևի տակ՝ դպրոցական չոր մատյանը, հիմա ուսուցչանոցից կրակոց էր լսում ու ձիավորվում էր - էդ ի՞նչ խոզ էր, ի՞նչ իրավունքով էր կրակոց լսում. որպես զուտ կասկած ու շառ, այսինքն ինչպես որ աչքերդ փակես ու խավարի մեջ ասես ճակատս

հիմա պատին է դիպչում, Շուշանն ասաց՝ «դպրոցի վարիչն ի՞նչ իրավունք ունի սարում գնա գող բռնի». գյուղխորհուրդն ասաց՝ «հաշմանդամ մարդ եմ, իմ փոխարեն եմ ուղարկել», ապա տնավարի, որպես բարոյական ու պատրոն, ասաց՝ «գետինը մտիր. օրենքով պահեստը պիտի հանձնեիր՝ որ գյուղամեջ չելնեիր ու ժողովուրդը երեսդ չտեսներ, բայց դու էդքանը չես հասկանում»:

Խոզը գյուղխորհրդի շեմքին գցած էր, ռուսերեն կոլխոզ խարանով Դոնբաս կարմիր հովատակը ներքևը կապած էր՝ ուր հիմա զոհված տղերքի հավերժական հուշարձանն է, արնակոլոլ, ամոթահար ու կեղտոտ երեխան երեկվա իր ուսուցչի առաջ որպես արդեն գող էր կանգնած, մեռած չէր, դեռ մեռած չէր, բայց մեռնելն ուրիշ ինչպե՞ս է լինում... և դեռ մանկամիտ գազան Ռոստոմը, և դեռ քննում էին՝ թե խոզը շալակը տան ու Դոնբաս հովատակի առաջը-գցած քշեն կենտրո՞ն, թե՞ մի երկու օր դպրոցի փայտանոցը գցեն ու ասեն կորիր, և իրենք մեր առաջ միշտ այդպես բարոյական, դասատու ու պատերազմի արդար մասնակից էին մնալու և մենք էլ իրենց առաջ՝ միշտ այդպես խոզի գող, սիրո գող ու ամոթահար կեղտոտ. նրանք իրենց վարքի, իրենց ներկայի, ապագայի ու անցյալի վրա իշխում էին, իսկ մեր վարքը ուրիշի ձիու պես մեր տակից փախչում էր. գողն ու փչացածը իրենք էին - մեջտեղը Շուշանին ու Թեվոյին էին կանգնեցրել. ինչպես որ մթան մեջ գլուխդ պատին առնի, ասացինք՝ «զանգում եմ Տիգրանին՝ թող գա էստեղ ինձ վրա ու ձեզ վրա՝ բոլորիս վրա թող գա դատավոր նստի»:

Իրենց մեջ որոշեցին ասացին թող ըռխի ու էս գյուղամիջից չքվի՝ որպես թե սև գայլի բերանը խոզի գոծի են գցում. բայց նրանք չգիտեին, որ ծնված օրից մեր մեջ սուրբ աստված կա և

մեր վարքը ինչքան էլ վայրիվերո ու հիմար լինի՝ մաքուրն ու ճշմարիտը դարձյալ մենք ենք. երեխան ամոթից խլացել էր, ասացինք «արա, դուրս արի»՝ տեղից չշարժվեց. խոզի վրայով շեք-արինք ներս մտանք ու ձեռից բռնած դուրս բերինք. տարանք պահեստի դռանը կանգնեցրինք, ուր հիմա զոհված տղերքի հավերժական հուշարձանն է, պահեստի դուռը փակեցինք ու զմռսեցինք, ետ դարձանք ասացինք «արի». հասարակության միջով, հազարումի կարծիքի միջով, սովոր գառան պես մեր ետևը-գցած, այսինքն ինչպես որ Գառնուկ ախպերը հեքիաթում իր Մանուշ քրոջ ետևից մղկտալով գնում է, բերինք մեր դռանը կանգնեցրինք, ասացինք՝ «ե՜ս, էլի ես - հանվիր, շորերդ հանիր, էդ ինչ օրի ես, քոռանա ձեր Ծուշանը». հարցնող-չհարցնող հանդիպողաց ասացինք՝ «գյուղխորհուրդը հանձնարարել է լողացնեմ, այսինքն իրենց թաքուն կեղտերը Ծուշանը մաքրի». փոքր պեպենոտը չէ՞ մեզ օգնական աղջկա տեղն էր ծնվել, փոքր պեպենոտն ու միջնեկ թաթարը իրար օգնելով ջուր կրեցին, դեմ-դիմաց ձեն տվինք Աղունից օձառ ուզեցինք, փոխարենը երեխայի հետ կես գլուխ պանիր ղրկեցինք, խոստացանք միայն երկու անգամ քսել, բայց ծիծաղեցինք ասացինք էնքան կքսենք՝ մինչև սպիտակ ուսերը Մուրենց ցեղական կեղտի տակից դուրս գան. շորերն առանձին պղնձի մեջ մոխրաջրով եփեցինք ու համարիր որ Թեվըկին էլ եփեցինք ու հազար կարծիք ու բամբասանք էլ՝ հետը. չարչին քաղաքից սև մաստակ, մանրատամ սանր ու գողացած բամբակի թել էր բերում, թելիկ ոսկի մազերն ափսոսացինք մկրատի տակ առնել, մանրատամ խիտ սանրով տասն անգամ սանրեցինք ու գլխին եփական մոխրաջուր ածինք. դետեի փոշին արդեն լույս էր ընկել ու մեր տանը լու չկար, Ակոփի շապիկ-փոխանը հագցրինք

ու տեղաշորում դրինք. արդուկը տաք կրակ լցրինք ու ամեն շորը ներսից ու դրսից յոթ անգամ տաք-տաք արդուկեցինք, կարերի մեջ իրենց հայրերի ու պապերի ժամանակներից խոզի ոջիլ էր շարվել, կարերն արդուկեցինք հատուկ խանձելով. ու որ արդուկի հետ ջուր են ցայում՝ համարիր որ ջուրը մեր արտասուքը եղավ - երգում ու լաց էինք լինում, երգում ու լաց էինք լինում. որ պանիրը տվել ու օձառը բերել էինք, այսինքն որ մասնակից էինք արել՝ իրենց դռներին Աղունը մեզ հավասար գուցե ժպտում ու լաց էր լինում, մտածում ու ժպտում էր, բայց Ծողակաթն ահա բամբասել էր, բամբասանքի վրա լույս-դառած ամուսինը (դեռ չէին քոչել ու քոչի միտքը հազվագյուտ հեռատեսների մտքում էր) պաշտպանել ասել էր՝ «էդ աղջիկը մի բան թե փոխեց՝ փոխեց, թե չէ նոր կարգերը Մուրու տան վրա զորու չեն». փոքր պեպենոտը մեր փեշը բռնած պոկ չէր գալիս ու մեր արտասուքը տակնիվեր զննում էր, ասում էր՝ «մամա, էս խի՞ ես լաց լինում, մամա լաց մի լինի», ասում էինք՝ «լաց չեմ լինում»:

Բոլորն անցան, ամբողջն անցավ. ու անընդհատ գարուն էր, մշտական ամառ էր, բայց անցավ. ծառի վրա տերև չկար՝ միայն շարմաղ խնձոր էր, գետինը լրիվ ծաղիկ էր. սիրո պատճառով Օսեփանց մեծ հալիվորի Արփին պահեստում պակասորդ էր տվել՝ դարպասեցիք դատել էին, հետո բանտից որ ազատվել էր՝ ամուսինը չէր ընդունել, եկավ ու հետը չորս տետրակ երգ բերեց, աշխարքում ինչքան կարոտ կալանավոր կա՝ բոլոր նրանց երգերն արտագրած բերել էր. եկավ անամուսին որբևայրիներիս երամը կլորեց դարձրեց կլոր հիսուն ու երգավորեց համարիր թե հազար երգով. ու տիրավոր խեղճերը որբևայրիներիս նախանձում էին, քանի որ լավ է արձակ որբևայրի լինել՝ քան տերը գլխին նստած ու վախը սրտում տիրավոր:

Ասաց.

- Ես ուրիշների նման ագահ չեմ՝ որ ասեմ էս էլ է իմը էս էլ, էս էլ եմ ես էս էլ. աչքներիդ առաջ հազար օրինակ կա, իրենց զոհի հիշատակին հավատարիմ մնացին-մնացին ու թոռնավորվելուց հետո վեր կացան մարդի գնացին. լավ թե վատ՝ ես իմն ապրել եմ ու իմ թոռների գլխին նանի եմ, այսինքն չեմ ասում թե չեմ ապրել ու Ստավրապոլ կամ Տաշքենդ եմ ուզում. հերթը ջահելությանն է:

Մեծ պեպենոտն իմիջիայլոց ասաց, այսինքն երևում էր՝ որ ուրիշ ասելիք ունի, լեզվի տակ պահում է, առանց մորը նայելու ի միջի այլոց ասաց.

- Քե՞զ ինչ է եղել, ուզենաս դու էլ կզարդարվես:

Ձեռները գուլպայի հետ գոգին՝ տխուր մնաց-մնաց ու ասաց.

- Վերան տղա, լավ է որ դաժան ես, բայց շատ ես դաժան:

Մտքում ուրախացավ՝ որ դաժան է, թուրքի փաշայի պես կուրծքը դուրս գցեց, գլուխը ձգեց ասաց.

- Սրա կնկա մահով կաթդ վարարել էր, երեխեքի վրա ուզում էիր մեր գնաս:

Քար կտրեց, սևացավ, կարմրեց ու ձռները ծեծեց: Վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ,- ասաց,- վո՛ւյ. քու արյունն են, ուզում էի երեխեքը որբություն չքաշեն, բա հիմա լավ է՞, որ էն կխտարը չգիտենք ինչ գիշերօթիկի դռներին է, մյուսն էլ Հովըտի ճամփին:

Ցրում էր, խոսքն անընդհատ ցրում էր, ասաց.

- Հովըտի ճամփին չի, տանը վեր-ընկած աղվես է խեղդում:

Տեսան վերջը իր խոսքն է լինելու՝ էլ չպատասխանեցին. Ծուշանը թախտին ծալապատիկ, սյունը գրկած հարսը շալն ուսերին, փոքր պեպենոտը տրակտորի անիվներին նստած,

Թեվիկը գերու նման առջևը կանգնած՝ սպասեցին տեսնեն ինչ է ասում. բայց նա ասելիքը դարձյալ չասաց, չասաց այսքան մարդու լռեցրել եմ՝ իմ խոսքին են սպասում - ձիպոտը խփեց սապոգի ծտքին, հրահանգեց.

- Գնացինք:

Սյունը գրկել ու երեսը սյունին դեմ էր արել, մտքով արդեն իրենց Ռուսաստաններում էր, հարսը սյունը թողեց, ինչպես որ իրենց ռուսներն են հեռուստացույցի մեջ պարում՝ ոտը պինդ գետնին խփեց ու բռունցքները կոնքերին կանթեց. երկու տարի նրան և Ծուշա՛նը չէր ընդունել ու նա, այն ժամանակ բոլորովին անլեզու ու երեխայով, Հովըտի ֆերմաներում կթվորություն էր արել, և հետո երեխային Ծուշանն ընդունել ու նրան դժվա՛ր էր ընդունել, հետո էլ ֆերմայական ազատությունից ու աշխատանքի՛ց էին զրկել... բայց ոչ մի անգամ նա այդպես իր խոսքին չէր եղել - ուրիշի խոսքի առաջ միշտ ուշադիր ու միշտ օգնության կարիքի մեջ. կռները կանթեց, ոտն առաջ դրեց ասաց.

- Դու Մարիայի պատրոն չես. տարին մի անկամ կու մոր դուռ գալիս ու կու խոսկ բերում ես, դու իմ գլխի խազեին չես:

Ուսի վրայով խռխռաց մորն ասաց.

- Տես ու քու ապագայից վախեցիր, էգուց սա է իբր քեզ պահելու:

Բայց Ծուշանի համար միշտ էլ այսօրն ու այսժամն էին եղել, հարսի վարքի մեջ չգիտես ինչ լավ բան տեսավ՝ խնդրեց ասավ.

- Թող հետներդ գա, էլի, Վերան ջան. դու էս տան պատրոնն էլ ես, էս գեղի ու ցեղի մեծն էլ ես, ինքը սխալ է խոսում, բայց թող գա: Անոշ,- ասաց,- էսքան տարի էստեղ է՝ մի ուրախություն չի տեսել:

Ասաց... գեշ նայեց ասաց.

- Միգուցե տեսել է, ասվիլ չի, հը՞, Մաշա: Հետո՝ ոչ հարսին կարմրելու, ոչ էլ փոքր պեպենոտին ու մյուսներին կասկածավորվելու ու կարծիքների մեջ տապակվելու ժամանակ տվեց - շեկ ունքը ձգեց, ուսի վրայով «միջոց չունի» խռխռաց: Ցասաց թե այս ընտանիքի ճակատագրի վերաբերյալ կարևոր կարգադրություն եմ անում, խոսքս այնպես ասեմ՝ որ վիճակը բոլորի առաջ պարզ լինի - խռխռաց՝ այսինքն թե իրենք թող խելք ունենան ու իմ խոսքից իրենց համար վիճակ հանեն: Շուշանն ասաց միջոցն ինքը տալիս է, բայց նա խոսքն այնպես շուռ տվեց, որ միջոցն արդեն Մաշայի համար չէր՝ տրակտորի համար էր. թե՝ նոր տրակտոր ստանալը փողով է, համապատասխան մի մարդու պիտի տրվի ու դռանը նոր տրակտոր կանգնեցվի: Նայեցին փոքր պեպենոտին, նայեցին իրար երեսի, ասացին համապատասխան մարդը կամ ինքը մեծ պեպենոտն է, կամ իր ձեռքով է տրվելու Հովիտ. եթե զուտ ինքն է, այսինքն եթե ինքը մոր տնից փող է հանելու դնի իր գրպանում ու համապատասխան մարդուց առանց փողի զուտ խոսքով նոր տրակտոր է պոկելու՝ ուրեմն ավելի լավ, նշանակում է Ասորենց տնից մեկն արդեն կա՝ ում խոսքը փողի ծանր կշիռ ունի, իսկ եթե ինքը չի ու փողն իսկապես մեկնելու է ուրիշի՝ նշանակում է մերոնցից մեկը պինդ կանգնած է աշխարհը կառավարողների մեջ: Շուշանը ձեռքի գործը թողեց, թախտից իջավ, ասաց.

- Տալիս եմ, անոշ, էդ քու ասածն էլ եմ տալիս ու Ստավրապոլի փողն էլ եմ տալիս:- Տուն մտավ, դուրս եկավ ասաց.- Հարյուր ութանասուն ռուբլի, անոշ, օգոստոսիս ու սեպտեմբերիս փողերը:- Տիգրանը գյուղից ու էս երկրից նրա մորը քշել էր ու նրա խելագար լացուողբի վրա մի կարմիր 30-նոց տվեց՝ որ հետո շփոթված փնտրում էր, բայց Շուշանը կորցրել էր. աղջիկ

ժամանակ նրա տեսած փողն էդ էր, պատերազմով, դե պատերազմ էր, աշխատանքը փողով չէր՝ տականք պանրով էր, հետո էլ՝ անշահ երգով. հիմա է, որ դարավոր չոբանը փափախը գետնով է տալիս՝ թե շան ...ը սրա միջին, որ գլխիս է եղել ու չի հասկացել՝ որ կթվորի աշխատավարձը իմ թոշակից շատ է լինելու:- Հաշվում ու տալիս եմ, լավը ջան, հարյուր ու ութսունհինգ ռուբլի, ասաց:

Մեջքն ինչպես այդ ընտանիքին էր արել՝ այդպես էլ կանգնած էր, չասաց քիչ է կամ բավական է, ուսի վրայով ձիու նման խռխռաց՝ հը՞ը: Չհասկացան ինչ ասաց, ոտը նրա ետևից ինչպես փոխել էր՝ նրանից այդպես կախված էլ Թեվիկը կանգնած էր, աչքերը ճպճպացրեց ասաց.

- Էնիքը, ես կտամ, որ իմ գործով է գալիս՝ ծախսն ինձ է հասնում, հիմիկ գնալու եմ էնիքը՝ Հովըտի բանկ փողի եմ գնալու:

Ասաց... էնպես բան ասաց, որ Թեվիկը մեռավ ու էլ հավիտյան չխոսեց, ասավ.

- Դու որ խոսում ես՝ քեզ հիշելով խոսիր. քեզ Մաշա վստահող չկա:

Ծուշանի բերանը կպավ, փոքր պեպենոտը հեռու էր նստած՝ երևի չլսեց, բայց հասկացավ, որ մորն ու Թեվըկին նա դեռ ճնշում է, ելավ կանգնեց, ասաց.

- Ես քեզանից տրակտոր չեմ ուզում:

Կամ նրա ռըսի վերաբերյալ որևէ վատ բան կար՝ այսինքն անունը ժողովրդի բերանն ընկնելուց փրկել էր, կամ նրա տրակտորն ու իր անտառապետությունը լինող բաներ էին, մեծ պեպենոտի հովանավոր թողտվությամբ փոքր պեպենոտը անտառից կարող էր փայտ քաշել ու ներքևների վրա ծախել, մի խոսքով

եղբոր վրա արդեն վաստակ ուներ, տնավարի արհամարհեց, ասաց.

- Ը՛ը, Փառոն մեզանից տրակտոր չի ուզում:

Իր բոլոր խոսքերի պես՝ դա վերջին խոսք էր, մեղավոր բոլորից պատասխան չէր լինելու, բայց Ծուշանը մոռացավ՝ որ ինքը լռեցված է.

- Ուզում է,- ասաց,- քու փոքրն է՝ ուզում է, ինքը չի ուզում՝ ես եմ ուզում, առձեռն տալիս ու ուզում եմ:

- Քո ուզելով չի,- ասաց,- իրենք պիտի ուզեն:

Թե իրենց մեջ ինչ հակառակություն ու խոսքուզրույց կար՝ իրենց մեջ էլ պիտի մնար. հարևանի առաջ արդեն ուրիշ երես ու լեզու էր պետք, քունքի մազը Ծուշանն աղջկավարի շտկեց՝ այսինքն ականջի ետևն անցըրեց, պատշգամբից դուրս եկավ այգի, Սիմոնի տանը դեմ-դիմաց աչքառ ելավ, ժպտաց, սիրունացավ ու գնաց մտավ դարձյալ հին անցյալի մեջ.

- Աղո՜ւն, կանչեց, ախչի Աղո՜ւն: Հողեմ էդ ապահով գլուխդ, կանչեց, որ էդ ժողկոմ մարդիդ ըռխել մտել ես ապահով տունդ ու դուրս չես գալիս. թե՞ կարծում ես էդ մարդը Հիտլերից մենակ քեզ համար է փրկվել:

Տեր աստված, էս Ծմակուտի ու էս ամբողջ երկրի աշնան մաքուր երկինք, էս ի՞նչ արիր. այդ կանչերը, այդ ուրախ կռիվները, այդ անհիմն իրավաբանությունը բարձրանո՜ւմ, տաք ամառվա մեջ կախվում էր այգիների, մեղվանոցների, աստվածակերպ ծերունիների, կարոտ հարսների վրա. Ծողակաթի ամուսինը իր ու Տիգրանի ոխերիմ հակառակությունը անտեսել, այգում կանգնած էր եղել, ասել էր՝ «աղջիկ չի, թատրոն է, թատրոն, մի մե՜ծ թատրոն է». բոլորը գնացին, բոլորը վերադարձան, բոլորը քաշվեցին ահի ու ծերության խուլ ավերակ:

Լաց եղավ.

- Ախչի՜ի,- կանչեց,- սիրտս հիմա կպատռի, էլ հարևանություն չունեմ, մենակ դու ես, պարտավոր ես, դուրս արի, շիտակ՝ բան եմ խնդրում:

Չխանգարեց, վեհանձնաբար թույլ տվեց մայրն ու Աղունը խոսեն. ատամը չէր քչփորում, բայց այնպես էր, կարծես կուշտ կերել ու ատամները քչփորելով նայում էր:

- Ախչի՜,- ասաց,- գաթայի հոտը վեր ես արել, էդ ո՞ւմ ես սպասում, էդ ի՞նչ ուրախության ես:

Փռան տաքությունից հետո գլուխը կամ ցավում էր, կամ հասկացել էր՝ որ Ծուշանի խնդրանքը այդքան հասարակ չի, Աղունը կարճ ասաց Արմենը գալու է, երևի ուզեց որդու հեղինակավոր անունով խնդրանքը ճնշել:

- Վո՜ւյ, պատասխանեց, ծիծ եմ տվել, է, ծիծ եմ տվել, նրա ոտանավորը քեզանից չի, օրորոցի վրա կռացել ու ծիծ եմ տվել - ե՜ս:

Չերևաց թե որտեղ Սիմոնը ծիծաղեց, ասաց.

- Էդ ե՞րբ, ախչի, որ ես չեմ տեսել:

- Ձերն էդ է՝ ուտեք ու ուրանաք. էն որ մորդ ահից էդ կողքիդ ապահովի կաթը կտրել էր, էն որ էդ կողքիդ ապահով խանումը մորիցդ փախել էր Վանքեր. Արմենիդ խանձարուրած Մուրնանց տուն բերեցիր ու սրտնեղանքից ճաքում էիր:

Ծիծաղեց ասաց.

- Ճետո՝ կերա՞վ:

Օսեփանց տղերքը չէ՞ մնում-մնում մի անպատասխանելի խոսք էին ասում, մի թեթև կասկածեց, հարցրեց.

- Էդ ինչի՞ չէր ուտելու:

Կախ-տված մսի մոտ դանակը ձեռին կանգնած էր, փոքր պե-

պենոտի Պաշան ու Դաշան, երևի պապի ու խաղաղության կարոտ էին քաշում՝ պապի, խաղաղության ու համերաշխ ապահով ընտանիքի, կողքին շարմաղ ու սիրուն կանգնած էին, ծիծաղելով ասաց.

- Եսի՞մ, քաղաքացի տղա է, կզզվեր կասեր սև է, ուտում չեմ:

Լավ պրծանք:

- Քիչ խոսիր, քի՜չ,- կանչեց,- ձեռաց փող է պետք, տանն ինչքան ունեք՝ հավաքեցեք դեսը բերեք:

Այնտեղ լռեցին. մարդուկնիկ իրենց մեջ խորհրդակցում էին և նրանց համերաշխ լեզվից Պաշան ու Դաշան հազիվ թե որևէ բան էին հասկանում, բայց պատասխանը սրտաբաց էր, ասացին ունեն ու կարող են, և տրակտորի հարցը, ինչպես որ մեծ պեպենոտն էր այդտեղ ծանր կանգնած, այդպես իրականացավ. բայց հպարտ, աղքատ ու վիրավոր փոքր պեպենոտը այդտեղ կանգնեց ասաց նեղություն մի քաշեք, հարկավոր չի: Կարծեցին վիրավորված հպարտություն է անում, բայց մեծ ախպերը ուսի վրայով մորն ասաց.

- Մի հարցրո՛ւ տես ինչու չի ուզում:

Ասաց.

- Իրավունք ունի. մեծ ախպերն ես ու քու փոքրի ճակատագրով դժվար ես հետաքրքրվում:

- Ինչքան պետք է հետաքրքրվում ենք, բայց դու իրենց հարցրու՝ թե էդ ինչու չեն ուզում,- ասաց,- էգուց բերում դռանը կանգնեցնում ենք:

- Ինձ հարկավոր չի, չեմ ուզում:

Ուսի վրայով մորն ասաց.

- Աքցան գցիր ու քաշիր՝ կկարենա՞ս պատճառը բերանից պոկել:

Ինչպես որ միշտ էր եղել՝ մարդուկնիկ իրար թիկունքի կանգնեցին. ամբողջը ըստ երևույթին հենց մենակ ինքն էր - ռուսն ասաց.

- Ուզում չի, մեզ խարկավոր չի:

Բեկերն ու իշխաններն աստծուց չեն լինում. բոլորիս նման մերկ ու երեխա ծնվում, հետո իրենցից բեկ ու իշխան են կռում, արդեն լավ կուռուկոփված բեկ էր, ուսի վրայով մորն ասաց.

- Պատճա՜ռը հարցրու: Հարցրու իմացիր ու էդ փողերդ նեղ օրվա պահիր, դրանց տան վարձերը դու ես տալու:

Ռուսն ռուսերեն մի երկար բան ասավ, պատճառի բացատրությո՞ւն էր թե հիմար կռիվ, ասաց ու կացինը կարծես ձեռին սպասեց: Ասացին մեծ պեպենոտը մոր համար հիմա կթարգմանի, բայց սա Մաշայի՛ն ասաց: Ասաց.

- Մենք էդ վաղուց ենք տեսնում, Մարիա Միխայլովնա, տեսնում ու ասում ենք էս ինչու են ձգձգում:

- Բա չէ,- ասաց,- քու դուռին էստեղ ցառա կենանք:

Ասաց.

- Փառք աստծուն, մինչև հիմա մի անգամ ոչ իմ տունն ես կռացել ավլել, ոչ էլ կնիկս հիվանդացել է՝ որ նրա առաջ ջրի գնայիր. մենք ծառա չունենք, ինքներս ենք էս ժողովրդի ծառան:

Իրենք երեքն էլ լավ գիտեին ինչ են խոսում, բայց մորը մի կարգին բացատրություն չէին տալիս,- ասաց.

- Էդ ի՞նչ տան վարձեր են:

Մեծ պեպենոտն ասաց.

- Ինչի՞, ես ով եմ՝ որ իրենց պատասխանը ես տամ. որոշումն իրենցն է՝ իրենք էլ թող ասեն. բայց իմացիր,- ասաց,- տղեդ կնկա փեշի տակն է մտել ու հատուկ «ավրորա» է քաշում՝ որ առիթ ունենա քոչի:

Փոքր պեպենոտը բերանը ջուր առավ ու գլուխը կախեց. նրա խոսքն ու իրավունքը Մարիան ձեռից վաղուց էր առել ու չամաչեց՝ իր որոշումը ինքն էլ թարգմանեց ու շատ լավ էլ թարգմանեց, ու շատ էլ լավ երևաց՝ որ հեղափոխությունը նրանից է սկսվել.

- Նոր տրակտոր դռան կանգնի՝ որ իմ ոտ կապվի ձեր անուրախ կյանքի՞ն. փոքր պեպենոտ տրակտոր ուզում չի, իմ Պաշաս ու Դաշաս երաժշտական տբրոց տեն գնալ:

Է՜, Ծմակուտը քանդվում էր ու հույս չկար: Ռսի եղածն ինչ էր՝ ոչինչ, բայց հին զնգուն գյուղը նրա մտադրությունից էլ էր փլվում, այսինքն հույս չկար՝ թե ապագայում դարձյալ դպրոց, զանգ, հարսանիք, կռիվ ու գյուղխորհուրդ կլինեն - ամայություն, և բոլորն էլ մեղավոր էին ու իրենց մեղավորությունը նույնիսկ ռուսն էր զգում, բայց դե էդ էր, ասաց.

- Բա չէ՜... բա չէ,- ասաց,- գրասենյակի դուռ իրենք գործկոմի պես շարվեն ու ամբողջ օր մեկ էսպես նայեն, մեկ էսպես - Մաշան տբրոցի կեղտ սրպի, և ցույց տվեց՝ թե տեղական կիսաջոջերն ինչպես են կողք-կողքի շարված նայում գյուղամուտի ճանապարհին՝ իբր թե կարևոր մուտքի են սպասում, ու Մելքանց բլրալանջին՝ այս ամայի թաղից իբր թե որևէ մարդ կիջնի գյուղամեջ: Նայեցին, մեծ պեպենոտը նույնիսկ ժպտաց, բայց դա, այսինքն որ թատրոն էր ցույց տալիս, արդեն անտեղի էր, քանի որ հենց իրենց խոսքն է ասում մանանեխը սեղանին ճաշի հետ ու, ինչպես որ բանակում էր, ճաշից էլ առաջ պիտի դրվի:

Սիմոնենց ասացին նրանց հին հարևանությունը փորձելու համար էին պարտք ուզում, շնորհակալ են պատրաստակամության համար էլ, անցյալ դրացիության համար էլ ու որ վաղ-

վա օրը այս շեն թաղում մնալու ենք Ծուշանը, Աղունը, Սիմոնը՝ երեք մենակ կկու... հետո մեծ պեպենոտը գրեմաստին խփեց սապոգի ծտքին, ասաց.

- Գնացինք: Բայց,- ասաց,- խելքդ գլխիդ պահիր, երեք երեխային թողնելու են վրադ՝ որ իրենք ազատ չքվեն:

Թեվըկին ետևը-գցած, շներն էլ Թեվըկի ետևից, տարավ, գնացին - Նիկալ պապի հին տան մոտ, որ ոչուփուչ տաշքենդցու տունն էր լինելու, կանգ առավ: Այսինքն Թեվըկին ինքը չէր ասում դու մեր ետևից արի կամ արգելում ենք՝ մի արի - ինքն ուղղակի ինչ անում էր՝ Թեվիկն էլ նույնը, բայց ինքը մտածում էր, Թեվըկին մտածել չէր թողնում: Ոչ թե, այսինքն, արգելել ասել էր դու իմ մոտ մտածելու իրավունք չունես, այլ ուղղակի այդպես էր, նրա ներկայությամբ Թեվիկը ճնշվում ու միտքը սառչում էր: Ինքը կանգ առավ, նայեց, ավերակի ճակատագրի մասին մտքում չգիտենք ինչ որոշեց՝ «հըմ» խռռաց: Քանդված տեղով ներս մտավ, ետևից ուզեց Թեվիկն էլ մտնի, բայց նա մտել էր միզելու - որձաձիու ուժեղ չռռոցի միջից խռխռաց.

- Արա, էս ո՞ւմ նկարն է եղել:

Կոճկվելով դուրս եկավ, ետ նայեց ասաց.

- Դեռ ինքն է, մեր քեռացու Ռոստոմին պիտի խնդրվի, մի լավ կաղնու լիցենզիա առնվի ու ներսից մի չորս տեղ սյուն տրվի: Ափսոս է,- ասաց,- մի լավ ավտո զուտ կաղնի կա, պատը փախչելու է փչացնի:

Տան շուրջը մի անգամ պտտվեց՝ Թեվիկն ու շները ետևից, եկավ կանգ առավ նայեց ու մի անգամ էլ պտտվեց: Չէր ասում միտքն ինչ է, պտտվում ու նայում էր. կենտրոնից ղեկավարության եկած ժամանակ այստեղ Ծմակուտ կամ բանակային

ծառայության տեղը երևի տեսել ու հավանել էր, որ գեներալ-ները ժամանում ու լուռ ենթականերին ետևները-գցած պտտվում են, անգոհ են մնում, լուռ դիտողություն անում՝ և ենթակաները հասկանում են: Ձեռը դրեց պատշգամբի սյունին ու վերև նայեց:- Քարը,- ասաց: Վերևը քար չկար, վերևը ի՞նչ քար էր լինելու - սյուներն ու էնիքը կաղնի քիվն էր, ծիծեռնակի հին բները:- Մուրի բիձեն հին Մուրադենց հետ ոտ է մեկնել,- ասաց: Բուխարու կամարի մասին էր ասում, Մամռուտ խոտհարքի կարմիր հան-քերից էին Մուրադենց հիմնավոր տների ամբողջ անկյունաքարն ու բուխարին էլ, մեր կրակարանի այս մի կենտ կամարն էլ՝ կամարի կեսը, հետո ջորին քարի տակ տրաքել է, քարն այդպես էլ մնացել է հանքում: Ետ քաշվեց այգի մտավ ու, ենթականերով շրջապատված, տանիքի կերամիտը հաշվեց, երևում էր՝ որ հաշվում է: Թեվըկին ասաց.- Վաթսո՞ւն էր,- բայց Թեվիկն ինքը չէր հաշվել, ոչ էլ նա էր Թեվըկին ասել վաթսուն կամ յոթանասունը հիշիր: Լայնակի շարքն ու վերելքի շարքը բազ-մապատկեց, մյուս երեսի նույնքանը գումարեց, մոտավոր փչա-ցածը հաշվից հանեց, հաշվեց վերջացրեց, ասաց.- Փտած է, սևացել անցել է, ժամանակը հիմա սպիտակ շիֆերինն է. խո-սում հարյուր մանեթ փող ես տալիս՝ Պիպոսի տղերքը բերում գիշերը դռանդ դարսում են:

Սպիտակ, շիտակ բարդու վրա կարծես ուրախացավ, թե՞ վեր պարզելու հետ արևը խաղաց պեպենոտ երեսին, բայց չկարողացավ մի բարի բան մտածել կամ նրա բարին այդ էր,- ասաց.

- Առանց հատուկ լիցենզիայի պիտի կտրվի, այսինքն տնամերձի ծառը առանց լիցենզիայի կտրելն իրավունք է:

Նիկալ պապի՝ այսինքն փախստական տաշքենդցու տան

հաշիվները այդպես վերջացրեց, ասաց.

- Գյուղամե՞ջ իջնենք, թե՞ տանդ գործ կունենաս:

Համարեց, որ Թեվիկը մարդ է ու իր տանը ինքնուրույն գործեր կունենա - սարի հին ճանապարհը անցան, այսինքն ճանապարհ չկար՝ հեղեղը կերել խանդակ էր գցել, մտան փոսն ու դուրս եկան Թեվըկի չափարի մոտ: Տան արահետն անտեսեց, որտեղով որ, եթե այդ տանը կին ու ընտանիք, այդ դռանը ծուխ ու փռած լվացք լինեին՝ պիտի գնային աղբյուրը գային, այդ հին արահետն ահա անտեսեց, ղեկավար իր հասակը լատանի տակով անցընելու չկռացրեց, չափարի միակ լատանը փտած աչայի հետ ծնկով խորտակեց ու թշնամու գոմեշի պես մտավ տնամերձ: Ավերակն ավիրելը հանցանք չի, եթե հիմնավոր չի՝ թող եղածն էլ չլինի, բայց այդ ինչպե՞ս է, որ Մելըքանք, Օսեփանք ու բոլորը և քաղաքո՛ւմ են պինդ, և նրանց չափարն այստե՛ղ է անանցանելի, իսկ մենք բոլորից այսպես արհամարհվում ենք: Եղբոր տղա ու համարիր եղբայր էր և չափարն էլ իրոք չափար չէր, բայց նրա այդ անտեսող արհամարհանքը Թեվըկի սրտին ծանր եկավ, կարծես հատկապես էր խորտակում ու հատուկ թշնամանքով հասկացնում՝ թե դու մեր առաջ միևնույն է մարդ չես: Նույնիսկ կողմնակի նայողին՝ մեր Ջանդառի ու Օհանի մորը, նրա արարքը թշնամական ու իրենք երկուսն էլ այդ տան ու այգու հանդեպ օտար անհոգի երևացին. վաղուց ուրեմն տեսած ու նայելիս էր եղել, բայց չէր ճանաչել ով են, չափարը խորտակվելու հետ իրենց ավերակ դռնից (մի ավերակ էլ Ջանդառի տունն էր, ազնիվ խոսք) կանչեց ասաց.

- Ա՛ մարդիկ, էդ ո՞վ եք, էդ ի՞նչ օտար եք՝ որ իմ Թեվանի դռները քանդում եք. տերը տանը չի՝ ասում եք անտե՞ր է:

Սիրուն Թեվըկին իր Թեվիկը համարեց, ազնիվ խոսք, ասաց

«իմ Թեվանի», այսինքն ինչպես որ իր Ջանդառը՝ այնպես էլ Սիրունը, էն աստվածը, քանի որ այս աշխարհում պառավը շատ բան գուցե արդեն չէր ճանաչում, կորուստների ու հարազատության կեսին արդեն մոռացել էր, բայց մի բան ավարտված վերջնական էր՝ որ սարի ամբողջ հոգսը երկու լծկանի պես քաշում են իր երկու Թեվիկը, և Օհանի պահապան շուքն այլևս նրանց գլխին չի: Թեվըկի բուկը լցվեց, ասաց.

- Մենք ենք, էնիքը՝ մենք, նանի, Թեվիկն եմ:

Ձայնից ճանաչեց, «հա» արեց, ասաց.

- Բա էդ խի՞ ես շուտ-շուտ սարից փախչում, Թեվիկ ջան, էլ Օհանը չկա՝ ընկերոջդ խի՞ ես մենակ թողնում, չէ՞ ախպերը հիմիկ մենակ դու ես մնացել:

Ձայնն էլ, հին այգին ու տունն էլ ու ինքը պառավն էլ իրարից չէին ջոկվում, չէր երևում պառավը որտեղ է կանգնած կամ նստած, բայց կար, խոսում էր ու նույնն էր ասում: Ի՞նչ խոսեր, ի՞նչ պատասխաներ, ասեր հիմա ե՞տ եմ գնում, ասեր Տաշքենդ վռազ գո՞րծ կա: Մեծ պեպենոտը խռխռաց.

- Սերգոյի պառավն, արա, դեռ ուրեմն կա՞: Պառավահոտը բռնել է, չեն վերջանում՝ էս գյուղը մի մաքրվի:- Ու էնքան էլ բարձր էր խոսում, թաղի առաջ ասես կանգներ միզեր ու նայողին մարդատեղ չդներ:

Երևաց՝ խախլուշկայի խոսքը սրտին լավ դիպել էր, սապոգի քթով գետնին խփեց, ասաց.

- Չեն ուզում Վերանի դռանը էստեղ ծառա մնան, Գործարանում գնալու պետ են դառնալու: Չգիտեն, որ ավելը ձեռքներն են տալու ու հավաքարարության տակ կոխեն:

Սապոգի քթի հետ մարգից կարտոլ դուրս թռավ: Կտրուկ նայեց Թեվըկին ու ոտը նորից խփեց, ու դարձյալ կարտոլ դուրս

թռավ: Ղեկավար հայացքը այգու վրա պտտեց, արհամարհանքով նայեց, ասաց.

- Գիտե՞ս, ընկեր չոբան, որ կառավարական հատուկ օրենքն ասում է տնամերձ հողը քոնն է, բայց իրավունք չունի անարդյունք մնա: Էս ի՞նչ է,- ասաց,- հոկտեմբերը կես է լինում՝ կարտոլդ դեռ հանած չի:

Չէր էլ հիշում գարնանը ցանե՞լ էր թե անցյալ ցանքից էին հատուկենտ թփեր մնացել: Ամառվա արձակուրդին գիշերօթիկի աղջիկը մի թախտի չափ տեղ մաքրել, ձեռագործի նման՝ այսինքն ինչպես որ հնում քույրերն էին սիրուն ասեղնագործում, մեկումեջ ռեհան, ծաղիկ ու սամիթ էր ցանել ու շուրջը մի երկու սիմինդ ու արևածաղիկ տնկել, ամբողջ այգում միակ մարդկային տեղը այդ մի թախտի չափ տեղն էր, կարող էիր ասել այս տանն ուրեմն մարդկային շունչ է եղել, չնայած բերել մի երկու անգամ ջրել ու էլ չէր ջրել, հոր տան հոգսերի առաջ հուսահատվել ու թիլիկ ձեռները վար էր բերել: Դա Ասորենց աղջիկների ցեղական հատկությունն է, լուռ մեծանում աղջիկ են դառնում ու աղջիկ դառնալուց հետո հորենական տանը մի օր էլ չեն մնում ու գնալուց հետո չգիտենք հիշում են թե չէ, բայց թեկուզ մի կենտ անգամ հորանց չեն գալիս - իրենց մաքրությունն ու մառանավոր ապահովությունը ուրիշի տանն ստեղծում ու այդպես էլ մնում են: Տղային անցած անգամ խնդրել էր լոբու սարին հանի ծածկի տակ դարսի ու կարտոլը դպրոցի հետ, այսինքն որ դասերին շատ չխանգարի, եղածը հանի. սարին հանել ու ծիլն առանց մաքրելու հենց այդտեղ էլ կիտել էր, իսկ կարտոլին բոլորովին ձեռք չէր տվել, բահն ու դույլը բերել բանջարանոցում թողել էր՝ այդ էր, իրար կողքի ընկած էին: Բա ձմեռը դու ի՞նչ ես ուտելու, այ որդի, էնիքը՝ քու ձմեռվա մասին

դու ի՞նչ ես մտածում. թե՞ կարծում ես հին ժամանակներն են՝ որ ուրիշի կրակի մոտ աչքներս հացին դուդուկ ածենք:

Մեծ պեպենոտը շատ ուժեղ ծլթծլթացրեց.

- Ծըլթ-ծըլթ-ծըլթ,- ասաց:- Էս գյուղում խելքը գլխին ղեկավարություն լիներ՝ արձանագրություն կկազմեր ու հողը ձեռիցդ կառներ. այ էն է քու ճամփեն՝ կասեր, էնպես պիտի գնաս ու էնպես էլ գաս, դու էս հողին նայելու իրավունք չունես:

Ասաց.

- Էնիքը, դե ես էլ էդ եմ ասում, էլի. ես մենակ տղա՝ սարի՞ն հասցնեմ թե գյուղին, մնացել եմ մոլորված: Խոզ եք մորթում՝ նոր տարի եք անում,- ասաց,- ոտը բռնող մի օգնական չունեցա, դուրս պրծավ դանակը փորում փախավ, մարդու սիրտ էր ճաքում:

Միտքը բարձր բաների էր - չլսեց, չլսելու տվեց. բաճկոնը քեռիների նման ուսերին՝ ժողովրդի առաջ (դեմները մի հոգի էլ լինի՝ նրանց համար արդեն հասարակություն է) ժողովրդի առաջ քեռիների նման հանդիսավոր ու դանդաղ (գոմերում մենակ անտեր կնիկ բռնելիս միայն պինդ ձեռքները արագ գցում ու վռազ ճկռացնում են) հայացքը գործկոմի նման հածեց մեր խեղճ թաղի վրա ու դարձյալ ծլթծլթացրեց՝ ծըլթ-ծըլթ-ծըլթ: Ի՞նչ էր եղել, ինչո՞ւ էր այդպես պետական ու մի տեսակ. գոմերի վռազ դեպքերը չհաշված, նրանք միշտ են պետական ու հանդիսավոր, բայց այսօր ինչո՞ւ էր հատկապես այդքան պետական: Վերջում հասկացվեց, որ պոչը ղեկավարությունից խուզելուց հետո քեռիների հետ հիմա շատ ուժեղ հակառակության մեջ է, գյուղը շրջագայության է ելել՝ որպեսզի հատկապես չհավանի և տեղի ղեկավարության առաջ հարցում դնի - «ժողովրդի միտքը քոչի է, էս գյուղը քանդվում է, ղեկավարը դուք

եք, ի՞նչ եք մտածում», հարցը դնի առաջներն ու ինքը մի կողմ քաշվի, այսինքն թե ժողովրդի վիճակը վատ է՝ քանի որ ղեկավարը ես չեմ, որպես ղեկավար դուք եք այդպես շարված:

Պատշգամբն ինչ է, Աղունի ու Շուշանի դռների մաքրությունը չուներ, բայց դե իր համար պատշգամբ էր, գնալուց առաջ աղջիկն ինչպես ավլել ու դասավորել էր՝ այդպես կար,- նայեց, չհավանեց ո՛չ պատշգամբի դասավորությունը, ո՛չ էլ մանավանդ կախովի կողպեքը. նայեց, ծլթծլթացրեց ու դուռը ծնկով հրեց:

Թեվիկը կարծում էր երեխան մոռացել դուռը չի փակել, բայց երեխան տանն էր, պառկած տեղը ձկան պահածո էր կերել ու գիրքը ձեռին քնել, լամպը վառած ու գիրքը ձեռին քնած էր: Անցած անգամ հայրը կրակի վրա կիսախաշ կարտոլ էր թողել, երեխան պիտի վառարանը մի երկու կտոր փայտ գցեր, խաշեր ու պահածո ձուկը կարտոլի հետ ուտեր - թողել էր կրակն էդպես էլ հանգչի, պառկած կարդացել-կարդացել ու գիրքը ձեռին քնել էր: Մեր չուներ՝ որ շալը վրան գցեր կամ ասեր քունդ տեսնում ես տանում է անկողին մտիր - լույս-դառած Վարդոյի լուռ նկարը համարիր որ գառնիկ ախպոր մասին Հովհաննես Թումանյանի տխուր զրույցն է, գառնուկ անլեզու ախպորն ուզում են մորթեն ու Մանուշ քույրիկը իր ծովի տակից անկարող է օգնի, լաց է լինում ասում՝ ախպեր ջան, ախպեր, անմեր ու անտեր: Էնիքը, Հովըտի ճանապարհներին սովորել էր՝ ծխում էր, թերմացք պահածոյի մեջ սիգարետի մի երկու կրծոն կար, բայց անմեղ բերանը հոտ չէր տալիս - շունչը թեթև ու այտերը կարմիր՝ գառան պես միամիտ քնած էր, այսինքն որ գառը գլուխը փորին է դնում ու քնում: Ցասաց թե դպրոցական հանցանքի մեջ բռնել են՝ դասի չեմ ու ծխում եմ - անմե՞ղ, արթնացավ, ճանաչեց ու ժպտալով թի-հի արեց՝ հոր նման ծիծաղեց՝ թի-հի, եկել ես,-

ասաց,- եկել եք:

Մեծ պեպենոտը թախտի ոտքին ծանր սապոգով խփել, ասել էր. «Վեր կաց, արա, էս խի՞ չես դասի»: Թախտի ոտքին էր խփել՝ երեխային չէր խփել, բայց համարիր թե հորը երեխայի մոտ ու երեխային էլ հոր մոտ երկուսին էլ ծեծել ու ստորացրել էր, անկեղծ, Թեվիկը դառնացավ, խեղդվեց ու մոռացավ թե ինչի էին տուն մտել, կրկնեց ասավ.

- Էնիքը, ճիշտ էս խի՞ չես դասի:

Մեր չուներ՝ որ թուշը պաչելով խնդրեր արթնացներ ու առաջը քաղցր թեյ դներ, ժամացույցի զանգը չգիտեր չէ՞ր խփել թե քնի մեջ չէր լսել: Գառան պես չէր հասկանում որ մեր չունի - պղտոր աչքերը տրորելով ժպտաց ու ճմլկոտաց:

- Ծախս ես լինում անտեղի Տաշքենդ հասնես,- ասաց,- էս է պատրաստի Սամվել է:

Որոշել էր՝ աշխարհիս երեսին թեկուզ զուտ իրենք երկուսը լինեին՝ նրա խոսքին ոչ «հա» պատասխանել ու ոչ «չէ», նրա մոտ առհասարակ լեզու չդարձնել, բայց չդիմացավ - սիրուն երեսը բարձրացրեց, աչքերը փակեց, ասաց.

- Մենք դե Մուրի, Սամո ու Խոզարած ենք, էդ է,- ասաց: Այսինքն ուզում էր ասել՝ այդ ինչպե՞ս է, որ մենք հորով-որդով էսպես Մուրի ու Խոզարած ենք, դուք էնիքը՝ էդպես պատրաստի ղեկավար:

Չպատասխանեց, բանի տեղ չդրեց, ասաց.

- Գրքույկ ես վերցնում, ինչ ես անում՝ վերցրու դուրս արի:

Համարեց, որ Թեվիկը առանձին մարդ է ու ընտանեկան իր թաքուն գաղտնիքները այնուամենայնիվ կունենա, այսինքն չուզեց գրքույկի թաքուն տեղն իմանալ, թողեց սենյակից դուրս եկավ: Մի հարցնող լիներ, առաջը կտրեր, հարցներ ասեր՝ քո

քնած երեխային դու քացով խփում ե՞ս թե փափուկ ծածկում:

Փողի գրքույկը պահելու տեղը նանի նկարի ետևն էր: Վարդոն ուրիշ տեղ էր պահում, բայց աղջիկը եղբորից թաքցրել ու տեղը հորն ասել էր. լույս-դառած մոր նման թաքուն ասել էր՝ էն բանը նանի նկարի ետևն է: Այսինքն ինչպես որ գոգնոցի գրպանում մի կտոր շաքար կամ մի երկու կանեփ էր լինում՝ նանը հիմա էլ փողի խնայողությունն էր պահում:

Ինչպես որ խախլուշկա հարսը անցնել-դառնալիս դպրոցի ճանապարհից լավ նկատել ու ասել էր, մեր Ծմակուտի տեղական գործկոմը Մուրադենց հին տների, հետո ուրեմն ինքնուրույն կոլխոզվարչության շենքի, հիմա արդեն Հովըտի տեղամասային համարիր պայմանական կենտրոնի պատշգամ-բում ուս-ուսի շարված կանգնած էր: Պայմանական՝ այսինքն իրավունք ունեին թուղթ լրացնեն ու տակը լավ պինդ ստո-րագրեն, բայց կնիք չունեին, Հովիտը ձեռքներից կնիքն առել էր, սրանց ստորագրած տեղեկանքը պիտի տանեին Հովիտ՝ Հո-վիտը կնքեր հաստատեր, եթե չհաստատեր՝ այստեղի ստորա-գրությունն ու վկաներն ուրեմն անտեղի էին:

Պատշգամբը երկար էր, Մուրադենց պապը ոչխարատեր էր եղել ու կարողություն էր ունեցել՝ ամեն տղային առանձին սենյակի հաշվով մի երկար շենք էր արձակել, մեր տեղական գործկոմի ամեն անդամին մի սյունամեջ կհասներ, բայց գիտակցական սովորություն էր՝ երկու սյան արանքում նրանք ուս-ուսի խիտ շարվում էին, որպեսզի թշնամական Հովըտի առաջ միասնական լինեն: Ետևները պատշգամբի կենտրոնում հատակի մի տախտակը մեջտեղից այլանդակ ջարդվել ու կախվել էր, ծայրերը ցցվել էին,- անընդհատ գիտեին, որ տգեղ

ու վտանգավոր է, հանկարծ մարդու ոտ կկոտրի, վարպետ Սիմոնին նույնիսկ լուր էին տվել մի տախտակ բերի գա, բայց պատասխան չկար, հալիվորը երևի թե կարծում էր Ծմակուտի հասարակության առաջ իր պարտքերը այլևս վար է դրել:

Ճեռախոսն այդտեղ էր. նրանցից խլելու, գիծը Մամռուտ խոտհարքների կովանոց քաշելու բուն հովըտեցի մի շատ ուժեղ թեկնածու կար, մեծ պեպենոտին նույնիսկ կարողացավ տեղից հանի, բայց կենտրոնի ղեկավարությունը մեր բողոքից առայժմ զգուշանում էր. մենք կովանոց չենք, զուտ մենք ենք, բայց մի շտապ ծննդաբերություն, մի կարևոր միտք, հաղորդելու կամ ստանալու մի վռազ լուր էլ գուցե թե մենք ենք ունենում:

Ջոհված տղերքի հավերժական հուշարձանն այդտեղ էր. քաղաքաբնակ ծմակուտեցիների միջոցներով ու շաբաթօրյակային ջանքով Մելիք Սմբատիչ Մելիքյանն ստեղծեց, բրոնզել տվեց ու խեթեց՝ թե հավերժական հուշարձանի կողքին դուք էդպես կացեք. ուրախությունն ու եռանդը փոխադրվել են քաղաք, նրա լուռ նախատինքը տեղին չէր, նրա գործարար արագությունն ու ղեկավար առաջխաղացումը թող այստեղ մեզանում բացվեին՝ ասեինք այո:

Խանութը նույնպես այդտեղ էր ու բաց էր, Սեդրակին չէին թողնում տուն գնա, բաց էին պահում, քանի որ ենթադրություն կար՝ թե մի կարևոր բան է պատահելու, ամեն րոպե կարող է պատահել, պիտի պատրաստ լինեին մի արկղ խմիչք վերցնելու: Դասն սկսվելու ու դասը վերջանալու հետ դպրոցի զանգը ղողանջում էր, պղնձե նույն զանգն էր, բայց այլևս տագնապ ու թրթիռ, կարմիր վզկապ ու ուրախություն չէր ղողանջում,- ամեն զանգի հետ նայում էին ժամացույցներին, որպեսզի ստուգեն տեսնեն ուսուցիչները ժամանակից մի որևէ օգուտ չե՞ն պոկում,

քանի որ դասատուների օգուտն էլ քիչ պարապելը ու շուտ գնալն է:

Գորշ լռության մեջ միայն այդ հին կարմիրն էր - անասունի ձմեռը կազմակերպված անցընելու մասին նշանաբանի պաստառը ակումբի ճակատով մեկ վարիչը ձգել, քարով մասին խփել ու ձեռը ծոցին եկել գործկոմի մեջ իր տեղը կանգնել էր, այդ պաստառն էր ու հին ամառներից մի բան աչքների մեջ եթե մնացել էր՝ այդ, ուրիշ գույն չկար:

Ակումբավարի կողքին վառելիքի պատասխանատուն էր. կենտրոնի ղեկավար ներկայացուցչի առաջ նա Հովըտի ղեկավարներին անտնտեսվարության մեջ շատ ուժեղ մեղադրել էր, այսինքն որ մեր տրակտորիստն ու առհասարակ մեխանի-զատորը վառելիք ծախսելով պիտի գնային Հովիտ լիցքավոր-վեին գային, և կենտրոնի ձնշմամբ Հովըտի նոր Վաթինյաններն ստիպված բերել այստեղ երկու տեսակ վառելիքի երկու հատ ցիստեռն էին դրել, շուրջը, որպեսզի մեր տավարն ու խոզը քոր չանի, ցանց էին քաշել, վրան դուռ դրել ու բանալին շատ մեծ չկամությամբ տվել նրան,- բանալի ուներ, բանալին օղ ուներ, օղը մատի վրա աջ էր պտտում, հետո ձախ էր պտտում. Հովըտի ղեկավարությունն ասել էր սա տնտեսվարություն չեղավ՝ մեկի փոխարեն հիմա երկու պահեստապետ ենք պահում,- նրանց առայժմ պատասխանվել էր՝ որ մենք դեռ գյուղ ենք, թող մի պահեստ լինի ու պահեստը այստեղ Ծմակուտ լինի, այսինքն կենտրոնը մենք լինենք, կարող ենք կառավարել:

Օրենքով՝ մյուսը մեծ պեպենոտն էր լինելու, հետո անտառա-պահը, բայց անմիջապես անտառապահն էր, մեծ պեպենոտն այստեղ չէր, առավել՝ մեծ պեպենոտի պատճառով, այսինքն որ արհամարհեց ու տաքացած սադա-հնդլոյին տեղում չսիրաշա-

հեց, կաթնապրանքային ֆերմայի ղեկավար հաստիքն էլ այստեղ չէր, կենտրոնը մի հովընտեցու տվեց, սա էլ Հովընտի ղեկավարության մեջ է կանգնում. մեծ պեպենոտը կարծում է քեռուն անտառապահը պաշտոնից կհանի ու տեղն ինքը կկանգնի, բայց չի կարենալու, քանի որ քեռու հիմքը կենտրոնում պինդ է, Մելիք Սմբատիչի ու համարիր կենտրոնի ամբողջ ղեկավարության ոտքը քեռու արմատի վրա է, ու եթե կենտրոնի ղեկավարությունը հիմա որևէ տեղ բաժակ բարձրացրած խմում է այդ սեղանի բարիքն ստեղծողի կենացը՝ էդ ուրեմն անտառապահի բացակա-ներկա կենացն է: Քանի որ արդեն պատրաստի ձուլված ղեկավար է ու նրանից այլևս ենթակա աշխատավոր չի լինի՝ մեծ պեպենոտի համար ակումբի վարիչը հնարավոր մի պաշտոն է կանխատեսում, եթե հեռատեսություն ունի՝ ռուսերենի Սերոն էլ պիտի հասկացած լինի, բայց հազիվ թե. այ մարդ, մեր էս Դժգոն՝ քիթը ծանր մեր Ռուբենը, բռնել զինված ուժերի մինիստրի անունով Մոսկվա նամակ է ղրկել՝ թե մարշալ Բաղրամյանի գրքում էսինչ ու էսինչ սխալները փաստացի առկա են, երկրորդ կարգային հաշմանդամի մեր շարքային կարծիքով հարգելի մարշալը՝ որ այն ժամանակ սովորական գնդապետ էր, այսինչ ու այսինչ բանը օրով ու ամսով սխալ է հիշել. ասացինք փոստատարին խնդրենք, նամակը մեջտեղից վերացնենք - ասացինք ինչո՞ւ, վնասի հետ գուցե մի օգտակար բան դուրս գա. հիմա՝ մինիստրությունում եթե ուշադրության առնեն ու ասեն էդ ով է՝ մենք պիտի տեղեկացնենք, որ իրոք պատերազմի մասնակից հաշմանդամ թոշակառու է, բայց մեր հանդապահությունից էլ է աշխատավարձ ստանում, Ոսկեպարա գոմերի ձմեռային պահակությունից էլ: Մարդ կա պետական բարձր պաշտոնը իջեցնում, ժողովրդի

ոտի տակ կորցնում է, մարդ էլ կա աննշան գործը դարձնում է պաշտոն, ասում ես էս ի՞նչ հաստիք էր. վարսակի ու կորնգանի ցանքերն անտեր թողած՝ Դժգոն նստել հակահուշեր է գրում, մեծ պեպենոտը ժողովրդի սագերը, գառներն ու հորթերը կքշեր գոմը կաներ, կփակեր ու բանալին մատի վրա պտտեցնելով կգար այստեղ իր նախկին տեղը կկանգներ, ո՛չ նախկինի չափ, բայց ժողովրդի սանձերը մի որոշ չափով էլ մեծ պեպենոտի ձեռքին կլինեին, մեր հանդապահությունը մեծ պեպենոտը կդարձնի ձիավոր պաշտոն:

Մյուսն ուրեմն անտառապահն էր. տնտեսության հետ անմիջական կապ չունի, ուրիշ ակունքից է ֆինանսավորվում, բայց այստեղ է հսկումի կանգնում, քանի որ տեղական հայրենասիրության կենտրոնը նախ ինքն է, հետո էլ՝ ծառերը դինամիտով, ճիշտ է, հանդում են պայթեցվում, սղոցվում ու կացնահարվում, բայց ծառերն իրենք լեզու չունեն, կտրողների անունն ու միջնորդների մտքերը թաքուն այստեղ են հոլովվում:

Անտառապահի կողքին միշտ եղբայրը՝ ոչխարի ֆերմայի վարիչ Ռոստոմբեգն էր լինում, բայց արանքում հիմա մի թեթև սառնություն կար: Երկուսն էլ Մելիքյա՛ն, Տիգրանի՛ ու Ռոստո՛մբեգ էին. անտառապահի ու Ծուշանի մորը Տիգրանը վռնդել ու երկրորդ տղային նույնպես Ռոստոմբեգ էր կնքել, այսինքն թե այս տունը նրանց կարիքը չունի, բայց հետո խփել երեխային ետ էր խլել: Անցած գնացած պատմությունը գիտեին ու ավելի էին եղբայր՝ քան իսկական եղբայրները, բայց վերջերս արանքով կատու էր անցնում, կոնկրետ՝ կասկածվում էր, որ Մելիք Սմբատիչ Մելիքյանի, գնդապետի ու հատկապես մեր բանաստեղծի միջոցով ինքնուրույն գոյության մեր սոցիալիստական իրավունքը Հովըտից ետ առնելու մեր ծրագիրը մինչև հանրա-

պետական կառավարությանը հասնելը այստեղ մատնվում են հովտեցիների ձեռքը, մեկն այստեղից ուժեղ տեղեկացնում է, հանրապետական կառավարության հարցումի առաջ Հովիտն արդեն պատրաստի հակածրագիր է ունենում,- ավելի քան եղբայրական միասնությունը քայքայվել, եղբայրներն իրարից հեռացել էին:

Նրանց արանքում հիմա երկու մարդ կար՝ դաշտային աշխատանքների ղեկավարը և փռան վարիչը. սա ժողովրդի հետ պայմանավորվել հաց չէր թխում, պետական քաշաձի գնով ալյուրը տալիս էր ժողովրդին ու, չնայած պարապ ազատությունն իրեն պետք չէր՝ որովհետև գյուղի ինքնուրույնության հարցը քննելու ոչ հստակ խելքուլեզու, ոչ էլ մի հատուկ ցանկություն ուներ, բայց դե էլի՛, ազատ քաղաքացի էր, դաշտավարության ղեկավարի հետ իր կես շիշը խմում ու, գլուխն ալրապարկի պես պինդ խցված, կանգնում փսսում էր, ծանր քիթն այսինքն լավ չէր շնչում, գլուխը միշտ պղտոր էր:

Դաշտավարության ղեկավարի առաջ, երբ նա այստեղ դպրոցական էր ու մանավանդ հետո՝ երբ Գործարանի գեղարվեստական խմբի մեջ բեմից արտասանում, երգում ու պատմում էր, մեր ժողովուրդը մեծ ապագա էր տեսնում, ասում էին արտիստ է դառնալու՝ երգելու ու պատմելու Ծարա Տալյանի ու Սուրեն Քոչարյանի երկու շնորհքը մի տեղ է հավաքելու ու տա անցնի, բայց մի օր ետ եկավ. ասացին ուրախության կենտրոնը ուրեմն դարձյալ փոխադրվում է Ծմակուտ, մեր հարսանիքներն այստեղ թող ծաղկեցնի, բայց վաղուց այստեղ հարսանիքներ չեն լինում ու համարիր որ ծնունդ էլ չի լինում, դպրոցի վերջին զանգերն են, շուտով կմարի ու այդպես մարած էլ կմնա. այդ մի կողմից, մյուս կողմից էլ այն, որ նրա խոսքն էլ, առակն ու երգն էլ

մի տեսակ քաղաքայնորեն էին անպարկեշտ, ասում էր կանայք թող դուրս գնան՝ բան եմ պատմում... ասացին ձենդ կտրիր ու դաշտավարությանդ կաց. դաշտավարություն չունի՝ մի քանի հեկտար կարտոլի մեքենայական ցանքումշակում, երկու խափան տրակտոր, հին ծմակուտյան անծայր խոտհարքներից մի անորոշ մասի մեքենայական անորոշ հունձուհավաք՝ էդ է, մեկ էլ էն՝ որ Հովըտի ղեկավարությանն այստեղ հաց-տալիս խմբի հետ հնազանդ գնում է հացատուն, ում հաշվին ուզում է լինի՝ արտիստորեն չափավոր ուտում, չափավոր խմում ու բուկը միշտ պատրաստ է պահում, որ երբ թույլատրեն ասեն երգիր ու պատմիր՝ երգի ու պատմի, բայց չեն ասում, ու ձենը հնազանդ կտրած կա:

Թեվըկի ղեկավար Ռոստոմբեգի օրինական տեղը իր եղբայր Ռոստոմի կողքն էր, երկու Ռոստոմը իրար կողքի կանգնում էին և տեսնող հովըտեցին խիստ ազդվում ու այս գյուղի ինքնուրույ-նությունը զավթելու համար մտքում ամաչում էր, բայց մի քանի օր է վիրավորված էր, հեռացել համարիր ծայրին էր կանգնել և համարիր ղեկավար ու ախպեր չէր - ձնշվո՜ւմ, իր ծանր ուժի ու խեղդուկ վիճակի արանքում, այսինքն որ ելք չկար, նեղվում էր, կարծես կենտրոնի ճաշարանում շատ գարեջուր էր խմել ու շրջկոմի ընդունարանում նստած սպասում էր. պահածոյի գործարանում բեռնաթափող-բարձող-քաշող էինք, այստեղ ասել ենք բրիգադի պետ էինք, ձեռքներիս տակ մի քսանհինգ-երեսուն աշխատող ունեինք,- տոննանոց սայլը հիմար ուժով հրում ու կարմրում էինք ու երևակայիր լավ էլ փող էր գալիս. լու-սահոգի մեր Տիգրան հերը եկավ հանրակացարանային փայտոջլի բերանն ընկավ քրքրվեց, դաշտային մոծակից ուռուցորվեց, գործարանի քաղցր գոլորշիների մեջ խեղդվեց,

մրգի պահածոյից ու առհասարակ շաքարեղենից զզվեց ու բղավեց՝ «յա՜դ, խեղճ նանդ, առաջս ընկիր, Ծմակուտա սարերը վարիչ չեմ տանում՝ շարքային չոբան եմ տանում». *ա՞դ* էր բղավում՝ դժոխք, յա՞դ՝ թույն ու թշնամի - «հա՜տ, եսիր նանդ». մենք արդեն սովորել էինք՝ փայտոջիլը մեր վրայով գնում ու չէր կծում, հերթագրել էին՝ ասում էին մի երկու տարուց բնակարան կստանանք, բանակում կուսակցություն էին ընդունել՝ բանվոր չէինք մնա, կուղարկեին կառավարման վեցամսյա դասընթացներ ու երևակայիր մի տասնհինգ-քսան բանվորի վրա ղեկավար կկարգեին, կայարանի կրպակն ամեն իրիկուն Երևանից ցիստեռնով գարեջուր էր ստանում, դեղին փրփուրը կանգնո՜ւմ, ժամացույցով քսան րոպեում հազիվ նստում էր,- ժողովուրդը Ծմակուտից պոկված գնում է, դու մեզ ինչո՞ւ ես էդ ամայություն քաշում, այ հեր. «հա՜տ, քու հիմար ծնողը, էդ էլ է քու օգտին». երևակայիր տրամաբանական էր, համապատասխան գլուխների փախչելով մենք Ծմակուտի գլուխն էինք լինելու, բայց դա ամայի մահվան տրամաբանությունն էր - փախան, գնացին ու ահա՝ եղածը մի սադա-հնդլո է ու նրա վրա քեռի ու քրոջ տղա իրար տալիս փռում ենք, գործներս հասնում է շրջկոմ. մկան գլուխ էինք լինելու ու առյուծի պոչ չէինք լինելու, բայց ոչ էն եղանք ոչ էն - գերեզմանոցի ու հին հուշատեղերի պահակ. մեր հովընտեցի ղեկավարությունն էլ՝ փախչողի առաջ ոչ հորդոր ունի, ոչ արգելք ու սպառնալիք ու դեռ ընդհակառակը - մի դիրեկտոր ախպերն այստեղից անարգել թողնում, երախը բաց մյուս Վաթինյանն այնտեղ ընդունում է քիմգործարան ու պարծենում՝ թե տասը Ծմակուտ ու Հովիտ էլ գա՝ տեղավորելու եմ. իր փառքի առաջ ասացինք դա էդ է կուրացել ու խլացել է, եթե մարդկայնություն կա՝ էլի սրա մեջ կա, սրա խիղճն ասացինք

կաշառքով շարժենք՝ կենտրոնի առաջ Ծմակուտից հրաժարվի, ասի Ծմակուտի բարդույթը կառավարելուց հրաժարվում եմ, չեմ ուզում, ախպեր, իմ հարևանի տունը իմ ձեռով քանդվի. հավաքած փողը մեր գրպանում մի ամիս սպասեցինք, երկու անգամ դրեցինք բազրիքին, ասացինք Վաթընանց հետ մեզ ի՞նչ խաղի եք ղրկում. կանաչ աչքները իրար գցած՝ Գործարանից Հովիտ մեր ամբողջ Լոռու վրա եղբայրները մրցակցության մեջ են, շքանշանի ոսկի են զնգացնում. այնտեղինը պարգևատրվել էր, այստեղինն ասաց մենք էլ մեր տնտեսությունից պարգև կհանենք ու հանեց - մատղաշը մթերեց՝ պետական առաջադրանքը գերակատարեց ու շքանշանը դարակը դրեց - էդ դու ես, էս էլ ես եմ. բայց սա ո՞վ է՝ որ նրա հետ մրցի. կարծում էր շքանշանը կտան ու առաջ կքաշեն, պարգևախաղը եղբոր հետ ուրիշ բարձունքներից կշարունակի, բայց ախպերը կատակի տվեց ու չօգնեց՝ չբարձրացրին, թողեցին այստեղ՝ իր սրբած տնտեսության տիրակալ, ինչպես որ Նապոլեոն Բոնապարտին ստիպես իր ավիրած ճանապարհներով ետ գնա... իսկ մյուս եղբոր համբավը բարձրանում ու բարձրանում է, պլանները նրա գործարանը կատարում է, մինչև նրա վարիչությունը չի կատարել, տասն ու համարիր քառասուն շերտով մինչև տակը կողոպտված հանքերը գործարանի հնոցներին ու ձուլարաններին չեն բավարարել, անձնական նախաձեռնությամբ ինքը հանքերի ու գործարանի վարչությունները խլել, միացրել, պաշտոնի անունը դրել է Գլխավոր դիրեկտոր և հազար տարվա հանքերն ու հին գործարանը շրխկալով բանեցնում է, մինիստրների վրա ասում են գոռում է, մինիստրներին հաց-տալիս ասում են ինքը չի գնում՝ տեղակալներին է ղրկում, հանքերից ու գործարաններից ինքը գիշեր-ցերեկ դուրս չի գալիս, հյու-

բասիրությունների գծով մի հատուկ տեղակալ է պահում... բայց հերները, թեկուզ Վաթինյան, մի խեղճ չոբան, ինքն իր սերմի զորության վրա զարմացած մարդ է, և այդ հանգամանքը հույս տվեց, չգիտենք ինչ խորհրդով՝ ասացինք նախ հորը տեսնենք, հետո նոր՝ զավակներին, մեկի միջոցով մյուսի վրա գուցե ազդենք. ու հերը երևակայիր շատ շոյվեց, մեր թևը մտավ, տարավ ասավ ինչ որ խնդրի, ինչ խնդրանք ուզում է լինի, պիտի անես, թե չէ, շան որդի, ասավ, կգնանք քաղաքի ախպորդ դուռը վրեդ գանգատի. հորը գրասենյակից դուրս արավ, Տիգրա՛նիչ,- ասաց,- մի ամիս է դրել գրպանդ ման ես ածում, մի ամսում բա դու չհասկացա՞ր՝ որ անտեղի ձեռնարկ է. ո՞նց է անտեղի. երկու հազար ռուբլիանոց թանկ դեղը բռնել ուզում ես մեռելիդ սրսկես, բայց մեռելդ մեռել է, այ թե ոնց է անտեղի ձեռնարկ. բա թե՝ վերցնեմ ի՞նչ անեմ, վերցնեմ ո՞նց խոստանամ, ուրիշները հրեն գործարան ու հանք են միացնում, ես իմ միացածից ինչո՞ւ հրաժարվեմ: Գործարանի Վաթինյանը Մոսկվայի հետ ռուսերեն խոսում էր, հենց էդպես ռուսերեն խոսելով էլ շուռ եկավ ասավ՝ գնա ասա հորդ սարսաղ քյալլեն, բռնող յես՝ Հովիտդ բռնյե: Հեռացված մի հրահանգչի հետ հետո մի հինգ մանեթի գարեջուր խմեցինք ու տեղեկացանք, որ գործկոմը մեզանից թաքցնում է - Վաթինյանի գործարանը շատ փող ունի ու գործկոմին փողով ճնշում է, գործկոմին ասել է իմ միջոցներով Դարպասի տակով դեպի Հովիտ ու Ծմակուտ կարճ ճանապարհ եմ բացում, գործկոմն առայժմ կարողացել է «ոչ» ասել, քանի որ հովըտեցու մտքում սոսկ Դարպասի մի երկու պտղատուն ոչնչացնելն ու իր հենց էնպես լայն ճանապարհը չեն. Մոսկվայի հետ ռուսերեն խոսելիս, այսինքն Մոսկվան հիմա խոսում ու ինքը լսում էր, մեզ ասաց «էն տանձինյերը». տանձիները՝ Հովըտի

դիմացի մեծ տանձուտը. Ավստրիա թե Ամերիկա բան է տեսել, ուզում է հին գյուղը սրբի ու դիմացի տանձուտում գործարանի բանվորության համար մի հինգ հատ սպիտակ բարձրահարկ դնի. մեզ ասավ «քեզ ու տղայիդ վերցնում եմ ձուլարան, կնիկդ քանի՞ տարեկան է՝ տալիս եմ տրիկոտաժի ֆաբրիկա, ամիսը հազար ռուբլի փող եմ տալիս». և նրա այդ ծրագիրը շատ լավ հայտնի է այստեղի Վաթինյանին, միասին խմելիս բացահայտել է, և որպեսզի նրա հուշերը մեր ձորերից առհասարակ կտրի՝ բուլդոզերը տակն է տվել, ձոպանները գցել ու դարավոր քառասուն տանձենին տրակտորով ու բուլդոզերով շուռ տվել - արի բարձրահարկերդ տնկիր, ես քու հոր քյալլեն, տեսնեմ մանկության որ տանձուտներում ես տնկում: Մեր եղբայր Ռոստոմը, քանի որ ինքն անմիջաբար ժառանգ չունի ու իր հավերժական հուշարձանը Ծմակուտն ու Ծմակուտի սերունդներն են լինելու, այսինքն պատմելու են նրա վարքն ու ծանր երկաթե ուժը, ձորի մեր տներից բարձրանալիս կանգ առավ, խեղդվեց, խզզաց ու մեզ մեղադրեց, թե մենք երկու մտքի ենք ու ոչ այնտեղի զորբային ենք տեսել, ոչ էլ մանավանդ այստեղի խուլիգանին. բայց մենք ո՞րտեղից այդքան դաժանություն ունենանք՝ որ դեմառդեմ նստենք, մեր ձեռքը դնենք սեղանին ասենք՝ «այ ընկեր, մի Ռոստոմ դու ես ու մեկը մենք, ու մեր հոր պատգամը երկուսով կատարում ենք, այսինքն մկան գլուխ ենք ու ձուլարանում խաշվող բանվոր չենք, ու Ծմակուտն էլ մեր ու քո շնորհիվ դեռ կա, բայց վաղը մեր երեխան այստեղ ի՞նչ գործի է լինելու, Ջանդառի հետ չոբանությա՞ն»:

Մյուսը Արմենակ Մանթաշյանի՝ հռչակավոր Բարձրացնող Արմենակի փոքր քենու տղա Վալոդիկն էր, Արմենակին քեռի էր ասում ու հիմք ուներ. վատ ընկերներից ու համարիր բանտ

ընկնելուց ազատել, բերել այստեղ անասնաբույժ էր դրել. ինքն այնտեղ հին ծանոթների միջոցով սրա հեռակա ինստիտուտի գործերը երկու-երեք տարին մի անգամ առաջ էր տանում, հիվանդ անասունի մասին սա այստեղ ասում էր՝ «մորթել ու լավ խաշել, հանկարծ չպատահի, որ լավ փափուկ տեղերից տաք-տաք խորոված անեք»: Է՜, հեռավոր երեսնական թվականներից Մանթաշյանը հռչակված էր հետամնաց տնտեսությունները բարձրացնելով. բարձրացնում, հաղթողի կարմիր դրոշը ձեռքներն էր տալիս ու ինքը գնում ուրիշ ընկածների բարձրացնելու. պատերազմից առաջ մի-մի անգամ էլ Հովըտի ու Ծմակուտի տնտեսություններն է առաջ մղել, բայց հիմա Սանդրո Վաթինյանից հետո Հովըտի-Ծմակուտի միացյալ տնտեսության կառավարումը չէր ստանձնել, շատ բազմիմաստ ասել էր՝ «Սանդրոյից հետո էլ ի՞նչը կառավարեմ», բայց ծիծաղել ասել էր՝ «կատակ եմ անում, հոգնել եմ», ու տարել մայրաքաղաքում երաշխավորել էր ներկայիս Խուլիգանին, ասել էր՝ «երիտասարդ չի, ես իմ գործունեությունը որ սկսեցի՝ իրենից հինգ տարով ջահել, էն է համարիր երեխա էի». չէր ասել, թե նրա թևութիկունքն, այնուամենայնիվ, գործարանի եղբայրն է, նրա թեկնածությունը Սանդրոյից ու եղբորից է հուշվել, ասել էր՝ «իմ պատասխանատվությամբ պիտի նշանակվի». լակոտի հեռատեսության վրա զարմացել, տանձուտն արմատախիլ սրբելու դեպքով հիացել ասել էր՝ «որձկաճուտը ձվումն է նշմարվում, Մանթաշյանի փոխարինողը եկավ». գործարանի ու գյուղի հակառակության մեջ համակրանքն անշուշտ գյուղի կողմն էր, բայց այլևս թոշակառու էր, տասնամյակների վաստակած բարձրությունից ճարահատ ժպիտով էր նայում ներքևի անհավասար կռվին, ասում էր՝ «կկռվեն-կկռվեն ու կհաշտվեն»,

այսինքն թե երեխաների վեճ է: Նրա քենու Վալոդիկը հովընտեցի էր, բայց իրեն ծմակուտեցի հայրենասեր էր համարում, ամեն անգամ ասում էր *ընտանիքս էս է Գործարանից հանում, տեղափոխում եմ էստեղ*, բայց կինը սիրեկան ուներ, սիրեկանը երևի արգելք էր լինում. Վալոդիկն ասում էր *ծեծեմ*, այսինքն Հովընտի Խուլիգանին ծեծի, ասում էր տանք քեռուն՝ մի ելք մտածի, բայց ծանր գումարի հետ պիտի հեղինակավոր ծանր խոսք էլ լիներ՝ որ դներ կենտրոնի սեղանին, ասեր արե՛ք՝ Ծմակուտին ինքնուրույնություն տվեք, իսկ Մանթաշյանի խոսքն արդեն ծանր չէր, և անասնաբույժի այդ բոլոր առաջարկություններն ուրեմն նրա ուղղակի երախտագիտությունն էին մեր Ծմակուտի առաջ, որ նրան հաց էր տալիս պահում:

Մյուսը խանութի գործակատարն էր, ծայրին ու մի քիչ հեռու էր կանգնած, քանի որ ինքն առհասարակ չէր կանգնում՝ խանութը փակում գնում էր, հիմա ասել էին սպասիր, խանութը պետք է գալու. եկողն ասում է գարեջրի վրա քաղաքում միլիոնչիների խավ է առաջացել, ժողովրդի վրա կես-մին փրփուր ու ջուր է ծախում, գարեջրի վաճառքն այնինչ Ծմակուտ այսպես է. շիշը երեսունմեկ կոպեկ է, մի ռուբլու վրա պիտի երեք կոպեկ էլ ուզես, որպեսզի երեք շշի հետ կլոր տասը կոպեկ վերադարձնես, քանի որ մնացորդ յոթ կոպեկների համար այդքան հինգ ու երկուկոպեկանոց չկա. կասկածամիտ, կոպեկը-կոպեկին ճիշտ կամ պատահական սխալ հաշվի վրա նույն կամ մյուս օրը անպայման կռիվ եկող կանանցից, երեխաներից ու իրենց անգրագետ բուռը հավատով պարզող պառավներից եթե հնարավոր է կոպեկի օգուտ ունենալ, ուրեմն էդ է. ձեռ էր քաշել Ծմակուտի ապագայից էլ ու իր անձնականից էլ. պատահում էր տղերքը մի նոր հույսի վրա ոգևորվում, միսը դե իրենցից է՝ միս

էին անում ու խանութից արկղով խմիչք վերցնում, դժվարանո՜ւմ,- լուռ տանջվում, չէր ուզում տալ, բոլոր ձեռնարկների վրա կասկածում էր՝ թե անտեղի են. ասում էին կծծի է, չի ուզում մի շշի բերան էլ ինքը բացի կամ իրավասուի առաջ մի խոսք էլ իր կուսակցական բերանից դնի, բայց նրանը զուտ անխիղճ հաշիվ էր՝ որ ոչ մի «բայց» ու «միգուցե» չէր ընդունում. համընդհանուր մարդահամարից բացի չէ՞ գյուղկոոպները պարտավոր են տեղի բնակչության թիվը ներկայացնել կենտրոն, որպեսզի գյուղկոոպի վարչությունից ըստ այդմ էլ պլանավորված մատակարարվեն, անցյալ մարդահամարից հետո Ծմակուտը երեսուն մարդ էր կորցրել, Հովիտը՝ համարյա հարյուր, Ահնիձորը՝ քսան, Դարպասը՝ այսքան, Դսեղի մեր շրջանը լրիվ՝ հազար երկու հարյուր - որը մեռել ու տեղը երեխա չէր ծնվել, որը բանակ ու սովորելու էր գնացել ու պիտի գար, բայց իրականում չպիտի գար, որն էլ այգին լավ չափարել, դռան անասունը ծախել, դռները փակել ու քոչել էր քաղաք. մեղքն այստեղ Հովըտի վարչության վրա ենք դնում՝ որ իբր թե Հովըտի վարչությունն այստեղ նստեր, կենտրոնն այսինքն Ծմակուտը լիներ ու մանավանդ ղեկավարությունը բուն ծմակուտեցի լիներ՝ ժողովուրդն իր ղեկավարության շուրջը կհավաքեր ու չէր ցրվի, բայց Օձունի ու Դսեղի նման քաղաք գյուղեր են ամայանում, մեջները մի հին Ծմակուտի ուժ չի մնացել - Ծմակուտն ո՜վ էր՝ որ դիմանար. սարերում հրեն քանի անտեր ձի էր խրխնջում, իսկ տերերը խցվել են քաղաքային տրանսպորտ:

Պատշգամբում ու ճիշտ կենտրոնում կանգնելու արժանին միջնեկ թաթարն էր, բայց վերև չէր ելնում, որովհետև ինքն աշխատավոր էր, նրանք՝ ձրիակեր,- զոհված տղերքի հավեր-

ժական հուշարձանի մոտ բերում ավտոն կանգնեցնում, խցիկից իջնում, դողերի պնդությունը ոտքով նախ մեկառմեկ ստուգում, ապա ներքևից վերև թեթևակի բարևում ու ավտոյի կողքին կանգնում էր. այս կյանքում անհետ ոչինչ չի կորչում. այն՝ որ կովի կռաջլին կացնով խփում էր, տանձենին կտրում ու հալիվորի մեղվանոցը վառում՝ հիմա դարձել էին վարքի ինք-նուրույնություն, այսինքն իր անելիքն ու չանելիքը իր սեփական մտքում պատրաստի կան, ձեր վերևից դուք նրա համար վարք չմտածեք, ձեզ վնաս չի բերի, բայց անտեղի կլինի, և այն՝ որ մանիշակագույն թանաքի հատիկավոր սիրուն ձեռագիր ուներ՝ հիմա էլ մեքենան էր միշտ սարքին, ջարդվելուց երեք օր առաջ ջարդվելիք մասը փոխում էր, տասնհինգ տարում միլիցիան մի անգամ նրա վարորդական կյանք չէր մտել, առանց գործուղման թերթիկի փռնից մոր դուռը մի պարկ ալյուր չէր տանում և բոլոր կարգագրերն ու չեքերը ամիս-ամսաթվով հերթականությամբ դարսած պահում էր - սա գյուղկոոպի գարեջուրը բերելու կարգագիրն է, սա ձորի սղոցարանից՝ ֆերմայի ցամքարը, սա ալրաղաց կոմբինատից՝ խառն անասնակերը, սա գործուղում է Բարանայի տնտեսությունից դեղձ ու խաղող բերելու. եթե Ծմակուտը առանձին միավոր լիներ՝ մեքենայական տնտե-սության կառավարիչը ինքն էր լինելու, այսինքն իրենից կախված մի տասը ենթակա էր ունենալու, հիմա այնինչ իր ենթական միայն ինքն էր. Ծմակուտն առանձնացնելու միտքը Ռոստոմ քեռուն ինքն էր տվել, մտքին ուրեմն համաձայն էր, բոլոր առաջարկներին՝ ոչ, քանի որ դրանք իր առաջարկները չէին, բայց թե ինչ էր առաջարկում ինքը՝ չէր ասում, ասում էր *իմ բայը ես ասել եմ*, բայց չէին հիշում ինչ բայ է ասել. հուշարձանի կառուցման վրա քաղաքաբնակներին հավասար ու նրանց

բացակայությամբ ինքը չարչարվեց, բայց դա իր հուշարձանը չէր, Ակոփի անունը խառնվել հիսուն արժան-անարժանի մեջ կորել էր, երեխա ժամանակից նկատած մի աղբյուր ուներ, իրենից առաջ ոչ բխել, ոչ էլ մանավանդ ուրիշներից տեսնվել էր, գնաց հանեց խնկածաղկի բացատ ու վրան հուշարձան դրեց՝ *հանուն հայրենիքի անժամանակ զոհված Ակոփի աղբյուր*. տեսնողներն ասում են էդ երբ է կանգնեցրել՝ որ մենք չենք իմացել, մեծ պեպենոտն ասաց՝ «որ մեզ մասնակից անեիր՝ հեղինակությունդ կկործանվե՞ր» - մտքի մեջ խեթ նայում, անիվ-ների պնդությունը ոտքով ստուգում ու մտքի մեջ ասում է՝ «իմ պարզ ջուրը ձեր պղտոր ջրին չպիտի խառնվի»:

Ահագին գյուղ է ու իրեն կենտրոն է հռչակել՝ զուտ էսքան տղայով մի Հովըտի չափ թերթուամսագիր էին ստանում՝ *Պրավդա, Իզվեստիա, Սելսկայա ժիզն, ժիվոտնովոդստվո, Նաշ զեյլոնի դրուգ, Սովետսկայա տորգովլյա, «Սովետական Հայաստան», Կոմմունիստ, Կոմսոմոլեց,* մեր տեղական «Վերելք», *Կոմսոմոլսկայա պրավդա, Սովետսկայա կուլտուրա, Տեատրալնայա ժիզն, Կլուբնի բաբոտնիկ*... ստացել, ծալել դրել էին բաճկոնների գրպաններում, պաշտոնական լրագրերի հետ փոստատարից մի անպաշտոն լուր էլ էին ստացել՝ որ Հովիտ մի բարձր կառավարական մեքենա կար ու Հովիտը հատկապես էր լուռ, ձորի կաթնագործարանից էլ շտապ պանիր էին տանում ու փոստի պետից էլ հեռախոսով սինդրիկի թթու հարցրին՝ ասաց էսինչը կունենա: Ուրեմն *պանիր* էին տանում, լ ո ւ ռ էին, սինդրիկաթթու հարցրին: Առավոտվանից էլ Օսեփանք են էստեղ հացաբանի ու մսաբանի, Աղուն քույրիկը եկավ խանութից պետական արաղ տարավ, փռան վարիչին, կարծես իրենց բերանով չէին ուտելու, ասաց՝ «սիպտակի անունով էիր տվել,

բայց այլուրդ լավ չէր սիպտակ, ախպերացու», կապել, կապակցել, տրամաբանել ու վճռել էին, որ մի բարձր անձնավորության հետ մեր բանաստեղծը Հովիտ է, մեր բանաստեղծն ու Մելիք Սմբատիչը մի բարձր պաշտոնյայի ուղեկցությամբ Հովիտ են, սինդրիկի թթուն մեր խմած բանաստեղծի համար են փնտրել, այսինքն նա է ասել՝ սեղանին ինչո՞ւ սինդրիկի թթու չկա. ցա՜վը տանեմ, Հովիտը խառնել է՝ «դուք ինչ գյուղացի եք, որ սեղանին սինդրիկի թթու չունեք, ձեր էդ քամակով էլ Ծմակուտ եք կառավարում»: Սպասում էին պատասխանատու անձնավորությանը բերեն իրենց հայրենիք, որպեսզի մեր բանաստեղծի բերանով նրա առաջ մի ծանր հարց դնեն՝ հիմնական հարցը. այս գյուղը Օձունից կարմիր դրոշ է խլել, մեր Արծիվ հովատակը քառասուն ձիու ընտրական մրցումներում Ծաղկաշատի հռչակավոր Ծապուհից զինկոմ Դոշոյանի ժամացույցով մաքուր մի բոպե առաջ ընկավ, մեռնելիս ձեր Գրիգարյանն է Ծմակուտի մածուն ուզել - էն շեն գյուղն էս ինչ դարձրիք, այ ընկեր ասենք թե Սպարտակ Ճմայակովիչ, էս ինչ է տղերանց վիճակը:

Ուզում էին որևէ առիթով թաքուն հետախուզության գնալ, բայց միջնեկ Սեվանն ասում էր իմ ղեկավարությունը Հովըտից թող ինձ կարգադրի. ուզում էին Ռոստոմի ավտոյով գնալ ու երեսները պնդած կանգնել՝ թե այո՛, հենց հետախուզության նպատակով ենք եկել - նաև Ռոստոմն ինքը քշել չգիտեր ու ղեկն ուրիշի չէր վստահում, նրա մեքենան փողի գրքույկի նման անշարժ էր ու համարիր անշարժ փողի գրքույկ էր, հետո էլ՝ գուցե իսկապես հացի լինեին ու ասեին ձեր անջատողական բողոքով ամեն անգամ գալիս հացներիս գլխին տնկվում եք. ուզում էին զանգել հեռախոսային հանգույց ու կատակի տալով

տեղեկանալ՝ թե խմիչքից վառված էդ որ բանաստեղծի սիրտն է սինդրիկի թթու ուզում - հերթապահ հեռախոսավարուհին մեր գյուղի տված հարսը չէր՝ բուն հովըտեցի կոշտուկոպիտ լաչառն էր. սպասում էին որևէ կարգադրությամբ ինքը Հովիտը զանգի՝ որպեսզի խոսեցնելով-խոսեցնելով մի տեղեկություն պոկեն - լռվել ու չէր զանգում, ինչպե՞ս զանգեր, սպասարկում ու սպասարկվում էր: Խոսքն առավոտյան Ռոստոմին էին թողել, Աղուն քույրիկին ասել էր՝ «ով որ էդ խմելու է՝ տնաքաշը նրա համեմատ ցա՞ծր խմիչք է, թե՞ մեր քույրիկի տնաքաշն էս անգամ պատահական համ է առել, կրակը փախել վառել է» - պատասխանել էր՝ «հազար բերան ու բերանի հազար համ», Ռոստոմը նրա լեզուն բորբոքել ասել էր՝ «է՜, գնում ու մտքներից մեզ էլ են գցում ու մեր համուհոտն էլ», ու շատ հուսադրիչ պատասխան էին ստացել՝ «ասում են տակներդ լիքը ապրուստ է, չգիտեն՝ որ իրենց ամեն գալուստը մեզ մի կովի կորուստ է». ծափ էին տվել ծիծաղել, ասել՝ «բանաստեղծի ակունքն իհարկե բանաստեղծական էր լինելու» և շատ ուժեղ հուսադրվել էին, բայց հույսը չէր իրականանում: Աջ՝ գյուղամուտի ճանապարհին նայելով սպասել-սպասել էին, վիզները ծռվել էր, հետո խամրած տանիքների ու քանդված դարբնոցի գլխով դիմացի անտառին էին նայել, հիմա ձախ՝ Մելըքանց ամայի բլրալանջին էին նայում. Մուրադենց ընտանիքը քոչելիս մոռացել լվացքի լարին երեխայի մի կարմիր շալվար էր թողել՝ էդ էր, ուրիշ շարժում չկար: Անասնաբույժը ռուսերեն թերթը նայում էր, նայեց-նայեց ասաց.

- Տղերք, ինչքան նկատել եմ՝ էս ռուսները *հ* չունեն, Սպարտակ Ամայակովիչը ռուսերեն ո՞նց կասվի՝ Սպարտակ Գա՞մայակովիչ թե Սպարտակ Խա՛մայակովիչ:

Իրենք էլ չգիտեին, չպատասխանեցին: Երանին, ասացին,

քեզ՝ որ էն ահագին Ռուսաստանը հ չունի, դու էդ է ունես, երանին քեզ ու քո քեռի Արմենակ Մանթաշյանին՝ որ քեզ նման էշ է պահում: Նայեցին տեսան մեծ պեպենոտը, Թեվըկին ետևը-գցած, Մուրադենց Վարոսի տան վերևը Մելքանց բլրալանջին իջնում է: Ասացին՝ էն Վերանի ծանր վայրէջքն է, կապույտ կոստյումով ու ալ կարմիր շապիկով էն մյո՞ւսն ով է: Ծներից հասկացան՝ որ Սիրուն Թեվիկն է: Ասացին վարըչի պաշտոնը Ծմակուտի ձեռից տվել ու մեր աչքում վարկաբեկվել է, վարկը վերականգնելու համար բերում է ժողովրդի առաջ ծեծի: Եթե նայող ժողովուրդ չունենա՝ ձեռ չի բարձրացնի, ասացին, ցրվենք, բայց մեկ էլ ասացին՝ մնանք ու մեր ներկայությունով սաստենք, վերջիվերջո ամոթ է: Երկրորդ Ռոստոմբեգը հովիվ-ների անմիջական ղեկավարն էր՝ ծնի, բրդի, կերի, աձի ու անկման պատասխանատուն, մոռացավ՝ որ մեծ Ռոստոմբեգից հավիտյան վիրավորված է, ոչ հետը, ոչ էլ ներկայությամբ չպիտի խոսի, սրտնեղվե՞ց, կարմրեց, խռխռաց.

- Թե խոսում ես՝ ասում են ժողովրդի հետ վարքդ կոպիտ է, թե լռում ու չես խոսում՝ էս ի՞նչ է. երկու օր առաջ էր գյուղում: Խեղճ Ջանդառին ու էն խուլ աղջկան,- ասաց,- մենակ սպանեց: Գոմերը կնանիքն են մաքրում:

Չգիտեր՝ որ այստեղ մարդ է տրաքացնում, զուգված-զար-դարված, ձեռքերը գրպաններում գալիս էր. Մուրադենց դռներին կանգնեցին մի երկու խոսք խոսեցին, հետո Թեվիկը լվացքի լարը բարձրացրեց՝ որ մեծ պեպենոտը առանց կռանալու անցնի:

Անասնաբույժն այն ժամանակ պարապ Դսեղ էր եկել, հան-դիպել ու հաշվին խմել էր, ասաց.

- Մի պակասն էլ Ջանդառը չի. քարտաշի վերջացնելուն

սպասելով-սպասելով յոթ օր նստած գարեջուր էր ծծում, ասում էի վեր կաց գործիդ գնա, ասում էր նռները մինչև չտաշի՝ չեմ գնա:

Հիշեցին, որ հին հովիվներն այդպես չէին, Մուքելանց Սերգին դիվոտում ասում էր էլեկտրական խուզից ոչխարի ծնատունը վախենում ցամաքում է, իսկ լույս-դառած Օհանը հեռախոս միայն մի անգամ տեսավ՝ շտապօգնության բժիշկներին այս պատշգամբում սպասելիս. գլխաքանակի հաշվառմանը պարզվեց, որ ամբողջ գյուղը մեկառմեկ Օհանի առաջ ոչխար ունի, մի կողմը ջոկված կոլխոզային-պետականն էր, մյուս կողմը մասնավոր սեփականը, երկու կտրկանի մեջտեղը զուտ ինքը՝ զուտ երկու շուն, մի յափնջի ու թուրք սարվորի նվիրած մի մահակ,- այսօրվա երեսառաձներն այնինչ պետական ոչխարը կիսովի են պահում, մինչև մի շահ չունենան՝ չեն աշխատում: Ակումբի վարիչից չզգուշացան, է՜, հառաչեցին, փչացավ, ասացին, սերունդը փչացավ:

Բերեց ներքևը եղբոր մոտ կանգնեցրեց, աշխատավոր տուժած ժողովուրդ էր՝ ինքը բերանը նեղացրած ու ծռած նրանց հավասար մի քիչ կանգնեց, բայց սովոր էր՝ ծանրումեծ բարձրացավ պատշգամբ: Իր լրագրերը բազրիքի վրա էին, վերցրեց, չգիտենք ումից էր օրինակ առել՝ աչքերից հեռու բռնած իշխանաբար նայեց, էդ արդեն զուտ իրենն էր, այսինքն ոչ քեռիները, ոչ էլ այդտեղ որևէ մեկը լրագրերը սապոգի ճիտք չէին դնում, մի հարվածով ծալեց, խրեց սապոգի ճիտք ու ձեռքերը ետևին ետուառաջ քայլեց: Գնաց պատշգամբի ծայրը, կանգ առավ նայեց գյուղին, ետ եկավ ու անցնելիս իր խոր հարցը նետեց ղեկավարության մեջ.

- Վերևի թաղերից եմ գալիս, մեկառմեկ մտել եմ ժողովրդի

բոլոր տները. աշխատանքը երեսի վրա թողած՝ ժողովուրդը պոկված գնում է. ղեկավար եք, ի՞նչ արգելք եք մտածել:

Պատասխանատուն օրենքով դաշտային աշխատանքների ղեկավարն էր լինելու, ավելի դենը՝ հովըտեցի խուլիգանը, էլ ավելի դենը՝ կենտրոնի գործկոմն ու առհասարակ ժամանակի դրվածքը, բայց քանի որ կարծում էին աչքը քեռու անտառապետությանն է՝ դարձան քեռուն: Սա խեղդվեց, կարմրեց, ոտները չռած կանգնած էր՝ ավելի չռեց, ձեռները կրծքին խաչեց, քաղցր բարակ ձեն ուներ՝ ձենը չգիտես որտեղ խեղդվեց, խռխռաց.

- Կարծենք կենտրոնում կարծիք կա, որ պոկված գնացողը մեր անտառը չի:

Հասավ պատշգամբի մյուս ծայրը, որտեղ Մուրադենց պապի բուխարին էր եղել՝ կամարի դեմ քեռու նման թևերը խաչած ու ոտները լայն դրած կանգնեց, շուռ եկավ ետ քայլեց և բոլորին ու կոնկրետ ոչ մեկին ասաց.

- Հարցը քեզ է ուղղված, ընկեր. կանգնել ղեկավարում ես ու տեղյակ չես, որ ժողովուրդը քու ղեկավարությունը քննադատում է:

Գնաց հասավ մյուս ծայրը, ետ եկավ ասաց.

- Ի՞նչ մտածեցիր. կանգնել մտածում ես, ի՞նչ մտածեցիր:

Քթի տակ ժպտաց, ասաց.

- Կոնկրետ ո՞վ:

Քթի տակ ժպտաց, ասաց.

- Մին հենց դու՝ Ռոստոմ Մելիքյանդ:

Մեծ Ռոստոմը սեղմվեց, նրա հին տեղը իր կողքին բացեց, մտավ իր տեղը, ասավ.

- Ղեկավար ես, քու աշխատողն է, մի հարցրու տես ինչի է

էստեղ:

Ներքևը գլուխը կախ կանգնել էր, միջնեկ թաթարը բան էր խոսեցնում՝ չէր հասկացվում պատասխանում է թե ոչ, շները կողքին նստոտել, վերև էին նայում ու վախից շողոքորթում էին՝ պոչները թփթփացնում էին, չէ՞ գիտեին՝ որ գրասենյակի դուռն իրենց տեղը չի: Այդպես կանգնած էր, իր վարիչը վերևից հարց էր տալիս՝ ոչ «հա» էր ասում, ոչ «չէ», ստիպված մեծ պեպե-նոտն էր պատասխանում, ինքն այդպես կանգնած էր: Ու որ բերեց ներքևը թողեց ու ինքը բարձրացավ՝ դպրոցի հին զանգը հնչեց, ժամի ուղիղ մեկն էր:

Մեծ պեպենոտն ասաց.

- Տաշքենդ է գնում:

Ասաց.

- Ասում է Տաշքենդ ես գնում, հա՞, արա:

Մեծ պեպենոտն ասաց.

- Ճարգելի պատճառ ունի, գնում է ախպորը գտնի՝ մեր փոքր հորեղբայր Սամվելին:

Դառնացավ, զզվեց, ճռռաց.

- Ա-ե՜ե-ե՜ե:

Մեծ պեպենոտը ժպտաց, ասաց.

- Ղեկավար ես, աշխատավորիդ կարիքի առաջ օրինակ էդ ինչի՞ ես ճռռում. ուրեմն լավ չես յուրացրել՝ որ բոլորը հավասար են:

Բազրիքը ձեռով ծեծեց, ասաց.

- Ինքը երեխա՞ է, Ծմակուտի տեղը չգիտի՞, ուզում է գա ու մեր ճամփան գտնում չի՞:

Մեծ պեպենոտը իր բարձր միտքը շարունակեց.

- Ղեկավարի ձեռը զուսպ, լեզուն ծանր, մի ականջը խուլ ու

մի աչքը կույր պիտի լինի:

Մեծ Ռոստոմը գրեմաստի ձիպոտը մեծ պեպենոտի ձեռից վերցրել էր. զննեց, տնտղեց, իշխանական բարկությունը մեջը խեղդեց, ծիծաղեց ասաց.

- Էս ձիպոտը կարծում ենք կտրվել է, ուրեմն, Քեղուտ խոտ-հարքի տակերից. տղերք,- ծիծաղեց,- ի՞նչ եք ասում, էսօր էս ձիպոտը Ծեկլո հովատակի կողքերը չի՞ դաղել:- Միջնեկ թաթարին «քվեր զավակ» էր ասում, հարգանքից թե վախից՝ մեծ պեպենոտի հետ միշտ ցածրաձայն, առանց որևէ անունի ու մանրամասն էր խոսում, համարյա փսփսում էին, չնայած մեծ պեպենոտի փսփսալը որն է՝ խռխռում էր. միջնեկ թաթարին քվեր զավակ՝ քրոջ տղա էր ասում ու մնացած անկարևոր ասելիքը նույնպես ասում էր թատերաբար բարձրաձայն, այ-սինքն կարծես բեմում խոսելիս լիներ դահլիճի ժողովրդին ի լսելիք, քանի որ թաթարի տիգրանյան վայրիվերո արյունը մեկընդմիշտ բացառում էր թաքուն որևէ գործարք ու թեկուզ անվնաս խորհրդակցություն:- Քվեր զավա՜կ,- կանչեց,- կողքիդ կանգնած է, ընկերոջ շալվարի շեքը քեռուդ հովատակի մասին մի տեսնեիր ինչ է պատմում:

Բոլորը բոլորից նեղացած էին, ոչ մեկի խոսքը մյուսի համար օրենք չէր, ոչ մեկի միտքը ոչ մեկին հայտնի չէր, մեջները՝ այսինքն արանքներում մի տաք խոսք չկար և անհայտ էր՝ ներսները կա՞ր արդյոք մի տաք խոսքի, մի վերաբերմունքի, իմ ցավը մեջտեղ դնելու մի ռիսկ, այսինքն որ ասես էս իմ ցավն է ու ինձ ուտում է, ի՞նչ անեմ, և անհայտ էր՝ ցավ ունեին թե ոչ, կարո՞ղ էին ցավ ունենալ, Հովըտից իսկապե՞ս էին ուզում բաժանվել, եթե բաժանվեին՝ կարո՞ղ էին ուրախանալ, ինքնուրույն տնտեսությունը չէ՞ տեղական միտք ու եռանդ է

ուզում՝ ունեի՞ն ինքնուրույն ապագայի որևէ պատկեր, թե՞ սպանդանոցի դռան անասունի նման դեռ կային ու գնում էին: Անհնար էր, բայց խմած ժամանակ պատահում էր, արաղը քանի չէր հանգել, լեզուն սայթաքում ու այսինչ արարքի մասին բան էր դուրս գցում - կատվի պես իսկույն հազար խոսքուհեքիաթով ծածկում էին, այսինքն ինչպես որ կատուն հողով վռազ ծածկի, ու փորձով գիտեին՝ որ արաղի առաջ պիտի առավել զգույշ լինեն, խմում ու կամաց փսսում էին, իսկ մեծ Ռոստոմն առհասարակ բերանը կաթիլ չէր առնում:

Միջնեկ թաթարը պարզ է որ չկռացավ, Թեվրկի շալվարի շեքը չնայեց - ծանր, սև պարանոցը վեհորեն շուռ տվեց Մուրադենց տների գլխով դեպի Մելրքանց ամայի բլրալանջը. որևէ մեկից հատուկ նեղացած չէր, բայց վերինները և առհասարակ բոլորը պիտի միշտ գիտակցեին, որ նեղացած է ու իրենք նրա առաջ պարտական են:

Հասկանալի էր՝ որ կատակ էր անում, բայց մեծ Ռոստոմը նաև պարզաբանեց.

- Կատակ ենք անում, մատաղ,- ասաց.- սարի ձին իհա՛րկե սարվորինն է: Բայց իսկապես կա՞ թե մսակոմբինատի բաժին է դառել:

Սիրուն երեսը վերև պարզեց, բայց չպատասխանեց. մինչև հիմա գլուխը կախ էր կանգնած, հիմա էլ երեսը պարզած կանգնեց: Նայեցին, սիրուն երեսին նայեցին, հիշեցին հարցրին.

- Վաթընանց Սանդրոն բերում էր Աճարկուտ խոզ պահի, բերե՞ց:

Չպատասխանեց, կարծես խուլի էին խոսեցնում. խուլը կչարչարվեր հասկանալ, աչքերը կլարվեին, կուզենար խոսակցությանը մի բանով օգնել - սա կանգնել, կոպերն իր նման

իջեցրած լռվել էր: Փոքր Ռոստոմը սրտնեղվե՞ց, սրտնեղությունից քիչ էր մնում ճաքի, ժանգոտվեց ու «ի» արեց՝ ի՜իիիի, քիչ էր մնում մաղձ թափի:

Ասացին.

- Կյանք տեսած մարդ է, լավ պատմություններ կպատմի՝ տղերքն իրիկունները կլսեն:

«Տղերքը»՝ այսինքն Թեվիկն ու Թեվանը, այսինքն սարում իրիկվա կրակի մոտ Թեվանների ու Սանդրոյի համար լավ կլինի, այստեղ իրենց համար է լավ, քաղաքում՝ Սանդրոյի մեծ ցեղի: Մեծ պեպենոտն ասաց.

- Տաշքենդ է գնում, Սանդրոյի լսողը մենակ Ջանդառն է լինելու:

- Բա կնանի՞քը, ասացին:

- Աղջկերքը կգնան կքնեն, Ջանդառը կլսի,- կնքեց:

Ժամանակը չէ՞ ցեց է, ժամանակի ցեցը քեռու ու քրոջ զավակի նրանց բարեկամությունը քրքրել էր, սադա-հնդլոյի դեպքով դեռ ամաչեցին ու պայմանավորվեցին գործկոմի առաջ իրենցից միայն մեկը կանգնի, մանավանդ որ քրոջ զավակ ու քեռի էին՝ երկուսով չկանգնեին, ցեցը բարեկամության պարկը հիմա լիովին էր կերել, մեկ էլ տեսել էին քեռու-քրոջ զավակի նույն պարկում չեն՝ ամեն մեկն իր համար առանձին կանգնած է: Փոքր Ռոստոմը խռխռաց-խռխռաց ու մեծ պեպենոտի վրա ուղղակի պայթեց.

- Այ ընկեր,- ասաց,- որ էդպես ուրիշի գործը կարգադրում ես, սարում ընկերոջը մենակ թողած դրան դու ո՞նց ես Տաշքենդ ղրկում:

Ծոծրակի վրա պեպենները կարմրեցին-սևացան, ատեց, աչքը չնայած անտառապետության վրա էր՝ այդ րոպեից մտա-

ծեց հենց ֆերմայի ղեկավարությունը խլել, ասաց.

- Շա՛տ հասարակ,- ասաց,- ղրկում եմ:

Չասացին ժողովրդի առաջ ղեկավարությունն իրար վարկաբեկելու իրավունք չունի՝ չթողնենք կռվեն, ասացին թող կռվեն՝ տակից տեսնենք ինչեր են դուրս գալիս:

- Ղրկում ես,- ասաց,- ի՞նչ հիմունքով:

Ինչպես որ կլոր կնիքը սեղմի՝ ճնշեց.

- Ես ինքս եմ տանում:

Էդ էր պակաս որ նրա խոսքից հետո ուրիշ խոսք լսվեր - լռեցին ու ասացին էդ է, մի ամսով են գնում թե հավիտյան՝ հալիվորներից մեկնումեկին պիտի համոզեն ղրկեն Ջանդառին օգնական, էն էլ, ասացին, համարյա բոլոր հալիվորներն էլ քաղաքում տեր ունեն, տերերը քաղաքում փոքր Ռոստոմբեգից ուժեղ կնեղանան, Ռոստոմբեգս խրվեց, ասացին: Դարձյալ ինքը խոսեց՝ մեծ պեպենոտը, ասաց.

- Գնում ենք մեր ախպորը բերենք էստեղ կանգնի, առարկություն ունե՞ս:

Է՛, Երվանդի Արազն ու Վարազն էլ իրենց մոր փորում էին հաշտուհամերաշխ, դուրս եկան էս ժողովրդի առաջ իրար քիթումռութ ջարդեցին ու մեկն արևելք գնաց, մյուսն արևմուտք, է՛, ժամանակի ընթացքում մեկ էլ հանդիպեն-չհանդիպեն, քեռի ու քվեր-տղա մի շարքում կանգնել էին ու այլևս քեռի ու քվեր-տղա չէին, քանի որ նրա հասարակական գործունեությունը ձախողում էր, չէր ասում քեռիս է: Տիգրանը եթե հրաշքով զարթներ տեսներ ինքը երեք անձնավորության մեջ վերևը պատշգամբում կանգնած ղեկավարում է ու մի անձնավորության մեջ էլ ներքևն է սև արևի նման կանգնած, շատ կուրախանար, ազնիվ խոսք, կասեր՝ ապրեք:

Վերևից կարգադրեց ասաց.

- Բանկից ճամփի ծախս է հանելու, կողքիդ նստեցրու տար Հովիտ. մի հազար-հազար երկու հարյուրի սահմանում ինչքան հանում է թող հանի ու ետ բեր. քեզ եմ ասում, Սեվան:

Ինքն իր ...ից ուռած հպարտ մեկն էլ սա էր, երեսը սև արևաճաղկի նման դանդաղ դարձրեց Մելքանց ամայի բլրալանջից ղեկավարության վրայով դեպի ակումբի ճակատը, և բոլորը հասկացան՝ որ իրենց վարքի մեջ նա սխալ է տեսնում: Ի՞նչ սխալ, ի՞նչ էին արել՝ որ սխալ լիներ, ի՞նչ էին անելու՝ որ նա սխալ չհամարեր - լռեցին, ասացին սպասենք՝ ինքը մի օր կարտահայտվի:

Տեսուչների կշտամբանքից հետո ակումբավարի սիրտն իրոք մի քիչ թրթռում, տղերանցն ասում էր եկեք Վիլյամ Շեքսպիրի «Համլետը» կամ Ալեքսանդր Շիրվանզադեի «Չար ոգին» ժողովրդի առաջ ներկայացնենք, կենտրոնը Հովըտի գլխի վրայով տեսնի ու հասկանա՛ - պատրաստի խումբ էր, բայց լռում ու լռում էին, այսինքն համաձայն էին դահլիճում նստել ու ձեռքները կրծքներին ինքնամեծար խաչած՝ ուրիշների կապկությունը դիտել ու երբեմն նույնիսկ ժպտալ, բայց որ ժողովրդի առաջ իրենք կապկություն անեն, ասեն «պատառ-պատա՜ռ կանեմ, հում-հո՜ւմ կուտեմ» - երբեք: Փոքր Ռոստոմբեգը խեղդվում ու խռխռում էր, սիրտը հիմա պայթելու էր, մեծ պեպենոտն ասաց.

- Տրաք-տրաքի ես գալիս, արտահայտվիր՝ որ չտրաքես:

Ասաց.

- Քու աշխատողը որ առանց իրավունք հարցնելու Տաշքենդ կորչի՝ դու տրաք-տրաքի չգաս:

Ձեռը խփեց ասաց.

- Իրավունքի՛ է եկել:

Ձեռը խփեց ասաց.

- Ընարավորություն չունեմ, չե՛մ տալիս:

Բազրիքի վրա ձեռը շրխկացրեց ասաց.

- Տալի՛ս ես, տվել պրծել ես:

Ասաց.

- Ես ո՞ր հալիվորի ոտն ընկնեմ խնդրեմ. ինքը թող մեկին համոզի տեղը ղրկի ու չքվում է չքվի:

Ինքը ներքևը լուռ կանգնած էր, թե շները՝ թե ինքը, նպատակն ասես կոստյումավորվել առաջները ցցվելն էր եղել:

Ասաց.

- Որովհետև ղեկավարման ջի՛ղ չունես. Օսեփանց Սիմոնը հրեն դռներին պարապ պտտվում է՝ մե՛կ, նրա ախպեր Ադամը՝ երկո՛ւ, Օսեփանց Ավագը հիվանդանոցից եկել է՝ երե՛ք, Ասատուրը, Սերգին, Համիկ հորեղբո՞րն ինչ է եղել՝ Օսեփանց Համիկը, քո քույր Շուշանը կթից ազատ է՝ Շուշան քույրդ տա՛սը:

Նեղացած էր, ավելի նեղացավ՝ երեխայի պես ուղղակի խռովեց ասաց.

- Մենք վաղուց ենք նկատել, որ մեր ղեկավարման ջիղը քեզ դուր չի գալիս, բայց հալիվորների առաջ մենք խնդրվող չենք, մատաղ. ամեն մեկն ասում է իմ փայն աշխատել պրծել եմ: Հրեդ ժողովրդի մոտից ես գալիս ու տեղյակ չես՝ որ երեք ռուբլիների վրա կասկած կա, ասում են ձեր նպատակի վրա հալիվորներս ինչի՞ էինք փող դնելու:

Ասաց.

- Իրենց իրավունքն է: Հալիվորները չեն ուզում՝ դու գնա. թե՞ վախենում ես կուստոմսդ ձեռիցդ դրա համար առնեն, չեն առնի:

Վախեցավ, հարցրեց ասաց.

- Դու ինձ Ջանդառի հետ չոբա՞ն ես ղրկում:

Պա՜, սպանեց, քրոջ տղան քեռուն էդպես բան չէր անի, ուղղակի թշնամու նման սպանեց, ազնիվ խոսք, ասաց.

- Չոբան, այո, ոչխարած. ինչո՞ւ մենակ Ջանդառի, Վաթընանց Սանդրոն քեզանից ինչո՞վ է պակաս, որ խոզի կողքին կանգնել է:

Մեռավ, ուղղակի մեռավ, մեռած տեղից ասաց.

- Կգնամ, ճա՞րս ինչ:

Խղճաց, ծիծաղեց ասաց.

- Բա էդ ինչի՞ ես մեռնելով ասում:

Այդքան խեղճ եղել էր մեկ էլ Վերանին գործկոմ ճամփելիս, մյուսները նրան այդպես խեղճացած չէին տեսել, ուղղակի լաց էր լինում. քաշը, եթե դնեին ու կշռեին, մենակ ինքը Թեվըկի ու Ջանդառի քաշը կունենար ու դեռ նորամանուկն էլ Ջանդառի գրկին, բայց անտեր որբևայրու նման լաց էր լինում ու հենց որբևայրու նման էլ գանգատվեց, այսինքն դա տղամարդու խոսք չէր, ասաց.

- Քեզանից էդ մի բանը չէինք սպասում, Վերան տղա, ազնիվ խոսք:

Ծիծաղեց ասաց.

- Կատակ էինք անում:

Մեծ Ռոստոմի ոճով ու ծանրումեծ կշտամբանքով, չէ՞ ան-տերի մեկն էր ու իր գոյության համար այստեղ մեծ Ռոստոմի սեղանին ու տեղաշորին էր պարտական, անասնաբույժը վերևից ներքև Թեվըկին ասաց.

- Լավ չարեցիր, մեր տղա, լավ չես անում, տղերանց հա-մերաշխությունը գալիս քայքայում ես. կոնստիտուցիոն օրինա-խախտումների գծով աններելի է,- ասաց,- չէ՞ որ քո ղեկա-վարներն են, քո ղեկն իրենք են վարում, քո ճակատագրի մասին

էս գյուղի վերաբերյալ իրենք են մտածում, կենտրոնի առաջ իրենք են կանգնում. եթե ձեր կողմից հարգանք չլինի, կողմնակի հովտեցին ինչո՞ւ պիտի մեր բարձր արդարությունը հարգի:- Չափն անցավ,- ասաց.- Հյուրասիրությունների գծով, չհաշված բուն բնամթերքի առաքումը, խոզ է, հնդուհավ է և այլն և այլն, ծախսվել է,- ասաց,- անցած ամիս շաքար, զուտ շաքար՝ յոթ կիլոգրամ, ոչխարի պանիր՝ հինգ գլուխ ոչխարի պանիր, արաղ, ասաց...

Մեծ Ռոստոմբեգը տիրաբար լռեցրեց՝ «սսսս» ասաց, բայց մտքում շատ գոհացավ, որ իր շարժուձևն ու մտքերը օր-կենդանության ժողովրդի մեջ են, ժողովուրդն արդեն հոլովում ու անմահացնում է. խեղճն անձնական ժառանգ չունի, բայց ուզում է իրենից հետո ինքը լինի, ասում է Ծմակուտը քանի կա՝ Ռոստոմի փառքն ու մաքրությունը պատմվելու են:

Չգիտենք ինչ պատահեց՝ նորից խոսք խոսքի հասավ. երևի ուրիշ թաքուն կռիվ էլ ունեին, մեծ պեպենոտը փոքր քեռուն ասաց.

- Դու իմ բերանը բացել չտաս, թե չէ պատասխանի իրավունքը ժողովրդին կտամ,- այսինքն Թեվըկին:- Արտահայտվի՛ր, արա,- ասաց,- ի՞նչ ես բերանդ ջուր առել կանգնել, Վերանն էստեղ քու փաստաբա՞նն է:

Ոչ գնում էր, ոչ էլ ասում ինչի է կանգնել - կանգնել սպասում էր ու չէր ասում ինչի է սպասում. եթե շները գիտեին ինչի չեն ոչխարի մոտ՝ ուրեմն ինքն էլ գիտեր: Փոքր Ռոստոմը կռվեց ասաց.

- Իմ ինչի՞ց եմ վախենալու, արտահայտվում է թող արտահայտվի՝ տեսնեմ իմ էդ որ թերությունն է բացահայտում:

- Ասա՛, արա, ասա՛, խոսի՛ր,- ասաց:

Այդտեղ այդքան կանգնած էր՝ մի ձարտարություն չէր սովորել, կոպերը թրթռացրեց ասաց.

- Գնում եմ էնիքը՝ Տաշքենդ:

Շատ ուժեղ հիասթափվեցին, մանավանդ մեծ պեպենոտը, հիասթափվեց ասաց.

- Ա-ե՜ե, շնորհքդ կտրի, քու շնորհքդ, բա է՞դ էիր ասելու, քու փոխարեն բա աշխատավորը ես լինեի ու է՞դ ասեի. ձմեռը դեմդ է ու գոմերդ սարքին չեն, մի՛ն՝ ասա, անասնակերիդ հաշվարկը կասկածելի է՝ երկո՛ւ, պետական ոչխարի կեսը սեփական է՝ երե՛ք, անասնապահիդ քաղաքական գիտակցությունը մշակված չի՝ չո՛րս, կուլտուրական մակարդակը շատ խիստ ընկած է՝ հի՛նգ, մեր ընտանիքների շեֆությունը բարձիթողի է արված, ասա, է, ասա:

Էդ արդեն անասնապահության ղեկավարությունը զավթելու պատրաստի ծրագիր էր, գյուղի ընդհանուր շահերի համար իրեն ուրեմն ղրկում էին կենտրոններում սրա-նրա առանձնասենյակի դռանը քրտնելու, իրենք այստեղ իշխանությունը զավթելու ծրագիր էին մշակում: Փորձեց ասաց.

- Ջանդառի կուլտուրական ու քաղաքական մակարդակը ես ինչպե՞ս էի բարձրացնելու՝ որ անհասկացողաբար աչքաթող եմ արել:

Կարծում էին կխղճա ու կասի կատակ էր - չխղճաց. քեռին էր, բայց կռացրեց, ծալեց, թևերն ու ոտները կաշկանդեց, դրեց ծնկի տակ. ասաց.

- Շատ հասարակ. ահնիձորցին հրեն սարերը լույս է քաշել ու հեռուստացույց դրել. «էդ քեզ Չինաստան է, էդ էլ քեզ Ամերիկա ու աշխարհ է, էդ էլ ֆուտբոլ ու համերգ - ոտդ մյուս անգամ գյուղում չտեսնեմ». եղա՞վ քաղաքական մակարդակ, եղա՛վ:

Պլանշետը վզից հանեց ու բոլոր փաստաթղթերով՝ հաշվետվությունների պատճեններով ու վերևից եկած կարգադրություններով հենց այդպես դրեց բազրիքին: Խնդրեմ,- ասաց,- խնդրենք. էս ձեր ղեկավարությունը, էս էլ ձեր աշխատավորը. իրավունքը հիմա ձերն է, Տաշքենդ գործուղեք:

Այդպես ղեկավարություն չի փոխվում, ձեռքից այդքան հեշտ պաշտոն չեն տալիս, մեծ պեպենոտին է՞ երկու տարի հանում ու հանում էին՝ դուրս չէր գալիս, տրակտորը գցած քաշում էին, մինչև նորից էին սկսում՝ արմատը լավ բռնում էր, Մոսկվան ու Երևանը մինչև չկցվեցին՝ դուրս չեկավ, բայց համարեց՝ որ խոսքի պատասխանատվությունը պլանշետի հետ վար է դրել, դարձել է անպատասխանատու ազատ քաղաքացի, շտկվեց ու, հա՞ատ նանը չմեռնի, շրխկալով հարձակվեց.

- Ի՞նչ ես, արա,- ասաց,- իր ղեկավարության դեմ ժողովրդին գրգռում, պետական աշխատանքն ինչ իրավունքով ես ձախողում, ինչո՛ւ ես ստիպում՝ որ գնամ մի ղազախեցի անլեզու բերեմ էստեղ չոբան, գործի հայրենասիրական կողմը ինչո՛ւ ես անտեսում, պետական շահին ինչո՛ւ ես քո անձնականին ստորադասում:- Էս արդեն ճիշտ լուսահոգի Տիգրանն էր. ասում է հրացանը դատարկ էլ լիներ՝ վերջին կրակոցն իրենն էր լինելու, բերանում ասում է պատասխանի իրավունք էլ չլիներ՝ պիտի շրխկացներ, իրավունքը հետո գալիս էր: Մեծ պեպենոտից մի երկու տարով էր մեծ, Թեվըկից ամիսներով մեծ էր կամ նույնիսկ փոքր՝ առաջին դասարաններում միասին էին, բոլորն էլ առհասարակ քառասուն-քառասունհինգ տարեկան էին, բայց այնքան երկար էին ղեկավարել, որ կարծում էին ժողովրդից տարիքով նույնպես անց պատկառելի հալիվորներ են,- հալիվորի պես փնթփնթաց ասաց.- Սերունդ չդառավ՝

գլխներիս կրակ դառավ: Չի կառավարվում, չի՜,- խռխռաց,- ինքնագլուխ է, ու ոչ սեփական խելք ունի՝ որ չանհանգստանաս վստահես, ոչ էլ ականջ՝ որ խորհուրդդ լսի, չի՛ կառավարվում, չի:

Ու բոլորի համար, իրենց տներում թերևս ընտանեկան անհնազանդներ նույնպես ունեին, սերունդն այստեղ Թեվիկն էր: Իրենք իրենց շվաքից զգուշանում էին՝ վախեցան ու, թերթերից ու հեռուստացույցից ձև էին սովորել, մտքների մեջ վռազ կոծկեցին թե, ախպեր, անբարեխիղճ առանձին անձնավորություններ՝ գուցե, ինչպես օրինակ փախստական տաշքենդցին, բայց նոր ժողովուրդն առհասարակ լավ ժողովուրդ է, նոր ժամանակների ոգուն համապատասխան ինքնուրույն է մտածում ու հասկանում: Հրե՛ն, ասացին, Դսեղա երիտասարդությունը. կարմիր շալվար է հագնում ու ծամոնը բերանը-գցած բիլիարդ խաղում, իսկ նրանց ղեկավարությունը եկել մեզանում չոբանի տեղյակ էր անում, այսինքն տանի իր ոչխարին ոչխարած, կարծել էր Ծմակուտը հին թուրքի գյուղ է: Ծմակուտը երիտասարդություն չունի, եթե ունենար, ասացին, Դսեղա երիտասարդության նման չէր լինի: Մտքերը ծայր ծայրի չեկան, հում գարեջրի ու զգուշավորության մեջ փտել էին: Կենտրոնն ասում էր աշխուժացե՛ք, թե չէ ակումբի ֆինանսավորումը կդադարեցնենք, և կենտրոնի պահանջից անկախ էլ, ազնիվ խոսք, երբեմն ցանկություն էր լինում ներկայացում պատրաստել ու, ինչպես որ մի ժամանակ Արծիվ կապույտ հովատակը, շրջանային ստուգատեսին զրնգացնել, բայց սրանք թույլ տային իրենց միջով համլետյան մտքե՞ր անցնեն, գիժ Դանելին թողնեին իրենց միջից «պատառ-պատառ կանեմ, հում-հում կուտե՞մ» բղավի - մինչև մահ ու գերեզման երբեք:

Մեկ էլ ուշքի եկան տեսան միջնեկ թաթարն ու Թեվիկը համարյա թե կռվում են, թաթարն ասում է՝ չե՛ս գնում, ինքն ասում է՝ գնում եմ: Թաթարն ասաց.

- Որ գնալու լինեիր՝ ես կասեի գնում ես. որ ասում եմ չես գնում՝ ուրեմն գնալու չի:

Միջնեկ թաթարին շողոքորթելու, հետը բարեկամանալու պատրաստի առիթ էր, փոքր Ռոստոմը վերևից շողոքորթեց խռխռաց.

- Գլուխդ դրա հետ անտեղի մի ցավեցրու, Սեվան, գնում է թող գնա, վայրենի հանդում իմ ընկերն ու կնիկ-երեխան չեն անտեր մնում, Վաթընանց Սանդրոյի հույսին իր կնիկն ու երեխան են մնում, թող գնա:

Սպասեց խոսքը լրիվ ասի վերջացնի, բերանը կծկած ու ունքը կեռ՝ դարձյալ ասելիքի սպասեց, ապա իրեն վայել ուշադրության ու լռության մեջ ներքևից վերև ասաց իր ան-բեկանելի մշտական վշտով.

- Դու իմ գլխացավի մասին զուր մտածեցիր, այսինքս չհաս-կացանք ինչու մտածեցիր. ես գիտեմ ինչ խոսեմ ու ինչ չխոսեմ:- Այդքանը, բայց շատ էր չոր, խղճաց, բացատրեց.- Սեվանը որ ասում է չպիտի գնացվի՝ ուրեմն մի բան գիտի: Անհրաժեշտ չի:

Ասացին փոստատարն ուրեմն Ասորենց ցեղի գլուխը նրան է համարել ու, հեռագիր է եղել, տվել է նրան, գրպանում փախստականի մասին հեռագիր ունի, միասին խմել, իրենց գաղտնի հաշիվներով ընկերները գլխին աղյուսով խփել են կամ միլիցիան պարապության ու հարբեցողության համար բռնել Տաշքենդից քշել է Սիբիր: Աշխարհում ոչ մի գյուղ առանց այլան-դակի չի, ասացին, Ծմակուտը չէր կարող առանց այլանդակի լինել:

Ետևը-գցած հեռացրեց, այսինքն սապոգավոր ու դանդաղ ինքը գնաց ակումբի դուռը և Թեվիկը ետևից պարտավորված գնաց ու շներն էլ Թեվըկի հետ, ակումբի դռանը գնացին երկար խոսեցին: Մեկ Սեվանն էր խոսում ու Թեվիկը լուռ էր, հետո Թեվիկը ծոցագրպանից մի թուղթ հանեց տվեց Սեվանին ու սա երկար մտածելուց հետո ուսը բարձրացրեց. վիճակն ուրեմն այնպես էր, որ նույնիսկ Սեվանի պես տղան իր բայը չէր ասում, բայց նա մտադրվել ու գնում էր որ գնում էր. թուղթը ետ ծոցագրպանը դրեց, սպասողական վիճակում մի րոպե ոտը կախ գցեց ու, որ տեսավ թաթարից առարկություն չկա, ճամփա ընկավ: Ասացին զոհված տղերքի հավերժական հուշարձանի մյուս կողմով ճամփան կթեքի ետ դեպի ձմեռանոցները, բայց ոչ - շները կողքերից՝ թափ իջավ ու դպրոցի մոտով տվեց անցավ, Տաշքենդ՝ ուրեմն Տաշքենդ:

Միևնույն է իզուր կլիներ, ասացին միջնեկ թաթարին չխոսեցնենք, սպասենք ինքը գուցե չհամբերի ու մի բացատրություն տա, բայց էդ արդեն միջնեկ թաթարը չէր լինի,- սապոգավոր ու դանդաղ եկավ մեքենայի ակները տնտղեց ու կանգնեց լռեց: Պատահում է, պաշտոնական գրավոր կարգադրությամբ նա ու իր բեռնատարը, չնայած խնդրարկուն անբացատրելի պատճառներով ուրիշ մեքենա է ակնկալում, տրամադրվում են որևէ տան հոգսի. ասես կռանա բարձողի հետ պարկի պոզը բռնի կամ հալիվորի ձեռքից խոտի եղանը առնի՞. ծանր ժամացույցը թևին, ձեռները խաչած սպասում է բարձեն. գնում միզում ու գալիս բարձածը նայում է. չի մատնվում, բայց մանավանդ հալիվորների դեմ նրա թշնամանքը հատուկ է, Օսեփանց Ավագին խոսքով դեմառդեմ գնդակահարել է. ձվարանի ձողվածքավոր, ձողվածքը եղանի զոռից լցված հալիվորին ասել է. «Քու թայերը

էն աշխարքի կարծ ճամփա ջոկեցին, դու չարչարվում ու չես կարենում», ու ծանր ժամացույցը կապած սև ձեռքը կարծ նետել է ձորի վրա. խոսք է, գնդակահարություն չի, բայց գնդակահարելիս ուրիշ խոսք չեն ասում: Մի մեծ «բայց» ունի. բանակ չեն տարել ու ռուսերեն չգիտի, միակ թերությունն է, բայց եթե նկատի առնենք, որ ավտոմեքենայի մասին գիտությունը հայերեն մի երկու գրքից այնքան հիմնավոր է քամել, ինչքան որ ռուսագետները չեն զորում ռուսերեն հարյուր գրքից, ուրեմն թերություն չի: «Քու թայերը»՝ այսինքն Ակոփը, Մանվելը, Ղեվանտ Վրացյանը, Սմբատ Մելիքյանը, Ներսես Մնացականյանը, Օսեփանք, Համիկ հորեղբոր Գիքորն ու Պիոնը, Բերբերանց Գիքորի Ակոփը, Արազը, Սերգին, Սարիկը, Մելքանց Ալեքսանը, զոհված մյուս տղերքը... բայց նրա հերթի մեջ առաջինն ու կարծում ենք միակը իր հեր Ակոփն է, ու չգիտես ինչ ասես, ինչ պատասխան տաս:

Դպրոցի պղնձե հին զանգը ղողանջեց, ժամի ուղիղ երկուսն անց երեսուն րոպե էր: Քննարկել, որոշել ու վարիչին հասկացրել էին, որ բոլորն էլ հիմա իրենց թևին ժամացույց ունեն, պղնձե բարձր զանգը հին ժամանակների իր համածմակուտային նշանակությունը կորցրել է, այսինքն գառան մոտ հանդերում, գողության տեղը այգիներում, գետափից լանջերով ու անտառներով մինչև Կապույտ աղբյուր ու համարիր Նավ-ուրթ զանգն այլևս սիրտ չի թրթռացնում, պիտի իջեցվի ու տեղը դպրոցի առանձին կյանքի համար նոր ժամանակներին համեմատ էլեկտրական լուռ զանգ դրվի,- Գրիգորյանը լսել, աչքերն իր նման նեղացրել ու ոչ հա էր ասել ոչ չէ: Եվ զարմանալի էր, որ զանգը լռությունից դեռ երեխա էր ազատում, դեռ կանչեր ու թարմ կարմիր փողկապներ էին զնգում, իրար մեջքի պայուսա-

կով դեռ խփում ու չափարի ետևը ուսուցչից դեռ թաքնվում էին:

Այդ օրը դեռ մի բան էլ պատահեց. գործկոմի իր մշտական տեղից մեծ Ռոստոմը դուրս եկավ գնաց հեռախոսի մոտ. նախապես հայտնի էր՝ որ հանգույցի հեռախոսավարը մեր գյուղից գնացած հարսը չի, այլ մի բնիկ լաչառը, բայց ժողովրդի շահի ձնշման տակ ստիպված էր ոչ մի հովընտեցու հետ չխոսելու իր սկզբունքը խախտել. զանգեց ասաց Ռոստոմն ենք ու պահանջեց միացնել խնայդրամարկղին. շոգեց կարմրեց, ատեց մոխրագունեց ու խնայդրամարկղին ասաց՝ թե այն, ինչ հիմա ինքը պիտի ասի, Ծմակուտի ղեկավարության առաջին ու վերջին խնդրանքն է Հովընտի առաջ. մեր չարքաշ աշխատավորներից մեկը ասաց, հիմա գալիս է դրամարկղը դատարկի, այսինքն տարիների հավաքածը տանի Տաշքենդի ճանապարհներին քամուն տա - աշխատավորության շահերի մասին պիտի մտածվի ու մի որևիցե անհասկանալի ձևով մերժվի, բանկում առայժմ փող չկա՝ ասվի, մի շաբաթ պիտի համբերես. Անտառի Ռոստոմն ենք,- ասաց,- ճակատի քրտինքը մաքուր սպիտակ թաշկինակով սրբեց, եկավ իր տեղը կանգնեց, ասաց.

- Մեր կարողությունն էդ էր, ուրիշ ելք չունեինք:

Մինչև այդ, միջնեկ թաթարը ռուսերենը պարապող դասատուին կանգնեցրել, իր տեղից ինքն ընդառաջ էր գնացել, երկուսով մի բառի մասին խոսել էին, դասատուն ձեռքը կրծքին վստահեցրել էր՝ թե իր բացատրությունը անկասկած է, և միջնեկ թաթարին մտատանջության մեջ էր գցել, միջնեկ թաթարը պռոշը ծծել ու վիզը դանդաղ տրորել էր: Հետո դասատուն բարձրացել էր պատշգամբ՝ խանութից ծխախոտ վերցնելու ու կողքները մի քիչ կանգնելու, և գործկոմն սպասել էր՝ թե միջնեկ թաթարը մի կողմի վրա կհեռանա ու դասատուն կհայտնի իրենց

գաղտնի խորհրդակցության իմաստը՝ որ անպայման Թեվըկի մասին էր, բայց Թեվըկի հանգամանքից հատկապես ի՞նչ էր պարզաբանում: Միջնեկ թաթարը չէր հեռանում, ուժեղ ծոծրակը դանդաղ շփելով ու պռոշը ծամելով ավտոյի մոտ կանգնած էր, իսկ Թեվիկն այդ ժամանակ ջահել, պուճուր, չարացած մարդու իր արագ քայլով Հովըտին ավելի ու ավելի էր մոտենում, շները կողքերից ցինգիր էին տալիս, և մեծ Ռոստոմը ստիպված զանգահարեց: Տասը տարի՝ Ծմակուտը Հովըտի ենթակայությանը հանձնվելու օրից, ոչ մի հովըտեցու հետ ոչ դեմառդեմ ու ոչ էլ հեռախոսով բառ չէր խոսել, տոմսն ու կուսանդամավճարը կոպեկը-կոպեկին ճիշտ հաշված դնում էր հովըտեցու առաջ, երկու մատը աչայի պես դնում գրքույկի բացվածքին ու երեսը շուռ տալիս, զանգահարեց,- համարիր հրահանգեց, շարքի մեջ իր մշտական տեղը եկավ կանգնեց որպես մարմնացյալ կարեկցանք, շտապ հասկացողություն, ծմակուտյան հայրենասիրություն ու լուռ համեստություն, հետո հոգոց քաշեց ասաց.

- Մեր կարողությունն էդքան էր, մատաղ, ուրիշ ելք միգուցե կար, բայց մեր յոթնամյա գրագիտության հասկացողությունը էդքան էր:

Հավի թե ուրուրի աչքերը մեծ պեպենոտը ճպճպացրեց, ասաց.

- Իրավունք չունեիր:

Ասաց.

- Միգուցե չունեի, բայց մեր խիղճը հուշեց, ասաց երեք տուն է պահում՝ գիշերօթիկում աղջիկ ունի, էստեղի տունն ու զավակը, սարի ընտանիքը: Մի բան էլ կա՝ կարծենք փախստականի ալիմենտը էս գյուղից է գնում: Մեր իրավունքը ժողովրդի շահը հասկանալն է:

Մեծ պեպենոտը մի քիչ մտածեց, մի քիչ երևի ազդվեց, հետո ասաց.

- Բայց էդպես իրավունք չկա, իրա փողերի տերն ինքն է:

Խղճավոր հասկացողը առանց բացատրելու կհասկանար անխիղճ անհասկացողին, մանավանդ եթե մեջը շահ ունի, հազար բացատրիր, բայց շատերն էլ կան՝ որ ոչ հաստատ հասկացող են, ոչ էլ երդվյալ անհասկացող, և ժողովուրդն առ-հասարակ առաջնորդող խոսք ու վարք է պահանջում,- և մեծ Ռոստոմը հառաչեց ասաց.

- Մեր համեստ կարծիքով ղեկավարի ղեկավարությունը պիտի էնպես լինի, որ նրա ժողովուրդը խնայած միջոցները անշահ տեղը չշռայլի - մեր թերի կարծիքն է,- և ձեռքը դրեց բազրիքին: Մուրադենց տների հետ կապված մի ծանր դեպք նրա հեղինակությունը դեռ չէր սասանել և բոլորը նրան լսում ու խոսքից մեծ իմաստներ էին հանում, միայն մեծ պեպենոտը նրա խոսքի ու գործի համապատասխանությունը երբեմն թաքուն տնտղում էր, լսեց, ուրուրի աչքերը թարթեց, պատասխանն իբր թե նոր մտածեց, բայց վաղո՜ւց-վաղուց գիտեր՝ այն օրից, երբ հասկացել էր, որ ինքը ժողովրդի աշխատանքը պիտի կա-ռավարի. ասաց.

- Իր շահի տեղը ինքը մեզանից լավ գիտի:

Պատասխան չստացավ, այսինքն պատասխանը, այդտեղ յոթ հոգի էին թե ութ, բոլորի մտքում նույնն էր. բոլորն էլ հասկացան, որ մեծ պեպենոտը ներքուստ ծանր չի, ցույց չի տա-լիս, բայց նախանձում է փախստական հորեղբորը՝ որ ընտա-նիքը Գործարանում թողել ու այստեղից գլուխն առել կորել է:

Է՜, նրանց ապուպապ Ակոփը՝ Ասորենց Նիկալ, Սաղաթել ու Մուխայիլ պապերի, սրանց քույրեր Սիրանուշի, Հայկանուշի ու Վարդանուշի հերը, Վանքեր ոտաբոբիկ եզնարած երեխա է եղել

ու լսած է եղել, որ հեռու ձորերում փախստական ձորտերի Ծմակուտ անուն ազատ համայնք կա, այսինքն որ զուտ իրենց գործի տակ են ձորտ, Երկայնաբազուկ-Արղությանների եզան մոտից թողել փախել է. Արգուտինսկիների կառավարիչը ներքևի ձորում, ուր հիմա Գործարանն է, հասել ականջից բռնել ու ետ է տարել, «քու ծնողը, քու եզան կողքին ե՞ս պտեմ կանգնիլ», հետո Դարպասաձորում ձին քշել ետևից նորից է հասել, ոտից բռնել ու ծեփել է քարին, սպասել է կանգնի, գլխից բռնել ու ոտի վրա քառասուն անգամ պտտել է, որպեսզի Ծմակուտի կողմը մոռացնի. երեխան որ գլուխը բռնած դուրս եկավ Ծմակուտ՝ ասում է յոթ օր սիրտ էր ետ տալիս. Օսեփանց մեծ Օհանես պապն ու Մելքքանց Մելիք պապն ասել են՝ «բա՛, տղա ջան, էդ է», այսինքն թե կյանքն էդ է. իր ցեղի նման թիլիկ ծիծաղել է՝ թի-հի, այսինքն թե գիտեմ:

Մեծ ու մանր ավազակները միաբան են, գայլն ու անգղը որսի միասին են ելնում - ուղն ու տաք արյունը ինձ, մնացորդ լեշը քեզ: Խան-Աղա-Մահմեդ-Խան շահը Թավրիզի իր անա-պատներից բարձրացել, լեզգիների Լեզգի-Հասան-Խանը Կով-կասի իր ծերպերից իջել, Վրաստանը տակնուվրա են արել: Նժույգ-ձիերն ու իշխանադուստր աղջիկները՝ կռտած շահին (ասում է պալատը լիքը աղջիկ էր ու չէր զորում, մեջքը կատաղած քոր էր գալիս ու ձեռը սրին էր գցում), այծերն ու ջորիները՝ Լեզգի-Հասան-Խանին: Թիֆլիսյան ջերմուկներում շահը կոտորածից հետո լողացել է, Հախպատաձորի ջրերում էլ խանն է լողացել: Խանը կռտած չի եղել, այծերով ու քարքարուտ ջրերով լիացել, ասել է Հախպատը չեմ ջնջում, թողնում եմ մյուս անգամվան: Ծլեցեք, ծաղկեցեք, զորացեք մինչև մյուս իջնելս, ասել է, բայց պայման եմ դնում: Հախպատավանքի չոր

տերտերների առաջ պայման է դրել՝ որ եթե մեր այս երկրից մեկը եղավ, որ Լեզգու իր կոխ-կալողին տեղից շարժեց՝ Հախ-պատն ուրեմն ապրելու իրավունք ունի, չեղավ՝ տակը չոր խոտ է տալիս ու վառի: Չէ՞ տարին մի հատ զկեռ ու մի երկու մորեխ էին ուտում, մնացած ժամանակը կարդում էին, շա՜տ գրքեր ունեին, կարդում էին,- նիհար, լղար, չոր տերտերների վրա ծիծաղում ասում է ոնց որ ծղոտ լինեք, էս է տակն եմ տալու ու գյուղը ձեզանով վառեմ: Նրա կոխ-կալողին ձիթել ու կանգնեցրել են, աղիողորմը գյուղը բռնել է: Օսեփանց Ղուռդի անուն մաճկալը մի լուծ գոմշով վարի է եղել, իսկական անունը Մնո, Մացո, Մնաց, Մացակ է եղել, Օսեփանք այդտեղից են Մնացականյան: Յոթ ախպորից մահը օրորոցում վեցին խեղդել, Մնացականին չի զորել, Մնոն ինքն է հաղթել դուրս եկել աշխարհ, դրա համար էլ ծնողները՝ հերն ու մերը, պապն ու տատը, սիրելով են անիծում, «վեց ախպոր գլուխ ես կերել, գլխակեր», ասում են: Վարի է լինում ու ցելում նստած մածուն ուտելիս է լինում, գլուխը բարձրացնում տեսնում է տերտերները գլխին կանգնած - վիզները ծուռ, խեղճ-խեղճ նայում ասում են «որդի»: Գդալի տակը լիզում ասում է «կարալ չեմ»: Վիզները ծռում ասում են «որդի»: Մեռած վեց ախպոր ուժը մեջը, ցելում խրվելով, կարճ ոտները իր ծանրության տակ ծռված, գայթելով եկել է, ետևից ճմբերի վրա մորեխի նման ցատկոտել են տերտերները - եկել տեսել են յուղած կանգնած, գոռացել ու ընկնել-ելնելով ցելերն ի դուրս փախել է, վախեցել է ուրեմն, ասել է «կարալ չեմ»: Լեզգին կատաղել, ձին ետևից մտրակել ասել է՝ *սանին աթասը*, հորդ քյալլեն, որ կարալ չես ու էսքան ցել ես արել, քու արտի հացն ո՞վ է ուտելու, ե՞ս: Լեզգու խոսքը ճնշում ու կանգնեցնում է, ցելերում կանգ է առնում, մի խոսքով Լեզգին ձիու

ռեխը-տված բերում ասում է կոխ ես բռնելու: Օսեփանք ասում են նա մեր պապն է եղել, Մելքանք թե՝ մեր ու ձիշտ մեր Ջանդառի նման ոտները կարճ ու ծուռտիկ, մեջքը երկար, թիկունքը լայն ու կանաչ աչքերը շեղ են եղել: Օսեփանք ասում են Ջանդառի եղածն ինչ է՝ որ լեզգի հաղթի - մեր Թոթրոշի ու Ռափի նման է եղել, Ռափըկի պես գդալի տակը լիզել ասել է «վախում եմ կարենամ ոչ», բայց կարողացել է: Հախպատեցի մեծերը Լեզգու վեր-եկած տեղն ու նրանց կոխի տեղը ցույց էին տալիս, երե-խաները նրա ծուռտիկ ոտների տեղը փնտրում էին: Լեզգու կոխ-կալողն ու մաճկալ Ղուռդին իրար բռնել են, ու մաճկալի ոտների տակ գետինը երկու տեղ խորն է գնացել: Կոխի օրենք չգիտի՝ ուսով ծնոտը ճնշել ու ատամներն աղալ, ծնկով ձվանը ջարդել, բերանով ականջը պոկել չգիտի - ոնց որ արջը կոճղ գրկի՝ բռնել ու քիթը ջնջխված, ականջը կերված, ձվանը ջարդված արյուն-լվիկ կանգնել է, չգիտի ինչ անի: Հուպ է տվել սեղմվե՛լ, զոռից իր քթերի արյունը գցել է: Իրիկվա կողմ լեզգին բղավել է, Ղուռ-դու ճնշմանն ուրեմն հոգին չի դիմացել, մարդու վրա ինչքան ծակ է լինում՝ բոլոր ծակերով հոգին լեղապատառ դուրս է պրծել: Սա զրույց է, բայց Ղուռդու բերած հետնորդներիս զրույցն է:

Երկու վկան էլ կան՝ Վաթընանց Ավետիքն էլ կա, Օսեփանց Համիկ հորեղբայրն էլ: Հովըտի ու Ծմակուտի հնձվորը Մամռուտ խոտհարքում իրար տվել է, գյուղերը հարայ է ընկել՝ թե տղերանցը ջարդեցին, Մուրադենց կարմիր քարհանքի գլխից հովըտեցին իրեն պատռում է՝ թե ծմակուտեցիք մեզ կերան: Մեկ էլ, ասում է, հովըտեցիք վրա տվին ու ծմակուտի տղեն զարզանդած ետ քաշվեց - մեջները խոսք ընկավ՝ թե Ավետիքը եկել է, Ավետիքը հասնում է,- ետ քաշվեց ու հովըտեցու օրդուի առաջ Համըկին մենակ թողեց, թևերը կամ զուտ թիկունքը բռնող մի տղա չի մնացել ու մեղավոր չեն՝ Ավետիքը հասել է:

Թե Համիկն է հովընտեցու միջով դեպի Ավետիքը ճամփա բացում, թե հովընտեցին ինքն է կիսվում ու Համըկի վրա Ավետըքի ճամփան բացում՝ աստված գիտի, բայց Համիկ հորեղբայրը մեկ էլ տեսնում է մահն առաջը կանգնած գեշ ժպտում է, այսինքն Ավետիքը, աչքերը փակում ու ձեռի փետը վրա է բերում, թոքերը փետի հետ վնգում են: Ասում է, մեկ էլ տեսանք հովընտեցիք Ավետըքին տանում են, Համիկն էլ նստած գլուխը բռնել է՝ թե էս ինչ արի: Խոտհարքն այդ տարի մնացել է Ծմակուտին, բայց ոչ Ծմակուտը ու ոչ էլ Հովիտը այդ տարի չեն հնձել, մինչև գյուղատնտես Ակսել Բակունցի գալը Մամռուտ խոտհարքներն անտեր են եղել: Վաթընանց տղերքը Սանդրոյի գլխավորությամբ գիշերը գալիս Համըկին մի անթույլատրելի կնկա ծոցից հանում, հրացանի կոթով գլխին խփելով-խփելով տանում են. տասնինը թվի խոլերան ասացինք հատկապես հարսների մեծ ջարդ էր արել, զուտ Օսեփանց տներից չորս հարսի դագաղ էր հանել, մեկը Համիկ հորեղբոր կնոջ՝ Գիքորի ու Պիոնի մոր. Համըկի ընտանիքն ուրեմն Օսեփանք դեռ չէին նորոգել, և խփած ու իրեն անթույլատրելի մի տեղաշորում պահած է եղել, հովընտեցիք եկել հանել են: Շապիկ-փոխանով տանում Հովիտ մի գոմ են գցում ու դուռը փակում, ձենը-կտրած գնում է, քանի որ մի առանձին խայտառակություն էլ էն կլիներ, եթե Օսեփանք իմանային ինչ կնկա ծոցից են հանել: Ասում է՝ եթե սրանք ճամփին ինձ չսպանեցին ու իմ ոտով ինձ հասցրին Ավետըքին, ուրեմն ապրելու եմ: Գոմում յոթ օր սոված պահում են, յոթ օր Ավետըքին կաթումեղր են խմեցնում, գլխին կտա-վատի ձեթով ձվածեղ են կապում, գառ են մորթում ու մորթին քաշում գլխին, մատղաշ միսը՝ ուտեցնում, իշի թանձր կաթ են խմեցնում, շեկ աղջիկ են գտնում ու գլխի վերքի համար աղջկա

անարատ ջրով տանձու մոխիր շաղախում, յոթ օր խաշու են խմեցնում ու էդքան էլ Համըկին սոված պահում: Ձվածեղի հոտը գոմի երդից որ չէր կախվում՝ մարդ երեխայի պես, ասում է, լաց էր լինում: Մտքում ասում է՝ թիմարեցեք, ինչքան ուզում եք դրան թիմարեցեք, իմ մազին դա չպիտի դիպչի: Գոմի անկյունում շապիկ-փոխանով կուչ-եկած է լինում, դուռը բացում ու Ավետըքին ներս են թողնում, գալիս գլխին կանգնում թքում է. «Տո գյադա՛, ասում է, ժողովրդի առաջ գյադեն բա իրավո՞ւնք ունի Ավետըքի պատիվը գետնովը տա»: Առաջը փռվում ասում է. «Ժողովուրդն ասում է քեզ խփողը ես եմ եղել, բայց էն աստոծը՝ ես չեմ եղել»: Ասում է. «Բա ո՞վ է եղել»: Ասում է. «Համիկն ով էր՝ որ Ավետըքի վրա ձեռ բարձրացներ, Համիկը չի եղել՝ Ավետըքի առաջ Համըկի ա՛հն է եղել, քեզ, ասում է, քու սարսափն է խփել»: Փառավորվում աշխարքով մեկ է լինում, թևից բռնում բարձրացնում ասում է. «Ախպյերս ես, այսուհետյեվ ախպյեր ենք»: Ակսել Բակունցը, Հովըտի ու Ծմակուտի սահմանները որոշելուց հետո Վանքի բացատում հացի են եղել, ասել է. «Համըկին չտեսա, ո՞վ է Համիկը, Ավետիք Վաթինյանին ո՞վ է հաղթել»: Համիկ հորեղբայրը ետ-ետ է արել ասել. «Էդ բանը չի եղել, հընկեր Բակունց, համ էլ Ավետըքին հաղթել չի լինի. մի գունդ տղա էինք՝ Էրզրում...» ու պատմել է, որ գնդապետ Մազմանյանի գնդում ամենաուժեղը հովըտեցին է եղել, այսինքն թե Վաթնանք չպիտի լսեն, որ մենք խփել ու պարծենում ենք:

Այդքան պատմություն, այդքան ճնշում ու կերպափոխություն, եզան այդպիսի խեղճություն ու համառություն... դեպի այսօրը եկե՛լ, ո՛ւմ են բերել, ո՛ւր են կորչում, ով է ցամաքեցնում:

Գնացել դրամարկղի աղջկերանց բերանն էր ընկել, Ջանդառի հետ խառնել, կարծել էին իրենց քեռոնց տղերքից Ջանդառն է, ասել էին. «Էս ինչ մեծ գումար ունես, ախպերիկ, էսքան փողն ի՞նչ ես անելու»: Բուն Ծմակուտ ու հենց թեկուզ սարերում նրա լեզուն ինչ է, որ Հովըտի բանկում ինչ լիներ - լեզուն բռնվել կանգնել էր, ասել էր. «Էնիքը, էդ ինչքա՞ն է՝ որ ասում եք շատ է»: Ծվվացրել ասել էին. «Հովիտ, Ծմակուտ, Ահնիձոր ու Լորուտ՝ էս չորս գյուղում ամենաշատը. բայց, ախ-պերիկ, ասել էին, քոնը բաց է շատ, ով որ վախ ու խորա-մանկություն ունի՝ նրանցը թաքուն, ասել էին, նրանցը հողած ու վրան տանձի ծառ է տնկած, տանձ է ու փող չի, բայց տանձիդ մի գցիլ, պետությունը վերևից արդար աչքով զննում ու տեսնում է»: Մի ցիրկուծիծաղ. էդ է, ինչ որ Ջանդառն է կամ թեկուզ հեռվից Ջանդառի մասին է՝ ծափուծիծաղ է:

Աղջկերքն իրար մի բան էին ասել ու հասկացել, որ Թի-հի Սի-ռունին իրենց քեռոնց տղերքից Ջանդառ Թեվանի հետ խառնում են, ասել էին. «Մեկը մեկից գեշ չորս-հինգ աղջիկ է մարդի տալու, աստված չանի՝ մեծացած թաղելու մեր ունի - գումարը ևևը կանեն»: Իր հորաքույրերն էլ, քույրերն էլ ու առավել ևս դպրոցական որբն ու սարի նորամանուկն էլ՝ մեկը մեկից սիրուն են, ոչ մեկին չեն թողել դպրոցը կարգին վերջացնի, վաթսուն-վաթսունհինգ տարեկան հորաքրոջը չթողեցին գոնե մի երկու ամիս անարատ սուգ պահի՝ Դարպասից թռցրին հիմա էլ Կոթի, նրանց տնական կատակի վրա, խոսքը թեկուզ Ջանդառի ընտանիքի մասին էր եղել, ուժեղ տաքացել ու ուժեղ սառել էր: Ասել էին. «Քեզ ինչո՞ւ են Ջանդառ ասում, ախպերիկ, ջանդառն ի՞նչն է»: Վերջը, խոսելով-խոսեցնելով տեսել էին ինքը մյուս Թեվիկն է ու հեռագիր ունի՝ Տաշքենդ է գնում, ու ինչքան որ

Ջանդառի հարստության, նույնքան էլ սրա աղքատության վրա էին զարմացել, ասել էին. «Տաշքենդ ես գնում, բայց փող չունես, ախպերացու»:

Իրենց մեջ գաղտնի խորհրդակցել ասել էին գուցե տնտեսության ղեկավարների թաքուն գործարքներից է՝ չբացահայտենք. չէ՞ ժամանակին էլ Ածուխշինողանց խեղճին էին անունն աշխատավարձերի ցուցակից հանած բանեցրել, աշխատանքը վերագրել էին մի հայտնի ուրիշի, որպեսզի սա հանգստյան գնա բարձր թոշակով. ասել էին չբացահայտենք, բայց ասել էին խի՞, մինչև ե՞րբ՝ ասել էին, ինչի՞ համար. Ածուխշինողանց խեղճի կողոպուտը ձևական էր եղել, այսինքն հայտնի ուրիշը նրա աշխատավարձը իր անունով ստացել ու տվել էր խեղճին, բայց սրա դժբախտ մահով ձևական կողոպուտը դարձավ իրականից էլ իրական՝ ընտանիքը բարձր նպաստից զրկվեց, քանի որ պաշտոնական ցուցակներում խնամակալը աշխատանք ու աշխատավարձ չէր ունեցել. ասել էին խի՞, բեր իբր թե միամիտ-միամիտ հետաքրքրվենք: Ասել էին ախչի գործ չունես:

Հաշվապահության հետ հեռախոսով կապվել էին, հաշվապահությունն իրենն էր ասել, սրանք իրենցը, հետո աղջկերքից մեկը շալն ուսերին էր առել, Թեվըկին ասել գնանք հաշվապահություն: Ասել էր՝ «փողերդ որ գտա՝ մի կիլո շոկոլադի կոնֆետ պտես առնիլ»: Գեր, փափուկ, կոնքերը ծանր կնիկ էր եղել, ճամփի զառիվերում շունչը կտրել ասել էր՝ «ապերո, առաջս ընկիր՝ որ ետևս չլինես»: Հետո էլ ասել էր՝ «Վարդոյիցդ հետո պտի ինձ ուզեիր, երեխեքիդ ու քեզ էնպես պահեի ո՜ր», բայց իմացվել էր, որ լավ ամուսին էլ ունի, լավ երեխաներ էլ - Թեվըկին սիրելուց ու խղճալուց հետը կատակ է անում:

Ետևը-գցած տարել գրասեղանի ետևը Թեվըկին պատվավոր նստեցրել, հաշվապահության աղջիկների հետ ինքը հավասար չարչարվել հին մատյանները հանել էին, հաշվիչը դրել, թղթերին նայել ու հաշվել - մեղավորությունը դարձյալ իրենցում Ասորենցում էր եղել, այսինքն գործները ինչպես թարս ու պատահական սկսվում՝ էդպես թարսված էլ գալիս է. դատարանի որոշումը թղթերի մեջ էր եղել, այսինքն որ Սամվելի երեխեքի անդամավաճարը, էնիքը՝ ալիմենտը պիտի Թեվըկի աշխատանքից գնա: Ասել էին. «Գիտեի՞ր, որ ախպորդ կնկան ալիմենտ ես տալիս»: Ծուխն աչքից ձեռքով հեռացրել, ասել էր. «Նանն ու Վարդոն մի թեթև ասել էին»:

Ասել էին. «Ծխող չես, բայց ծխում ես, ախպերացու»: Ծոցագրպանի հեռագիրը աղջկերքը նայել, խղճացել ու բարկացել էին. ի՜իհի, տնաշենի տղա, բա դու էս աշխարքից չե՞ս, դաստրեբնի Մարիա Կեդրինա, ասել էին նշանակում է ցպահանջ, ախպերդ այսինքն հեռվից քեզ տեսնում է, դու իրեն՝ ոչ, սա հասցե չի, ասել էին, սրանով Սամվել չի գտնվի: Ու հեռագիրն էլ անցած աշնան հեռագիր էր եղել, ՏԵՎԱՆԺԱՆ ՍՏԱՆԱԼՈՒՆ ՊԵՍ ՑԵՌԱՑ ՉՈՐՍԽԱՐԻՐ ՄԱՆԵՏ ՊՈԽ ԽՐԿԻ ՍՐՈԿ ԿԻՍԵԼՈՒ ԽԱՇԻՎ ԿԱ ՏԱՇԿԵՆՏ ՄԱՐԻԱ ԿԵԴՐԻՆԱ ԴԱՍՏՐԵԲՆԻ ԿՈՒ ՊՈԿԵՐ ԱԽՊԵՐ ՍԱՄՎԵԼ, ստացել, չորս որձ էր մորթել ու առավոտվա հետ իջեցրել Դիլիջան. շուկա չէր հասել, կամրջի հենց այս ծայրին էլ չորսհարյուրուհիսունով տվել էր մեկին, Սիմոնի յաբուն մի տասը րոպեով պահ-տվել ու գնացել փոստ. չորս հարյուր հիսուն ռուբլի փողը նրա ձեռքին մնացել էր զուտ հինգ րոպե, ոչ ավելի,- ասել էր պարտքից թեթևանում ու գուցե սիրտն ուզում է մի բաժակ բան խմի՝ ինչո՞ւ պարտքով խմի:

Մատյանները ծալել ետ իրենց տեղն էին դրել ու՝ ախպերդ

քու տեղը գիտի, ասել էին, քու վարքին ու ունեցվածքին հեռվից հետևում է, գիտի որ մշտական Ծմակուտ ես, եթե քու տեսնելն ուզենար՝ էսքան ժամանակ մի անգամ իրեն կերևացներ: Ծխել, հազացել, ծուխն աչքից հեռացրել ասել էր էնիքը՝ ուրիշ տվյալ էլ կա. որ պետության հետ գոմի թե դպրոցի շինարարության մեծ գումարի պայման է կապել, պետությունը պատրաստի շենքի տերն է, ինքը՝ գումարի, ոնց ուզում է շինի. օրը մի շիշ չոր արաղով ու տասը մանեթ փողով տղերք է վարձել, դպրոցը երկու ամսում վերջացրել, տվել պետությանը. պետության հանձնաժողովը գոհ է մնացել, հետը դատուդատաստան չունի, պատվոգիր է տվել, բայց տղերքը բանի հոտ են առել, ետևից ընկած ուզում են փողերը խլեն,- բայց դա բնիկ դարպասեցի, հիմա բաքվեցի ու անհասցե Ալիկ Ծամխալյանի պատմությունն էր, պտտվել-պտտվել, գնացել սարի արևի հետ խմած գլխին խփել էր՝ թե Սամոն վտանգի առաջ է: Մի ռուս ու ռուսախոս մի հայ՝ երկու տղա, եկել Ծամխալենց հին տունն ու գոմը քանդել, մեր աղքատ երկրում կձուձով ոսկի են փնտրել, գոմի պատից մի փտած հրացան ու կժով փամփուշտ են հանել, գյուղխորհրդի նախագահին ժողովրդի առաջ ծեծել ու գնացել:

Սպասել էին գլխավոր հաշվապահը սենյակից հենակները ձռռացնելով դուրս գա, դուռը ետևից փակել ասել էին՝ հողեմ միոտանի գլուխդ, որ տեղիցդ չես շարժվում ու մարդու շնչի վրա ծանրանում ես, ու սատանավարի խնդրել հարցրել էին. «Ախպերիկ, մենակ ճիշտը պտես ասիլ. Վարդոյից հետո երկրորդ կնիկդ որ վերջնահաշիվ էր վերցնում, ինչքան հարցրինք՝ կարմրեց ու քեզ գովեց, քու ինչի՞ց էր էդպես գոհ, ախպերիկ, ճիշտը պտի ասես»: Դռան փակն ստուգել ասել էին. «Էդ ինչի՞ տարածվեց՝ թե Ածուխշինողանց խեղճը մյուս համ-

կալի կամավոր կնիկն է եղել, տղամարդը ո՞նց կնիկ կլինի, ախ-պերիկ, էդ ո՞նց է լինում. եթե տղամարդ չէր, ասել էին, դասից գնացել հանել ու հատուկ նայել ենք՝ երեխան ճիշտ ինքն է, եթե տղամարդ էր՝ ժողովուրդը սուտ բան չի տարածի, ինչո՞ւ տարածեց. ինչո՞ւ էր, ասել էին, նա իրեն այդպես ջնջել, անունն ու աշխատանքը տվել համկալին - ուրեմն իսկապես մի թաքուն բան կար, նրա տակ ինքն ուրեմն մի մեծ պարտք է ունեցել»:

Ծալները ուսներին՝ սրսփացել ասել էին. «Նրանց երկուսի հոտն էլ կտրի, ի՞նչ ենք, ախչի, նրա տեղը էս խեղճ տղային կարմրեցնում, նա ջոկ ու սա ջոկ, շատ էլ թե երկուսն էլ զրկված են»:

Կանայք նրա ցավը հասկացել, զգացվել, ավելի փխրուն սրտատերերը մինչև անգամ լաց էին եղել, ազնիվ խոսք, չէ՞ ուրիշի ցավը բացահայտող ու կարեկից մի հատուկ ժողովուրդ կա՝ բացահայտել ու աչքները լցրել էին. «տո շա՛շ,- ասել էին,- տո հիմար, բա որ էդպես էր, ինչո՞ւ թողեցիր գնա, ձեռիցդ խի՞ թողեցիր՝ եթե իրար համար էդպես մեռնում էիք» - քանի որ տեսել էին, որ նրա առած շորերը հագին ինքն այստեղ նստած իբր թե ծխում է, գործերը Նավ-ուրթի տակերից է՛ մինչև Տաշքենդ ու Գործարան հազար կողմի վրա շաղված են, բայց սիրտը շան նման Ծաթեր փաթաթված է երկրորդ ժամանակա-վոր կնոջ ոտքերին, քանի որ նա՛, ոչ նա՛նը, ոչ վաղամեռիկ խեղճ Վարդո՛ն, մեջն այդքան հիմար սեր ունի՝ ոչ էլ Ծուշանն ու ուրիշ որևէ մեկը, միայն նա՛ հասկացրեց՝ որ մարդ պիտի մի քիչ էլ իր համար լինի, նրա ժամանակավոր ներկայությամբ հասկացվեց՝ որ այս աշխարհում մենք բոլորս էլ մարդ ենք ու կարոտ ենք հագուստ-կապուստի, խաբելու, խաբվելու, տոնի ու գեղեց-կության, էս սուրբ հացը վկա՝ ազնիվ խոսք: Աչքները սրբել ասել

էին. «Հողեմ մուրի գլուխդ, էդքան հասկացողությունը ունեիր՝ բռնեիր չթողնեիր գնա»: Ասել էր. «Պահեի՝ ինձ հետ էստեղ խեղդվե՞ր»: Ասել էին. «Կարող էիր ու չպահեցի՞ր, թե՞ չկարեցար ու քթերիդ ծուխը դրանից էլ գցում է»: Մուրի որ մուրի, ասել էր. «Աշխարհը հո մեր ուզելով չի, համ էլ էգուցվա լավուվատը էսօր մենք ինչ ենք ջոկում»:

Խեղճ սիրունության վրա սիրահարված էին եղել, խելքի վրա էլ ջոկ էին սիրահարվել, շոկոլադի մի կիլո կոնֆետն առել էր, պետական կնքած մի հատ արաղ էլ հատուկ իր համար էր վերցրել ու շները ետևը-գցած Հովըտից իջել:

Գետափնյա խնձորուտ այգիների գլխին Վաթընանք մաքուր սրբատաշից կամարավոր աղբյուր են կապել՝ Կարմիր ծառի ուղիղ դիմացն է, դեմ-դիմաց իրար նայում են, այսինքն՝ տեսնենք որս երկար կապրի, ժողովրդի բերանում որիս տիրոջ անունը շատ կհոլովվի ու կօրհնվի. մեծ տիֆից հետո կնոջ պակասի տարիներին Վաթընանց Շաքարը կնոջը զավթելու համար Վաթընանց Սանդրոյի հեղկոմ եղբորը սպանել խցկել է տանձենու փչակը, անհետացումն, ասել է, Վաթընանց ցեղովին կուսակցականության շնորհիվ կընկնի ղաչաղության վրա, իսկ եթե բացահայտվի՝ մեղքը Դանելանց ջաղացպանների վիզը, տանձենին Դանելանց ջաղացի մոտ է. նախատեսվածի պես՝ Դանելանց ջաղացն ու ջաղացպանը Վաթընանց ձիավոր ատրյադի ոտի տակ կորել են, բայց Սանդրոն հետո դավը բացահայտել ու Շաքարին Վաթընանց բջջի բերանն է տվել. Շաքարի որբերին Սանդրոն մեծացրել, աղջկան լավ տեղ տեղավորել, տղային բարձր կրթության ու մեծ պաշտոնների է հասցրել. ինչպես որ Վաթընանք բոլորը ու ամբողջ Հովիտը՝ Շաքարի ժառանգները Սանդրոյին հայրիկ են ասել, Մեծ հայրիկ.

զոհված հեղկոմի փչակավոր տանձին Սանդրոն կոլխոզային այգու Դանելանց պահակին մաքուր կլպել ու վառ կարմիր դրոշի կարմրով ներկել է տվել՝ Դանելանց հին, հետո կոլխոզային խնձորուտում բարձր ու զարհուրելի կանգնած է, մանավանդ գորշ ամպոտ օրերին ուժեղ շողում է, կարծես հին հեքիաթներում լինի. դա ուրեմն հեղկոմի հուշարձանն է. Շաքարի ժառանգը, որ հավասարապես ու ավելի Սանդրոյի ժառանգն է, քարհանքերի պետ է, նրա հանքերում կարմիր գրանիտ է բացվել ու այս հանրապետությունում, ամբողջ Կովկասում ու Ռուսաստան մի ծանր գերեզման չկա՝ որ առանց նրա գրանիտի լինի, մի բոքոնի չափ քարն, ասում է, մի կապուկ փող է, բայց Սանդրոյին առաջվա պես հայրիկ է ասում, եկած ժամանակ միայն Սանդրոյի տանն է հացի նստում. մեջներն ուրեմն ցեղի հին համերաշխ միաբանությունն է, բայց թաքուն հակառակություն կա. ուժ ունի ու ժառանգը հոր սպանության մեղքը գուցե Սանդրոյի վրա է գցում, գուցե երկուսով՝ հեղկոմի վրա կամ գուցե ժառանգը Սանդրոյին ու Հովիտը հին է տեսնում, ցեղապետության կենտրոնն ուզում է փոխադրել Գործարան, այսինքն որ կամ քարհանքերի տե՛րը, կամ Գլխավոր դիրեկտո՛րը Սանդրո լինեն. ինչ որ է, Սանդրոն մոնղոլավարի խեղճացել ասել է՝ «ուզում յե՞ս տանձին վառյել տանք՝ չլինյե». Սանդրոյի խեղճանա՞լը որն է, ուղղակի փորձել է. մյուս մոնղոլը պատասխանել ասել է. «խեղճ հորեղբորիցն էդ տանձին յե մնացյել, ինչի՞ չլինյե, ինչքան կկանգնյե թող լինյե»: Երկուսն էլ կան՝ կարմիր ներկած տանձին ու կարմիր գրանիտե ցայտաղբյուրը. կարմիր խորանի առաջ ժառանգը բետոն է թափել ու աղբյուրի կարմիր սյունը խրել, բետոնը կարմիր սրբատաշով ծածկել է. կամարավոր խորանի առաջ պիտի կռանաս ու խմես, բայց թասով

խմողի համար էլ չժանգոտող հավերժական պողպատից յոթ հատ ծանր թաս կա, ժառանգը Տագանռոգ հատուկ մարդ է ղրկել, այնտեղ կաղապարել ու տաշել է տվել, բերել:

Աղբյուրն ու թասերն ուրեմն անընդհատ հիշելիս էր եղել, մի երեք կիլոմետր կլինի՝ մինչև Վաթընանց Ծաքարի աղբյուրին հասնելը շիշը չէր բացել, շները ետևը-գցած իջել աղբյուրի մոտ կանգ էր առել. արաղը բացել, թասը լցրել ու խմել էր, լցրել ու չոր արաղը դատարկ փորն էր ածել, շիշը ցամաքեցրել էր:

Օսեփանց Սիմոնի բանաստեղծ Արմենակը, Մելիք Սմբատիչ Մելիքյանը, հանրապետության գյուղմինիստրը, կուսակցության շրջկոմի քարտուղարները, շրջգործկոմի նախագահները, Հովընտի-Ծմակուտի միացյալ տնտեսության Խուլիգան անվանյալ գլխավոր դիրեկտորը, գյուղխորհրդի նախագահը, շրջանային թերթի խմբագիրը, միլպետը, Հովընտի-Ծմակուտի կուսկազմակերպության քարտուղարը, գլխավոր անասնաբույժը, գլխավոր գյուղատնտեսը, սղոցարանի վարիչը, պանրագործարանի վարիչը գյուղի ապագայի մասին մի շատ կարևոր խորհրդակցությունից հետո գլխավոր պանրագործի տանը հացի էին եղել, Ծմակուտ անցնելիս ասել էին Վաթընանց աղբյուրից ջուր խմենք, եկել գլխին կանգնել տեսել էին՝ ցամաք շիշը կողքին դրած, ինքը երկու շան արանքում մեկնված քնած է, այսինքն ամեն շունը մի կողքին մեկնվել, նայում ու պոչը գետնին թփթփացնում է, չեն հաչում՝ քանի որ օտարությունից քաշվում են, չեն էլ հեռանում՝ քանի որ իրենց տերը որբ երեխայի պես անտեր կմնար, սառը ցայտաղբյուրն էլ կողքին քչքչում է: Կենտրոնների ղեկավարության առաջ տեղական ղեկավարները նրան չճանաչելու են տալիս, այսինքն թե մենք էսպես անբարեխիղճ աշխատավոր չենք ճանաչում, բայց Սիմոնենց բանաս-

տեղծի համար ուրիշներին դժվար վիճակի մեջ դնելը չէ՞ սովորություն է, կռացել ասել էր. «Էս մեր Սիրուն Թեվիկն է»: Ձեռքերն ինչպես միշտ ետևին՝ Մելիք Սմբատիչ Մելիքյանը շիշը կոշիկի ծայրով հրել ասել էր. «Էս ի՞նչ ես արել, արա, ղեկավարությանդ համար տակը բան չես թողել»: Զարթնել, չէր ճանաչել, ասել էր. «Տաշքենդ էի գնում, էն էլ էնիքը»: Ասել էին. «Հիմա ո՞րտեղ ես»: Նեղացել ասել էր. «Էստեղ, խազեին»: «Էստեղ՝ ո՞րտեղ»: Իբր թե կանգնում է՝ չորեքթաթվել ասել էր. «Էստեղ, խազեին, Ծաթեր»: «Ծաթե՞ր, ասել էին, ի՞նչ Ծաթեր»: Կանգնել ասել էր. «Ծաթե՞ր, խազեին»: Ասել էին. «Նստիր գյուղ տանենք»: «Էդ գյուղում ո՞վ ունեմ», ասել էր: «Ծմակուտեցի չե՞ս, ասել էին, թե էնքան ես խմել՝ որ գյուղդ ու տեղդ մոռացել ես»: Ասել էր. «Մի՛ գնացեք, էնտեղ մարդ չկա, բոլորը մեռել ու կորել են, բոլորը»: